

ՀԵՌՈՒ ԵՎ ՄՈՏ ՂԱԶԱԽՍՏԱՆ

ԵՐԵՎԱՆ
«ՆՇԱՆԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿԴՐՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 951/959:327
ԳՄԴ 63.3 (2Դ)+66.4
Հ 539

Հեռու եւ մոտ Ղազախստան.-
Հ 539 Եր.: «Նշանակ» ՍՊԸ, 2010.- 176 էջ

ՀՏԴ 951/959:327
ԳՄԴ 63.3 (2Դ)+66.4

ISBN 978-9939-827-13-1

© «Արմենիա» ՏՎԳ, 2010
© «Նշանակ» ՍՊԸ, 2010

«Տեռու եւ մոտ Ղազախստան»

«Տեռու եւ մոտ Ղազախստան» գիրքը Ղազախստանի մասին հայերեն լեզվով առաջին ձեռնարկն է, որն ամփոփ տեղեկություն է տալիս Ղազախստան պետության ձեավորման, նրա պատմության, մշակույթի, պետական կառուցվածքի, արտաքին քաղաքական ուղու, ինչպես եւ հայ-ղազախական հարաբերությունների մասին: Գրքում տեղ գտած նյութերը, հարցազրույցները կազմվել են «Արմեդիա» տեղեկատվական-վերլուծական գործակալության հեղինակային խմբի՝ 2009թ. հունիսին Ղազախստանի մայրաքաղաք Աստանա կատարած այցի ընթացքում, որն իրականացվել է ՀՀ-ում ՂՀ դեսպանության աջակցությամբ:

Այս գիրքը նպատակ ունի ընթերցողին վերստին ծանոթացնել Ղազախստանի՝ մեր բարեկամ նախկին խորհրդային հանրապետության հետ, ցույց տալ նրա ձեռքբերումները անկախացումից ի վեր:

Ձեռնարկը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

“Далекий и близкий Казахстан”

Книга “Далекий и близкий Казахстан” – первая публикация о Казахстане на армянском языке, которая дает краткую информацию о формировании Казахстана как государства, о его истории, культуре, государственном устройстве, внешнеполитической направленности, а также об армяно-казахских отношениях. В книгу вошли материалы и интервью, собранные во время визита авторской группы информационно-аналитического агентства “Армедиа” в столицу Казахстана Астану в июне 2009 года. Визит был осуществлен при поддержке Посольства Республики Казахстан в Республике Армения.

Цель данной книги - ознакомить армянского читателя с сегодняшним Казахстаном, который многим запомнился как дружественная Армении бывшая советская республика, показать достижения Казахстана и его прогресс после обретения независимости.

Книга предназначена для широкого круга читателей.

“Far and Close Kazakhstan”

The book “Far and Close Kazakhstan” is the first handbook in Armenian that gives comprehensive information about the formation of the state of Kazakhstan, its history, culture, government structure, foreign political directions, as well as about Armenian-Kazakh relations. The book comprises of materials, interviews made during the visit of “Armedia” Information, Analytical Agency authors group to the capital of Kazakhstan – Astana in June 2009, which was fulfilled with the assistance of the Embassy of the RK in the RA.

The purpose of the book is once more to introduce Kazakhstan to the reader, to show its achievements after the independence.

The book is for a wide range of readers.

Бозжигитов А. Е.

Чрезвычайный и Полномочный Посол

Республики Казахстан в Республике Армения

Для меня огромная честь представить вниманию читателя книгу “Далекий и близкий Казахстан”, подготовленную и изданную информационно-аналитическим агентством “Армедиа”. Книга содержит качественные и разнообразные знания о Республике Казахстан, ее государственном устройстве, дает краткое описание дружественных отношений между Казахстаном и Арменией.

В начале 90-х годов прошлого столетия народ Казахстана стоял на сложном историческом перепутье, выбирая наиболее эффективный для себя путь общественно-политического развития, реформирования и проведения демократических преобразований. Мы были убеждены, что либерализация общественных систем может успешно осуществляться только на прочном фундаменте экономического развития. Были трудные годы, когда в короткие сроки приходилось проводить непопулярные, но дальновидные в стратегическом плане реформы, в результате которых сегодня казахстанцы имеют возможность жить в свободном обществе с рыночной экономикой.

Не менее важным фактором обеспечения стабильности современного Казахстана стал избранный Президентом Н. А. Назарбаевым путь на уважение поликонфессиональности и полиэтничности сегодняшнего казахстанского общества. Налаживая межрелигиозный диалог и укрепляя толерантность в обществе, мы следовали классическому принципу демократии: воля большинства при сохранении интересов этнических и религиозных меньшинств. Казахская практика претворения в жизнь этой формулы получила безоговорочное одобрение высших иерархов мировых конфессий в ходе трех Съездов лидеров мировых

религий, проведенных в нашей стране по инициативе Президента Н. А. Назарбаева.

Сегодня весь мир говорит о феномене личности Нурсултана Назарбаева, сформировавшейся на стыке двух частей света – Европы и Азии, двух цивилизаций – восточной и западной, двух политических систем – советской и демократической. На наш взгляд, феномен личности Президента Н. А. Назарбаева заключается в том, что определяя основные приоритеты и пути становления и развития Казахстана как современного государства, он сумел тесно увязать демократические процедуры развития государства как с европейским реформизмом и западным прагматизмом, так и с азиатским традиционализмом, в которых учитываются национальная культура и самобытность казахского народа и современного казахстанского общества.

В этом контексте авторский коллектив книги «Далекый и близкий Казахстан» стремился сделать более простым и доступным для понимания развитие современной Республики Казахстан, а потому мы надеемся, что предлагаемая работа будет полезна всем, кто изучает политологию и историю дружественных отношений между Казахстаном и Арменией.

Ա. Ե. Բոգժիգիտով **ՀՀ-ում ՂՀ արտակարգ եւ լիազոր դեսպան**

Ինձ համար մեծ պատիվ է ընթերցողի ուշադրությանը ներկայացնել «Հեռու եւ մոտ Ղազախստան» գիրքը, որը նախապատրաստվել է և հրատարակվել է «Արմեդիա» տեղեկատվական-վերլուծական գործակալության կողմից: Գիրքը պարունակում է որակյալ եւ բազմատեսակ գիտելիքներ Ղազախստանի Հանրապետության, նրա պետական կառուցվածքի մասին եւ տալիս է Ղազախստանի ու Հայաստանի միջեւ բարեկամական հարաբերությունների հակիրճ նկարագիրը:

Նախորդ հարյուրամյակի 90-ական թվականների սկզբին Ղազախստանի ժողովուրդը կանգնած էր պատմական բարդ խաչմերուկում՝ ընտրելով հասարակական-քաղաքական զարգացման, բարեփոխումների եւ ժողովրդավարական վերափոխումների անցկացման իր համար առավել արդյունավետ ուղի: Մենք համոզված էինք, որ հասարակական համակարգերի լիբերալացումը հաջողությամբ կարող է իրականացվել միայն տնտեսական զարգացման ամուր հիմքի վրա: Եղել են ծանր տարիներ, երբ կարճ ժամկետներում ստիպված էինք անցկացնել ժողովրդականություն չվայելող, սակայն ռազմավարական տեսակետից հեռանկարային բարեփոխումներ, որոնց արդյունքում ղազախստանցիներն այսօր հնարավորություն ունեն ապրելու շուկայական տնտեսությամբ ազատ հասարակությունում:

Ժամանակակից Ղազախստանի կայունության ապահովման կարեւոր գործոն էր նաեւ Նախագահ Ն.Ա.Նազարբաեւի կողմից ընտրված ուղին՝ հարգանք դեպի ներկայիս բազմադավան եւ բազմազգ ղազախական հասարակությունը: Կարգավորելով միջկրոնական երկխոսություն եւ ամրապնդելով հանդուրժողականությունը հասարակության մեջ, մենք հետեւել ենք ժողովրդավարության դասական սկզբունքին. մեծամասնության կամքը էթնիկական եւ ազգային փոքրամասնությունների շահերի պահպանման դեպքում: Այս բանաձեւը կյանքի կոչելու ղազախստանյան պրակտիկական ստացել է համաշխարհային կրոնների բարձրագույն հիերարխիայի անառարկելի հավանությունը Համաշխարհային կրոնների առաջնորդների երեք համագումարների ժամանակ, որոնք անցկացվել են մեր երկրում Նախագահ Ն.Ա.Նազարբաեւի նախաձեռնությամբ:

Այսօր ողջ աշխարհն է խոսում Նուրսուլթան Նազարբաևի անձի ֆենոմենի մասին, որը ձեռավորվել է երկու աշխարհամասերի՝ Եվրոպայի եւ Ասիայի, երկու քաղաքակրթությունների՝ արեւելյան եւ արեւմտյան, երկու քաղաքական համակարգերի՝ խորհրդային եւ ժողովրդավարական, հատման կետում: Մեր կարծիքով, Նախագահ Ն. Ա. Նազարբաևի անձի ֆենոմենը կայանում է նրանում, որ, սահմանելով Ղազախստանի հիմնական առաջնայնությունները եւ Ղազախստանի՝ որպէս ժամանակակից պետության կայացման ու զարգացման ուղիները, նա կարողացել է պետության զարգացման ժողովրդավարական գործառույթները սերտորեն համակցել ինչպէս եվրոպական ռեֆորմիզմի եւ արեւմտյան պրագմատիզմի, այնպէս էլ ասիական տրադիցիոնալիզմի հետ, որտեղ հաշվի են առնվում ղազախական ժողովրդի եւ ժամանակակից ղազախստանյան հասարակության ազգային մշակույթն ու ինքնությունը:

Այս համատեքստում «Հեռու եւ մոտ Ղազախստան» գրքի հեղինակային խումբը ձգտել է առավել պարզ ու հասկանալու համար հասանելի դարձնել ժամանակակից Ղազախստանի Հանրապետության զարգացումը, ուստի մենք հուսով ենք, որ ներկայացված աշխատանքը օգտակար կլինի բոլոր նրանց համար, ովքեր ուսումնասիրում են քաղաքագիտություն եւ Ղազախստանի ու Հայաստանի միջեւ բարեկամական հարաբերությունների պատմությունը:

Արամ Սաֆարյան
ՀՀ ԱԺ պատգամավոր
ՀՀ ԱԺ Հայաստան-Ղազախստան
բարեկամության խմբի ղեկավար

«Ղազախստանը շատ լավ, ուժեղ կազմակերպված պետություն է, շատ արդյունավետ քաղաքական համակարգ ունի, ազգամիջյան համերաշխության երկիր է, ինչը հատուկ ուզում եմ ընդգծել: Հայերը Ղազախստանում իրենց շատ լավ վստահ եւ ապահով են զգում: Հայաստանից դուրս տարված գյուղատնտեսական մի քանի տեխնոլոգիաներ Ղազախստանում պարզապես փայլուն համարում ունեն՝ սկսած կոնյակի արտադրությունից մինչեւ հայկական խաղողի տեսակների տարածումը Ղազախստանում: Այս ամենը ստեղծում է մի վիճակ, երբ ղազախների մոտ կա բնական հետաքրքրվածություն հայերի եւ Հայաստանի նկատմամբ...»:

«Ղազախստանը տարածաշրջանային գերտերություն է: Գազի, նավթի, օգտակար հանածոների անսպառ պաշարների շնորհիվ Ղազախստանը շատ լուրջ, համաշխարհային մակարդակի փաստարկ է համաշխարհային տնտեսության մեջ: Նա կարող է իրեն թոյլ տալ մի քանի տարում անապատում, ոչինչից կառուցել նոր, մի հրաշք մայրաքաղաք, որը շատ գեղեցիկ է եւ ոչնչով չի զիջում Պարսից ծոցի հսկաներին: Ղազախստանը շատ հեռանկարային գործը կարող է լինել Հայաստանի եւ մեր մասնագետների համար...»:

*(Հայաստանում Ղազախստանի դեսպանատան աջակցությամբ
«Արմեդիա» ՏՎԳ կողմից իրականացված «Հեռու եւ մոտ
Ղազախստան» ծրագրի շրջանակներում «Հայացք աշխարհին»
հեռուստահաղորդմանը (25.07.2009թ.) տրված հարցազրույցից)*

Арам Сафарян

депутат НС РА

*руководитель Группы дружбы Армения-Казахстан
Национального Собрания РА*

“Казахстан очень сильное, организованное государство с результативной политической системой. Это страна межэтнической солидарности, что я особо хочу подчеркнуть. Армяне чувствуют себя в Казахстане очень хорошо, уверенно и достойно. Ряд технологий, вывезенных из Армении, нашли в Казахстане блестящее применение – начиная от производства коньяка до выращивания различных армянских видов винограда там. Это все создает ситуацию, когда в Казахстане есть естественный интерес по отношению к Армении и армянам, и наоборот...”

“Казахстан – региональная держава. Благодаря неиссякаемым запасам газа, нефти, полезных ископаемых Казахстан стал серьезным фактором в международной экономике. Эта страна может позволить себе построить на пустыре новую чудо-столицу, которая очень красива и ничем не уступает гигантам Персидского залива. Казахстан может быть для Армении очень перспективным партнером...”

(из телепередачи “Взгляд на мир” (25.07.2009), снятой в рамках проекта “Далекий и близкий Казахстан”, реализованного ИАА “Армедиа” при содействии Посольства РК в РА)

Ռուբեն Սաֆրաստյան

պ.գ.դ., պրոֆ.

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

ՀՀ Հանրային խորհրդի Կրոնի, սփյուռքի,

միջազգային ինտեգրման հարցերի

հանձնաժողովի նախագահ

Ողջունում եմ «Արմեդիա» տեղեկատվական, վերլուծական գործակալության, ինչպես նաև Հայաստանում Ղազախստանի դեսպանատան սույն նախաձեռնությունը: Անկախ Հայաստանի գոյության երկրորդ տասնամյակում մենք դեռևս քիչ բան գիտենք ԱՊՀ անդամ երկրների այն խմբի մասին, որոնց վերջին տարիներին ընդունված է դասել Կասպից ծովի ավազանի արեւելյան հատվածի եւ էներգիայի հարուստ պաշարներով օժտված երկրների շարքին:

Անտարակույս, Ղազախստանը նրանցից կարեւորագույնն է: Եվ ոչ միայն նավթի ու գազի իր անսպառ պաշարներով, կամ աշխարհագրական բարենպաստ դիրքով ու հսկայական տարածքով, այլ առաջին հերթին քաղաքական զարգացման այն մոդելով, որը ձեւավորվել է այդ երկրում: Նրա ներքին քաղաքական հիմնական բաղադրիչները փոխլրացումն ու փոխկապակցվածությունն են կառավարման արեւելյան ու արեւմտյան համակարգերի միջեւ, ինչպես նաև հանդուրժողականությունը քաղաքական, էթնիկական ու դավանական հարցերում: Արտաքին քաղաքական ոլորտում այդ մոդելը հանդես է գալիս բազմավեկտորության եւ դաշնակցային հարաբերություններում կայունության ու շարունակականության տեսքով:

Կարծում եմ՝ սույն ձեռնարկը հետաքրքիր կլինի եւ նրանց համար, ովքեր աշխատանքի բերումով առնչվում են այդ հետաքրքիր ու բազմաբնույթ երկրին, եւ տեսաբան-քաղաքագետների, եւ մեր հայրենի քաղաքական գործիչների համար: «Հեռու եւ մոտ» հարեանի ու դաշնակցի փորձը միշտ էլ ուսանելի է, մանավանդ՝ եթե այն հաջողված է:

Рубен Сафрастян

*Доктор исторических наук, профессор
Директор Института Востоковедения НАН РА,
Председатель комиссии по религии, диаспоре и
международной интеграции Общественной Палаты РА*

Приветствую данную инициативу информационно-аналитического агентства “Армедиа” и Посольства Казахстана в РА! Даже через двадцать лет после существования независимой Армении мы мало знаем о той группе стран СНГ, которые в последние годы принято причислять к восточному отрезку бассейна Каспийского моря и к ряду государств, богатых запасами энергии.

Безусловно, Казахстан – важная из их числа страна. И не только в силу своих неиссякаемых запасов нефти и газа, или огромнейшей территории и благоприятного географического положения, а в первую очередь из-за той модели политического развития, которая сформировалась в этой стране. Основные составляющие внутренней политики Казахстана – это взаимодополнение и взаимодействие между восточной и западной системой управления, а также толерантность – в политических, этнических и конфессиональных вопросах. В области внешней политики эта модель выступает в виде многовекторности, стабильности и продолжительности в коалиционных отношениях.

Думаю, что данная книга будет интересна и для тех, кто по долгу службы сталкивается с этой интересной и многоплановой страной, для политологов-теоретиков и для политических деятелей нашей страны. Опыт “далекого и близкого” соседа всегда поучителен, тем более, что этот опыт достаточно удачен...

ՆԱԽԱԲԱՆ

Ղազախաստանը հարուստ պատմական և մշակութային անցյալ ունեցող երկիր է: Տեղակայված լինելով Եվրասիայի կենտրոնում Ղազախաստանը հայտնվել է աշխարհի հնագույն քաղաքակրթությունների խաչմերուկում, տրանսպորտային երակների հատման կետում, Արեւելքի և Արեւմուտքի, Հարավի և Հյուսիսի, Եվրոպայի և Ասիայի սոցիալական և տնտեսական, մշակութային և գաղափարական կապերի, եվրասիական մայրցամաքի խոշորագույն պետական գոյացությունների միջև: Ասիայի և Եվրոպայի միջև կարեւոր առեւտրային ճանապարհները, ինչպիսին է օրինակ հռչակավոր Մետաքսի ճանապարհը, անցնում են այս երկրի տարածքով:

Ղազախաստանի տնտեսության աճը, երկրի կայունությունը, դրա տարածքում ապրող շուրջ 130 ազգությունների խաղաղ գոյակցությունը վկայում են մտածված ու հեռանկարային քաղաքականության մասին: Այս երկիրը, որի տարածքով է անցնում Եվրոպան Ասիայից բաժանող սահմանագիծը, իր ուրույն և կարեւոր դերն ունի ոչ միայն ԱՊՀ կառույցներում, այլև միջազգային կազմակերպություններում:

Ղազախաստանը միակ երկիրն է, որն ինքնակամ հրաժարվել է միջուկային զենք ունենալուց՝ 1991թ. օգոստոսին փակելով Սեմիպալատինսկի միջուկային փորձադաշտը: Երկրի նախագահի առաջարկով օգոստոսի 29-ը հայտարարվել է Միջուկային զենքից հրաժարվելու համաշխարհային օր, և այն կնշվի 2010թ.-ից:

«Արմեդիա» ՏՎԳ-ն 2009թ. հունիսին ՀՀ-ում ՂՀ դեսպանության աջակցությամբ իրականացրել է «Հայացք աշխարհին. հեռու և մոտ Ղազախաստան» նախագիծը, որի նպատակն էր հայ ժողովրդին ներկայացնել նախկին խորհրդային այդ հանրապետությունում վերջին զարգացումները: Չէ՞ որ խորհրդային տարիներին ջերմ հարաբերություններ և երկարաժամկետ հեռանկարներ ունենալով՝ մենք հայտնվեցինք այնպիսի մի իրավիճակում, երբ ավագ սերունդը հիշում է այդ փոխադարձ ջերմությունը, իսկ երիտասարդների համար դրանք ծանոթ են միայն պատմելով:

Նախագծի շրջանակներում «Արմեդիա» տեղեկատվական-վերլուծական գործակալության հեղինակային խումբն այցելեց

Ղազախստանի նոր մայրաքաղաք՝ Աստանա: Դա խորհրդային Ցեխինոգրադ քաղաքն է, որին մայրաքաղաքի կարգավիճակ է շնորհվել 1997թ.-ին: 12 տարիների ընթացքում այստեղ հսկայածավալ շինարարություն է կատարվել. քաղաքի հին մասը բարեկարգվել է, իսկ նոր մասը բազմառձ, ժամանակակից շինությունների մի հոյակերտ համալիր է:

Մեր նկարահանող խմբի համար հետաքրքրություն էին ներկայացնում երկրի կյանքի զանազան բնագավառները, ուստի հանդիպումներ կազմակերպվեցին ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական, ե՛ւ կրթական, ե՛ւ լրատվամիջոցների ոլորտների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ երկրի նախագահի քարտուղարությունում Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի փոխնախագահի, խորհրդարանի մեջլիսի Արտաքին կապերի, պաշտպանության ու անվտանգության հանձնաժողովի անդամի, արտգործնախարարության Տեղեկատվական կոմիտեի նախագահի, «Ատամեկեն» Ազգային տնտեսական պալատի նախագահի, Եվրասիական համալսարանի մի շարք ֆակուլտետների դեկանների, Ղազախստանի «Խաբար» տեղեկատվական գործակալության գլխավոր տնօրենի տեղակալի, «Կազինֆորմ» Ազգային ընկերության տեղեկատվության եւ ստեղծագործական հարցերով փոխնախագահի հետ եւ այլն: Չրուցելով նրանց հետ՝ զգացվում էր, թե նրանք ինչ պատասխանատվությամբ ու սիրով են վերաբերվում իրենց երկրին, ամեն ինչ անում են, որպեսզի Ղազախստանը տարածաշրջանում, եւ ոչ միայն այդտեղ, հզոր դերակատար լինի: Դրա մի ապացույցն էլ այն է, որ Ղազախստանն ընտրվել է ԵԱՀԿ նախագահող երկիր 2010թ.-ի համար:

Աստանայում «Արմեդիա»-ն մասնակցեց նաեւ ԱԱՏՕ-ի Եվրատլանտյան գործընկերության խորհրդի Անվտանգության համաժողովին, որտեղ մի շարք բացառիկ հարցազրույցներ իրականացվեցին:

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը մեծ հեղինակություն ունի երկրում, վայելում է ժողովրդի սերն ու հարգանքը: Մայրաքաղաք Աստանայում նույնիսկ հնարավորություն է ստեղծված ձեռքով բարեւելու Նազարբաեւին: Դա Աստանայի խորհրդանիշ Բայտերեկի աշտարակում է, որտեղ դրված է նախագահի աջ ձեռքի ոսկյա դրոշմվածքը: Ձեռքդ դնում ես նրա ափին՝ բարեւելով նրան: Ասում են նաեւ, որ եթե

այդ պահին մտքում որեւէ ցանկություն պահես, անպայման կկատարվի:

Հետաքրքիր էին անցորդների գիտելիքները Հայաստանի մասին: Միջին եւ ավագ սերունդը հիշում էր Հայաստանը՝ մանավանդ հայկական կոնյակը, սակայն երիտասարդների շրջանում գիտելիքի պակաս կար: Բայց, իհարկե, բոլորը հիշատակում էին 1930-ականների խորհրդային Ղազախստանի ղեկավար, Կենտկոմի 1-ին քարտուղար Լեւոն Միրզոյանի մասին, որը հսկայական ներդրում է ունեցել Ղազախստանի զարգացման գործում: Նրան հարգանքով ու սիրով անվանում էին «Միրզաջան», այսինքն՝ «հարուստ հոգով եւ լուսավոր մարդ»:

Հուսով ենք՝ այս ձեռնարկը հետաքրքրությամբ կընդունվի ընթերցողի կողմից եւ կփորձի լրացնել այն տեղեկատվական վակուումը, որը կա Ղազախստանի նկատմամբ:

«Արմեդիա» S44

ПРЕДИСЛОВИЕ

Казахстан – страна с богатым историческим и культурным прошлым. Расположенный в центре Евразии, Казахстан очутился на перекрестке древнейших цивилизаций мира, на пересечении транспортных артерий, социальных и экономических, культурных и идеологических связей между Востоком и Западом, Югом и Севером, Европой и Азией, между крупнейшими государственными образованиями евразийского континента. Главные торговые пути, в числе которых и знаменитый Шелковый путь, проходят по территории именно этой страны.

Экономический рост, стабильность страны, мирное сосуществование около 130 национальностей, живущих на территории этого государства, свидетельствуют о продуманной и перспективной внешней и внутренней политике Казахстана. Эта страна, по территории которой проходит разделительная линия между Европой и Азией, имеет свою особую и важную роль не только в структурах СНГ, но и в международных организациях.

Казахстан – единственная страна, которая добровольно отказалась от ядерного оружия, закрыв в августе 1991 года Семипалатинский ядерный полигон. По предложению Президента Казахстана, 29 августа провозглашен Международным днем отказа от ядерного оружия, и с 2010 года этот день начнут отмечать во всем мире.

В июне 2009 года информационно-аналитическое агентство “Армедиа” при поддержке Посольства РК в РА реализовало проект “Взгляд на мир: далекий и близкий Казахстан”, цель которого – представить армянскому народу последние развития в этой бывшей советской республике. Ведь имея в советские годы теплые взаимоотношения и долгосрочные перспективы сближения, мы оказались в ситуации, когда старшее поколение помнит взаимную теплоту, а молодежь об этом знает только по рассказам взрослых.

В рамках проекта авторская группа информационно-аналитического агентства “Армедиа” посетила новую столицу Казахстана – Астану. Это советский город Целиноград, который получил статус столицы в 1997 году. В течение 12 лет Астана стала местом широкомасштабного строительства: благоустроен старый отрезок города, а новая часть – это прекрасный ансамбль современных сооружений различных стилей.

Для нашей съемочной группы интерес представляли различные отрасли жизни Казахстана. В этих целях были организованы встречи с представителями политической, экономической, образовательной, информационной отраслей – в Ассамблее народа Казахстана, в Комиссии по внешним связям, обороне и безопасности Мажлиса Парламента, в Комитете по информации МИД РК, в Национальной экономической палате “Атамекен”, в ряде факультетов Евразийского университета, в информационном агентстве “Хабар”, в Национальном обществе “Казинформ” и т. д. Беседуя с героями наших интервью, мы чувствовали, с какой ответственностью и любовью они относятся к своей стране и делают все, чтобы Казахстан был сильным игроком не только в своем регионе, но и во всем мире. Одно из подтверждений сказанному - то, что именно Казахстан из всех постсоветских стран стал председателем ОБСЕ в 2010 году.

В Астане авторская группа ИАА “Армедиа” приняла участие также в очередном Форуме Совета евратлантического партнерства НАТО, где мы провели ряд эксклюзивных интервью.

Стоит отметить, что президент Казахстана Нурсултан Назарбаев имеет большой авторитет в стране, пользуется любовью и уважением народа. В Астане каждый может поздороваться с Назарбаевым. В башне Байтерек, которая является символом Астаны, установлен золотой отпечаток правой ладони Президента. Кладешь руку на этот отпечаток и здороваешься! Говорят, если в этот момент загадать желание, оно обязательно сбудется...

Было интересно поговорить и с прохожими – что они знают об Армении? Оказалось, что среднее и старшее поколение хорошо помнит Армению, особенно – армянский коньяк. Однако молодежь не очень хорошо осведомлена о нашей стране. Но все, безусловно, упоминали руководителя Казахстана 1930-ых годов, 1-го секретаря ЦК Левона Мирзояна, который внес огромный вклад в дело развития Казахстана. Его с уважением и любовью называли “Мирзажан”, что означает “яркий и богатый душой”.

Надеемся, что книга вызовет интерес у армянского читателя и заполнит тот информационный вакуум, который есть в Армении о Казахстане.

ИАА “Армедиа”

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Աշխարհագրությունը

Ղազախստանի Հանրապետությունը պետություն է Կենտրոնական Ասիայում: Տարածքը՝ 2 724 900 քառ.կմ: Մակերեսով այն աշխարհում գրավում է 9-րդ տեղը:

Կարգական կառուցվածքով Ղազախստանը բաժանվում է 14 մարզի եւ հանրապետական նշանակության 2 քաղաքի:

Երկրի կենտրոնական շրջաններում է գտնվում Ղազախստանի «դեղին տափաստանը»: Նրա հյուսիսում՝ Իշիմ գետի վերին հոսանքում, գտնվում է մայրաքաղաքը՝ Աստանան, իսկ նրանից արեւմուտք՝ Տուրգայական սարահարթը եւ Ուլիսաու սրբազան լեռները: Արեւելքում Ալթայի եւ Սաուր-Տարբագատայ լեռներն են, իսկ նրանց մեջտեղում՝ Չայսան լիճը: Ղազախստանի հարավից արեւելք ձգվում են Տյանշանի լեռները, որոնք Ղրղըզստանի եւ Չինաստանի սահմանին հասնում են 7000մ բարձրության (բարձր գագաթն է Խան-Տենգրին՝ 6995մ): Հարավ-արեւելքում գտնվում են Ջունգարյան Ալատաու եւ Չախյան Ալատաու լեռնաշղթաները, վերջինիս ստորոտին է գտնվում երկրի նախկին մայրաքաղաքը՝ Ալմաթին: Երկրի արեւմուտքում ընկած է Մերձկասպյան ցածրավայրը: Մանղշլակ թերակղզում է գտնվում Կարագիե (Բատիր) իջվածքը, որը ծովի մակերեսային ցածր է 132մ: Թերակղզուց արեւելք գտնվում է Ուստյուրտի սարահարթը: Երկրի հյուսիսում Արեւմտասիբիրյան հարթավայրն է:

Ամենախոշոր գետերն են Կասպից ծով թափվող Ուրալը եւ Էմբան, Արալյան ծով թափվող Սիր-Դարյան, Բալխաշ թափվող Իլին, Օբ թափվող Իրտիշը: Ամենամեծ լճերն են Արալյան ծովը, Բալխաշը, Չայսանը: Կասպից ծովի ափի երկարությունը Ղազախստանում 2340 կմ է: Երկրի տարածքի 26%-ը տափաստաններ են, 44%-ը՝ անապատներ, 14%-ը՝ կիսաանապատներ, 3%-ը՝ անտառներ:

Կենդանական աշխարհի բնորոշ ներկայացուցիչներն են վայրի խոզը, սկյուռը, կոտլիը, լուսանը, ձնահովազը, գորշ արջը, գայլը, եղնիկը, արջամուկը, գետնասկյուռը, նապաստակը:

Օգտակար հանածոները

Երկիրը հարուստ է օգտակար հանածոներով: Մենդելեևի աղյուսակի 105 տարրերից 99-ը հանդիպում են Ղազախստանում, հետախուզվել են 70-ի պաշարները, ավելի քան 60 տար-

րեր արդյունահանվում են: Օգտակար հանածոների եղած պաշարների երկրաբանական-տնտեսական գնահատման արդյունքներով, տնտեսական նշանակությամբ առավել կշիռ ունեն քարածուխը, նավթը, պղինձը, երկաթը, ծծումբը, ցինկը, քրոմիտները, ոսկին, մանգանը:

Ղազախստանն աշխարհում գրավում է առաջին տեղը ցինկի, վոլֆրամի, բարիտի, երկրորդը՝ արծաթի, կապարի, քրոմիտների, երրորդը՝ պղնձի եւ ֆլյուորիտի, չորրորդը՝ մոլիբդենի, վեցերորդը՝ ոսկու հետախուզված պաշարների ծավալով:

ԱՊՀ երկրների շրջանում Ղազախստանը գրավում է առաջին տեղը քրոմի հանքերի եւ կապարի, երկրորդը՝ նավթի, արծաթի, պղնձի, մանգանի, ցինկի, նիկելի եւ ֆոսֆորային հումքի, երրորդը՝ գազի, քարածխի, ոսկու եւ անագի օգտակար հանածոների պաշարների ծավալով:

Ղազախստանն ունի արեւմտյան շրջանում կենտրոնացված նավթի ու գազի զգալի պաշարներ, որոնք թույլ են տալիս երկիրը դասել աշխարհի խոշորագույն նավթ արդյունահանող պետությունների շարքը: Հարավ-Տուրգայական իջվածքի շրջանում հայտնաբերված նոր նավթահանքերն ընդլայնում են հանրապետության նավթարդյունահանման զարգացման հետագա հեռանկարները: Կաշագանի հանքավայրն իր մեծությամբ աշխարհում հինգերորդն է, որի նավթի պաշարները գնահատվում են 7-9 մլրդ բարել, իսկ նավթակիր կառուցվածքի ընդհանուր հաստատված երկրաբանական պաշարները շուրջ 40 մլրդ բարել են:

Գազի հետախուզված պաշարները կազմում են 2,7 մլրդ տ, ինչը համաշխարհային պաշարների 1,5%-ն է, ուրանինը՝ 1,69 մլն տ, որը 21%-ն է:

Նավթի պաշարներով Ղազախստանն աշխարհում գրավում է 7-րդ տեղը, գազի պաշարներով՝ 6-րդը, ուրանի պաշարներով՝ 2-րդը: Մինչեւ 2017թ. երկիրը կմտնի նավթի ու գազի խոշորագույն արդյունահանող եւ արտահանող երկրների տասնյակի մեջ:

Եվրասիական մայրցամաքի կենտրոնում գտնվելը նախանշում է Ղազախստանի զգալի տրանսպորտային եւ հաղորդակցային պոտենցիալը տարանցիկ փոխադրումների բնագավառում եւ հետաքրքրություն է ներկայացնում աշխարհի շատ երկրների համար: Միայն երկաթուղու ընդհանուր երկարությունը կազմում է 14,5 հազար կմ: Հիմնական նավահանգիստներն են

Ակտաուն եւ Բաուտինոն, որոնցով ուղիղ ելք կա դեպի Իրան եւ Ադրբեջան:

Ղազախները թյուրքական եւ մոնղոլական քոչվոր ցեղերի խառնուրդ են, որոնք արեւելքից եկել եւ բնակություն են հաստատել ներկայիս տարածքում 13-րդ դարում: Այն խորհրդային հանրապետություն է դարձել 1936թ.:

Բնակչությունը 15,7 մլն է, որից ղազախները կազմում են 53,4%, ռուսները՝ 30%, ուկրաինացիները՝ 3,7%, ուզբեկները՝ 2,5%, գերմանացիները՝ 2,4%, թաթարները՝ 1,7%, ուղուրները՝ 1,4% եւ այլն:

Պետական լեզուն ղազախերենն է, պետական հաստատություններում ղազախերենի հետ հավասար պաշտոնապես օգտագործվում է նաեւ ռուսերենը:

Դրամական միավորը՝ թենգե: \$1=147 թենգե:

Կրոնական պատկանելությունը. մահմեդականներ՝ 47%, ռուս օրթոդոքսներ՝ 44%, բողոքականներ՝ 2%, այլք՝ 7%:

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀԴԱՆԻՇՆԵՐԸ

Ղազախստանի Հանրապետության պետական զինանշանը

Երկրի պետական զինանշանն ընդունվել է 1992թ. հունիսի 4-ին: Հեղինակներն են անվանի ճարտարապետներ Ժանդարբեկ Մալիբեկովը եւ Ծոթա Ուալիխանովը:

Զինանշանը շրջանաձեւ է, որի կենտրոնական տարրը շանիրակն է՝ յուրդի գագաթի շրջանաձեւ մասը: Շանիրակն ընտանեկան բարեկեցության, խաղաղության, հանգստության խորհրդանիշն է: Յուրդի զենիթային անցքը՝ թունդիկը, հիշեցնում է վառ արեւ երկնագույն խաղաղ երկնքի ֆոնի վրա: Գագաթային ձողերը՝ ուիկները, հավասարաչափ տարածվելով կենտրոնից, արեւի ճառագայթներ են հիշեցնում: Ընդհանուր առ-

մամբ, զինանշանն արտացոլում է ղազախների խաղաղասեր էությունը:

Չինանշանի երկու կողմերում պատկերված են տուլպարներ՝ կիսալուսնի ձևով եղջյուրներով ոսկեթե ֆանտաստիկ նժույգներ, որոնց կերպարը նշանակում է առյուծի անվախություն, բազեի խորաթափանցություն, ցուլի ֆիզիկական ուժ, եղնիկի արագություն եւ պլաստիկություն, աղվեսի խորամանկություն եւ հնարամտություն թշնամիների դեմ պայքարում: Ձիերի ոսկյա թեւերը հիշեցնում են նաեւ հացահատիկի ոսկե հասկեր, ինչը աշխատանքի, առատության եւ նյութական բարեկեցության խորհրդանիշ է:

Չինանշանի կենտրոնում գտնվում է հնգաթե աստղ, որի իմաստը հետեւյալն է՝ մեր սիրտը եւ գիրկը բաց են բոլոր հինգ մայրցամաքների ներկայացուցիչների համար:

Չինանշանի ոսկեգույնը համապատասխանում է Ղազախստանի ժողովուրդների պայծառ, լուսավոր ապագային, իսկ երկնագույնը մարմնավորում է նրանց ձգտումը դեպի խաղաղությունը, համաձայնությունը, բարեկամությունը եւ միասնությունը մոլորակի բոլոր ժողովուրդների հետ:

Ղազախստանի Հանրապետության պետական դրոշը

Դրոշն ընդունվել է 1996թ. հունվարի 24-ին: Հեղինակն է Շակեն Նիյազբեկովը:

Այն հորիզոնական ուղղանկյունաձեւ երկնագույն կտոր է, որի ձախ կողմում պատկերված է ոչխարի եղջյուրներ կոչվող ոսկեգույն ազգային զարդանկարը, կենտրոնում՝ ոսկեգույն արեւ եւ սավառնող ոսկեգույն արծվի ուրվանկար: Արեւի ճառագայթները միաժամանակ հասկերի ձեւ ունեն:

Դրոշի երկնագույնը վկայում է ժողովրդի մշակութաէթնիկական միասնության մասին եւ միաժամանակ ցույց է տալիս պետության անբաժանելիության գաղափարը:

Քոչվորների աշխարհայացքում հատուկ տեղ է գրավում քարարծիվը կամ տափաստանային արծիվը: Տափաստանաբնակների համար այն ազատության, անկախության, բարձրությանը ձգտելու, դեպի ապագա ձախրելու խորհրդանիշն է: Բացի

այդ՝ նա իր հզոր ուժով ունակ է արժանի հակահարված տալու յուրաքանչյուրին, ով կփորձի խանգարել իր ապագա թռիչքը:

Ղազախստանի Հանրապետության պետական հիմեր ոուսերեն լեզվով

В небе золотое солнце,
В степи золотое зерно.
Сказание о мужестве – моя страна.
В седой древности
Родилась наша слава,
Горд и силен мой казахский народ.

Припев:

О, мой народ! О, моя страна!
Я твой цветок, возвращенный тобой.
Я песня, звенящая на твоих устах,
Родина моя – мой Казахстан.

У меня простор неоглядный
И дорога, открытая в будущее.
У меня независимый,
Сплоченный, единый народ.
Как извечного друга
Встречает новое время
Наша счастливая страна, наш народ.

Припев:

О, мой народ! О, моя страна!
Я твой цветок, возвращенный тобой.
Я песня, звенящая на твоих устах,
Родина моя – мой Казахстан.

Ղազախստանի տոները

Ղազախստանի Հանրապետությունում նշվում են ազգային, պետական, մասնագիտական եւ այլ տոներ:

Հունվարի 1-2	Նոր տարի
Հունվարի 7	Սուրբ ծնունդ
Մարտի 8	Կանանց միջազգային օր
Մարտի 16	Ղազախստանի հանրապետական գվարդիայի օր
Մարտի 21-23	Նովրուզ բայրամ
Ապրիլի 1-ին կիրակի	Երկրաբանի օր
Մայիսի 1	Ղազախստանի ժողովուրդների միասնության օր
Մայիսի 7	Հայրենիքի պաշտպանի օր
Մայիսի 9	Հաղթանակի օր
Մայիսի 31	Քաղաքական ռեպրեսիաների զոհերի հիշատակի օր
Հունիսի 4	Ղազախստանի Հանրապետության պետական խորհրդանիշների օր
Հունիսի 23	Ոստիկանության օր
Հունիսի 3-րդ կիրակի	Բուժաշխատողի օր
Հունիսի վերջին կիրակի	Մամուլի, հեռուստատեսության եւ ռադիոյի օր
Հուլիսի 2	Դիվանագիտական աշխատողի օր
Հուլիսի 6	Մայրաքաղաքի օր
Հուլիսի 3-րդ կիրակի	Մետալուրգի օր
Օգոստոսի 1-ին կիրակի	Տրանսպորտի եւ կապի աշխատողների օր
Օգոստոսի 2-րդ կիրակի	Ծինարարի օր
Օգոստոսի 3-րդ կիրակի	Սպորտի օր
Օգոստոսի վերջին կիրակի	Հանքավորի օր
Օգոստոսի 30	Սահմանադրության օր

Սեպտեմբերի 1	Գիտելիքի օր
Սեպտեմբերի 1-ին կիրակի	Նավթագազային համալիրի աշխատողների օր
Սեպտեմբերի 3-րդ կիրակի	Ղազախստանի Հանրապետության ժողովուրդների լեզուների օր
Սեպտեմբերի 28	Ատոմային բնագավառի աշխատողների օր
Հոկտեմբերի 1-ին կիրակի	Ուսուցչի օր
Հոկտեմբերի 25	Հանրապետության օր
Նոյեմբերի 15	Ազգային արժույթի՝ թենգեի օր
Նոյեմբերի 3-րդ կիրակի	Գյուղատնտեսության աշխատողների օր
Դեկտեմբերի 16	Անկախության օր
Դեկտեմբերի 3-րդ կիրակի	Էներգետիկի օր

Անկախ Ղազախստանի Հանրապետության 1-ին սահմանադրությունն ընդունվել է 1993թ. հունվարի 28-ին՝ Ղազախստանի Գերագույն խորհրդի 9-րդ նստաշրջանի ժամանակ: Նրա հիմքում ընկած էր խորհրդարանական հանրապետության մոդելը: Գործող սահմանադրությունն ընդունվել է համազգային հանրաքվեի ժամանակ 1995թ. օգոստոսի 30-ին: 1998 եւ 2007թթ. սահմանադրության մեջ Նախագահի լիազորություններն ավելացնող զգալի փոփոխություններ են կատարվել:

ԱՍՏԱՆԿ ԴԱԶԱԽՍԱՆԻ ՆՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

1994թ. հուլիսի 6-ին ընդունվում է Ղազախստանի Գերագույն խորհրդի որոշումը մայրաքաղաքը Ալմա-Աթայից Ակմոլա տեղափոխելու մասին: 1997թ. դեկտեմբերի 10-ին երկրի նախագահ Նուրսուլթան Նազարբաևը որոշում է կայացնում մայրաքաղաքը Ալմա-Աթայից Ակմոլա տեղափոխելու մասին: Որպես մայրաքաղաքի տեղափոխման հիմնական պատճառներ նշվում են Ալմա-Աթայի սեյսմիկ գոտում գտնվելը, ընդլայնվելու համար անբավարար տարածությունը, ինչպես նաև միջազգային սահմանին մոտ գտնվելը: Բացի այդ, Ղազախստանի հյուսիսի մեծ մասը հիմնականում ռուսներով է բնակեցված, ինչը կարող էր հետագայում անջատողական տրամադրությունների պատճառ դառնալ:

1998թ. մայիսի 6-ին նախագահի հրամանագրով Ակմոլան վերանվանվում է Աստանայի: «Աստանա» ղազախերեն բառացիորեն նշանակում է «մայրաքաղաք», սակայն այդ բառը ծագում է պարսկերեն «աստա-նեհ» բառից, որն ունի «սրբավայր» իմաստը:

Մինչև 2006թ. մայրաքաղաքի օրը նշվում էր հունիսի 10-ին, սակայն 2006-ից քաղաքի օրը տեղափոխվում է հուլիսի 6-ին, որը նաև նախագահ Նուրսուլթան Նազարբաևի ծննդյան օրն է:

Ձմռանն այստեղ ջերմաստիճանը հասնում է մինչև -40 աստիճանի: Աստանան, Մոնղոլիայի մայրաքաղաք Ուլան-Բատորից հետո, աշխարհի ամենացուրտ մայրաքաղաքն է: Քաղաքի բնակիչները կատակում են. «Հունիսին այստեղ ամառը դեռ չի սկսվել, իսկ օգոստոսին արդեն ավարտվում է»: Ամենաբարձր ջերմաստիճանը հուլիսին է՝ միջինը +21 աստիճան:

Աստանայի նախկին անվանումներն են՝ Ակմոլա, Ակմոլինսկ (1830-1961), Յելինոգրադ (1961-1992), Աքմոլա (1992-1998): 2008թ.-ին խորհրդարանն առաջարկ է ներկայացնում նոր մայրաքաղաքը վերանվանել Նուրսուլթան՝ ի պատիվ երկրի նախագահի: Սակայն այդ առաջարկը մերժում է ստանում հենց Նազարբաևի կողմից, ում կարծիքով մայրաքաղաքի վերանվանման մասին որոշումը պետք է լինի ապագա սերունդների գործը:

Քաղաքը գտնվում է Իշիմ գետի ափերին: Նախկինում Ակմոլան (որը երկու նշանակություն ունի՝ «Սպիտակ սրբատեղի» եւ «Սպիտակ լիություն») կառուցվել է Միջին Ասիայից Արեւմտյան Սիբիր տանող հին քարավանային ճանապարհին: Ակմոլան մեծ առեւտրային նշանակություն ուներ, հիմնականում անասունների առեւտրի բնագավառում:

Մայրաքաղաքային կարգավիճակ ստանալուց եւ «Աստանա՝ նոր քաղաք» հատուկ տնտեսական գոտու կազմավորումից հետո, քաղաքում իրականացվում են բազմաթիվ ժամանակակից ճարտարապետական-քաղաքաշինական նախագծեր: Բնակչության թիվը 270 հազարից (1996) հասել է 750 700-ի (2008): Կանխատեսվում է, որ մինչեւ 2030թ. այն կհասնի 1 մլն-ի: Հատկանշական է, որ փոխվել է քաղաքի ժողովրդագրությունը: Եթե 1989թ. սլավոնական մեծամասնությամբ քաղաքում ղազախները կազմում էին բնակչության 17%-ը, ապա այժմ արդեն 60%-ն են:

Աստանայի զարգացումը կողմնորոշված է երկարաժամկետ ռազմավարական նպատակների համար: Այս կապակցությամբ Ղազախստանի Հանրապետության նախագահի թիվ 67 հրամանագրով հաստատվել է Քաղաքի կայուն զարգացման ռազմավարական ծրագիրը մինչեւ 2030թ., որը սահմանում է քաղաքի՝ որպես պետության մայրաքաղաքի կայացմանը եւ կայուն զարգացմանն ուղղված գործունեության հիմնական ուղղությունները: Ծրագրով նախատեսված է քաղաքը դարձնել ոչ միայն Ղազախստանի, այլեւ ողջ Կենտրոնական Ասիայի կենտրոնը:

Աստանայի նոր կառուցված մասը, որտեղ գտնվում են նախագահի նստավայրը, կառավարական շենքերը, նախարարությունների մեծ մասը, դեսպանությունները, քիզնես-կենտրոնները, բարձրակարգ հյուրանոցները, Իշիմ գետի ձախ ափին է: Նոր Աստանայի նախագիծը կազմել են անվանի ճարտարապետներ Կիշո Կուրոկավան, Վլադիմիր Լապտեւը եւ դիզայներ Նորման Ֆոսթերը:

Աստանայի նոր զինանշանի կոնցեպցիայի եւ էսքիզի հեղինակը երկրի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւն է:

Աստանայի քույր-քաղաքներն են Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը, Կիեւը, Կազանը, Տաշքենդը, Թբիլիսին, Ռիզան, Վարշավան, Գդանսկը, Դուբայը, Սեուլը, Ամմանը, Պիտսբուրգը:

ԲԱՅՏԵՐԵԿ՝ ԱՍՏԱՆԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՉԸ

Բայտերեկը Աստանայի գլխավոր խորհրդանիշն է եւ նշանավորում է Աստանայի նոր կարգավիճակը՝ որպէս Ղազախստանի մայրաքաղաքի: «Բայտերեկ» նշանակում է «բարձր բարդի»:

Հնագույն լեգենդն ասում է, որ «աշխարհների հատման կետում հոսում է Համաշխարհային գետը, նրա ափերին աճում է կենաց ծառը՝ Բայտերեկը, որը արմատներով պահում է հողը, իսկ սաղարթով հենվում երկնքին: Ծառի վրա բոյն է հյուսել Սամրուկ անունով երջանկության թռչունը»:

Իշիմ գետի ծախ ափին՝ Աստանա քաղաքի նոր կառուցված մասի կենտրոնում վեր է խոյանում Բայտերեկը՝ կենաց ծառը: Այն մետաղից, բետոնից եւ քամելեոն-ապակուց կառուցված յուրահատուկ ճարտարապետական կոթող է: Բարձրությունը 105մ է, քաշը՝ 1000տ: Աշխարհում առաջին անգամ 22մ տրամագիծ եւ 300տ քաշ ունեցող ապակեպատ գունդը բարձրացված է 97մ բարձրության վրա, որտեղից հիասքանչ տեսարան է բացվում ողջ քաղաքի վրա: 97մ բարձրությունը խորհրդանշում է այն, որ 1997թ.-ին է մայրաքաղաքը Ալմա Աթայից տեղափոխվել Աստանա:

Գնդում, բացի գննման հարթակից, գտնվում է նաեւ մի հետաքրքիր կոմպոզիցիա՝ Ալականը, դա անկախ Ղազախստանի առաջին նախագահ Նուրսուլթան Ղազարբաեւի աջ ձեռքի ոսկյա դաջվածքն է: Այս կոմպոզիցիայի վրա ծախսվել է 2կգ ոսկի եւ 6 կգ արծաթ: Մալաքիտե ափսեատիպ պատվանդանը գտնետրում է ոսկյա գոտին, որի վրա սկյութական խորհրդանշաններ են, ինչպէս նաեւ հովազի գլուխ, որը խորհրդանշում է դազախ ժողովրդի անկախությունը: Ցանկացած մարդ կարող է իր ձեռքը դնել այդ դաջվածքի վրա՝ ասես բարեւելով նախագահին, որն արտահայտում է պետության ու նրա քաղաքացիների հոգատար եւ սրբազան վերաբերմունքը խաղաղ կյանքի, բարեկամության ու համաձայնության նկատմամբ: Ասում են, որ եթե ձեռքդ դնես նախագահի ձեռքի վրա եւ ցանկություն պահես մտքում, այն անպայման կկատարվի: Ձեռքը դնելիս հնչում է մի հայրենասիրական քայլերգ, որի տեքստը գրել է նախագահ Ղազարբաեւը:

Այս հուշարձանին հատուկ նշանակություն է տալիս այն, որ այստեղ է անցկացվել Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների 1-ին համագումարը: Վերջինին մասնակցել է կրոնական 17 առաջնորդ, իսկ Բայտերեկի շուրջը 17 վրան է տեղադրվել:

1-ին համագումարից հետո Ալականի կողքին հայտնվել է եւս մի կոմպոզիցիա: Այստեղ իրենց «բատան»՝ Ղազախստանի հողին իրենց օրինանքն են թողել 17 դավանանքների առաջնորդները:

Աստանա-Բայտերեկը պետության անցյալի, ներկայի ու ապագայի մարմնացումն է: Այն մատղաշ, ամուր, աճող ծառ է, որը խորհրդանշում է իր պատմական արմատները պահպանած, ամուր հիմք ունեցող եւ ապագա բարեկեցության ձգտող պետությունը:

Աստանա-Բայտերեկ հուշարձանը Ղազախստանի անկախության խորհրդանիշն է:

Նշենք, որ Բայտերեկը պատկերված է նաեւ ղազախական դրամի՝ թենգեի վրա:

Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումար

Ղազախստանում ապրում է 130 ազգություն եւ կա 46 դավանանք: Անցյալ դարի անհանգիստ 90-ական թվականներին շատ փորձագետներ այս երկիրը նշում էին էթնիկական հողի վրա հավանական զանգվածային անհանգստությունների թիվ մեկ թեկնածուն: Սակայն կյանքը ցույց տվեց, որ Ղազախստանը պատվով դուրս եկավ այդ խնդրից:

Միջէթնիկական եւ միջկրոնական համաձայնության հիման վրա ղազախական հասարակության միավորումը դառնում է ռազմավարական խնդիրներից մեկը, որն ամրագրված է երկրի սահմանադրության մեջ: Գլխավոր օրենքում ասվում է. «Ոչ սահմանադրական են ծանաշվում ցանկացած գործողություններ, որոնք կարող են խախտել ազգերի միջեւ համաձայնությունը... Չի թույլատրվում պատերազմի, սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական, տոհմային գերազանցության քարոզչությունը»:

Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների կանոնավոր հանդիպումների անցկացման մասին գաղափարը պատկանում է Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևին: Նրա խոսքերով՝ վաղուց արդեն հասունացել էր համաշխարհային հանրության ճակատագրի եւ աշխարհի պահպանման ու ամրապնդման հարցում կրոնների դերի մասին խոսելու անհրաժեշտությունը:

Նշենք, որ թվաքանակով առաջին դավանանքը Ղազախստանում մահմեդականությունն է: Այն դարերի ընթացքում փոխազդել է ղազախների մոտ պահպանված հեթանոսության եւ շամանիզմի հետ: Արդյունքում այս երկրում իսլամն այժմ իրենից ներկայացնում է հին հոգեւոր պատկերացումների եւ ղազախների ազգային-կենցաղային ավանդույթների մի սինթեզ: Թվաքանակով երկրորդ դավանանքը Ռուսական ուղղափառ եկեղեցին է: Վերջերս Ղազախստանում իր գործունեությունն է ակտիվացրել Հռոմեական կաթոլիկ եկեղեցին:

Միջազգային փորձագետների կարծիքով՝ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ տարեցտարի սրացող երկխոսության մեջ Ղազախստանի միջնորդությունը գնալով ավելի արդիական է դառնում: Տվյալ ձեռաչափով հանդիպումներն ուշադրության արժանի փորձ են հանդիսանում՝ օգտագործել աշխարհի կրոնների ոգեղեն ու բարոյական պոտենցիալը միջազգային հակամարտությունները կարգավորելու, գլոբալ սպառնալիքներին հակազդելու, քսենոֆոբիան եւ անհանդուրժողականությունը հաղթահարելու համար:

Ղազախստանի նախագահի գաղափարին հավանություն են տվել աշխարհի պրակտիկորեն բոլոր հոգեւոր առաջնորդները, շատ պետությունների ու կառավարությունների ղեկավարները, ինչպես նաեւ ազդեցիկ քաղաքական գործիչները:

Կրոնական առաջնորդների առաջին հանդիպմանը ողջույնի իր ուղերձում այն ժամանակվա ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը նշել է. «Կրոնը կարող է յուրահատուկ իշխանության ոլորտ լինել: Դժվար ժամանակ այն կարող է մեզ ուժ եւ սփոփանք տալ: Կրոնները տարբերվում են, սակայն մեր սրտում մենք դիմում ենք համընդհանուր արժեքների: Լինել բարեսիրտ, լինել համբերատար, սիրել մերձավորին՝ ոչ մի կրոն չի կարող իր մենաշնորհը հաստատել այս արժեքների նկատմամբ»:

Համագումարի քարտուղարության պետ Քասիմ Տոկաեի խոսքերով. «Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարը դարձավ Ղազախստանի էական ներդրումը միջմշակութային երկխոսության գլոբալ գործընթացում եւ իրավամբ հատուկ տեղ է զբաղեցնում համաշխարհային հանդուրժողականության եւ փոխըմբռնման ամրապնդման գործում»:

2003թ.-ին Աստանայում բարձր մակարդակով անցկացվում է աշխարհի կրոնական առաջնորդների առաջին հանդիպումը: Համագումարին ողջույնի ուղերձ են հղում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը եւ այլ բարձրաստիճան անձինք:

Աստանայի առաջին համագումարին մասնակցում է շուրջ 30 պատվիրակություն Եվրոպայից, Ասիայից, Մերձավոր Արեւելքից եւ Ամերիկայից՝ ներկայացնելով քրիստոնեությունը եւ իսլամը, հուդայականությունն ու բուդդիզմը, հինդուիզմը, դաոսիզմը եւ սինտոիզմը:

Մայրաքաղաքի գլխավոր հրապարակում գտնվող Աստանայի խորհրդանիշի՝ Բայտերեկի շուրջը, որը կենաց ծառ է խորհրդանշում, խփվում է 17 վրան՝ առաջին հանդիպմանը մասնակցող հոգետր առաջնորդների թվով: Համագումարի վերջում բոլոր 17 առաջնորդները Բայտերեկի ոսկյա գնդում, 97 մ բարձրության վրա իրենց օրհնանքն են թողնում:

Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների երկրորդ համագումարը տեղի է ունենում 2006թ. սեպտեմբերին այդ իրադարձության համար հատուկ կառուցված Խաղաղության եւ համաձայնության պալատում, ուր հավաքվում է 20 պետությունից 43 պատվիրակություն: Ավելի քան 160 պատվիրակներ ներկայացնում էին աշխարհի բոլոր հիմնական ավանդական դավանանքները: Որպես պատվավոր հյուրեր ներկա էին ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվիրակները:

Կրոնական առաջնորդների երրորդ համագումարը տեղի է ունենում 2009թ. հուլիսի 1-2-ին: Հանդիպման արդյունքում բանաձեւ է ընդունվում, որտեղ ընդգծված են կրոնական առաջնորդների պատասխանատվությունը հասարակության համար, կրոնի անքակտելի կապը բարոյականության հետ, կոչ է արվում զարգացնել դավանանքների միջեւ երկխոսությունն ու համագործակցությունը, ինչպես նաեւ շեշտվում է յուրաքանչյուր ժո-

դովրդի մշակութային ու հոգետր ժառանգության պահպանման կարեւորությունը:

Համագումարը կոչ է արել նաեւ բոլոր բարի կամքի տեր մարդկանց հակազդել կրոնական տարբերությունները աստելության քարոզչության համար օգտագործելու փորձերին, ինչպես նաեւ խրախուսել տարբեր կրոնների եւ քաղաքակրթությունների էությունը բացատրելու եւ կրթությամբ փոխըմբռնումը լավացնելու ջանքերը:

Հայկական առաքելական եկեղեցին մասնակցել է 2-րդ եւ 3-րդ համագումարներին: 2007թ.-ից մշտապես գործող համագումարի Քարտուղարության անդամ է հանդիսանում Հայկական եկեղեցու ներկայացուցիչ, Գեղարքունիքի թեմի առաջնորդ, Հանրային խորհրդի անդամ Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը: Նրա խոսքով. «Հենց սկզբից մեր Սուրբ եկեղեցին հավանությամբ է ընդունել համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համաժողովի ստեղծման մասին Ղազարխտանի նախագահ Ն. Նազարբաեւի նախաձեռնությունը, եւ մենք ամբողջությամբ կիսում ենք նրա այն կարծիքը, որ «հոգետրության ռեգրեսը ժամանակակից աշխարհի այսօրվա տնտեսական ցնցումների գլխավոր պատճառներից մեկն է», եւ որ անհրաժեշտ է նոր, առավել արդարացի աշխարհակարգ, իսկ հոգետր առաջնորդներն էլ պետք է դառնան դրա կրողները»:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱԲԿ

Կենտրոնական Ասիայի հյուսիսային տափաստանային գոտում ձեւավորվել է համաշխարհային քաղաքակրթության վաղ ձեւերից մեկը՝ անասնապահական քոչվոր տնտեսությունը: Այստեղ են ծիուն սանձել, այստեղ են ձեռնասուն դարձրել ուղտին, վայրի հովվաշանը եւ լեռնային ոչխարին:

Հնագիտական գտածոների համաձայն՝ Ղազախստանի տարածքում մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներում ապրել են բազմաթիվ քոչվոր ցեղեր, որոնցից են Արեւելյան չուրերը՝ ուզբերը՝ արեւելքում, եւ ասիական սկյութները՝ սակերը՝ հարավում: Հետագայում մեր դարաշրջանի սկզբին այստեղով են անցել ուսունները եւ հոները, 6-8 դդ.՝ թյուրքերը, 10-11 դդ.՝ օղուզները, 13-14 դդ.՝ մոնղոլ-թաթարները: Այս ժողովուրդներից յուրաքանչյուրն իր հետքն է թողել ղազախական ցեղերի գենոֆոնդում, լեզվում, մշակույթում, զբաղմունքներում եւ կազմակերպական կառուցվածքում:

Լեզենդների մեծ մասը ղազախական ազգության հիմնադիր են անվանում Ալաշա-խանին (կամ Ալշին խանին): «Ղազախ» բառը հին թյուրքական լեզվով նշանակում է «ազատ եւ անկախ քոչվոր»:

Մոնղոլական լեռներից մինչեւ Դենպրոն ու Դանուբն ընկած տարածքում բնակվողներին հույներն անվանում էին սկյութներ, իսկ պարսիկները՝ սակեր: Ղազախստանի ներկա տարածքում բնակվող ցեղերի մասին գրավոր տեղեկություններ են հանդիպում Հերոդոտի «Պատմության» մեջ, որտեղ նա նկարագրում է սակերին (մ.թ.ա. 7-3 դդ.) եւ հիշատակում նրանց հարեանության մասին Աքեմենյան Պարսկաստանի հետ: Ո՛չ պարսկական Կյուրոս կայսերը, ո՛չ էլ Դարեհ կայսերը չի հաջողվում հաղթել ռազմատենչ սկյութների հեծյալ ջոկատներին: Ալեքսանդր Մեծը, որին Ասիայում անվանում էին Իսկանդեր Երկեղջյուր (սաղավարտի ձեւի պատճառով), իր հաղթական առաջխաղացումը դեպի արեւելք կանգնեցնում է Յակսարտ (Սիրդարյա) գետի մոտ մ.թ.ա. 327թ., հիմնում Ալեքսանդրիա Եսխատա հերթական բնակավայրը (հետագայում՝ Խոջենթ) եւ, որոշելով չմտնել անձայրածիր տափաստան, ուղղվում է դեպի հարավ՝ Հնդկաստան:

Սկյութական մշակույթի անվանի հուշարձաններն են Բես-
շատըր (հինգ վրան) դամբարանը էլի գետի հարթավայրում եւ
Ալմաթիի մոտի Իսսիկ դամբանաթումբը, որում հայտնաբերվել
են ազնվատոհմիկ սկյութի ոսկորները՝ ոսկե թիթեղներից
պատրաստված զրահով (մ.թ.ա. 6-5դդ.), որին հետազոտողներն
անվանել են «Ոսկե մարդ»: «Ոսկե մարդու» արձանները կարելի
է տեսնել Ալմաթիում, երկրի այլ քաղաքներում, ինչպես նաեւ
թանգարաններում:

Ղազախստանի տարածքում բազմաթիվ հնագույն պետութ-
յուններ են գոյություն ունեցել, օրինակ՝ Օղուզական, Ղարախան-
յան եւ Ղարլուկյան պետությունները: Միրդարյա գետի ուղղութ-
յամբ եւ Արայան ծովի ափերին տեղակայված են եղել տասնյակ
քաղաքներ, որոնք կանգնած էին Մետաքսի ճանապարհի վրա:
Դրանցից մեկը՝ Չիրիկ-Ռաբատը, հին սակյան, այնուհետեւ օղու-
զական պետության մայրաքաղաքն էր: Հարկ է նշել նաեւ Տա-
րազ քաղաքը, որը Մետաքսի ճանապարհին գտնվող կարեւոր
քաղաք էր՝ արեւելքը արեւմուտքին միացնող:

Մինչեւ մոնղոլական արշավանքը, 6-13 դդ. Ղազախստանի
տարածքում, միմյանց հաջորդելով, գոյություն են ունեցել Արեւ-
տա-թյուրքական, Թյուրգեշական, Ղրլուկյան կագանատները, օ-
ղուզների, ղարախանների, կիմեկների, ղիչաղների պետություն-
ները: Մոնղոլական արշավանքից հետո ձեւավորվում են Մոնղո-
լական կայսրության Ջուչիի եւ Չագատայի ուլուսները, որոնք այ-
նուհետեւ կյանք են տալիս Ակ-Օրդային, Մողոլիստանին, ավելի
ուշ՝ Ղազախական խանությանը:

13 դ. Ղազախստանի տարածքը մտնում է Ոսկե Հորդայի
կազմի մեջ, որի՝ 15 դ. Լենկթեմուրի կողմից ջախջախումից հե-
տո այդ տարածքում 1440թ. ձեւավորվում է Նոգայական Հորդան
արեւմուտքում (ներկայիս արեւմտյան Ղազախստանի հողերը) եւ
1428թ. Ուզբեկական խանությունն արեւելքում (Ոսկե Հորդայի
անվանի խան Ուզբեկի անունով, որն իսլամ մտցրեց Ոսկե Հոր-
դայում):

Չինգիզ խանի զորքերի հարձակումից հետո 15 դ. երկրորդ
կեսին առաջանում են առաջին ղազախական խանությունները,
իսկ 16 դ. առաջին կեսին ղազախական ազգության ձեւավոր-
ումն ավարտվում է:

Ղազախական խան Քասիմին (1445-1521) հաջողվում է
միավորել տափաստանային ցեղերը: Ղազախական խանության
ամրապնդման գործը շարունակում է նրա որդին՝ Խակնազարը

(իշխել է 1538-1580), այնուհետև Տաուկե խանը (1680-1718): Վերջինիս օրոք է միասնական դառնում քոչվորական պետությունը՝ իր Թուրքեստան մայրաքաղաքով, Ղազախական խանությունում ընդունվում են օրենքներ, որոնց համաձայն՝ ստեղծվում են հայտնի ղազախական շրջանները՝ Տոլե բի (Ավագ ժուգ), Կազիբեկ բի (Միջին ժուգ) և Այթեբե բի (Կրտսեր ժուգ):

Ղազախական խանությունը քայքայվում է 1718թ. ջունգարների հարվածներից, սակայն շարունակում է պահպանել մոնղոլների կողմից ժառանգած տարածքային բաժանումը երեք ժուգի:

1723-1727թթ. տեղի է ունենում ամենաահեղ և արյունալի հարձակումը, որը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Մեծ աղետի տարիներ», երբ ղազախ ժողովրդի զգալի մասը, գտնվելով միմյանց հետ թշնամացած տերություններում, կոտորվում է ջունգարների կողմից: Գրավվում են Թուրքեստան և Տաշքենդ քաղաքները, անապաստան մնացած բազմաթիվ մարդիկ, փախչելով զավթիչներից, գնում են ուզբեկական հողեր՝ Սամարղանդ և Բուխարա:

Այս ամենից հետո ղազախները ստիպված են լինում օգնություն խնդրել Ռուսաստանից: 1717թ. Տաուկե խանն առաջին անգամ դիմում է Պետրոս 1-ին՝ խնդրելով ղազախներին վերցնել ռուսական ենթակայության տակ, սակայն առանց յասակի (պարհակի) մուծման, առանց պարտավորություններ կատարելու և պահպանելով խանի իշխանությունը: Պետրոս 1-ինն իսկույն գնահատում է Ղազախական խանության նշանակությունը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ, որը սրընթաց կերպով առաջ էր շարժվում դեպի արեւելք, դեպի Խաղաղ օվկիանոս: Սակայն նրանից ղազախներն այդպես էլ օգնություն չեն ստանում. Ռուսաստանին ձեռնտու էին ղազախ-ջունգարական պատերազմները: Սիբիրյան նահանգապետ, իշխան Մատվեյ Գագարինը, որի հետ անձամբ էին վարվում միավորման մասին բանակցությունները, հասկանում է, որ դա մեծ բարդությունների կհանգեցնի Ջունգարիայի հետ Ռուսաստանի հարաբերություններում և կխախտի Իրտիշի երկայնքով ոսկով ու արծաթով հարուստ վայրերի յուրացման տնտեսական ծրագրերը:

Արդեն 1730 թ.-ին Կրտսեր ժուգի խան Աբուլիաիրը նորից օգնություն է խնդրում, այս անգամ արդեն կայսրուհի Աննայից՝ առաջարկելով ռազմական դաշինք ջունգարների դեմ: Սակայն

Ռուսաստանը, ունենալով հեռու գնացող ծրագրեր, համաձայնվում է միայն պրոտեկտորատի: Այդ ժամանակ Միջին ժուզի խան Աբուլմամբետը եւ նրա հորեղբորորդի սուլթան Աբլայը, մաներելով երկու հզոր կայսրությունների միջեւ («առյուծի եւ վիշապի միջեւ»), ընդունում են կրկնակի հպատակություն՝ եւ՛ Ռուսաստանի, եւ՛ Չինաստանի (1740թ.): Իսկ Ավագ ժուզն էլ գտնվում էր նրան հարավից ձնշող Կոկանդական խանության ազդեցության տակ:

Հարկ է նշել, որ Ջունգարիան պատերազմ էր մղում նաեւ չինացիների դեմ, եւ դազախ Աբլայ խանը փորձում էր օգնել նրան պահպանել միասնական պետությունը: Նա այսպես էր մտածում. «Լավ է սահմաններին ունենալ հզորությունը կորցրած Ջունգարիա, քան Ցինական կայսրություն»: Սակայն չինացիները երկրի երեսից ջնջում են Ջունգարական պետությունը եւ նրա տեղում 1761թ. ստեղծում Սինժյան (նոր սահման) գավառը:

Ղազախստանը Ռուսական կայսրության կազմում

Ղազախստանը միանում է Ռուսական կայսրությանը կամավոր հիմունքներով 19դ. երկրորդ կեսին: 1906-1912թթ. ստոլիպինյան ագրարային բարեփոխումների արդյունքում Ռուսաստանի կենտրոնական մասերից Ղազախստան են տեղափոխում 500 000 գյուղացիական տնտեսություններ, որոնց հատկացվում է 17 մլն դեսյատին արդեն յուրացված լավագույն հող:

1907թ. ընդունվում է «Պետական Դումայի ընտրությունների մասին օրենքը», որն ընտրական իրավունքից զրկում է Սիբիրի, Միջին Ասիայի եւ Ղազախստանի բնիկ ժողովուրդներին: Այդպիսի մարդկանց չէր կարելի նաեւ զորակոչել բանակ, սակայն, երբ սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, Նիկոլայ 2-ի հրամանագրով նրանց ուղարկում են թիկունքային աշխատանքների, ինչը հանգեցնում է Թուրքեստանի եւ դազախական տափաստանի ժողովուրդների ապստամբությանը: Այդ ժամանակ, փրկվելով հարկադիր աշխատանքներից եւ հալածանքներից, դազախական տոհմերի մի մասը քոչում է Չինաստան:

1917թ. Փետրվարյան հեղափոխությունից եւ ժամանակավոր կառավարության ստեղծումից հետո դազախական մտավորականության կաղեւտամետ առաջնորդները հունիսին Օրեն-

բուրգում անցկացնում են Առաջին համադրողական համագումարը: Օրակարգի հիմնական հարցերն էին Ռուսաստանում պետք է ստեղծվի ժողովրդավարական դաշնային խորհրդարանական հանրապետություն, դրողական շրջաններն այնտեղ պետք է ստանան ինքնավարություն եւ պետք է լուծվի հողային հարցը: Ղազախական մարզերից պատգամավորներ են ընտրվում Համառուսական հիմնադիր ժողովին, այդ թվում՝ Սեմիպալատինսկի մարզից անվանի ռուս գիտնական-ազգագրագետ Գրիգորի Պոտանինը, ինչպես նաեւ պատգամավորներ Ռուսաստանի մահմեդականների «Շուրա-ի-Իսլամ» համագումարի համար, որոնց թվում՝ Ալկեյ Սատպաեւը, Կանիշ Սատպաեւի ավագ եղբայրը՝ հետագայում Ղազախական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը:

Փաստորեն 1-ին համադրողական համագումարը վերակառուցվում է «Ալաշ» քաղաքական կուսակցության, որի ղեկավարներն են դառնում Ալիխան Բուկեյխանովը եւ Ախմետ Բայտուրսինովը: Կուսակցության բացարձակ մեծամասնությունը չի ընդունում բոլշեիկյան սոցիալիստական ծրագիրը եւ միավորվում «Ղազախ ժողովրդի ազատագրումը գաղութատիրական լծից» կարգախոսի տակ:

1917թ. դեկտեմբերին Օրենբուրգում գումարվում է 2-րդ համադրողական համագումարը: Այն հռչակում է «Ալաշ» անվանումով ղազախ-դրողական շրջանների ինքնավարությունը ապագա Ռուսաստանյան Դաշնության կազմում եւ ստեղծում ժողովրդական խորհուրդ (կառավարություն)՝ Ալաշ Հորդա, որի 25 տեղերից 10-ը հատկացված էր ռուսներին եւ այլազգերին: Սակայն Ալաշ Հորդան մենշեիկներին է աջակցում, իսկ քաղաքացիական պատերազմի տարիներին փորձում համագործակցել ժամանակավոր սիբիրյան կառավարության հետ, որը, սակայն, նրանց մերժում է:

1920թ. սկզբին Ալաշ Հորդան լուծարվում է իշխանության եկած բոլշեիկների կողմից, իսկ ավելի ուշ նրա առաջնորդները գնդակահարվում են: Թուրքեստանյան ինքնավարությունը, որի մեջ էին մտնում Սիրդարյայի եւ Յոթագետքի՝ ղազախներով բնակեցված հողերը, որը նույնպես չէր ընդունել խորհրդային իշխանությունը, ջախջախվում է բոլշեիկների կողմից դեռ դրանից առաջ, ինչը հանգեցնում է «բասմաչություն» կոչված ազգային-ազատագրական պարտիզանական շարժմանը Միջին Ասիայում:

Խորհրդային շրջան

1920թ. օգոստոսի 26-ին ընդունվում է «Ղրղզական Խորհրդային Ինքնավար Սոցիալիստական Հանրապետության կազմավորման մասին» դեկրետը ՌԽՖՍՀ կազմում, մայրաքաղաքը՝ Օրենբուրգ: 1925թ. Ղրղզական ԻՍՍՀ-ն վերանվանվում է Կազակական ԻՍՍՀ, մայրաքաղաքն Ուրալից տեղափոխվում է Պերովսկ (այժմ՝ Ղզըլ-Հորդա՝ Կարմիր մայրաքաղաք): 1927թ.-ին մայրաքաղաքը նորից է տեղափոխվում, այս անգամ՝ Ալմա-Աթա: 1936թ. Կազակական ԻՍՍՀ-ն վերափոխվում է Ղազախական ԽՍՀ-ի: 1956թ. խոսքի հողերի յուրացման խրուշչովյան ծրագրի ընթացքում նրա հողերի մի մասը փոխանցվում են ՌԽՖՍՀ-ին (միացվում են Օմսկի մարզին եւ Ալթայի շրջանին) եւ Ուզբեկական ԽՍՀ-ին (ներկայիս Նավոիի եւ Ջիզակի մարզերը):

Հանրապետությունում արագ թափով սկսվում է գործարանների կառուցումը, ինչը Ղազախստանը վերածում է հզոր արդյունաբերական շրջանի: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ռուսաստանի կենտրոնից Ղազախստան է եվակուացվում ավելի քան 400 գործարան եւ ֆաբրիկա, որոնց հիման վրա էլ ավելի է աճում տեղի արդյունաբերությունը: Կառուցվում են նոր քաղաքներ ու գյուղեր, գործարաններ ու հանքահորեր, ճանապարհներ ու կամուրջներ:

Խորհրդային տարիներին Ղազախստանը հիմնականում օգտագործվում էր որպես հումքի մատակարար: Այսպես՝ 1991թ. տվյալներով՝ Ղազախստանին էր բաժին ընկնում ծծմբի, ցինկի, տիտանի, մագնիումի, անագի միութենական արտադրության 70%-ը, ֆոսֆորի եւ քրոմի 90%-ը, արծաթի եւ մոլիբդենի 60%-ը:

Ղազախստանում է ստեղծվում նաեւ Սեմիպալատինսկի միջուկային փորձադաշտը, որտեղ 1949թ. փորձարկվում է առաջին Խորհրդային ատոմային, իսկ 1953թ. առաջին ջերմամիջուկային ռումբը:

Այստեղ է կառուցվում նաեւ Բայկոնուրի տիեզերակայանը, որտեղից է արձակվել Երկրագնդի առաջին արհեստական արբանյակը, այստեղից է մոլորակի առաջին տիեզերագնացը թռչել տիեզերք: Այստեղից են արձակվել նաեւ հարյուրավոր միջմայրցամաքային հրթիռներ եւ «Կոսմոս» սերիայի ռազմական արբանյակներ:

Ղազախստանի տարածքում ԽՍՀՄ Պաշտպանության նախարարությունը տեղակայում է շատ ռազմակայաններ եւ փորձարարական զորավարժարաններ (Սարի-Շագան, Տերրա-3, Էմբա-5 եւ այլն), տասնյակ ռազմավարական օդակայաններ եւ հրթիռահորեր (Դերժավինսկ, Տյուրա-Տամ, Ժանգիզ Տոբե եւ այլն):



ԳԼՈՒԽ 2

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ



Ղազախաստանը նախագահական-խորհրդարանական տիպի ունիտար պետություն է: Նախագահը պետության ղեկավարն է եւ գերագույն գլխավոր հրամանատարը: Ղազախաստանի Հանրապետության նախագահն ընտրվում է Ղազախաստանի չափահաս քաղաքացիների կողմից փակ քվեարկությամբ՝ համընդհանուր, հավասար եւ ուղիղ ընտրական իրավունքի հիման վրա:

Ղազախաստանի Հանրապետության նախագահն է Նուրսուլթան Աբիշեյիշ Նազարբաևը:

Նուրսուլթան Նազարբաև (քաղաքական դիմանկար)

Ծնվել է 1940թ. հուլիսի 6-ին Ալմա-Աթայի շրջանի Զեմուլգան գյուղում: 27 տարեկանում ավարտել է Կարագանդայի մետալուրգիական կոմբինատին կից գործարան-տեխնիկական ԲՈՒՀ-ը: 1967թ.-ից սկսել է կուսակցական գործունեությունը: Եղել է Ղազախական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահը (1984-89), Ղազախաստանի Կոմկուսի կենտրոնական կոմիտեի 1-ին քարտուղարը (1989-1991), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1991թ.-ից Ղազախաստանի Հանրապետության նախագահն է, իսկ 1993թ.-ից՝ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը:

Տնտեսական գիտությունների դոկտոր Նուրսուլթան Նազարբաևն իր երկրում եւ արտասահմանում արժանացել է բազմաթիվ կոչումների ու պարգևների: Աշխարհի տարբեր ակադեմիաների ակադեմիկոս է, անվանի համալսարանների պատվավոր պրոֆեսոր: Նա Ղազախների համաշխարհային ընկերակցության նախագահն է, Ղազախաստանի Ժողովրդի ասամբլեայի նախագահը, ներառվել է Արեւելքի մեծ խաչի ասպետների ցուցակում, պարգև է ստացել «Թյուրքական աշխարհի ժողովուրդների միջեւ հարաբերությունների զարգացման մեջ ներդրումների համար», ինչպես նաեւ՝ «Թյուրքական աշխարհին ծառայելու համար»:

Նազարբաևին շնորհվել է Հունաստանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ակումբի «Խաղաղության աղավնի» պարգևը պետության հաստատուն խաղաղ զարգացման համար, արժանացել է «ԱՊՀ զարգացման մեջ ներդրման համար» ոսկե մեդալին: Նա քաղաքակրթությունների միջեւ երկխոսության մեջ ներդրման համար

Մայնոնիդի անվան Միջազգային պարգևի առաջին դափնեկիրն է: Այս պարգևը շնորհվել է Միջազգային կոմիտեի կողմից, որը միավորում է աշխարհի առաջատար հրեական կազմակերպությունների ու համայնքների ներկայացուցիչներին:

Ղազախստանի նախագահը բազմաթիվ գիտական հոդվածների եւ գրքերի հեղինակ է: Վերջինների թվում են «Ղազախստանի պողպատե կիսադեմը», «Առանց աջերի ու ձախերի», «Պաշարների տնտեսման ռազմավարությունը եւ անցումը շուկային», «21դ. նախաշեմին» եւ այլն:

Ղազախստանի տնտեսության աճը, երկրի կայունությունը, դրա տարածքում ապրող շուրջ 130 ազգությունների խաղաղ գոյակցությունը վկայում են Նուրսուլթան Նազարբաևի մտածված, հեռանկարային, իր երկրի շահերը պաշտպանող քաղաքականության մասին: Իր հոդվածներից մեկում նա նշում է. «Իրադարձություններով հարուստ պատմության խորն ուսումնասիրությունը եւ դրա փորձից անհրաժեշտ դասեր քաղելը ղազախստանյան հայրենասիրության ձեավորման, Հայրենիքի արժանի քաղաքացիների դաստիարակման գլխավոր պայմաններից են»:

Նախագահ Նազարբաևի վարած քաղաքականության հիմքում ընկած է խաղաղությունը, ժողովուրդների եւ պետությունների միջեւ խաղաղ գոյակցությունը: Նա իր ելույթներից մեկում ասել է. «Եթե ինձ հարցնեին, թե ամենից առավել որ բառերն են որոշել եւ շարունակում են որոշել իմ գործողությունները՝ որպես անկախ Ղազախստանի նախագահի, ես անտարակույս կսկսեմ «խաղաղություն» բառից»: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Ղազախստանը միակ երկիրն է, որն ինքնակամ հրաժարվել է միջուկային զենք ունենալուց՝ 1991թ. օգոստոսին փակելով Սեմիպալատինսկի միջուկային փորձադաշտը:

Նախագահ Նազարբաևի շնորհիվ Ղազախստանը, որի տարածքով է անցնում Եվրոպան Ասիայից բաժանող սահմանագիծը, իր ուրույն եւ կարեւոր դերն ունի ոչ միայն ԱՊՀ կառույցներում, այլեւ միջազգային այլ կազմակերպություններում:

Նազարբաևի կինը՝ Սառա Ալպիսովնա Նազարբաևան, ինժեներ-տնտեսագետ է: Ղեկավարում է Միջազգային մանկական բարեգործական հիմնադրամը: Երեք դուստրերից ավագը՝ Դարիգան, քաղաքական գիտությունների դոկտոր է, եղել է «Խաբար» տեղեկատվական գործակալության տնօրենների խորհրդի նախագահը: Դինարան ղեկավարում է Ն. Նազարբաևի անվան Կրթության հիմ-

նադրամը, իսկ Ալիյան՝ «Էլիտատրոյ» շինարարական ընկերությունը: Նազարբաևեն ունի երեք թոռ, մեկ ծոռ:

Գործադիր իշխանությունը

Գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարությունը: Գործադիր իշխանության մարմինների համակարգը բաղկացած է նախարարություններից, ծառայություններից եւ գործակալություններից: Կառավարության ղեկավարն է վարչապետը, այժմ՝ Քարիմ Մասիմովը:

Օրենսդիր իշխանությունը

Օրենսդիր իշխանությունն իրականացնում է երկու պալատից՝ **Մեջլիսից եւ Սենատից** բաղկացած խորհրդարանը, որոնք գործում են մշտական հիմունքներով: Խորհրդարանի լիազորությունները սկսվում են նրա առաջին նստաշրջանի բացման պահից եւ ավարտվում նոր գումարման խորհրդարանի առաջին նստաշրջանի բացմամբ: Խորհրդարանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կարող է իրականացվել սահմանադրությամբ նախատեսված դեպքերում:

Վերին պալատը՝ Սենատը, ունի 47 տեղ: Սենատի պատգամավորներից 15-ին նշանակում է Ղազախստանի նախագահը՝ հաշվի առնելով ազգային-մշակութային եւ հասարակության այլ շահերի ներկայությունը Սենատում ապահովելու անհրաժեշտությունը: Մնացած 32 տեղի համար հանրապետության յուրաքանչյուր շրջանից, հանրապետական նշանակության քաղաքից եւ մայրաքաղաքից ընտրվում է երկուական պատգամավոր համապատասխան ներկայացուցչական մարմինների բոլոր պատգամավորների համատեղ նիստի ժամանակ: Պատգամավորական լիազորությունների ժամկետը վեց տարի է, ընդ որում, Սենատի ընտրվող պատգամավորների կեսը վերընտրվում է ամեն երեք տարին մեկ:

Պալատը ղեկավարում է Սենատի պատգամավորներից ընտրված նախագահը, որը տիրապետում է պետական լեզվին եւ ընտրվում գաղտնի քվեարկությամբ ձայների պարզ մեծամասնությամբ: Սենատի նախագահի թեկնածուն առաջադրվում է հանրապետության նախագահի կողմից:

Ստորին պալատը՝ Մեջլիսը, ունի 107 տեղ: 98 պատգամավոր ընտրվում է համամասնական ցուցակներով՝ հաղթահարելով 7 տոկոսանոց շեմը, 9 պատգամավոր ընտրվում է Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի կողմից: Պատգամավորական լիազորությունների ժամկետը 5 տարի է:

Պալատի նախագահն ընտրվում է Մեջլիսի պատգամավորներից, ով տիրապետում է պետական լեզվին եւ ընտրվում գաղտնի քվեարկությամբ ձայների մեծամասնությամբ: Մեջլիսի նախագահի թեկնածություններն առաջադրվում են պալատի պատգամավորների կողմից:

Խորհրդարանի պատգամավորը միաժամանակ երկու պալատի անդամ չի կարող լինել:

Մեջլիսին կից գործում է Հանրային պալատը:

Մինչեւ 1995թ.-ը Ղազախստանի խորհրդարանը միապալատ է եղել: 1995թ. մարտի 11-ին նախագահ Նազարբաեւը «Սահմանադրական դատարանի վճռից բխող միջոցառումների մասին» հրամանագիր է ստորագրում, որի հիման վրա խորհրդարանը հայտարարվում է լուծարված: 1995թ.-ի օգոստոսի 30-ին նոր սահմանադրության վերաբերյալ հանրապետական հանրաքվե է անցկացվում, որին կողմ է արտահայտվում քվեարկողների 89,14%-ը: Նոր սահմանադրության համաձայն՝ խորհրդարանն ունենում է երկու պալատ:

2007թ. օգոստոսին տեղի են ունենում Ղազախստանի խորհրդարանական ընտրությունները, որում հաղթանակ է տանում Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի գլխավորած «Նուր Օթան» կուսակցությունը՝ ստանալով ձայների 88,05%-ը: Մնացած կուսակցությունները յոթտոկոսանոց շեմը չեն հաղթահարում:

Դատական համակարգը

Դատական իշխանությունն իրականացնում են Գերագույն դատարանը, մարզային, ռազմական, քաղաքային, շրջանային եւ մասնագիտացված դատարանները:

Զինված ուժերը

Ղազախստանի Հանրապետության նախագահի 1992թ. մայիսի 7-ի հրամանագրով ստեղծվում են հանրապետության Զինված ուժերը, որոնք բաղկացած են Ցամաքային զորքերից, Օդային պաշտպանության ուժերից եւ Ռազմածովային ուժերից, որոնք ձեւավորվում են հետեւյալ սկզբունքով՝ 50% զինակոչիկներ, 50% պայմանագրային զինծառայողներ:

Բացի այդ՝ կան այլ զորքեր եւ զորամիավորումներ, որոնք նախատեսված են առաջադրանքները ռազմական մեթոդներով կատարելու համար: Դրանք են Հանրապետական գվարդիան, ՆԳՆ Ներքին զորքերը եւ Ազգային անվտանգության կոմիտեի Սահմանապահ ծառայությունը:

«ԱՊԱԳԱ ՍԵՐՆԴԻ ՓՈՂԵՐԸ ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԾԱՄՍԵԼ»

ԿԱՄԱԼ ԲՈՒՐԻՍԱՆՈՎ

**ՂՏ Խորհրդարանի Մեջլիսի Արտաքին գործերի,
պաշտպանության ու անվտանգության
հանձնաժողովի անդամ
(22.06.2009)**

- Պարոն Բուրիսանով, մենք Աստանայում ենք գտնվում Ղազախստանի մասին հաղորդումների շարք պատրաստելու նպատակով: Այն բավականին հետաքրքիր ձեռագրի է: Դուք լավ հասկանում եք, որ ԽՍՀՄ փլուզումից հետո կապերը մեր երկրների միջև սկսեցին թուլանալ: Բայց այն լավը, ջերմը, որ ունեցել ենք, չպետք է կորցնենք, այլ պետք է վերականգնենք ու բազմապատկենք: Ուստի մշակվեց այս նախագիծը:

- Նախ շատ հաճելի է, որ եկել եք, որ գտնվելով այնտեղ՝ Հայաստանում՝ այսպիսի ծրագիր եք մշակել, որը թույլ կտա մեզ ինչ-որ ձևով վերականգնել կորսվածը, ավելի լավ բան անել մեր փոխհարաբերությունների համար: Իսկապես, նախկինում Միության շրջանակներում մենք ավելի սերտ հարաբերություններ ունեինք: Այժմ, խոսելով իրերի իսկական դրության մասին, նշենք, որ առեւտրային հարաբերությունների ծավալը շատ քիչ է: Դա ոչ մեզ է բավարարում, ոչ ձեզ:

Մեզ մոտ շատ մեծ հայկական համայնք կա: Հավանաբար գիտեք, որ մեզ մոտ մի ինստիտուտ գոյություն ունի՝ Ղազախստանի ժողովրդի ասամբլեա, որտեղ ներկայացված են բոլոր համայնքները (մեզ մոտ՝ Ղազախստանում, ապրում է 130 էթնոս): Ղազախստանի ժողովրդի ասամբլեան ղեկավարում է ինքը՝ նախագահը՝ պետության ղեկավարը, Ասամբլեան նրա մտահղացումն է: Ասամբլեայի խորհրդի մեջ են մտնում համայնքների առաջատար գործիչները: Ասամբլեայի խորհրդի անդամը հեղինակային անձնավորություն է, շատ լուրջ, շատ հեղինակավոր, որը մուտք ունի բոլոր իշխանական կառուցվածքներում, քանի որ նա Խորհրդում է՝ նախագահի հետ:

Համայնքները կարող են ստեղծվել շրջանի, մարզի, քաղաքի, հանրապետական միավորման շրջանակներում ազգային մշակութային կենտրոններում: Պետությունը հատուկ տարածք է տրամադրում, միջոցներ են տրամադրվում կիրակնօրյա դպրոցների համար, օրինակ՝ ասենք, հայերի համար, որպեսզի նրանք կարողանան կիրակի օրը հավաքվել եւ սովորել իրենց լեզուն, մշակույթը եւ այլն: Մեզ մոտ հայկական համայնքը գլխավորում է Արտուշ Կարապետյանը: Նա իմ լավ ընկերն է, մենք վաղուց ենք նրա հետ շփվում: Նա մեր «Բաքոս» ընկերության նախագահն է, որը ղազախական գինու եւ օղու ամենալավ ապրանքանիշն է: Մեր ղազախական «Ժենիս» կոնյակը մեր բրենդն է: Այն հյուրասիրում են արտասահմանում մեր բոլոր դեսպանություններում, նախագահի մոտ ընդունելության եւ շատ այլ այդպիսի կարեւոր միջոցառումների ժամանակ: Այդ ամենը թողարկվում է Արտուշ Կարապետյանի ղեկավարությամբ: Նա ունի մի շարք պարգեւներ, շքանշաններ:

Բացի այդ՝ նախանցյալ տարի Սահմանադրությունում փոփոխություններ են մտցվել, ըստ որոնց՝ Ասամբլեայի համար խորհրդարանի Մեջլիսում հատկացվում է 9 տեղ: Իհարկե, 130 էթնոս մենք այնտեղ չենք կարող ապահովել, բայց նրանք իրենց միջից ընտրում են առավել հեղինակավորներին ու ակտիվներին: Այդ 9 պատգամավորները ինչ ազգություն էլ ներկայացնեն, արտահայտում են Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի կարծիքը, այսինքն՝ պաշտպանում են նրանց շահերը, օրենսդրական նախագծերը, ֆինանսավորումը եւ այլն, քանի որ վերջերս Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի մասին օրենք ենք ընդունել, որտեղ այն դարձրել ենք սահմանադրական մարմին:

Կցանկանայի խոսել նաեւ մեր համայնքների դերի մասին: Նրանց ղեկավարությունը ոչ միայն ամրապնդում է մեր միասնությունն ու բարեկամությունն այստեղ: Սրանք լուրջ լավ խոսքեր չեն: Յուրաքանչյուր մարդու մոտ եւ յուրաքանչյուր համայնքում կան ինչ-որ չլուծված խնդիրներ, որոնք չպետք է ավելի խորը թաղել, այլ բարձրացնել Ղազախստանի խորհրդի մակարդակով: Եթե այդպիսի խնդիր է բարձրացվում, ապա, բնական է, ցանկացած նախարար, ցանկացած նահանգապետ (մեզ մոտ կոչվում է «ակիմ») պարտավորվում է որոշում կայացնել, ավելին՝ շրջանի յուրաքանչյուր ակիմ ասամբլեայի շրջանային խորհրդի նախագահն է: Այսինքն՝ նա ինքն է նախագահը: Համայնքի ողջ էլիտան, նրա հետ միասին գործարար կերպով լուծում են առաջացած

խնդիրները: Երբ մարդն ապրում է, նա խնդիրներ ունի, իսկ երբ մահանում է, նա խնդիր չունի: Եթե այդ խնդիրները չտեսնենք, ուշադրություն չդարձնենք, օրինակ՝ մի անգամ խոյս տանք, երկրորդ անգամ խոյս տանք, ապա վաղը դա շատ վատ բաների կհանգեցնի: Այս կապակցությամբ դազախներն ասում են. «Ով իր հիվանդությունը թաքցնում է, ժամանակից շուտ կմահանա»: Այդ պատճառով մեր Ասամբլեան շատ զգոն է աշխատում: Նրա մեջ են մտնում շատ հեղինակավոր գրողներ, գիտնականներ, պոետներ, գործարարներ, ուստի Ասամբլեայի շրջանակներում կարող եք հանգիստ լինել:

Համայնքների գործառույթներից է նաեւ պատմական հայրենիքի հետ կապերը պահպանելը եւ փոխհարաբերությունների ամրապնդմանը նպաստելը այն պետության հետ, որի քաղաքացիներն են նրանք հանդիսանում: Տվյալ դեպքում դա Ղազախստանի Հանրապետությունն է: Այս առումով նրանք ոսկե կամուրջ են հանդիսանում:

Մեզ մոտ շատ լավ է աշխատում գերմանական համայնքը: Նրանք այստեղ մեզ մոտ ապրել են, շուրջ կես միլիոն մեկնել է Գերմանիա: Այժմ դա մեր ոսկե կամուրջն է գործարարների, երկու պետությունների միջեւ, շատ սերտ հարաբերություններ եվրոպայում: Այդ մասին է խոսում այն փաստը, որ մենք շուրջ երկու միլիարդ դոլարի ներդրում ենք կատարել Գերմանիայում, չնայած այն տնտեսապես բավականին զարգացած երկիր է: Այդ ոսկե կամուրջը նպաստում էր համատեղ տեխնոլոգիաներին, բիզնեսին եւ այնտեղ, եւ այստեղ:

Մեզ մոտ հայկական համայնքը ծաղկում է ապրում բոլոր առումներով: Այն պետք է նպաստի (եւ ես կարծում եմ, որ նպաստում է) փոխհարաբերություններին, սակայն միգրացե տարբեր պատճառներով մեզ չի հաջողվում ավելի լայն կոնտակտի հասնել. մեր փոխհարաբերությունները, ապրանքաշրջանառությունը շատ փոքր են: Անհամեմատելի է Չինաստանի հետ: Չինաստանի հետ 15 մլրդ է, Ռուսաստանի հետ՝ 20 մլրդ դոլար: Չեզ հետ... բառացիորեն՝ շատ քիչ: Չնայած, կա փոխադարձ պահանջարկ: Մենք ձեզանից գնում ենք սարքավորում, հաստոցներ Արեւմտյան Ղազախստանի համար: Դուք քարերը մանրացնող հաստոցներ ունեք:

Այժմ Ղազախստանը այլուրի արտահանմամբ դուրս է եկել աշխարհում առաջին տեղը, հացահատիկի արտահանմամբ՝ երկրորդը: Այսինքն՝ սա նույնպես մեր բրենդն է: Դե գիտեք,

խորհրդային ժամանակներից խոպան հողերը... Նավթը, գազը, դա էլ վաճառում ենք ողջ աշխարհին:

Մենք գիտենք, որ ձեզ մոտից մեզ մոտ է գալիս անվանի հայկական կոնյակը: Դուք այն կարող եք տեսնել մեր խանութներում: Առետուրն այնքան էլ շատ չէ, բայց, իմ կարծիքով, մենք միմյանցից պահանջարկ ունենք, շատ բան կա, որի շուրջ կարելի կլինի աշխատել:

- Պատմե՛ք, խնդրեմ, Ղազախստանի խորհրդարանի կառուցվածքի մասին:

- Ինչպես գիտեք, այժմ մեզ մոտ երկպալատ համակարգ է: Մեր սահմանադրությունն ընդունվել է 1995թ.-ին, եւ մենք ապրում ենք այդ սահմանադրությամբ: 1993թ.-ին մենք ընդունեցինք սահմանադրություն, սակայն այնտեղ միապալատ խորհրդարան էր: Այն ժամանակ դեռ մեծ էր կապը խորհրդային անցյալի հետ: Ուստի այդ սահմանադրությունն այնքան էլ չաշխատեց: Երկու տարին ցույց տվեց, որ այդպես մենք չենք կարող առաջ շարժվել: Ուստի 1995թ.-ը բեկումնային պահ էր: Մինչ այդ այնպես էր լինում, որ մեկ տարվա ընթացքում խորհրդարանն ընդունում էր ընդամենը մեկ օրենք: Քաղաքական կուսակցություններն իրենք իրենց համար էին, ակումբային մակարդակի: Այսինքն՝ գործընթացը կանգնել էր: Հին օրենքները մեզ մոտ չէին աշխատում, քանի որ ո՛չ խորհրդային Միություն կար, ո՛չ Ղազախական ԽՍՀ, ո՛չ էլ նոր օրենքներ: Երկիրը շատ ծանր վիճակում էր, սղաճը հասել էր 2500 տոկոսի: Փող չկար, տնտեսությունը չէր աշխատում: Այդ ժամ խորհրդարանն ինքնալուծարվեց, սակայն նախագահին լիազորություններ տվեց օրենքի ուժ ունեցող հրամանագրեր հռչակել, այսինքն՝ նախագահն ինքնուրույն կարող էր օրենքներ ընդունել: Այդ ժամանակ մեր նախագահ Նուրսուլթան Նազարբաևը, բառացիորեն իր վրա վերցնելով ժողովրդի, ապագա սերունդների, պատմության նկատմամբ ողջ պատասխանատվությունը, միայնակ վեց ամսվա ընթացքում մեր հասարակության կյանքի բոլոր ոլորտներին վերաբերող 147 օրենք ընդունեց. ուժային ոլորտում՝ օրենքներ դատախազության, դատարանի, Արդարադատության, Արտաքին գործերի, Պաշտպանության նախարարությունների, Ազգային անվտանգության կոմիտեի վերաբերյալ, տնտեսական ոլորտում՝ օրենքներ բանկային համակարգի, հարկերի, մաքսային համակարգի, առետրի, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ:

Նույն՝ 1995թ.-ին ընդունվում է այդ սահմանադրությունը, երկ-պալատ խորհրդարանը: Այս լուսնի տակ ոչինչ նոր չէ: Մեր մեն-թափտետից, ավանդույթներից, պատմությունը հաշվի առնելով՝ դրանով զբաղվող մեր մասնագետները, առաջատար իրավա-բանները, ակադեմիկոսները, մեր ակաակալները որպես հիմք ընդունեցին ֆրանսիական մոդելը: Մենք գտանք, որ հարկավոր է եվրոպական, արեւմտյան տիպի ուժեղ խորհրդարան եւ արեւել-յան տիպի ուժեղ նախագահական իշխանություն: Ստացվեց եվ-րասիական տերություն, մեզ մոտ դրա սիմբիոզն է: Իհարկե, մեզ դեռ ժամանակ կպահանջվի այդ սահմանադրությունը, այդ հա-մակարգը իրական բովանդակությամբ լցնելու համար, եւ մենք շարժվում ենք այդ ուղղությամբ: Այն բանից հետո, երբ նախագա-հը վեց ամսվա ընթացքում ընդունեց եւ սահմանադրությունը, եւ օրենքները, 1996թ.-ին մենք սանձահարեցինք հիպերսոլաճը: 1999թ.-ից Ղազախստանը դուրս եկավ կայուն տնտեսական աճի ուղու վրա, քանի որ երկիրն իր օրենքները ստացավ: Ոստիկանը գիտեր՝ ինչպես աշխատել, Պաշտպանության նախարարությունը գիտեր՝ ինչ անել, ինչով զբաղվել, շրջանի ակիմը գիտի, թե իրեն ինչը կարելի անել, իսկ ինչը՝ ոչ, մաքսային աշխատողը գիտի՝ ինչպես տանի աշխատանքը, հարկայինի աշխատողը գիտի, թե ինչպես հարկեր հավաքի, դատախազը գիտի՝ ինչպես նստեցնել եւ այլն: Բոլորը ստացան հստակ եւ պարզ գրված օրենքներ, ընդ որում այդ օրենքների 90 տոկոսը մինչ օրս աշխատում է: Փոփո-խություններ մտցվում են, քանի որ կյանքը փոխվում է, զարգա-նում, սակայն օրենքների 90 տոկոսն աշխատում է: Այսինքն՝ մեզ մոտ միայն 1999թ.-ից է գնում տնտեսական աճը: Ամեն տարի մեզ մոտ համարյա 9-10 տոկոս էր:

Ճգնաժամը ճգնաժամ է: Այն ոչ ոքի չի խնայել: Մենք՝ որպես համաշխարհային տնտեսության բաղադրիչ մաս, նույնպես որո-շակի դժվարություններ ունենք, սակայն, ի տարբերություն շատ երկրների, ինչ-որ ձեւով իրավիճակից դուրս ենք գալիս: Դա նույնպես մեր նախագահի մտահղացումն է: Երբ նավթից սկսե-ցին մեծ փողեր գալ, նա ասաց. «Սրանք ապագա սերնդի փո-ղերն են, մենք չենք կարող դրանք ծախսել»: Եվ մենք մեր տնտե-սական աճի պայմաններում ստացված նավթադուլարները դնում էինք Ազգային հիմնադրամում: Մեր բյուջեն ձեւավորվում էր ա-ռանց նավթադուլարների: Այսինքն՝ մենք ինքներս էինք զարգա-նում եւ բավականին կուտակած փող ունեինք: Երբ ճգնաժամը պայթեց, նախագահը կառավարության հետ համաձայնեցրեց,

մենք որոշում ընդունեցինք: Այսինքն՝ տնտեսության զարգացման համար այդտեղից հատկացվել են սեփական գումարները, 15 տոկոսի կարգի: Այժմ հենց պետությունն է ֆինանսավորում մանր եւ միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը, շինարարությունը: Եթե դուք ձմռանը գայիք, ապա կտեսնեիք, որ այստեղ ողջ շինարարությունը կանգ է առել: Դա մեզ՝ Աստանայի քաղաքացիներիս համար անհասկանալի իրավիճակ էր, նույնիսկ անսովոր: Աստանան մայրաքաղաք հռչակվելու առաջին իսկ օրերից գիշեր-ցերեկ փայլատակում էր, վառվում, հարվածում, թնդում: Չէ՞ որ մենք իրականում ձախճի վրա ենք նստած: Աստանայի համար անսովոր էր, որ վերամբարձ կռունկները կանգ են առել, ոչինչ չի լուսավորում, ոչինչ չի թնդում: Դա մի ահավոր բան էր:

Ազգային հիմնադրամի շնորհիվ (ինչպես արդեն ասացի, դա նախագահի մտահղացումն է) մենք կյանք ներշնչեցինք: Հիմա նորից ամեն ինչ թնդում է, կառուցվում, փայլատակում, մարդիկ աշխատավարձ են ստանում: Իսկ եթե աշխատավարձ են ստանում, ուրեմն գնողունակություն ունեն, կերակրում են ընտանիքը: Չէ՞ որ նա չի պահում այդ փողերը, այլ խանութում սննդամթերք է գնում, ապրանքներ, հարկային մուտքեր են գալիս եւ այլն: Այս առումով իրավիճակը հսկողության տակ է, տակից դուրս ենք գալիս:

Իհարկե, մեզ լավատեսություն է ներշնչում հարեան Չինաստանը: Վերջերս ընդունել են Չինաստանի առաջատար փորձագետներին: Երանք Պետխորհրդին կից ժամանակակից քաղաքականության մի մեծ ինստիտուտ ունեն: Այնտեղ, իմ կարծիքով, մոտ 400 մարդ է աշխատում: Երանց կանխատեսումներով՝ այս տարի Չինաստանի ՀՆԱ-ն նվազագույնը ութ տոկոս աճ կտա: Եվ դա զարմանալի չէ: Դա ողջ աշխարհն ապահովող համաշխարհային ֆաբրիկա է՝ սկսած մատիտից, վերջացրած ինչով ասես: Երանք ապահովում են նաեւ սննդամթերքով: Դա համաշխարհային գյուղացիական տնտեսություն է, համաշխարհային ֆաբրիկա: Արտադրությունն արտադրություն է: Այն կարող է մի փոքր էժան գնվել: Եթե նախկինում թղթապանակը նրանք վաճառում էին 100 դոլարով, ապա այժմ կվաճառեն 50-ով: Բայց, միեւնույնն է, առանց թղթապանակի կամ առանց ակնոցի, մատիտի մարդիկ ապրել չեն կարող, մանավանդ որ նրանք վաճառում են խաղալիքներ, շապիկ, անդրավարտիք, ինչ ասես: Այդ ամենը պահանջարկ ունի: Եթե արտադրվում է, ուրեմն կգնեն: Ուրիշ հարց է, որ ավելի էժան կգնեն, կարելու չէ, այն կսպառվի: Իսկ եթե մի փո-

դից այլ փող են սարքում, ապա դա շատ վտանգավոր է: Այդ պատճառով մենք ձեռնարկություններ ունենք, որոնք բավականին լավ պատվերներ են ստանում Չինաստանից: Ունենք մի շարք խոշոր ձեռնարկություններ, որոնք ունեն մինչձգնաժամային չինական պատվերների 97 տոկոսը, ընդ որում հինգ տարով:

Ամեն տարի նախագահը հանդես է գալիս ուղերձով: Այս տարի նա լուրջ ուղերձով հանդես եկավ, որտեղ խոսվում էր արդեն Ղազախստանի հետձգնաժամային զարգացման մասին: Մենք այժմ արդեն նախապատրաստվում ենք հետձգնաժամային իրավիճակին: Հյուսիսային Ղազախստանում նա մի շարք հանդիպումներ անցկացրեց արեւելյան ներդրողների հետ: Մեզ մոտ հիմա ներդրումային նախագծեր են, արտադրություն, շատ ծրագրեր, որոնց համար միջոցներ են տրամադրվում: Նույնիսկ այս պայմաններում մենք արտասահմանից բառացիորեն միլիարդների ներդրումներ ենք ստանում: Միայն վերջերս մենք հաստատել ենք «Աբու Դաբի Պլազա»-ի շինարարության մասին օրենքը, որն արժե 2 մլրդ դոլար: Այն կունենա 88 հարկ, կլինի բարձրությամբ աշխարհում 8-րդը: Ուղիղ երկաթուղի կլինի դեպի օդանավակայան: Այսինքն՝ մենք առավելագույն հնարավորություններ ենք ստեղծում ներդրումներ բերելու համար: Սա միայն մի ծրագիր է 2 մլրդ արժողությամբ:

Այնտեղ միլիարդներ, այստեղ միլիարդներ, հարավում 1,5-2 մլրդ նավթաքիմիայի զարգացման համար եւ այլն: Այդ պատճառով, եթե այս ամենն ընդհանուր վերցնենք, դա հնարավոր եղավ միայն մեր նախագահի ռազմավարության, մեր պաշարներից ֆինանսների տրամադրման, ներդրումների, հարեւան Չինաստանի, ձգնաժամի դեմ պայքարի միջոցների շնորհիվ: Այս երկուերեք տարին նավթադոլարները չեն կուտակվի Ազգային հիմնադրամում: Դրանք կֆինանսավորեն քաղաքների եւ գյուղերի ենթակառուցվածքների վերակառուցումը: Չէ՞ որ մեր տները կառուցվել են խորհրդային ժամանակներում՝ Խրուշչովի, Բրեժնեւի ժամանակ: Ավաթիում եւ այստեղ այնպիսի տներ կան, որոնք կառուցվել են ստալինյան ժամանակներում: Կոյուղին, խողովակները եւ այլն այնպիսի բաներ են, որոնք չեն երեւում, բայց չէ՞ որ դրանք մաշվում են, ամեն բան ժանգոտվել է: Ուտի որոշվել է մի քանի տարի այդ նավթադոլարները հատկացնել այս ոլորտին: Ստացվում է, որ յուրաքանչյուր նույնիսկ ոչ մեծ գյուղը ստանում է 50-60 մլն թենգե: Ինչ պետք է անեն, ինչ է իրենց հարկավոր, դա

որոշում են տեղի մասլահաթները, այսինքն՝ ներկայացուցչական իշխանության տեղական մարմինները: Այդ նրանք են որոշում, թե ինչի վրա ծախսեն, նրանք ավելի լավ գիտեն: Կառավարությունը չի կարող ասել՝ կամուրջ կառուցեք, հիվանդանոց կառուցեք կամ մի այլ բան:

Մեզ մոտ շատ գումար է հատկացվում ճանապարհներին: Այժմ մենք կարգի ենք բերում ճանապարհները: Մենք որոշել ենք մեր ողջ երկիրը կարգի բերել, որպեսզի, երբ ձգնաժամն ավարտվի (ձգնաժամը հավերժ չի լինում, այն կավարտվի), երկիրն ունենա լավ ճանապարհներ, հստակ գործող կոյուղի, քաղաքի կոմունալ տնտեսությունը հղկվի, արտադրության մեջ ներդրումներ կատարվեն:

Վերցնենք 7,5 մլրդ դոլար արժողության Արեւմտյան Ղազախստան - Արեւմտյան Եվրոպա նախագիծը: Դա ավտոմայրուղի է, այն 3000 կմ գնում է Ղազախստանով: Այն Ղազախստանում 50-60 հազար աշխատատեղ կստեղծի (դա միայն ճանապարհի վրա աշխատողները), բայց չէ՞ որ մայրուղու երկայնքով մեկը ձաշարան կբացի, մեկը՝ լցակայան: Այստեղ մեքենաների այնպիսի հոսք կլինի, բեռների հոսք Եվրոպայից Չինաստան: Սա փաստորեն ոսկե կամուրջ է: Այն ստորագրել են Ռուսաստանի, Ղազախստանի եւ Չինաստանի նախագահները: Այս տարի արդեն աշխատանքներն ընթանում են: Սա կլինի մեր շատ խոշոր ծրագիրը, որը նույնպես կնպաստի աշխատատեղերի ստեղծմանը:

- Այդ ճանապարհը ոչ միայն դեպի Եվրոպա է, այլեւ դեպի Չինաստան:

- Արեւմտյան Եվրոպա-Արեւմտյան Չինաստան, այսինքն՝ Արեւմտյան Չինաստանից Արեւմտյան Եվրոպա: Եթե Չինաստանում եղել էք, ապա այնտեղ ճանապարհներ են, Եվրոպայում՝ նույնպես: Այդ մեզ մոտ՝ Եվրասիայում, Խորհրդային Միությունում, Ռուսաստանում, Ղազախստանում ճանապարհները քիչ են, սակայն մենք որոշեցինք այդպիսի մի կամուրջ ստեղծել:

Բնակչությունն ըմբռնումով է մոտենում: Մեզ մոտ խնդիր առաջացավ փայտերերի, հիփոթեքային վարկերի հետ: Մի կողմից, եթե վերցնենք շուկայական հոգեբանության տեսակետից, ապա պետությունն ինչ կապ ունի: Յուրաքանչյուրը վարկ էր վերցրել, գնում էր իր ընտրած ընկերությունը, նրան պետությունը ցուցում չէր տալիս, որպես երաշխավոր հանդես չէր գալիս, չէր ստիպում եւ չէր խնդրում նրան: Մարդն ինքն էր վերցրել իր փո-

դերը, բանկում վարկ էր վերցրել, այստեղ գումար էր ներդրել, սակայն գործը կանգնել էր: Դա մենք չենք հնարել: Սակայն պետությունն իր քաղաքացիներին չլքեց: Այժմ վերաֆինանսավորման հատուկ պետական ծրագիր է իրականացվում: Չէ՞ որ նրանք մեր քաղաքացիներն են, մեր ընտրողները: Մենք նորից Ազգային հիմնադրամից ֆինանսավորում ենք հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը, օգնում մարդկանց փակել այդ վարկերը, որպեսզի նրանք «ոտքի կանգնեն»: Աշխատանք է տարվում նաեւ փայատերերի հետ: Համարյա 60 տոկոսի չափով մենք արդեն փայատերերի խնդիրը լուծել ենք: Դրանք առեւտրի գումարներ են: Իմ կարծիքով՝ միայն փայատերերի խնդիրն՝ 5 մլրդ դոլար, դա Ղազախստանի համար լուրջ է: 60 տոկոսով արդեն լուծել ենք: Մինչեւ այս տարվա վերջ 20 տոկոսով եւս կլուծենք: Մյուս տարի, Աստված տա, փայատերերի խնդրի վերջին 20 տոկոսն էլ կլուծենք: Այսինքն՝ նույնիսկ այդ 5 միլիարդը կփակենք այս 2-3 տարվա ընթացքում, դրանով մենք մեր ժողովրդին ենք փրկում: Չնայած, խնդիրներ կան: Ասում են՝ ինչո՞ւ ես պետք է մինչեւ 2010թ. սպասեմ, եթե մեկը 2009-ին է ստացել, մյուսը՝ 2008-ին: Ժողովուրդը նույնպես ըմբռնումով է մոտենում, քանի որ պետությունն իր քաղաքացիներին բախտի քմահաճույքին չթողեց, չսասց՝ կներեք, դա մեր խնդիրը չէ, դա ձեր խնդիրն է, մենք դրա հետ կապ չունենք: Ո՛չ, պետությունն այդպես չսասց, նա այդ բեռն իր վրա վերցրեց:

- Դուք շատ լավ գիտեք եւ հավանաբար Ձեզ վրա էլ եք զգացել, որ նախկին Խորհրդային Միության երկրներում խորհրդարանի դերն այնքան էլ արագ չգիտակցվեց հասարակության կողմից: Այսօր ինչքանո՞վ է խորհրդարանի դերն ու նշանակությունը գիտակցված ղազախական հասարակության կողմից: Կարելի՞ է ասել, որ լիազորությունների, իշխանության ձյուղերի բաժանման մեջ խորհրդարանն ունի եւ արդեն գրավել է իր հստակ տեղը:

- Ամեն ինչ գալիս է ավանդույթներից: Մենք բոլորս դուրս ենք եկել կոմունիստական անցյալից, երբ խորհրդարանն այսպիսին էր՝ կթվորուհիներից՝ 5 հոգի, խոզապահներից՝ 3, եւ այլն: Ըստ էության, խորհրդարանն օրինականացնում էր Կենտկոմի որոշումները: Այդ պատճառով բնակչության մոտ Գերագույն Խորհուրդների նկատմամբ ոչ այնքան լուրջ վերաբերմունք էր ձեւավորվել: Սակայն մեզ մոտ խորը ավանդույթներ են: Մեզ մոտ՝ դա-

զախական խանութունում կար սեփական խորհրդարան: Դա խանական խորհուրդն էր, որին տարին մեկ անգամ Մեծ տափաստանի ամենահեղինակավոր մարդիկ հավաքվում էին «կուրուլտայի» եւ գլխավոր ռազմավարական որոշումներ ընդունում: Ավելին՝ մեզ մոտ խանը՝ մեր կայսրը, ընտրվում էր, այլ ոչ թե ժառանգաբար էր դառնում: Հզոր, ամենահեղինակավոր մարդիկ էին հավաքվում «կուրուլտայի» եւ խան ընտրում: Ընտրությունները կարող էին տեւել մեկ ամիս, երկու, իհարկե, այնտեղ հյուրասիրում էին, քաղաքական պայքար էլ կար, խմբավորումներ, ցեղ, տոհմ:

- Ներեցե՛ք, դա ո՞ր ժամանակաշրջանն էր:

- Ղազախական խանությունը մաքուր ղազախական անվամբ գոյություն է ունեցել 1456թ.-ից մինչեւ 19-րդ դարի կեսը: Դա բավականին երկարատեւ ժամանակաշրջան է: Ընդհանրապես, էթնիկորեն ղազախական խանությունը գոյություն ունի 13դ.-ից: Ինչո՞ւ ենք մեր նախազահի նստավայրն անվանել «Ակ Օրդա», որովհետեւ դա ղազախական խանության առաջին անվանումն է: Եթե «Ակ Օրդայի» երկու կողմերը նայեք, ապա կտեսնեք՝ ե՛ւ այս կողմից է կամուրջ, ե՛ւ այն: Կամրջի այս կողմից Սիզանակ պողոտան է: Դա առաջին ղազախական խանության առաջին մայրաքաղաքն է: Մյուսը Սարայչի պողոտան է: Դա եղել է մեր Ատիրաուփի մարզի տարածքում, դա Ոսկե Հորդայի մայրաքաղաքն է: Ոսկե Հորդան Վոլգայի վրա էր, սակայն մայրաքաղաքը գտնվում էր Ղազախստանի տարածքում: Դա միախառնված խանություն էր:

Այդ կուրուլտայը որոշում էր եւ խան էր ընտրում: Ես նույնիսկ Քոնդոլիզա Ռայսին եմ ասել. «Դուք երբ եք սկսել նախազահ ընտրել, իսկ մենք երբ ենք սկսել մեր խաներին ընտրել. այդ պատճառով եկե՛ք միմյանց պատմություն չսովորեցնենք»: Նա համաձայնվեց. շատ հաճելի կին է: Այնպես որ, դա մեզ փրկում է: Մենք ունենք խորը, տափաստանային, ժողովրդավարական ավանդույթներ:

Ինչ վերաբերում է խորհրդարանին, ապա այսօրվա օրով այն իրոք կայացել է: Ի դեպ, նրա դերն այն է, որ մեզ մոտ, լավ թե վատ, թեկուզ դժվարությամբ, բայց ձգնաժամից դուրս ենք գալիս, իրավիճակը պահում ենք հսկողության տակ, չնայած իրականում իրավիճակն իսկապես լուրջ է: Խորհրդարանի դերն իրոք մեծ է: Մենք մի ամբողջ փաթեթ օրենք ենք ընդունել, որոնք շուտափույթ ընդունում էին պահանջում:

- Հակաձգնաժամային նորմե ր:

- Այո՛: Դրանք հակաձգնաժամային օրենքներ էին, որոնք անհրաժեշտ էր անհապաղ ընդունել: Եթե մենք քննարկում սկսեինք, ինչպես 1990-ականների սկզբների խորհրդարանները, ապա երբեք այս ձգնաժամից դուրս չէինք գա: Երբ կառավարությունը եկավ ու ասաց, որ՝ ահա՛, նախագահի կարգադրությունը կա, մեզ հարկավոր են այս, այս, այս օրենքները, մենք որոշ օրենքներ մեկ օրում ենք ընդունել, քանի որ մենք որոշեցինք կառավարության ձեռքերը չկապել եւ նրան առավելագույնս օգնել: Ինչպե՛ս կարող է մարդը լողալ, եթե նրա ձեռքերը կապված են: Ինչպե՛ս կարող է այդ իրավիճակից դուրս գալ: Այդ պատճառով մենք աջակցեցինք մեր կառավարությանը: Նախագահը գումար տրամադրեց՝ տասնյակ միլիարդներ: Խորհրդարանն արագ ընդունեց այն օրենքները, որոնք նրանք խնդրել էին: Բնականաբար, մենք այժմ լրիվ իրավունք ունենք հաշվետվություն պահանջելու կառավարությունից: Նրանք ամեն կես տարին հաշվետվություն են ներկայացնում: Մենք կարող ենք նրանց ասել՝ նախագահը ռազմավարությունը սահմանել է, գումար ստացել եք այդ ռազմավարության համար, անհրաժեշտ օրենքները ստացել, կներե՞ք, դե այժմ պատասխան տվեք: Այժմ կառավարությունը չի կարող ասել, թե օրենքներ չունի կամ փող չունի, կամ էլ չգիտեն, թե ինչ անեն: Ամեն բան կա: Իհարկե, կառավարությունը լարված է աշխատում, բայց դե ողջ աշխարհն է լարված աշխատում: Համենայն դեպս, այսօր մենք մեր կառավարության աշխատանքից գոհ ենք, քանի որ այն հարվածը պահում է եւ իրավիճակից դուրս գալիս: Այնպես որ, խորհրդարանն ընդունվում է ժողովրդի կողմից:

- Դուք Միջազգային կապերի, պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի անդամ եք: Միջխորհրդարանական հարաբերությունների ինչպիսի՞ փորձ ունի Ղազախստանի Հանրապետության խորհրդարանի մեջլիսը: Պատմեցե՞ք, խնդրե՞մ, արտաքին կապերի, միջխորհրդարանական կապերի մասին:

- Մեր արտաքին քաղաքականությունը սահմանված է մեր նախագահի կողմից: Դա բազմավեկտոր քաղաքականությունն է: Բազմավեկտորությունը սահմանվել էր դեռ մեր անկախության սկզբին: Այն ունի իր առաջնայնությունները: Մեր բազմավեկտորության առաջին տեղում գտնվում է իհարկե Ռուսաստանը՝ մեր

գլխավոր տնտեսական, ռազմական, քաղաքական գործընկերը, եւ ընդհանրապէս մենք մի երկրից ենք դուրս եկել:

Երկրորդ տեղում Չինաստանն է, երրորդ տեղում՝ Արեւմուտքը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, այնուհետեւ միջինասիական պետությունները, որոնց հետ նույնպէս սերտ կապերով ենք կապված: Հետո գալիս են իսլամական աշխարհը եւ մյուսները: Ահա այսպիսի ռազմավարություն:

Այս ռազմավարությունը ծնվել է մեր խան Աբիլայի ժամանակներում: Աբիլայը մեր ամենահզոր ու իմաստուն խանն է եղել: Ամենածանր ժամանակներում նա միանման բարիդրացիական հարաբերություններ ուներ եւ Ռուսաստանի կայսեր, եւ Չինաստանի կայսեր հետ: Դրա շնորհիվ նրան հաջողվում է պահպանել դազախական խանության տարածքային ամբողջականությունը: Ռուսական կայսրը չէր կարող, քանի որ նա չինական կայսեր բարեկամների թվում էր: Այդ պատճառով մեր մեծ ու իմաստուն Աբիլայ խանը պատկերված է նաեւ մեր դրամաթղթերի վրա, նրա անունով պողոտա կա: Այդ բազմավեկտորությունը դեռ այն ժամանակ է ծնվել: Մեր նախագահն այդ հայեցակարգը մշակել է ժամանակակից մակարդակով, մեր օրերի համար: Փաստորեն նա այդ ռազմավարությունը վերածնել է եւ նշել բազմավեկտորությունը, սակայն կոնկրետ առաջնայնություններով: Մեզ համար չեն կարող նույն աստիճանի հավասար լինել, ասենք, Իրաքը եւ Ռուսաստանը: Բազմավեկտորությունը բազմավեկտորություն է: Այո՛, այն մեզ մոտ հստակ առաջնայնություններ ունի:

Չինաստանը մեր երկրորդ տնտեսական գործընկերն է: Նրա հետ ապրանքաշրջանառությունը տարեկան 15 մլրդ դոլարի կարգի է: Սա շատ լուրջ է: Մենք նրանց հետ 2000 կմ պետական սահման ունենք:

Ամերիկայի Միացյալ Նահանգները մեր ամենագլխավոր ներդրողներից մեկն է: Եվրամիության հետ էլ շատ սերտ ենք աշխատում:

Այսօրվա դրությամբ խորհրդարանի ղեկավարությունը բաղկացած է «Նուր Օթան» կուսակցության ֆրակցիայից, նրա նախագահն է հանդիսանում մեր նախագահը: Բնական է, որ այս ռազմավարությունն ընկած է մեր ողջ արտաքին քաղաքական գործունեության հիմքում, դա հայեցակարգ է:

Ինչ վերաբերում է միջխորհրդարանական կապերին, ապա դրանք բավականին ընդարձակ են: Իհարկե, ինչ-որ էկզոտիկ երկրներ գնալը եւ գումարներ ծախսելը մեզ այնքան էլ հարկա-

վոր չէ, սակայն կա 50-56 պետություն, որոնց հետ բավականին սերտ աշխատում ենք: Նախեառաջ մեր առաջնայնությունը, իհարկե, ԱՊՀ-ն է: Մենք ունենք ԱՊՀ խորհրդարանական վեհաժողով Պետերբուրգում: Մենք հաճախ ենք այնտեղ գնում գարնանը եւ աշնանը: Այդտեղ շատ հանձնաժողովներ կան, ես դրանցից մեկի անդամ եմ: Այնտեղ մենք շփվում ենք ձեր պատգամավորների, ԱՊՀ երկրների բոլոր պատգամավորների հետ: Ավելի հաճախ մենք այնտեղ ենք հանդիպում:

ՀԱՊԿ շրջանակներում նույնպես խորհրդարանական բաղադրիչ կա: Ես այնտեղ Միջազգային հարաբերությունների հանձնաժողովի անդամ եմ:

ԱՊՀ երկրների միջեւ երկկողմ հարաբերությունները առաջին հերթին դիտորդական առաքելությունների շրջանակներում են: Ձեր դիտորդները մեզ մոտ են գալիս, մենք ձեզ մոտ ենք գալիս: Վերջինը մեր խորհրդարանի ընտրություններն էին: Հայաստանից, իմ կարծիքով, 12 հոգի էր եկել: Ծնորհակալ եմ նրանցից. եկան, մասնակցեցին, նայեցին:

Չինաստանի հետ մենք շատ սերտ շփումներ ունենք: Այդպիսի սերտ կապեր ունենք նաեւ Եվրոպայի, Եվրամիության, ԵԱՀԿ-ի, ԵՆԽՎ-ի հետ: ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովը 2008թ. անցկացվեց Աստանայում: Այն ժամանակ 56 երկրներից 500 պատգամավորներ էին եկել, ձեր պատվիրակությունն էլ կար: Մենք ցանկանում ենք ձեզ շնորհակալություն հայտնել, որ դուք պաշտպանեցիք մեր թեկնածությունը ԵԱՀԿ նախագահության համար: Իհարկե, նախաձեռնությունը լավն էր, բայց մենք այնպիսի քավարան անցանք... Ես Վիեննայում ելույթ էի ունենում ԵԱՀԿ-ում նրանց փորձագետների առաջ: Ասացի՝ լսե՛ք, հավանաբար Հռոմի պապին ավելի հեշտ էր ընտրելը, քան Ղազախստանին ԵԱՀԿ նախագահ: Նախ՝ Հռոմի պապին ցմահ են ընտրում, երկրորդ՝ նա իշխանություն ունի, երրորդ՝ նա փող ունի: Իսկ այստեղ իշխանություն չկա, ընտրում են ընդամենը մեկ տարով, եւ բյուջեն էլ պարզվում է, ընդամենը 160 մլն եվրո է: Ասում եմ՝ մենք արդեն Հռոմի պապից ավելի սուրբ ենք, էլ ի՞նչ եք ուզում մեզանից:

Շատ լավ շփվում ենք ԱՄՆ-ի հետ: Աշնանը գնացել էինք այնտեղ, ելույթ ունեցանք Կոնգրեսում, Սենատում, Պետվարչությունում, Ազգային անվտանգության խորհրդում: Այսինքն՝ նրանց հետ էլ հարաբերությունները բավականին լավ են:

Կա նաեւ իսլամական աշխարհը, որի հետ նույնպես համագործակցում ենք: Վերջերս Ղրղըզստանից մեծ պատվիրակութ-

յուն էր եկել, այն օրը հնդիկ զինվորականներն էին եկել: Հնդիկների հետ սերտ փոխհարաբերություններ են, ապրանքաշրջանառությունը մեծ է, բայց ցանկալի է, որ ավելին լիներ: Նրանք էլ են դրանում շահագրգռված: Ամենուր, որտեղ կարելի է համագործակցել, մենք պատրաստ ենք համագործակցության: Այստեղ հարց չկա:

- **Կամալ Նիզամովիչ, կան միջխորհրդարանական կառույցներ, որտեղ կան նաեւ մեր պատվիրակությունները՝ հայկական խորհրդարանի պատվիրակությունը եւ ձեր պատվիրակությունը: Ինչպե՞ս եք գնահատում համագործակցությունը խորհրդարանական պատվիրակությունների միջեւ: Կարելի՞ է այնտեղ որեւէ բան ավելացնել: Հնարավորություն կա՞ ավելի ամրապնդելու:**

- Առաջին հերթին մենք աշխատում ենք ՀԱՊԿ-ի շրջանակներում: Այնտեղ նստած են ձեր ներկայացուցիչները: Այնտեղ բավականին կոշտ քննարկումներ են ընթանում: Մի կարծեք, թե ՀԱՊԿ-ում բոլորը միանման են մտածում: Օրինակ՝ Բալկանների հարցը: Երբ մենք նրանց ընդունում էինք, շատ բուռն քննարկում էր: Ռուսաստանը պնդեց ՀԱՊԿ-ի հայտարարության շատ կոշտ բանաձեւման վրա: Ես հիմա հաստատ չեմ հիշում, բայց հայկական պատվիրակությունն էլ կար: Երկար քննարկումներից հետո ի վերջո եկանք նրան, որ լավ կլինի մի փոքր մեղմացնել: Այո՛, Ռուսաստանը հզոր տերություն է՝ մեր ռազմավարական գործընկերը: Եթե Ռուսաստանի անունից խոսենք, դա մի դիրքորոշում է, եթե ՀԱՊԿ-ի անունից՝ այդ դեպքում եկե՛ք մեր շահերն էլ հաշվի առնենք:

Համագործակցում ենք նաեւ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում, սակայն ձեր ներկայությունն այնտեղ դեռ չկա: Այժմ մենք, երեք պետություններով՝ Ռուսաստանի ու Բելառուսի հետ միասին, ցանկանում ենք միավորված Մաքսային միությանը մտնել Առեւտրի համաշխարհային կազմակերպություն: Այստեղ ավելի նեղվածք է: Ամեն ինչ կախված է կոորդինացիայի աստիճանից: Ինչո՞ւ: Որովհետեւ մեզ շուկաներ են հարկավոր: Մենք 16 մլն բնակչություն ունենք, արտադրում ենք եւ հաց, եւ այլ բաներ, մեզ հարկավոր է ելք դեպի ռուսական շուկա, մեզ հարկավոր է բելառուսական շուկան: Ինչո՞ւ խնդիրներ ստեղծենք, եթե մեր տնտեսությունները քիչ թե շատ կայուն զարգանում են: Այժմ դրա հիման վրա բոլորս ցանկանում ենք հաղթանակ տանել: Իհարկե, լինում

են ամբարային խնդիրներ, բայց դե ամեն բան կախված է ձեռնաչափից:

- Ինչպե՞ս է Մեջլիսը համագործակցում հասարակական կազմակերպությունների հետ: Ձեռավորվե՞լ են արդյոք նման համագործակցության ավանդույթներ:

- Մեր Մեջլիսը միշտ էլ աշխատել է հասարակական կազմակերպությունների հետ: Ավելին՝ մի շարք ՀԿ-ների ներկայացուցիչներ խորհրդարանի պատգամավոր են: Ըստ էության, հանձնաժողովների նիստերի 99 տոկոսին ՀԿ-ների ներկայացուցիչները կարող են մասնակցել: ՀԿ-ների հետ մենք սերտ հարաբերություններ ունենք: Նրանք իրենց իրավունքներն են պաշտպանում, գնում են յուրաքանչյուր պատգամավորի մոտ, քննարկում, հաճախ նախաձեռնությամբ են հանդես գալիս, իհարկե, պատգամավորների միջոցով: Եթե նրանք ինձ մոտ են եկել եւ համոզել, որ այս հոդվածը, կներեք, երկրի շահերին չի համապատասխանում, ինչ-որ բանի խանգարում է, ապա ես նախաձեռնում եմ այդ գործը: Այսպիսի միլիոն դեպք կա: Ես այն ներկայացնում եմ աշխատանքային խմբին: Նրանք գալիս են այդ խմբի նիստին եւ նույնպիսի ակտիվ մասնակցություն ցուցաբերում, ինչպես ցանկացած պատգամավոր: Այլ հարց է, որ նրանք ձայնի իրավունք չունեն, սակայն նրանց կարծիքը հաշվի չառնել ոչ մի դեպքում չի կարելի: Մենք աշխատանքային խմբում լիարժեք աշխատում ենք:

- Կարելի՞ է ասել, որ այդպիսի ավանդույթ է ձեռավորվել նաեւ զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքում: Ինչպե՞ս է այնտեղ աշխատանքն ընթանում:

- Նույն ձեռով: Օրինակ՝ մենք նստած ենք լիագումար նիստի, հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի նիստի, ամենուր գալիս են լրագրողները, ձայնագրիչներով ման են գալիս: Եթե որեւէ մեկին ինչ-որ հարց հետաքրքրեց, ապա ես հարցազրույց եմ տալիս: Օրինակ՝ հեռուստատեսությունից մի 10-15 հոգի են, բայց շատ մարդիկ էլ իրենց ձայնագրիչներով են: Չէ՞ որ ես չգիտեմ, թե ով ով է: Այստեղ ե՛ւ ընդդիմադիր թերթերն են, ե՛ւ պետական, ե՛ւ մասնավոր թերթերը: Մասնավոր թերթերում էլ տարբեր տրամադրվածություն կա: Կան բացեիբաց ընդդիմադիր: Նրանք այստեղ ման են գալիս, ձայնագրում լրատվարում: Եվ ոչ մեկին չեն հարցնում՝ դու ո՞ր թերթից ես: Հատկապես որ մեր ՁԼՄ-ների 80 տոկոսը մասնավոր է, պետական չէ:

- **Կամա՛լ Նիզամովիչ, պատմեցեք, խնդրեմ, Հանրային պալատի մասին: Ինչպե՞ս է բնակչությունը վերաբերվում այդ կառույցին: Այն ինչպիսի՞ հարցեր է լուծում: Որպես այդ պալատի անդամ՝ ի՞նչ տպավորություն ունեք նրա աշխատանքի արդյունավետության մասին:**

- Նախ այժմ (եւ նախորդ խորհրդարանում նույնպես) այն կոչվում է Հանրային պալատ: Դրանից առաջ կար երկխոսության հարթակ, այն կոչվում էր Ժողովրդականացման հարցերով ազգային հանձնաժողով: Միշտ գոյություն է ունեցել երկխոսության հարթակ: Օրինակ՝ ասենք, ինչ-որ ՀԿ-ներ խորհրդարան չեն անցել, ինչ-որ քաղաքական կուսակցություններ չեն անցել: Միշտ կա երկխոսության հարթակ: Հանրային պալատ նախ հրավիրվում են բոլոր քաղաքական կուսակցությունների առաջնորդները: Ով ցանկություն է հայտնել, նա այնտեղ նստած է: Այնտեղ նստած են 5-6 քաղաքական կուսակցություններ՝ իրենց առաջնորդներով, նրանք իրենց աշխատանքն են տանում, կոմունիստներ կան: Այլ հարց է, որ մի քանի ընդդիմադիր կուսակցություններ հրաժարվել են մասնակցությունից, դա նրանց իրավունքն է: Մեզ մոտ առաջնորդներ են գլխավոր բնապահպանը, կա կոմունիստ, ՀԿ-ներից, Ղազախստանի սպառողների միության նախագահը, իրավաբան, եվրոպական իրավունքի պրոֆեսոր: Այսպիսի նշանակալից, հեղինակավոր մարդիկ: Գիտությունների ակադեմիայի նախագահը, ինստիտուտների տնօրեններ, այսինքն՝ լրիվ տարբեր մարդիկ, ովքեր ցանկություն են հայտնել այնտեղ աշխատել: Մեջիսն առաջարկում է քաղաքական կուսակցությունների բոլոր առաջնորդներին՝ լա՛վ, այնտեղ չստացվեց, եկե՛ք այստեղ աշխատենք:

- **Մնացե՞լ է այդ երկխոսության հարթակը:**

- Հարթակը կա, դռները բաց են: Եթե այսօր գան Հանրային պալատ, հենց այսօր նրանց վկայական կտան, շատ լուրջ վկայական (Մեջիսին կից է)՝ որոշակի լիազորություններով: Դուք Հանրային պալատի անդամ եք, ոչ մի խնդիր չկա, բայց այն չի կարող խորհրդարանի կրկնօրինակը լինել:

- **Բնական է:**

- Խորհրդարանն այս տարի արդեն 129 օրենք է ընդունել, շուտով էլի մի շարք կընդունենք, այսինքն՝ աշխատանքն ընթանում է: Հանրային պալատում մենք 25 օրենք ենք քննարկել: Մենք բոլորը հերթով չենք կարող քննարկել: Սակայն այն օրենքները,

որոնք ռեզոնանս, մեծ հետաքրքրություն են առաջացրել հասարակության մեջ, իհարկե, Հանրային պալատի «միջով» ենք անցկացնում: Խորհրդարանում դռները բաց են, այնտեղ ընդհանրապես ամեն ինչ բաց է: Նույն հեռուստատեսությունը, ռադիոն, թերթերը, խնդիր չկա, ամեն բան կատարվում է բաց եւ հրապարակայնորեն: Հասարակությանն առավել հետաքրքրող օրենքների նախագծերը մենք այդտեղով ենք անցկացրել: Հանրային պալատի կողմից 82-ի կարգի ուղղում է մտցվել: Այն իրավունք ունի հանձնաժողովներին, խորհրդարանի գլխավոր հանձնաժողովներին, ով օրենքներով է զբաղվում, առաջարկներ ներկայացնել: 42 ուղղում-առաջարկ արդեն որպես օրենք աշխատում է, այսինքն՝ Հանրային պալատի բոլոր առաջարկները հաշվի են առնվում, դուրս են գալիս միանգամից օրենքի վրա:

- Կամա՛լ Նիզամովիչ, դուք քաղաքական գիտությունների դոկտոր եք, պրոֆեսոր: Մի փոքր պատմե՛ք Ձեր կյանքի ուղու մասին: Ի՞նչ հետաքրքիր հիշողություններ ունեք հայերի հետ կապված:

- Ես սովորական համալսարանական պրոֆեսոր եմ: Ողջ կյանքս աշխատել եմ համալսարանում: Երկար տարիներ աշխատել եմ որպես դեկան, երեք ֆակուլտետ եմ ղեկավարել, ըստ հաջորդականության՝ պատմության, փիլիսոփայության եւ քաղաքագիտության, այնուհետեւ իրավագիտության: Կարելի է ասել, որ քաղաքականության մեջ ես պատահական մարդ եմ: Ղեկավարել եմ Ծոկան Ուալիխանովի անվ. Պատմության եւ ազգաբանության ինստիտուտը, այսինքն՝ ես մաքուր գիտության ոլորտից եմ: «Նուր Օթան» կուսակցությունում եմ 1999թ.-ից, այսինքն՝ գոյության առաջին իսկ օրվանից, ինձ՝ որպես ակտիվ մարդու ներառեցին: Ես, բնականաբար, իմ քաղաքական համոզմունքներից ելնելով, գտնվում եմ այս կուսակցությունում: Այն ինձ այսպիսի բարձր վստահություն է ցուցաբերել, եւ ես հայտնվել եմ քաղաքականության մեջ, չնայած որ համալսարանական պրոֆեսոր եմ:

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՍԱՄՔԼԵԱ

Ղազախստանի ժողովուրդների ասամբլեան ձեւավորվել է Ղազախստանի Հանրապետության նախագահի 1995թ. մարտի 1-ի հրամանագրով՝ որպէս խորհրդատվական-խորհրդակցական մարմին, պետության ղեկավարին կից: Մի քանի տարի անց այս կառույցը վերանվանվել է **Ղազախստանի ժողովրդի ասամբլեա:**

Ասամբլեայի գործունեությունն ուղղված է հետեւյալ խնդիրների հաղթահարմանը՝

- նպաստել հանրապետությունում ազգերի եւ կրոնների միջեւ համաձայնության, հասարակության մեջ կայունության պահպանմանը,

- առաջարկներ մշակել Ղազախստանի տարածքում ապրող ազգությունների ներկայացուցիչների միջեւ բարեկամական հարաբերությունների զարգացմանը նպաստող պետական քաղաքականություն իրականացնելու համար, աջակցել նրանց հոգեւոր-մշակութային վերածննդին ու զարգացմանը՝ իրավահավասարության սկզբունքի պահպանման հիման վրա,

- ձեւավորել քաղաքակիրթ եւ ժողովրդավարական նորմերի վրա հիմնված քաղաքական մշակույթ,

- պետության կողմից անցկացվող ազգային քաղաքականության մեջ ապահովել ազգությունների բազմազան շահերի նկատմամբ հարգանքը,

- փոխզիջումներ փնտրել հասարակությունում ծագող սոցիալական հակասությունների լուծման համար:

Ղազախստանի առաջին եւ առայժմ միակ նախագահը հանդիսանում է Ասամբլեայի ցմահ նախագահը: Նա սահմանում է հաստատում է Ասամբլեայի գործունեության հիմնական ուղղությունները: Ասամբլեայի նախագահն ունի երկու տեղակալ, որոնք նշանակվում են Ասամբլեայի խորհրդի երաշխավորությամբ Ղազախստանի Հանրապետության նախագահի համապատասխան ակտերով:

Ասամբլեայի նստաշրջանները հրավիրվում են նրա նախագահի կողմից եւ անցկացվում ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Անցկացման ամսաթիվը, տեղը եւ օրակարգը հայտարարվում են նրա աշխատանքի սկզբից մեկ ամիս առաջ: Ասամբլեայի արտահերթ նստաշրջան գումարվում է նրա նախագահի

անձնական նախաձեռնությամբ կամ Ասամբլեայի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի խնդրանքով, որն անցկացվում է որոշման ընդունման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

Ասամբլեայի կազմը ձեավորվում է պետական մարմինների, ազգային-մշակութային եւ այլ հասարակական միավորումների ներկայացուցիչներից, ինչպես նաեւ հասարակության մեջ հեղինակություն ունեցող, հասարակական-քաղաքականապես ակտիվ անձանցից:

Այժմ Ասամբլեան ունի 350 անդամ: Ասամբլեայի աշխատանքային մարմինը Քարտուղարությունն է, որը գտնվում է ՂՀ նախագահի վարչակազմի կազմում:

Ասամբլեան սերտորեն համագործակցում է փոքր ասամբլեաների հետ, որոնք ստեղծված են բոլոր շրջանների կենտրոններում եւ քաղաքներ Աստանայում ու Ալմաթիում: Փոքր ասամբլեան կատարում է Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի ներկայացուցչության գործառույթները տվյալ շրջանում: Ասամբլեայի անդամության թեկնածուներն առաջադրվում են փոքր ասամբլեաների նիստերի որոշմամբ ազգային-մշակութային կենտրոնների առաջարկներով:

Իր գործունեության տարիների ընթացքում Ասամբլեան քննարկել է ղազախական հասարակության տնտեսական եւ քաղաքական հետագա բարեփոխումների հետ կապված սոցիալ-քաղաքական կյանքի կարեւոր հարցեր:

Վերջին 10 տարիների ընթացքում Ղազախստանի ժողովրդի ասամբլեան վերածվել է միջէթնիկական հարաբերությունների ներդաշնակեցման հեղինակավոր հասարակական ինստիտուտի: Ավելացել է պետության կողմից ֆինանսական աջակցությունը: Ստեղծվել են 22 հանրապետական եւ շրջանային ազգային-մշակութային կենտրոններ, որոնք միավորում են 470 մարզային, քաղաքային եւ շրջանային կազմակերպություններ:

Ղազախստանում այսօր ապրում են ղազախներ, գերմանացիներ, կորեացիներ, թաթարներ, սլավոններ, չեչեններ, ինգուշներ, ադրբեջանցիներ, ույղուրներ, ռուսներ, ուկրաինացիներ, հրեաներ, լեհեր, թուրքեր, հույներ, հայեր, բելառուսներ, դուբայներ, քրդեր, ուզբեկներ, կազակներ, թուրքմեններ, բուլղարներ, դաղստանցիներ, ղրղրզներ, տաջիկներ, կարաչայներ, բալկարներ, չինացիներ, չովաշներ, կարակալպակներ, ասորիներ,

չելներ, բալթյան ժողովուրդներ, վրացիներ, օսեթներ, լեզգիներ, իրանացիներ, բուրյաթներ, հունգարներ, ռումիններ:

Երկրում գործում է 100 ազգային դպրոց, 170 կիրակնօրյա դպրոց, որտեղ սովորում են 23 մայրենի լեզու: Այս դպրոցներին երկրի կառավարությունը տարեկան հատկացնում է 12 մլն - թենգե:

Ղազախստանում հրատարակվում է 4 հանրապետական եւ 15 շրջանային ազգային թերթ, աշխատում է 6 ազգային թատրոն (ղազախական, ռուսական, գերմանական, ույղուրական, կորեական եւ ուզբեկական): Տարեկան հրատարակվում է մի քանի տասնյակ նոր գիրք՝ էթնիկական խմբերի լեզուներով:

Ղազախստանի նախագահ Նուրտուլթան Նազարբաեւի խոսքերով. «Մեր տնտեսությունը, մեր անկախությունը այն անկյունաքարի էությունն են, որը կոչվում է ազգերի բարեկամություն»:

ԵՐԱԿԻ ՏՈՒԳԺՎՆՈՎ **Ղազախստանի Ժողովրդի ասամբլեայի** **փոոխնախագահ, Քարտուղարության պետ** **(23.06.2009)**

- Ինչ է իրենից ներկայացնում Ղազախստանի ժողովրդի ասամբլեան: Ներկայացրե՞ք, խնդրեմ, նրա ստեղծման պատմությունը: Ինչո՞վ էր պայմանավորված այսպիսի ինստիտուտ հիմնելու որոշումը:

- Պարզ է, որ այս հարցը հետաքրքրում է շատերին, եւ դա օրինաչափ է: Բազմազգ ու բազմակրոն Ղազախստանը շատ պետությունների է հետաքրքրում: Բառացիորեն մեկ ամիս առաջ ես ընդունեցի երեք երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Անգլիայի ներկայացուցիչներին: Այսինքն՝ այսօր ազգերի ու կրոնների միջեւ համաձայնության թեման ամենահրատապ հարցերից է: Եվ մանավանդ այսօրվա աշխարհում, որտեղ շատ սուր հարցեր են առաջացել, օրակարգում մի կարեւոր հարց հայտնվեց՝ հասարակական համաձայնության հարցը: Ղազախստանը, անկախություն ձեռք բերելուց հետո, պետք է հասարակության համաձայնությանն ուղղված հստակ ու պարզ քաղաքականություն որդեգրեր: Հենց սկզբից էլ այս երկու հարցերն են գծագրվել:

Իսկ ինչո՞ւ հենց դրանք: Ազգերի ու կրոնների միջեւ համա-
ձայնությունը ցանկացած պետության կայունության երաշխիքն է
հանդիսանում: Սա ոչ միայն Ղազախստանին է վերաբերում, այ-
լեւ եվրոպական ու այլ երկրներին: Եվ դա կախված չէ պետութ-
յան մակարդակից: Բազմազգ պետություններ եղել են, կան ու
կլինեն, եւ այս հարցերն արդիական են ե՛ւ Միջին ու Մերձավոր
Արեւելքում, ե՛ւ եվրոպական առանձին երկրներում: Որտեղ կա
կայունություն, այնտեղ կա կայուն տնտեսական զարգացում եւ
ապահովվում է սոցիալական զարգացումը: Եվ գլխավորն այն է,
որ հենց այս կայունության շնորհիվ ենք դուրս գալիս դեպի քա-
ղաքական կայունություն: Այսինքն՝ ձիշտ հաշվարկված մոտեց-
ման միջոցով կարելի է որոշել պետության հետագա զարգացու-
մը: Մանավանդ դա շատ այժմեական է այնպիսի պետության
համար, ինչպիսին Ղազախստանն է, եթե հաշվի առնենք, որ
այն տարբերվում է հետխորհրդային շատ երկրներից, այդ
թվում նաեւ իր էթնիկական կազմով:

130 էթնիկական խումբը մեզ համար շատ լուրջ թիվ է, ավե-
լի քան 45 էլ դավանանք կա, ինչը մեկ անգամ ես ընդգծում է
Ղազախստանի յուրահատկությունը: Այդ պատճառով Ղազախս-
տանը հենց սկզբից վերահսկողության տակ վերցրեց այս հար-
ցը: 1991թ.-ի վերջին, Խորհրդային Միության փլուզումից հետո
ուղիղ մեկ ամիս անց ընդունվեց անկախ Ղազախստանի առա-
ջին օրենքը: Դա 1992թ. հունվարի 1-ին էր՝ Դավանության ազա-
տության մասին օրենքը: Ղազախստանը նաեւ խաղաղ քաղա-
քականություն որդեգրեց: Նա ողջ աշխարհին հայտարարեց մի-
ջուկային զինանոցից հրաժարվելու իր մտադրության մասին:
Դա ոչ միայն հրաժարում էր, ոչ միայն սոսկ հայտարարություն,
դա հայտարարություն էր վստահությամբ: Այդ հայտարարութ-
յամբ մենք վստահության հսկայական շերտ ստացանք, որը
Ղազախստան մտավ արդեն ներդրումների տեսքով: Այդ վստա-
հելի հարաբերությունները Ղազախստանին բարձրացրին նոր
հարթության վրա՝ չնայած նրան, որ տարբեր միջազգային փոր-
ձագետներ (դե գիտեք՝ կան մի քանի լուրջ փորձագետներ, օրի-
նակ՝ Բժեզինսկին) Ղազախստանը դիտարկում էին որպես ամե-
նապրոբլեմային տարածքներից մեկը, ազգերի ու կրոնների մի-
ջեւ հակամարտության գոտի: Մենք այսօր հպարտանում ենք եւ
ուրախ ենք, որ բազմազգ ու բազմակրոն Ղազախստանը մենք

դարձրեցինք ոչ թե խնդիր, այլ առավելություն: Ինչո՞ւ առավելություն, որովհետեւ Ղազախստանում բնակվող բոլոր էթնիկական խմբերին պայմաններ ստեղծելու միջոցով միայն կարելի էր ապահովել երկրի կայուն զարգացումը:

Ղազախներն իրենք էլ են դժվար ժամանակաշրջաններ անցել, նաեւ ողբերգական: Ղազախական պետության կազմավորումն էլ ոչ դյուրին ուղի է անցել: Դա այն ուղին էր, որն անցնում էր տարբեր ժողովուրդների միջով: Դե գիտեք՝ ինչքան ժողովուրդների միջով էր անցնում Մետաքսի ճանապարհը: Այն արդեն հենց սկզբից կար:

Ղազախստանը բազմազգ պետություն մեկ օրում չի դարձել: Գիտեք, որ շատ ժողովուրդներ՝ շուրջ 1,5 մլն մարդ 62 ազգություններից, արքորվել էին Ղազախստան 30-ականների վերջերին: Եվ Ղազախստանի տարածքում բնակվող ոչ մի էթնիկական խումբ, ոչ ոք այս հարցում մեղավոր չէ: Դա քաղաքական ռեժիմ էր, եւ այդ պատճառով Ղազախստանն առավելագույն պայմաններ է ստեղծում բոլոր էթնիկական խմբերի համար: Եվ Ղազախստանի նախագահը՝ ազգի առաջնորդը, իր վարած քաղաքականությունում կողմնորոշումն ուղղել է հենց այս հարցերի վրա:

Չէ՞ որ Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի ստեղծման գաղափարը մեկ օրում չի հայտնվել: Վերցնենք 90-ական թվականները. հեշտ ժամանակաշրջան չէր, հսկայական տնտեսական ճեղքվածք կար: Դա Ղազախստանի ընդհանուր քաղաքականության կողմնորոշման ժամանակաշրջան էր այդպիսի շատ հարցերի վերլուծության պրիզմայի միջոցով: Այնպես որ, Ղազախստանը հենց այսպիսի մոդելի ստեղծմանը գնաց՝ Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի:

1995թ.-ին ընդունվեց Ղազախստանի սահմանադրությունը: Եվ հենց այդ շրջանում՝ 95-ից հետո, ստեղծվեց Ղազախստանի ժողովրդի ասամբլեան, որի մեջ այսօր մտնում են Ղազախստանում ապրող էթնիկական բոլոր խմբերը: Այս կառույցի կարեւորությունն ու նշանակալիությունը երեւում է նրանից, որ այսօր կարող ենք գնահատական տալ: Գոյության 14 տարիները հաստատեցին այս ինստիտուտի ոչ միայն կենսականությունը: Բառացիորեն անցյալ տարի մենք Ասամբլեայի մասին օրենք ընդունեցինք: Դա ոչ միայն այդ ինստիտուտի վաստակն էր, այլեւ

ազգային քաղաքականություն վարելու այն սխեմայի, մեխանիզմի արդարացիությունը, ինչպիսին է Ղազախստանի ժողովրդի ասամբլեան:

- Դա անհրաժեշտ քայլ էր Ղազախստանի ժողովուրդներին համախմբելու համար: Իսկ գործնականում ո՞րն է այսօր Ասամբլեայի առաքելությունը: Ինչքանո՞վ կարելի է կայացած համարել այդ ինստիտուտը:

- Շատ կարեւոր հարց է, որը շատերին է հետաքրքրում: Ընդհանրապես ցանկացած ձեռագրի, կառույց ոչ միայն կախված է արտաքին ձեւից, այլև, առաջին հերթին, անտարակույս, նրա գործունեության ուղղվածության ներքին բովանդակությունից: Դրանից ելնելով՝ Ձեր հարցը լրիվ տեղին է: Օրինակ՝ ինչպե՞ս կարելի է պայմաններ ստեղծել Ղազախստանում ապրող յուրաքանչյուր էթնիկ խմբի ներքին հանգստության համար: Սա է գլխավոր հարցը: Եվ ինչպե՞ս պայմաններ ստեղծել, որպեսզի յուրաքանչյուր ազգությանը հնարավորություն տրվի առնչվել իր ակունքների հետ: Սա հասարակ հարց չէ: Այն հենց հանդիսանում է գլխավոր բաղադրիչը: Անտարակույս, դա յուրաքանչյուր էթնիկ խմբի մշակույթն է: Այստեղ գլխավորը լեզուն է: Եթե ժողովրդի լեզուն չկա, համարեք, որ այդ ժողովուրդը չկա: Եվ վստահության այս ողջ համակարգն ամրապնդող խորը արմատն իհարկե ավանդույթն է:

Ղազախստանի նախագահին իր ներքին քաղաքականությունում զնաց հենց այդ ուղով, եւ այն էթնիկ խմբերը, որոնք ցանկանում էին, հնարավորություն ստացան ազգային-մշակութային միավորումներ ստեղծելու: Ղազախստանի տարածքում 600 ազգային-մշակութային միավորումներ կան, դա երեւի հսկայական շերտ է: Որտեղ էլ որ ապրեք՝ Ղազախստանում թե Հայաստանում, եթե պայմաններ են ստեղծվում ներքին անհարմարությունները հանելու համար, ապա դա երեւի թե գլխավոր բաղադրիչն է:

Նշված երկրորդ ուղղությունն էր բոլոր էթնիկ խմբերին հնարավորություն տալը ԱԳՆ-ի միջոցով կապ հաստատելու իրենց պատմական հայրենիքի հետ... Երբ մեկը գալիս է Հայաստան՝ իր պատմական հայրենիքը, երբ գիտե այն ավանդույթները, որոնք կարողացել է պահպանել Ղազախստանում, եւ դրանք լի-

վին համընկնում են իր տեսածի հետ, ապա դա շատ բանի մասին է խոսում: Բացի այդ՝ հնարավորություն տալ այն մարդկանց, որոնք հսկայական ծգտում ունեն Ղազախստանի քաղաքացի լինելու եւ ցանկանում են առնչվել իրենց ակունքներին, ստեղծել վստահության կենդանի ուղեղ երկրների միջեւ: Ինչ է, դա վա՛տ է: Հարկավոր է ուղղակի մարդկային արարքներով պայմաններ ստեղծել, ուստի կարելի է մեխանիզմն է, աշխատանքի բովանդակային մասը: Սա աշխատանքի միայն մեկ շերտն է: Այժմ՝ երկրորդը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Ասամբլեան: Այսօր այն ունի 382 անդամ, ներկայացված են Ղազախստանում բնակվող բոլոր էթնիկական խմբերը: Եվ դա հասարակական կառույց չէ: Դրսից եկած որոշ մարդիկ ասում են՝ դե դա հասարակական ինստիտուտ է: Հասարակական ինստիտուտներ կարող են շատ լինել: Անվանումները շատ են, սակայն եթե բովանդակություն, աշխատանքի ուղղություն չկա, էթնիկական խմբերի պաշտպանության կամ շահերի իրականացման արդյունավետ մեխանիզմ չկա, իհարկե, այն մակերեսային կդառնա:

Ղազախստանի ժողովրդի ասամբլեան գլխավորում է Ղազախստանի նախագահը, եւ սրանով միանգամից սահմանվում է կարգավիճակը: Սրանով է որոշվում մեր ինստիտուտի ոչ միայն կենսունակությունը, այլեւ գործողությունը: Ասամբլեայի նիստերում ընդունված որոշումները կատարվում են բոլոր պետական մարմինների կողմից: Ցանկանում եմ ասել, որ այդ որոշումը պարտադիր չէ, այն ունի հանձնարարական բնույթ: Սակայն Ասամբլեան գլխավորում է երկրի նախագահը, ուստի բոլոր գործադիր մարմիններն այն ընկալում են որպես բարձր մակարդակի որոշում:

Ասամբլեան ունի 382 անդամ: Հանրապետական ասամբլեաների 56 անդամներ մտնում են Ասամբլեայի խորհրդի մեջ: Խորհրդի նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու անգամ պետքարտուղարի մասնակցությամբ:

Եվ երրորդը: Ցանկանում եմ ասել, որ այսօր ես՝ ձեր առջեւ նստած անձը, գլխավորում եմ Ասամբլեայի քարտուղարությունը: Այն Ասամբլեայի աշխատանքային մարմինն է: Ցանկանում եմ եւս մի առանձնահատկություն ընդգծել. քարտուղարությունը Ղազախստանի նախագահի վարչակազմի կառուցվածքային

ենթաբաժանում է, այսինքն՝ աշխատանքային մարմնի կողմից ընդունված որոշումները կատարվում են նորից բոլոր պետական մարմինների կողմից: Մենք իրավունք ունենք հանձնարարական տալու այս կամ այն հարցի վերաբերյալ ցանկացած պետական մարմնի, եւ դրանք կատարման համար ընկալվում են որպես պարտադիր: Եվ ամենակարեւորը՝ այս կառույցը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով որոշում կայացնել ցանկացած հարցի վերաբերյալ, որ ընդհանրապես կարող է կյանքում ծագել: Եթե մենք այդպիսի հարցեր չենք լուծում, ապա ո՞ւմ է հարկավոր այդպիսի կառույցը:

Վերջերս հանդիպում ունեի ազգային փոքրամասնությունների հարցերով զերագույն հանձնակատար պրն Վալենթերգի հետ: Նրանց մոտ էլ էր այդ հարցը լուրջ հետաքրքրություն առաջացրել՝ ինչքանով է Ասամբլեան արդյունավետ: Ասամբլեան՝ որպես հասարակական կառույց, հասկանում են, սակայն ընկալումը շատ դժվար է ընթանում, եթե չգիտես ներքին բովանդակությունը:

- Մարդկանց մոտ թյուրիմացություն կա: Ի վերջո, ո՞րն է ձիշտ՝ Ղազախստանի ժողովրդի՞ ասամբլեա, թե՞ ժողովուրդների ասամբլեա:

- Պետության գաղափարախոսական եւ ազգային քաղաքականության գլխավոր բաղադրիչն այն է, որ երկրի տարածքում ապրող յուրաքանչյուր քաղաքացի նախեառաջ Ղազախստանի քաղաքացի է: Այդ պատճառով էլ նախնական անվան մեջ փոփոխություն մտցվեց՝ ոչ թե ժողովուրդների, այլ ժողովրդի ասամբլեա: Մենք Ղազախստանի քաղաքացիներին համայնքների չենք բաժանում: Ես գրուցում էի մի երկրի դեսպանի հետ, նա ասում էր՝ ձեզ մոտ մեր համայնքը: Ես էլ նրան ասացի՝ կգնաք ձեր հայրենիք, այնտեղ կասեք՝ համայնք: Ղազախստանի տարածքում բնակվող ղազախները համայնք են, բայց Ղազախստանի քաղաքացիները Ղազախստանի ժողովուրդն է, Ղազախստանի միասնական եւ անբաժան ժողովուրդը: Միայն այսպես՝ միասնական ժողովուրդ ձեւավորելու եւ ստեղծելու միջոցով, կարծում եմ, կարելի է ապահովել հասարակության առավելագույն համախմբումը: Եվ մեր առջեւ դրված գլխավոր խնդիրը հասարակական համաձայնությունն է: Այնպես որ, դուք շատ լուրջ հարց շոշափեցիք, որը շատ հաճախ առանձին

մարդկանց կողմից չի հասկացվում: Բայց դե դա օրինաչափ հարց է: Եթե նրանց հետաքրքիր է, կարող ենք միասին աշխատել:

- Իսկ ղազախները նույնպես ներկայացված են Ասամբլեայում:

- Իհարկե: Եթե Ասամբլեան կոչվում է ժողովրդի, ուրեմն երեւի ղազախներն էլ կապ ունեն դրա հետ:

- Արդյո՞ք բոլոր ազգերն են ներկայացված: Ի՞նչ մեխանիզմով է ազգի ներկայացուցիչը դառնում Ասամբլեայի անդամ, եւ ինչպե՞ս է նա լիազորվում՝ ազգի շահերը ներկայացնելու համար:

- Կան տարածքային կառույցներ, դրանք ոչ կառավարական հասարակական կազմակերպություններ են: Մենք չենք խառնվում այն հարցերին, թե ով է լինելու առաջնորդը շրջաններում, մարզերում: Նրանք իրենք են որոշում: Առաջնորդները մտնում են մարզային խորհրդի մեջ, օրինակ՝ Կարազանդայի մարզի, Ակմոլայի մարզի: Այնտեղ ստեղծվում է Ասամբլեայի մարզային խորհուրդ, որը գլխավորում է մարզի ակիմը: Եվ նրանք են պատվիրակ ուղարկում հանրապետական Ասամբլեա:

Բացի այդ՝ Ասամբլեայի անդամ են դառնում նաեւ հանրապետական ազգամշակութային միավորումների առաջնորդները: Եթե նրանք ներկայացված են մեր մարզերից ավելի քան իննում, ապա իրավունք ունեն ձեռք բերել հանրապետականի կարգավիճակ: Այս կազմակերպությունների ղեկավարները նույնպես իրավունք ունեն դառնալու Ասամբլեայի անդամ: Փաստորեն, այս մեխանիզմի միջոցով բոլոր էթնիկական խմբերը, որոնք համապատասխան կառույց են ստեղծել, կարող են Ասամբլեայի անդամ լինել: Բացի այդ՝ Ասամբլեայի անդամ կարող են լինել ՀԿ-ների ղեկավարները, այսինքն՝ այն մասշտաբի կառույցներ ու ղեկավարներ են, որոնց գործունեությունն ուղղված է հասարակական համաձայնությանը: Բոլոր թեկնածուները դիտարկվում են մեր կողմից, այնուհետեւ ուղարկում ենք նախագահին, քանի որ միայն նա է հաստատում Ասամբլեայի կազմը: Իսկ եթե ինչ-որ խնդիրներ կան էթնիկական խմբի ներսում, ապա դա արդեն իրենց գործն է, խնդրեմ, թո՛ղ որոշեն: Առաջ-

նորդ կարող է դառնալ միայն նա, ով իրեն ցուցադրել է, ով իրոք առաջնորդ է հանդիսանում:

- **Կարելի՞ է ասել, որ Ասամբլեայում քվտաններ կան:**

- Դա մոդելի ամենակարեւոր առանձնահատկություններից է, եւ դա էլ շատերին այնքան հասկանալի չէ՝ հարցերի ոչ քաղաքականացումը: Ազգերի ու դավանանքների հարցերում ոչ մի քաղաքական խնդիր չի շոշափվում: Մեր սահմանադրության մեջ ամրագրված է, որ ըստ ազգային կամ կրոնական պատկանելության՝ քաղաքական կուսակցություններ հիմնել չի թույլատրվում: Այդ պատճառով էլ սահմանադրության մեջ ասվում է՝ բոլոր քաղաքացիներին հավասար իրավունքներ՝ անկախ ազգությունից ու դավանանքից: Սա ամենակարեւոր պահերից մեկն է: Երբ արտասահմանից գալիս ու սկսում են խոսել ազգային փոքրամասնությունների մասին, մենք ասում ենք՝ ինչո՞ւ եք բաժանում բնիկ եւ ոչ բնիկ ժողովուրդների: Ղազախստանում բոլոր քաղաքացիները հավասար են՝ անկախ ազգությունից ու կրոնից:

Ասամբլեայից 9 հոգի ընտրվում է մեջլիսի պատգամավոր: Ինձ հարցնում են՝ 130 էթնիկական խումբ է եւ ընդամենը 9 պատգամավոր, իսկ մյուսների շահե՞րը: Այսինքն՝ նորից նեղ մոտեցում:

Պատգամավորության թեկնածուներին ներկայացնում են մարզերը, հետո դա քննարկվում է Ասամբլեայի խորհրդի նիստին: Խորհուրդը հանձնարարական է տալիս նստաշրջանին, որը բարձրագույն մարմին է պետության ղեկավարի մասնակցությամբ: Այնտեղ էլ հենց առաջադրվում են պատգամավորները: Սակայն նրանք արդեն չեն ներկայացնում որեւէ մի էթնիկական խմբի շահերը, այլ Ղազախստանի բոլոր էթնիկական խմբերի:

Այսօր այդ պատգամավորներից արդեն 365 գրություն է գնացել քննարկման, մասնակցել ենք 56 օրենսդրական աշխատանքների: Այնտեղ, որտեղ ազգային հարց կա, անտարակույս փորձաքննություն է անցնում այն պատգամավորների մոտ, որոնք ներկայացնում են ժողովրդի ասամբլեան: Սա է Ասամբլեայի կարեւոր առանձնահատկությունը: Իսկ էթնիկական հիմքով քաղաքական կուսակցությունները, որոնք այնքան շատ են

Եվրոպայում, ի վերջո կոնֆլիկտային իրավիճակի են հանգեցնում:

- Իսկ ի նչ խնդիրների հետ է առնչվում Ասամբլեան:

- Մենք ձեզ հետ կենդանի մարդիկ ենք, այդպես չէ՞, երեխաներ ունենք, չէ՞: Ընտանիքում յուրաքանչյուր երեխայի հետ կապված տարբեր հարցեր են առաջանում: Ընտանիքը կերակրել պե՞տք է, ընտանիքի համար պայմաններ ստեղծել պե՞տք է: Յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի միջոց էլ որոշակի հարցեր կհուղեն: Եվ այս գործուն կառույցը ստեղծված է առաջացող հարցերի լուծման համար: Իսկ հարցեր կան՝ լեզվի հետ կապված, ազգային դպրոցների, պետական լեզվի մասին օրենքի իրականացման, զանգվածային լրատվամիջոցների: Այսինքն՝ հարցեր կան եւ կլինեն: Մեր խնդիրը օրակարգում կանգնած բոլոր այսպիսի հարցերի լուծումն է: Եթե հարցեր չեն ծագում, ապա ո՞ւմ է հարկավոր այդպիսի կառույցը:

- Ասամբլեայի ստեղծումից հետո որոշ ժամանակ է անցել: Կարելի՞ է ասել, որ որոշ պետություններ կցանկանային ընդօրինակել այդ մոդելը:

- Ես ցանկանում եմ ցույց տալ այս գրքույկը՝ «Ազգերի եւ կրոնների միջեւ համաձայնության դազախստանյան մոդելը», ՀՀ ԳԱԱ Սոցիոլոգիայի ինստիտուտ: Սա ներկայացրին իմ հայ ընկերները, որոնք ելույթ էին ունենում Մոսկվայում ԱՊՀ համաժողովի ժամանակ: Նրանք ասացին՝ լսե՛ք, Ղազախստանում արդեն մոտեցումը մշակված է, այլեւս հարկավոր չէ դրա վրա զլուխ կոտրել, եկե՛ք տեսնենք, թե այն ինչպես կարելի է կիրառել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարածաշրջանի առանձնահատկությունը: Գրքի վրա 9 գիտնական է աշխատել, բոլորը Հայաստանից՝ պրոֆ. Պողոսյան, Գրիգորյան, Հակոբյան, Հովհաննիսյան: Բոլորն այդ ինստիտուտի դոկտորներ են: Այստեղից միայն մի նախադասություն կցանկանայի ընթերցել. «Ղազախստանի ազգային քաղաքականության հիմնական տարրերից մեկը հանդիսանում է ղազախական միջուկի մշակույթի նպատակաուղղված զարգացումը՝ միաժամանակ ստեղծելով բոլոր պայմանները մյուս եթնոսների համար»: Այսինքն՝ մեկ նախադասությամբ այսքան հարցերի պատասխան է տրվել:

Այժմ աշխարհը փնտրտուքների մեջ է գտնվում, փորձում է մշակել այնպիսի մոտեցումներ, որոնց կարիքը հաճախ ունի, այսինքն՝ այս կամ այն կողմ շեղումը հասարակության մեջ որոշակի թերհասկացման կհանգեցնի: Օրինակ՝ Անգլիան: Անցյալ տարի նրանք հրաժարվել են, ավելի ճիշտ՝ մասնակիորեն կասկածի տակ են առել պյուրալիզմի գաղափարը: Եվ դա այն գաղափարն էր, որը նրանք դրոշի նման պահում էին վերջին ժամանակները: Կալիֆոռնիայում ինձ պատմեցին, որ խնդիրներ են առաջացել իսպանալեզու, լատինաամերիկյան խմբերի հետ: Ֆրանսիայից ինձ մոտ էին եկել, հենց ձեր տեղում նստած էին, ասում են՝ մեզ մոտ 90 տոկոսը ֆրանսիացի է, մնացած 10 տոկոսը ֆրանսիացի չէ: Եթե կա միավորի թեկուզ 1 տոկոս բաժանում, ապա դա անպայման որոշակի հարցեր կառաջացնի: Կարծում եմ՝ Գերմանիայի խնդիրներին էլ եք ծանոթ:

Ասամբլեայի ստեղծումից ի վեր մեր ներկայացուցիչները եղել են 28 երկրներում: Չեն ցանկանում ասել, թե Ասամբլեայի մոդելը համադարման է բոլոր հարցերի լուծման համար: Սակայն մենք հենց որպես հասարակական համաձայնության խնդրի լուծման հիմնական բաղադրիչ ենք առաջարկում: Իսկ թե ինչքանով այն կիրառելի կլինի այլ երկրների համար, հաշվի առնելով իրենց առանձնահատկությունները, թող դա արդեն իրենք դիտարկեն: Այնպես որ, հետաքրքրությունը շատ մեծ է, այդ թվում նաեւ Հայաստանում:

- Ի դեպ ասեմ, որ այդ թեմայով Երեւանում կազմակերպված կլոր սեղանը հենց «Արմեդիա»-ն էլ լուսաբանում էր:

- Ասեմ, որ Մոսկվայի համաժողովին Հայաստանից ժամանած գիտնականները վեր կացան եւ ասացին՝ բոլոր ԱՊՀ երկրների համար որպես հանձնարարական ներառեք ազգամիջյան համաձայնության դազախստանյան մոդելը:

- Ունի՞ արդյոք Ասամբլեան արտաքին կապեր:

- Ժամանակին հանդիպում է կայացել ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանի հետ: Նա բարձր գնահատական է տվել Ասամբլեային: Անցյալ տարի ես հանդիպել եմ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Մակասակիի հետ, դա Նյու-Յորքում էր: Այսօր մենք շատ սերտորեն աշխատում ենք ԵԱՀԿ-ի հետ:

Ասամբլեան հստակ սահմանել է մի քանի առաջնայնություն: Օրինակ՝ լեզվական քաղաքականությունը: Ղազախստանում տարվող լեզվական քաղաքականությունը ԵԱՀԿ-ում մեծ հետաքրքրություն առաջացրեց: Եվ մենք գլխավոր հանձնակատարի հետ պայմանավորվեցինք Ալմաթիում համատեղ միջոցառում անցկացնել: Արդեն նշեցի, որ մասնակցում ենք նաև ԱՊՀ համաժողովին: Բացի այդ՝ ստեղծել ենք Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի հիմնադրամ, որը համագործակցում է ԱՊՀ հիմնադրամի հետ: Այժմ սերտ կապեր են ստեղծվել Գերմանիայի հիմնադրամի հետ: Այնպես որ, միջազգային համագործակցությունը բավականին լուրջ բնույթ ունի: Անցյալ տարի այստեղ էին Չինաստանի ներկայացուցիչները, 12 հոգի էին եկել: Եվ իհարկե Թուրքիայի հետ շփումները: Մենք սերտագույն կապի մեջ ենք նրանց Էթնիկական հարցերով ռազմավարական ինստիտուտի հետ: Թուրքիան էլ իր հերթին է շահագրգռված:

- Իսկ ինչպե՞ս են Ասամբլեայում ներկայացված, արդեն վախճանում եմ ասել հայկական համայնք, Ղազախստանի հայերը: Կարելի՞ է նրանց ակտիվ մասնակից համարել:

- Այո՛, երեւի թե ամենակտիվ մասնակիցներից: Այսօրվա օրով Ղազախստանում 25 հազար էթնիկ հայերի խումբ է բնակվում: 2006թ.-ին Ալմաթիում եկեղեցի բացվեց: Գիտեք երեւի, որ այդ բոլոր գործերում գլխավոր գործող անձը պրն Կարապետյանն է: Նա այն մարդն է, որը հենց սկզբից՝ Ղազախստանի ժողովրդի ասամբլեայի ստեղծման օրվանից, Ղազախստանի նախագահի հետ միասին, կարելի է ասել, կառուցել է Ասամբլեայի հիմնական մասը: Եվ ոչ թե պարզապես կառուցել է, այլ իրական գաղափարներ է առաջ քաշում, որոնք ընկած են Ասամբլեայի գործունեության հիմքում: Կարող եմ ասել, որ հայկական խումբը ներկայացված է բոլոր 9 ամենախոշոր մարզերում՝ Ակտյուբինսկի, Կարագանդայի, Հյուսիս-ղազախսական եւ այլ մարզերում: Ղազախստանի հայերը միշտ ունեցել են եւ ունեն մեծ համբավ: Պրն Միրզոյանին՝ Ղազախստանի խոշորագույն ղեկավարին, կարծում եմ, որ այսօր բոլորն են հիշում, բոլորը նրա մասին գիտեն:

Մենք մեծ հոգատարությամբ ենք վերաբերվում մեր բոլոր այն առաջնորդներին, ովքեր մեծ ներդրում են ունեցել Ղազախստանի կայուն զարգացման գործում: Հիշենք աքսորների մասին: Ղազախստանում եղել է 11 համակենտրոնացման ծամբար, սա բավականին լուրջ բան է, ուստի մենք դա միշտ հիշում ենք: Ղազախստանի նախագահը մայիսի 31-ը սահմանել է Քաղբանտարկյալների հիշատակի օր: Այն ամեն տարի նշվում է: Այս հարցն էլ է մտնում Ասամբլեայի քննարկումների շրջանակի մեջ:

Նկատել եմ, որ որոշ մարդիկ խոսափում են էթնիկական թեմայից, սակայն դրա մասին պետք է խոսել: Եթե Ղազախստանում 130 էթնիկական խումբ կա, ուրեմն դրա մասին պետք է խոսել: Եվ ոչ միայն խոսել, այլև լուծել նրանց մտահոգող խնդիրները:

- Մի փոքր պատմե՞ք Ձեր մասին: Մինչև Ասամբլեայի փոխնախագահ նշանակվելը ինչո՞վ էիք զբաղվում:

- Որտեղի՞ց սկսեմ, ծննդյան օրվանի՞ց: Ավարտել եմ ԲՈՒՀ, ասպիրանտուրա, ԲՈՒՀ-ական համակարգում եմ աշխատել, եղել եմ ինստիտուտի տնօրեն, այնուհետև Կարագանդայի մարզի ակիմի տեղակալ, կրոնի հարցերով հանձնաժողովի նախագահ:

Ես ցանկանում եմ ձեզ շնորհակալություն հայտնել: Դուք եկել եք ինձ մոտ ոչ թե նրա համար, որ մասնակցել եք այդ կլոր սեղանին, լուսաբանել այն, եւ ոչ էլ այն պատճառով, որ ձեր գիտնականներն այսպիսի գիրք են հրատարակել, այլ դուք հասկացել եք այս հարցի կարեւորությունը, էությունը եւ ցույց տվեցիք, որ անտարբեր չեք դրա նկատմամբ:

- Դուք ասացիք, որ 130 էթնիկական խումբ կա, եւ Ասամբլեան ունի 380 անդամ: Ինչպե՞ս հասկանանք, ամեն ազգից երեք ներկայացուցի՞չ է:

- Այստեղ ղազախներ էլ են մասնակցում, ՀԿ-ներ էլ, կրոնների ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ղեկավարներ: Այս մշակութային ինստիտուտը հասարակական ինստիտուտներից մեկն է հանդիսանում, այսինքն՝ հասարակական համաձայնության ինստիտուտը չի կարող ինքն իրեն զարգանալ, ուստի հարկավոր է համագործակցություն բոլոր ինստիտուտների միջեւ՝ ե՛ւ քաղաքական, ե՛ւ կրո-

նական: Եվ այն անձինք, ովքեր իրենց ներդրումն ունեն, նրանց ընդգրկում ենք Ասամբլեայում:

- **Իսկ ազգություններն ունեն՞ իրենց թերթը, ամսագիրը:**

- Ունենք հանրապետական թերթեր, օրինակ՝ «Նաիրի» թերթը, ուղղորական, գերմանական, ուկրաինական թերթեր կան: Կա հանրապետական 18 թերթ, իսկ ընդհանուր առմամբ՝ ազգամշակութային միավորումների 37 թերթ կա:


- **Իրենց լեզվո՞վ:**

- Անկասկած, դա նրանց իրավունքն է: Կա նաեւ այսպիսի օրինակ՝ ուղղորական թերթը ղազախերեն է: Ղազախստանում պետական լեզվի ուսուցման հարցը նախագահի կողմից որակված է որպես Ղազախստանի ժողովրդի միավորման փաստ: Իսկ երկրորդը՝ այն Ղազախստանի յուրաքանչյուր քաղաքացուն տեղեկատվությամբ ապահովելու համար է: Ինչպե՞ս կարելի է Ղազախստանի քաղաքացի լինել, մասնակցել հասարակական-քաղաքական կյանքին առանց լեզուն իմանալու: Կա նաեւ այն պրակտիկան, որ եթե ցանկանում են տեղեկատվությունը բոլորին տեղ հասցնել, ապա օգտագործվում է ռուսերենը:



ԳԼՈՒԽ 3

ՂԱԶԱԲՍԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ



Ղազախստանն ագրարային-արդյունաբերական երկիր է: Տնտեսական աճի հիմնական աղբյուրը օգտակար հանածոների արդյունահանումն է: Մենդելեևի աղյուսակի 105 տարրերից 99-ը հանդիպում են Ղազախստանում: Տնտեսական նշանակությամբ առավել կշիռ ունեն քարածուխը, նավթը, պղինձը, երկաթը, ծծումբը, ցինկը, քրոմիտները, ոսկին, մանգանը: Նավթի պաշարներով Ղազախստանն աշխարհում գրավում է 7-րդ տեղը, գազի պաշարներով՝ 6-րդը, ուրանի պաշարներով՝ 2-րդը: Մինչև 2017թ. երկիրը կմտնի նավթի ու գազի խոշորագույն արդյունահանող եւ արտահանող երկրների տասնյակի մեջ:

Ղազախստանը ոսկու խոշոր արտադրող է: Երկրում գրանցված է ավելի քան 170 ոսկու հանքավայր:

Գյուղատնտեսությունը երկրի տնտեսության կարեւոր հատվածն է, որի հիմնական արտադրանքն են հացահատիկն ու բամբակը: Հացահատիկի արտադրությամբ Ղազախստանը ԱՊՀ երկրների մեջ գրավում է երրորդ տեղը Ռուսաստանից եւ Ուկրաինայից հետո:

Ղազախստանը բաղկացած է հինգ խոշոր տնտեսական շրջաններից: Հյուսիսում զարգացած են հացահատիկային տնտեսությունը, երկաթահանքի եւ քարածխի արդյունահանումը, մեքենաշինությունը, նավթամթերքի եւ երկաթամիահալվածքի արտադրությունը: Արեւելյան Ղազախստանում գերակշռում են գունավոր մետալուրգիան, էներգետիկան, մեքենաշինությունը եւ անտառային տնտեսությունը: Արեւմտյան Ղազախստանը խոշորագույն նավթագազարդյունահանման շրջան է ոչ միայն Ղազախստանում, այլեւ ԱՊՀ-ում: Երկրի արեւմտյան մասը հայտնի է նաեւ եգիպտացորենով, բանջարեղենով, արեւածաղկով:

Կենտրոնական Ղազախստանի տնտեսության հիմնական բնագավառներն են սեւ եւ գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը, անասնաբուծությունը: Հարավում արտադրվում են բամբակ, բրինձ, բուրդ, հացահատիկ, միրգ, բանջարեղեն, շաքարի ձակնդեղ, ծխախոտ, զարգացած է գունավոր մետալուրգիան, սարքաշինությունը, թեթեւ եւ սննդի արդյունաբերությունը, ձկնային եւ անտառային տնտեսությունը:

Ղազախստանի բնական պայմանները, դրանց բազմազանությունը անասնապահության համար պայմանավորում են մեծ հնարավորություններ: Երկրում ավանդաբար զբաղվում են ոչ-խարաբուծությամբ, ձիաբուծությամբ, ուղտաբուծությամբ, բազմազնում են խոշոր եղջերավոր անասուններ:

Ղազախստանի առեւտրային ավանդական գործընկերներն են ԱՊՀ եւ Բալթյան երկրները, որոնց բաժին է ընկնում այլ երկրներ արտահանման շուրջ 59 եւ այնտեղից ներկրման մինչեւ 63 տոկոսը: Իսկ հիմնական առեւտրային գործընկերը Ռուսաստանն է:

Այլ երկրներից հաջող առեւտրային հարաբերություններ են զարգանում Գերմանիայի, Թուրքիայի, Շվեյցարիայի, Չեխիայի, Իտալիայի, Չինաստանի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի հետ:

Ղազախստանն արտահանում է նավթ եւ նավթամթերք, գունավոր մետաղներ, սեւ մետաղներ, հանքաքար, հացահատիկային կուլտուրաներ, քիմիական նյութեր, մեքենայական սարքավորումներ, բուրդ, միս, քարածուխ: Արտահանման գործընկերներն են Գերմանիան՝ 12,4%, Ռուսաստանը՝ 11,6%, Չինաստանը՝ 10,9%, Իտալիան՝ 10,5%, Ֆրանսիան՝ 7,6%, Ռումինիան՝ 4,9% (2006):

Ներկրման հիմնական ապրանքներն են՝ մեքենաներ եւ մեքենայական սարքավորումներ, մետաղական արտադրանք, տրանսպորտի միջոցներ, քիմիական ապրանքներ, հանքային վառելիք, սննդամթերք, ժողովրդական սպառման ապրանքներ: Ներկրման գործընկերներն են Ռուսաստանը՝ 36,4%, Չինաստանը՝ 19,3%, Գերմանիան՝ 7,4% (2006):

Իր մտածված քաղաքականության շնորհիվ Ղազախստանին հաջողվեց դուրս գալ 1990-ականների ծանր ճգնաժամից: Ընդհանուր առմամբ, հակաճգնաժամային ծրագրին հատկացվել է երկրի ՀՆԱ-ի 20%-ը՝ շուրջ \$18 մլրդ, ընդ որում կայունացման հիմնադրամի միջոցների զգալի մասը (ՀՆԱ 6%) հատկացվել է տնտեսության իրական հատվածին օգնություն ցուցաբերելու համար, ինչի արդյունքում Ղազախստանում արդյունաբերական արտադրությունը սկսել է աճել: 2008թ.-ի համեմատ, 2009թ.-ին օգտակար հանածոների արդյունահանումն աճել է 11,3%-ով:

Ասիական ճգնաժամից հետո 10 տարվա ընթացքում Ղազախստանի ՀՆԱ-ն աճել է 8 անգամ, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն \$1000-ից դարձել է \$8400, արտաքին առեւտրային շրջանառությունն աճել է 10 անգամ, հաջողվել է 8,5 անգամ մեծացնել առողջապահության ֆինանսավորումը, ինտերնետին միացնել դպրոցների 98%-ը:

Ղազախստանի տնտեսությունն աճում է տարեկան 9-10%-ով: Վերջին տասնամյակում երկրի ՀՆԱ-ն աճել է համարյա 5 անգամ

(22 մլրդ դոլարից՝ 100 մլրդ դոլար): Համաշխարհային բանկի գնահատմամբ, Ղազախստանը ներդրումների համար բարենպաստ համարվող աշխարհի 20 երկրների ցուցակում է գտնվում: Ղազախստան տնտեսության մեջ ներգրավված ուղիղ օտարերկրյա ներդրումների ծավալը հասել է ավելի քան 70 մլրդ դոլարի: Ղազախստան բիզնեսն էլ իր հերթին ակտիվորեն ներդրումներ է կատարում արտասահմանում՝ 26 մլրդ դոլար:

Ազգային հիմնադրամում հավաքված է 5 մլրդ 300 մլն դոլար: Երկրի ոսկու եւ արժույթի պաշարները, հաշվի առնելով նաեւ Ազգային հիմնադրամը, ընդհանուր առմամբ գերազանցում են 14 մլրդ դոլարը:

Ղազախստանը զարգացած բանկային ու ֆինանսական համակարգով երկիր է եւ միջազգային փորձագետների կողմից ընդունված է որպես աշխարհում ամենալավերից մեկը: Երկրում գործում են բարձր միջազգային վարկանիշով հետեւյալ խոշոր բանկերը՝ «Կազկոմերցբանկը», Ազգային բանկը, ինչպես նաեւ «Թուրան Ալեմ» բանկը, որն իր մասնաձյուղն ունի Հայաստանում:

2009թ. հունիսին նախագահ Ն.Նազարբաեւը հայտարարել է երկրի արդյունաբերական-իննովացիոն արագ զարգացման հնգամյա ծրագիրը սկսելու մասին: Այնուհետեւ ղազախստանը սկսում է Արեւմտյան Եվրոպա - Արեւմտյան Չինաստան ավտոձանապարհի շինարարությունը, որը լուրջ խնդիրներ է առաջացնում այդ տարածքներում ապրող բնակչության համար:

Ընդհանուր առմամբ, Միջին Ասիայի պետությունների մեջ Ղազախստանում է արձանագրվում կայուն տնտեսական իրավիճակ, ինչն էլ հանգեցնում է այդ պետություններից բազմաթիվ աշխատանքային միգրանտների ակտիվ հոսքին դեպի Ղազախստան:

**«ՀԱՅ-ՂԱԶԱԽԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՉԵՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆՈՒՄ
ՄԵՐ ՊՈՏԵՆՑԻԱԼԻՆ»**

**ԱԶԱՏ ՊԵՐՈՒԱՇԵՎ
Ղազախստանի ազգային տնտեսական պալատի
«Ատամեկեն» միության նախագահ
(23.06.2009)**

- Պատմե՛ք, խնդրեմ, «Ատամեկեն» միության մասին: Ինչո՞վ է այն տարբերվում հետխորհրդային տարածքի մյուս տնտեսական միություններից: Օրինակ՝ այլ տեղերում այն կոչվում է առևտրատնտեսական պալատ: Ռո՞րն է տարբերությունը:

- Նախ ասեմ, որ «ատամեկեն» նշանակում է «հայրերի երկիր»: «Ատամեկեն» միությունը ձեռներեցների միավորումների միություն է: Այսինքն՝ ի տարբերություն սովորական ընկերակցությունների՝ մեր կազմում ուղղակի ձեռնարկություններ չեն ընդգրկվում: «Ատամեկեն»-ի մեջ են մտնում Ղազախստանի բոլոր ծյուղային եւ տարածքային ընկերակցությունները: Սա է նրա առանձնահատկությունը: Երբ նախագահ Նազարբանդ 2005թ. այցելեց Ավստրիայի Հանրապետություն, նա մեծ ուշադրությամբ ծանոթացավ Ավստրիայի տնտեսական պալատի աշխատանքին՝ թե ինչպե՞ս է այն ստեղծվել, ի՞նչ սկզբունքով, տեսավ, որ դրա մեջ մտնում են ծյուղային, շրջանային միավորումները, այդ թվում նաեւ Առևտրի պալատը:

Առևտրատնտեսական պալատները հիմնականում նպաստում են արտաքին տնտեսական կապերի զարգացմանը, իսկ ինչ վերաբերում է սեփական տնտեսությանը, սեփական շահերին, բիզնեսի սոցիալական պատասխանատվությանը, նրա փոխհարաբերությանը կառավարության, խորհրդարանի հետ, դատական ատյաններում նրա շահերի պաշտպանությանը, ապա սա ավելի լայնածավալ գործառույթ է, քան սովորական պալատինը:

Մեզ մոտ էլ կա Առետրատնտեսական պալատ, որը մեր միավորումներից մեկն է: Պալատի գործառույթը միայն ձեռնարկությունների արտաքին տնտեսական գործունեությանն աջակցելն է: Տնտեսական պալատում գոյություն ունի այդպիսի 26 ենթաբաժանմունք, այդ թվում՝ արտաքին առետրին օժանդակելու համար: Սա՝ այն, ինչ վերաբերում էր տարբերությանը:

«Ատամեկեն»-ի մեջ են մտնում բոլոր բիզնես-ընկերակցությունները: Սա եվրոպական փորձ է: Այս ուղով է գնացել նաև Թուրքիան: «Ատամեկեն»-ն իր ներկայացուցիչներն ունի կառավարությունում, խորհրդարանում: Մասնակցում ենք օրենքների մշակման աշխատանքային խմբերում, քննարկումներում, օպերատիվ կերպով հարցեր ենք բարձրացնում կառավարության առջև, այն հարցերը, որոնք հրատապ լուծում են պահանջում: Նման փորձ արդեն ունեցել ենք:

Մշտապես զբաղվում ենք սպառողի իրավունքների պաշտպանությամբ պետական, հարկային, մաքսային մարմինների մոտ: Մեզ մոտ մշտապես 20-30 բաժին է աշխատում: Մեր իրավաբանները մասնակցում են դատավարությունների, գնում են, պաշտպանում, այսինքն՝ բավականին մեծ աշխատանք է տարվում: Օրինակ՝ անցյալ տարվա ընթացքում շուրջ 1500 օրինագծերի եւ նորմատիվ ակտերի վերաբերյալ մեր կողմից փորձագիտական եզրակացություն է տրվել: Այսօր խորհրդարանում տնտեսական բովանդակության ոչ մի օրենք չի ընդունվում առանց մեր պալատի եզրակացության: Այնպես որ, մենք այն ենք, ինչ կանք:

Ընդհանուր առմամբ, սա նախագահի նախաձեռնությունն է: Չէի ցանկանա, որ այնպիսի տպավորություն ստեղծվի, թե այս ամենը իմ, Միության, մեր աշխատակիցների արժանիքն է: Երկրում կա մի մարդ, որը տեսնում է ավելի հեռուն, ավելի խորը, եւ նա այնպիսի նորարարական նախաձեռնություններով է հանդես գալիս, որոնք երբեմն ժամանակակիցներն այնքան էլ չեն գիտակցում: Իսկ այսօր տեսնում ենք, որ ստացվել է մի շատ հաջող, արդյունավետ լծակ մասնավոր ձեռներեցության շահերը պաշտպանելու համար:

- Ասացիք, որ մասնակցում եք դատավարությունների: Այս առումով կոնֆլիկտ չի՞ առաջանում արդյոք «Ատամեկեն»-ի ներսում՝ այն ձեռնարկությունների միջև, որոնք մրցակցության մեջ են գտնվում:

- Մենք մասնակցում ենք միայն բիզնեսի եւ պետական մարմինների միջեւ դատավարություններին: Մենք չենք մասնակցում տնտեսվարող սուբյեկտների միջեւ դատավարություններին: Ունենք սկզբունքային կանոն՝ որ բիզնեսները թող իրենք իրենց միջեւ հարցերը լուծեն: Սա՝ առաջինը:

Իսկ երկրորդը՝ մենք ակտիվորեն առաջ ենք մղում միջնորդային քննարկումների ձեւը, երբ հարցը չի տարվում դատարան, քանի որ դա որոշակի խնդիրներ է առաջացնում ինչպես իրավական, այնպես էլ «իմիջային», ինչը շատ կարետոր է բիզնեսի համար, մանավանդ նրա, որը կապված է սպառողի հետ:

«Ատամեկեն»-ը Համաշխարհային առետրային պալատի, ինչպես նաեւ նրա հինգ հանձնաժողովների անդամ է, այդ թվում՝ օրենսդրական եւ արբիտրաժային վեճի հարցերով: «Ատամեկեն»-ի անդամը միջազգային «արբիտոր» է: Ղազախստանի միջազգային «արբիտորը» մեր պաշտոնական գործընկերն է հանդիսանում հենց տնտեսվարող սուբյեկտների միջեւ վեճերի համար:


Ինչ վերաբերում է շահերին հակասելուն: Օրինակ՝ կառավարությունից մի օրինագիծ է գալիս շաքարի ներկրման համար տուրք մտցնելու մասին: Գյուղատնտեսությամբ զբաղվողներն «ուռա» են գոչում, քանի որ իրենց ճակնդեղը կգնա շաքարի գործարան, իսկ հրուշակագործները դժգոհ են, քանի որ կավելանա իրենց արտադրանքի ինքնարժեքը: Երբ օրինագիծ է գալիս, մենք այն ուղարկում ենք միության բոլոր անդամներին: Նրանք իրենց առաջարկներն են ներկայացնում: Պատահում է, որ դժգոհություններ են լինում: Այդ դեպքում մենք հրավիրում ենք վիճաբանող կողմին եւ ընդհանուր հայտարարի գալիս: Միշտ էլ կարելի է փոխզիջում գտնել:

- Ինչպիսի՞ն է Ղազախստանի առետրատնտեսական կապերի հավասարակշռությունը թվային առումով: ՌՐ տեղում են Ռուսաստանը, Չինաստանը, ԱՄՆ-ն:

- Դուք, ըստ էության, նշեցիք մեր հիմնական առետրատնտեսական գործընկերներին՝ Ռուսաստան, Չինաստան, ԵՄ, ԱՄՆ, ընդ որում դա վերաբերում է ոչ միայն երկկողմ ապրանքաշրջանառությանը, այլեւ ներդրումների մակարդակին: Մի փոքր Ռուսաստանն էր հետ ընկնում, սակայն նա էլ է այժմ ակտիվացել: Եվ դա ճիշտ որոշում է: Մենք տեսնում ենք, որ արտաքին աշխարհում ոչ ոքի հարկավոր չենք որպես ուժեղ պե-


տություն, եւ ես անկեղծորեն ողջունում եմ Մաքսային միություն ստեղծելու մասին վերջերս կայացված որոշումը:

Այսօր կարող ենք ասել, որ Ղազախստանը ֆինանսական ճգնաժամից կարողացավ դուրս գալ: Երեկ հանդիպում ունեինք գերմանական բանկերի ներկայացուցիչների հետ, որոնք վրդովված բղավում էին, թե ինչու են ղազախական բանկերը տեխնիկական դեֆոլտի գնում: Եվ ես ստիպված էի նրանց հետ բանավեճի մեջ մտնել, թե ճգնաժամը Ղազախստանից չի սկսվել, եւ, ի տարբերություն Գերմանիայի, Ղազախստանում ոչ մի բանկ չի սնանկացել: Պետությունն աջակցություն է ցուցաբերել բանկերին, որպեսզի նրանք կարողանան իրենց պարտավորությունները կատարել բնակչության, վարկառուների նկատմամբ: Եվ «վից փիղ սարքել» չարժե, ապա մի ձեզ նայեք:



ԳԼՈՒԽ 4

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Ղազախաստանը՝ ակտիվ ուժ տարածաշրջանում

Ղազախաստանը, գտնվելով խոշորագույն տերությունների՝ Ռուսաստանի, Չինաստանի, ինչպես նաև Հնդկաստանի եւ արաբական աշխարհի միջեւ, ստիպված է վարել կշռադատված եւ հավասարակշիռ արտաքին քաղաքականություն:

Ղազախաստանը գլխավոր դիրք է գրավում Կենտրոնական Ասիայում, հանդիսանում է գործնականում բոլոր ասիական տարածաշրջանային միությունների եւ միավորումների անդամ: Նույն հաջողությամբ նա իր մասնակցությունն ունի նաև եվրոպական կառույցներում:

Անկախության հռչակումից անմիջապես հետո Ղազախաստանը, ԽՍՀՄ 11 հանրապետությունների թվում, ստորագրեց ԱՊՀ նպատակների եւ սկզբունքների մասին հռչակագիրը (Ալմաթի, 21.12.1991թ.), այնուհետև հինգի հետ՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը (Տաշքենթ, 15.05.1992թ.):

Ղազախաստանն իր հարեանների հետ ունի հետեւյալ սահմանային խնդիրները՝ Ղրղզստանի հետ 2001թ. սահմանագծումը պետք է վավերացվի, Թուրքմենստանի հետ սահմանագծումը սկսվել է 2005թ.-ին, Ուզբեկստանի հետ՝ 2004թ.-ին, Ռուսաստանի հետ՝ 2007թ.-ին, Չինաստանի հետ ավարտվել է 2002թ.-ին, քննարկվում է Թուրքմենստանի հետ Կասպից ծովի հատակի բաժանման հարցը:

Ղազախաստանը դառնում է Չինաստանի եւ նրան սահմանակից ԱՊՀ երկրների միջեւ սահմանների կարգավորման նախաձեռնողը: 1996թ. ապրիլի 26-ին հինգ պետությունների՝ Չինաստանի, Ռուսաստանի, Ղազախաստանի, Ղրղզստանի եւ Տաջիկստանի միջեւ Շանհայում պատմական համաձայնագիր է ստորագրվում պետական սահմանների շրջանում ռազմական ոլորտում վստահության միջոցների ամրապնդման մասին: «Հնգյակի» մի շարք հանդիպումներից հետո 2001թ. Համաձայնագիրը վերածվում է Համագործակցության շանհայյան կազմակերպության:

2000թ. հոկտեմբերի 10-ին Աստանայում Ռուսաստանի, Ղազախաստանի, Բելառուսի, Ղրղզստանի եւ Տաջիկստանի միջեւ ստորագրվում է Եվրասիական տնտեսական համագործակ-

ցության հիմնադրման մասին պայմանագիրը (ԵվրԱզԷՍ): Պայմանագրում դրված է սերտ եւ արդյունավետ առեւտրատնտեսական համագործակցության հայեցակարգը՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածության մասին պայմանագրով սահմանված նպատակներին հասնելու եւ խնդիրները լուծելու համար:

2002թ. Ղազախստանը դառնում է Ասիայում փոխգործակցության եւ վստահության միջոցների հարցերով խորհրդակցության կանոնավոր գազաթափողովների նախաձեռնողը, որին մասնակցում են արդեն 20 ասիական եւ մերձավորարեւելյան երկրներ, ներառյալ՝ Հնդկաստանը, Պակիստանը, Իսրայելը եւ Պաղեստինը:

Ղազախստանի բազմավեկտոր արտաքին քաղաքականությունը շարունակվում է նաեւ տնտեսական ոլորտում: Օրինակ՝ 2004թ. Կասպիական խողովակաշարի կոնսորցիումը նավթատար է կառուցում դեպի արեւմուտք, Ռուսաստանի տարածքով, իսկ 2005թ. կառուցվում է Կոմկոլ-Ալաշանկոու ղազախա-չինական նավթային խողովակաշարը դեպի արեւելք: Ղազախստանն իր մասնակցությունն ունի նաեւ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան հարավային նավթատարում:

2010թ. հուլիսին գործողության մեջ է մտնում Ղազախստան-Ռուսաստան-Բելառուս մաքսային միությունը:

Ղազախստանը Ռուսաստանի հետ միասին դարձել է Եվրասիական զարգացման բանկի հիմնադիրը, որի նպատակը ոչ թե շահույթն է, այլ նախկին խորհրդային միջինասիական հանրապետություններում կարելի է ծրագրերի ֆինանսավորումը: Իսկ Ասիան մոտ ժամանակներս կներկայացվի Կատարի Իսլամական բանկի միջոցով, որը ներկայացնում է այսպես կոչված իսլամական ֆինանսական արդյունաբերությունը շուրջ տրիլիոն դոլար կապիտալով: Շարիաթի օրենքներին համապատասխան՝ այս բանկերին արգելվում է տոկոս դնել հաշիվների վրա:

Ղազախստանի ժամանակակից պատմության կարեւորագույն քաղաքական իրադարձություններից մեկը մայրաքաղաքի տեղափոխումն էր երկրի կենտրոն՝ Ալմաթից Ակմոլա 1997թ., որը հետագայում վերանվանվեց Աստանա:

Այսօրվա Աստանան դարձել է Արեւելքի ու Արեւմուտքի իսկական խաչմերուկ՝ իր մեջ ներառելով այն լավագույնը, որ գոյություն ունի քաղաքականության, տնտեսության, մշակույթի մեջ: Այս քաղաքում կառուցելու իրավունքի համար պայքարում էին

Անգլիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Բուլղարիայի ամենալավ ծարտարապետները: Ոձերի տարբերությունից ստեղծվել է մի գեղեցիկ, ճաշակով համադրություն, որոնցից ձեավորվել է ներդաշնակ եւ ինքնատիպ ծարտարապետական անսամբլ:

Սակայն գլխավորն աշխարհաքաղաքական շահումն է: Մայրաքաղաքը տեղափոխելով 1300 կիլոմետրով Մոսկվային ավելի մոտ (Աստանայից Մոսկվա 2600 կմ է)՝ Նազարբայեւ ցույց տվեց, որ ձգտում է Եվրոպային մոտ լինել նաեւ աշխարհագրորեն: Փաստորեն, նա եվրասիականությունը դարձրել է իր երկրի արտաքին ու ներքին քաղաքականության հիմնաքարը:

Եվրասիականության գաղափարն «աշխատում է» նաեւ երկրի ներսում: Ղազախստանում ապրում են 125-ից ավելի ազգությունների ներկայացուցիչներ: Մեծամասնություն են կազմում ռուսները՝ 5 մլն, եւ ուկրաինացիները՝ 0,5 մլն:

Աստանայում գործում է Եվրասիական ազգային համալսարանը, կառուցվում է նրա երկրորդ համալիրը, որը գործարկվելուց հետո կդառնա հզոր կրթական եւ գիտահետազոտական կենտրոն՝ մասնագետներ պատրաստելով տեխնիկայի ու տեղեկատվական տեխնոլոգիաների, Ղազախստանում շինարարական արդյունաբերության զարգացման բնագավառներում:

Աստանայում անցկացվել է Կանանց եվրասիական երկրորդ գագաթաժողովը, որին մասնակցել են 400 ներկայացուցիչներ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Ուզբեկստանից, Ղրղզստանից, Ղազախստանից, Ադրբեջանից:

Ղազախստանի ծանապարհաշինության ծրագրի իրականացման համար Համաշխարհային բանկը հատկացրել է ավելի քան 2 մլրդ դոլար, իսկ Ասիական զարգացման բանկը՝ 700 մլն դոլար: Այդպիսի ծանապարհը կօգնի կատարելագործել Ռուսաստանի ու Եվրոպայի հետ Ասիայի երկրների առեւտրային կապերը, հզոր խթան կհանդիսանա Ղազախստանի մրցունակությունը բարձրացնելու գործում եւ զգալի տնտեսական շահ կբերի ոչ միայն նրան, այլեւ միջինասիական մյուս պետություններին:

2008թ.-ից սկսվել է «Արեւմտյան Եվրոպա - Արեւմտյան Չինաստան» խոշոր տրանսպորտային նախագծի գործնական իրականացումը: Այդ միջմայրցամաքային երթուղին կանցնի Ղազախստանի եւ Ռուսաստանի տարածքով դեպի Արեւմտյան Եվրոպայի երկրներ: Այն անվանում են նաեւ «21-րդ դարի մետաք-

սի ճանապարհ»։ Նախագծի շրջանակներում նախատեսվում է դեպի այդ տրանսպորտային միջանցքը տանող բոլոր ելքերի վերակառուցում, այդ թվում՝ Ուզբեկստանից եւ Ղրղըզստանից։

Տրանսպորտային միջանցքի երթուղին հետեյալն է՝ Սանկտ Պետերբուրգ - Մոսկվա - Կազան - Օրենբուրգ - Ակտոբե - Կզըլօրդա - Շիմքենդ - Տարազ - Ալմաթի - Խորգոս - Լյանյունգան չինական նավահանգիստ։ Միջանցքի երկարությունը 8445 կմ է, որի ղազախական մասը կազմում է 2787 կմ։ Նախագծի արժեքը 832 մլրդ թենգե է (1դոլար = 147 թենգե)։ Առաջին փուլը նախատեսվում է ավարտել մինչեւ 2013թ.։

Գոյություն ունեցող այլընտրանքային միջանցքների համեմատությամբ (Տրանսսիբ ավտոմայրուղին, Սուեզի ջրանցքով անցնող ճանապարհը), այս նախագծի հիմնական դրական ցուցանիշները նրա երկարությունն ու տեղափոխման արագությունն են։ Միայն ժամանակային ցուցանիշն արդեն խոսում է տվյալ երթուղու տնտեսական գրավչության մասին։ Եթե չինական Լանյունգան նավահանգստից մինչեւ Եվրամիության սահմանները բեռները հասնում են 45 օրվա ընթացքում, ապա այս միջանցքով ապրանքը տեղ կհասնի ընդամենը 10 օրում։ Լոր երթուղին կապահովի բեռնափոխադրումներ երեք հիմնական ուղղություններով՝ Չինաստան - Ղազախստան, Չինաստան - Կենտրոնական Ասիա, Չինաստան - Ռուսաստան - Արեւմտյան Եվրոպա։

Վերջին ժամանակներս Եվրասիայի տարբեր մասերում տեղի ունեցող բազմաթիվ գազաթափողովների համապատկերի վրա ակնհայտ է դառնում, որ առանց Ղազախստանի այլեւս անհնարին է լուծել մայրցամաքի ռազմավարական զարգացման եւ այստեղ գործող զանազան բազմակողմանի կառույցների հարցերը։ Միջինասիական այս պետությունը Համագործակցության շանհայյան, Եվրասիական տնտեսական համագործակցության, ինչպես նաեւ ԱՊՀ շրջանակներում ստեղծված կազմակերպությունների ակտիվ անդամ է։ Աստանան կարծում է, որ այս կազմակերպությունները Եվրոպական ինտեգրացիայի տիպի իրավահավասար եւ կամավոր, ազգային ինքնությունը պահպանող միավորումներ են։

Ղազախստանը՝ ԵԱՀԿ նախագահող երկիր

Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության անդամները միաձայն ընտրել են Ղազախստանին որպես նախագահող երկիր 2010 թ.-ի համար: Ղազախստանը, որը ներկայացվել է որպես ԱՊՀ կոլեկտիվ թեկնածու, առաջին հետխորհրդային պետությունն է եւ առաջին ասիական երկիրը, որը զբաղեցնում է այս պաշտոնը: Ղազախ բարձրաստիճան անձանց կարծիքով՝ իրենց երկրի նախագահությունը «կբարձրացնի ԵԱՀԿ-ի հեղինակությունը Վիեննայից արեւելք գտնվող երկրներում, ինչպես նաեւ հսկայական հետխորհրդային տարածությունում: Ղազախստանի նախագահության ընթացքում ԵԱՀԿ-ն կուժեղացնի ուշադրությունը Կենտրոնական Ասիայի, ներառյալ Աֆղանստանի խնդիրների նկատմամբ»:

Ինչպես նշել է ՂՀ արտգործնախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Կանատ Սաուդաբաեւը. «Մեր կարեւորագույն խնդիրն է ամեն կերպ ամրապնդել ԵԱՀԿ-ն, նպաստել նրա արդյունավետության բարձրացմանը եւ ժամանակակից մարտահրավերներին ու սպառնալիքներին համապատասխանաբար արձագանքելու ունակությանը»:

«ՂԱԶԱԽՍՏԱՆԻՆ ԵԱՀԿ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ»

ՄԱՐԱՏ ՕՍՊԱՆՈՎ

**Եվրասիական համալսարանի Միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի դեկան
(24.06.2009)**

- Ղազախստանին ԵԱՀԿ հրավիրելու նախաձեռնությունը պատկանում է արեւմտյան երկրներին, որոնց ներկայացուցիչներն աշխատանքային շփումների ընթացքում մեր անկախության առաջին իսկ տարիներից համառորեն այդ հարցն առաջ

Էին մղում: 1992թ. հունվարից Ղազախստանը դառնում է ԵԱՀԿ անդամ-երկիր: Մեզ համար գլխավոր դրդապատճառը անվտանգության եւ համագործակցության առավել արդիական խնդիրները լուծելու ձգտումն էր, ինչի հետ բախվեցին ԱՊՀ երկրները Խորհրդային Միության փլուզումից հետո: Կազմակերպությանն անդամակցելը թելադրված էր նաեւ եվրոպական գործընթացներին ակտիվորեն մասնակցելու ցանկությամբ:

1999թ. Արմա-Աթայում բացվում է ԵԱՀԿ կենտրոնը, իսկ 2007թ. հունիսի 21-ին ԵԱՀԿ Մշտական խորհրդի որոշմամբ կենտրոնը տեղափոխվում է եւ վերանվանվում Աստանայում ԵԱՀԿ կենտրոն: Վերոնշյալ նպատակները պայմանավորեցին ԵԱՀԿ նախագահությանը հասնելու ռազմավարական խնդիրը, որն առաջին անգամ բարձրաձայնվեց կազմակերպության Մշտական խորհրդի նիստում 2003թ. փետրվարի սկզբին: 2007թ. նոյեմբերի 29-30-ը Ղազախստանի պատվիրակությունը արտգործնախարար Մարատ Տաժինի գլխավորությամբ մասնակցեց ԵԱՀԿ Արտգործնախարարների խորհրդի հերթական՝ 15-րդ նիստին, որի ժամանակ օրակարգի գլխավոր հարցերից մեկը ԵԱՀԿ նախագահության՝ Ղազախստանի հայցի վերաբերյալ կոնսենսուսի հասնելն էր: Հարկ է նշել, որ Ղազախստանը ԱՊՀ անդամ-պետությունների կողմից հավաքական թեկնածու է: Բացի այդ, մեր հայցին հավանություն է տվել նաեւ ԵԱՀԿ մասնակից-երկրների բացարձակ մեծամասնությունը: Արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց 2010թ.-ին մեր երկրի նախագահության մասին:

Իսկ դա մեզ ի՞նչ է տալիս: Նախ, Ղազախստանի նախագահությունը թույլ կտա այն դիրքորոշել որպես ԵԱՀԿ ամենաառաջատար մասնակից-երկրներից եւ առաջ շարժվել աշխարհի 50 մրցունակ երկրների շարքը դասվելու նպատակում: Նախագահի կարգավիճակի մուտիպլիկատիվ էֆեկտն արտահայտվում է գործնական, հասարակական շրջանակներում Ղազախստանի դրական ընկալման ավելացմամբ՝ որպես տարածաշրջանում կայունության ինդիկատոր, որը միջազգային ֆինանսական ու տնտեսական կառույցների մեծ վստահությունն է առաջացնում: Այդ գործառույթներին նախապատրաստումն ու կատարումը կամրապնդի մեր դիրքերը այլ բազմակողմ կազմակերպությունների շրջանակներում: Երկկողմ հարաբերությունների ձեւաչափում հարկավոր է բարձրացնել դիվանագիտական, եւ ընդհանրապես քաղաքացիական ծառայության մակարդակը:

Նախագահության ընթացքում Ղազախստանն անկասկած պարտավոր կլինի աշխատել այսպես կոչված ազնիվ գործակալի ռեժիմում, որն իհարկե կսահմանափակի մեր հնարավորությունները ազգային առումով: Մենք ստիպված կլինենք ձեռնպահ մնալ նաև որոշ նախաձեռնությունների համահեղինակությունից, ինչպես կայացած պայմանավորվածությունների դեպքում, այնպես էլ չեզոք ու անկախ մոտեցում պահպանելու համար, ինչը հատուկ է նախագահին: Ընդհանուր առմամբ, Ղազախստանի նախագահության հաջողությունը կախված կլինի մասնակից-երկրների վստահությունը շահելու ունակությունից, եւ այս կապակցությամբ ընդհանուր առաջարկներից մեկը գործող նախագահի աշխատանքի թափանցիկության անհրաժեշտությունն է եւ հավասար մոտեցումը ԵԱՀԿ բոլոր անդամ-պետություններին:

Ընդհանրապես ԵԱՀԿ աշխատանքը կառուցվում է երեք ուղղություններում. առաջինը՝ ռազմաքաղաքական, երկրորդը՝ տնտեսական-բնապահպանական եւ երրորդը՝ հումանիտար: Մեր պետության ղեկավարի կողմից իրականացվող քաղաքականությունը ԵԱՀԿ բոլոր երեք ուղղությունների հետ համահունչ է: Առաջինում Ղազախստանն ակտիվ մասնակից է, որոշ տեղերում նաև նախաձեռնող ահաբեկչության, ամեն տեսակի թրաֆիքինգի (իսկ դա թմրանյութերի թրաֆիքինգն է), մարդկանց առեւտրի եւ դրանց համապատասխան սպառնալիքների դեմ պայքարի ոլորտում:

Տնտեսական-բնապահպանական հարցում Ղազախստանը հպարտանում է տնտեսական բարեփոխումների անցկացման, միջմայրցամաքային տրանսպորտային միջանցքի զարգացման, կարեւորագույն բնապահպանական խնդիրների լուծման իր հաջող փորձով: Դա Սեմիպալատինսկի փորձադաշտն է եւ Արալյան ծովը: Հայտնի է, որ Արալի աղը այժմ կարելի է գտնել նույնիսկ Հիմալայներում:

Իսկ հումանիտար ոլորտում բոլորի կողմից ընդունվում է, որ Ղազախստանի զգալի նվաճումներից մեկը ազգերի եւ կրոնների միջեւ համաձայնության ապահովումն է: Ղազախստանում այժմ ապրում է 130 ազգություն եւ կա 46 դավանանք:

Ղազախստան - ՆԱՏՕ

Մինչև վերջերս Կենտրոնական Ասիան ՆԱՏՕ-ի համար հատուկ հետաքրքրություն չէր ներկայացնում հեռավորության, ինչպես նաև քաղաքական հավակնությունների ծայրամասում գտնվելու պատճառով: Սակայն այն բանից հետո, երբ ԱՄՆ-ն իր ազդեցությունն ամրապնդեց համաշխարհային ասպարեզում, ՆԱՏՕ-ն սկսեց հետաքրքրվել Կենտրոնական Ասիայի անվտանգության խնդիրներով: Միեւնույն ժամանակ տրանսազգային հանցավորությունը (ահաբեկչությունը, ծայրահեղականությունը, թմրանյութերի բիզնեսը, զենքի մաքսանենգությունը) լուրջ սպառնալիք է տարածաշրջանի ազգային անվտանգության համար: Այս կապակցությամբ ՆԱՏՕ-ն ընդլայնվել է եւ վաղուց դարձել միայն հյուսիսային ու ատլանտյան լինելուց:

Կենտրոնական Ասիայի բոլոր պետությունները ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի մասնակիցներ են: Ղազախստանի համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ զարգացման նոր աստիճանի է դուրս եկել: Նա տարածաշրջանի առաջին եւ միակ պետությունն է, որն ընդունել է Գործընկերության գործողությունների անհատական ծրագիր: Վերջերս Աստանայում կազմակերպված կլոր սեղանի ժամանակ ՆԱՏՕ-ի ներկայացուցիչը նշել է, որ դաշինքը շահագրգռված է Ղազախստանի հետ համագործակցության ամրապնդմամբ, առաջին հերթին ահաբեկչության եւ նարկոթրաֆիքի դեմ համատեղ պայքարի ոլորտում:

Ղազախստանը եւ մեծ տերությունները

Ղազախստանը դարձել է խոշոր համաշխարհային ուժային կենտրոնների շահերի բախման թատերաբեմ: Այստեղ է եւ Եվրամիությունը, որը շահագրգռված է Ռուսաստանից անկախ կասպիական ավազանի էներգապաշարներով, եւ Չինաստանը, որը դիտարկում է Ղազախստանը որպես ձեռքի տակ գտնվող էներգետիկ պահուստ, եւ Միացյալ Նահանգները, որը շատ նրբորեն իր ռազմական ներկայությունն է կարգավորում Կենտրոնական Ասիայում: Ի դեպ, ԱՄՆ-ի հատուկ ուշադրությունը միայն «նավթի խնդրով» չէ պայմանավորված:

Ղազախստան – ԱՄՆ

ԱՄՆ-ի հետ Ղազախստանի հարաբերությունների հիմնական ուղղություններն են ներդրումային գործունեության ոլորտում համագործակցությունը եւ Կենտրոնական Ասիայում տարածաշրջանային անվտանգությունը:

ԱՄՆ-ի գլոբալ հեգեմոնության ռազմավարության մեջ Ղազախստանը ամենակարեւոր հատվածներից մեկն է: Տիրելով նոր Կենտրոնական Ասիային՝ Վաշինգտոնը հնարավորություն կստանա միաժամանակ ձնշում գործադրել Ռուսաստանի վրա՝ Սիբիրի, Հնդկաստանի վրա՝ Քաշմիրի, Իրանի վրա՝ նրա թյուրքական հյուսիսային շրջանների, Չինաստանի վրա՝ Սինձյան-Ույղուրական շրջանի, Տիբեթի եւ նույնիսկ ներքին Մոնղոլիայի կողմից: Սա շատ հարմար հենակետ է Չինաստանի հետ հաշվեհարդար տեսնելու համար Միջին Ասիայից եկող անկայունության ալիքի միջոցով: Այս համատեքստում Ղազախստանը պետք է դիտարկվի ոչ թե որպես գլոբալ «ուժային կենտրոնների» միջեւ հավասարակշռություն պահող պետություն, այլ որպես համաշխարհային աշխարհաքաղաքականության հիմնական կետերից մեկը: Ղազախստանի ճակատագրից այսօր շատ է կախված այն, թե արդյոք ք Կենտրոնական Ասիան Եվրասիայի «ներքին միջանցքը» կլինի, մի գոտի, որը բաժանում եւ կապում է նրա քաղաքակրթությունները, թե մայրցամաքում եվրատլանտյան տիրապետության հենակետ կդառնա:

Քանի որ ԱՄՆ-ն սկսել է ընդլայնել իր ներկայությունն Աֆղանստանում, ուստի այժմ ավելի է մեծանում միջինասիական պետությունների հետ հարաբերությունների սերտացման խնդիրը, որովհետեւ ավելանում է ռազմական բեռների տարանցման հարցը: Ղազախստանն ավելի վաղ ոչ ռազմական նշանակության բեռների օդով տարանցման իրավունք է տվել: 2010թ. հունվարի վերջին Աստանայի եւ Բրյուսելի միջեւ համաձայնագիր է ստորագրվում, որով ապահովվում է ՆԱՏՕ-ի եւ նրա անդամների զորակազմերի տարանցումը: Ինչ վերաբերում է ռազմական բեռների փոխադրմանը, ապա Աստանան միայն սահմանափակ իրավունքներ է տրամադրել:

ԱՄՆ-ին հարկավոր է ստանալ Աստանայի թույլտվությունը՝ Աֆղանստանի համար ռազմական բեռների տարանցիկ փո-

խաղրման համար: Արեւմուտքին խիստ անհրաժեշտ է նավթ ու գազ, տարանցիկ ծանապարհ, ռազմակայան եւ լոյալություն:

Ի դեպ, Ռուսաստանն ու Ուզբեկստանը նման իրավունքներ տրամադրել են ԱՄՆ-ին, սակայն առանց Ղազախստանի առավել ակտիվ համագործակցության այդ օդային միջանցքն այնքան էլ արդյունավետ չի դառնում:

Ղազախստան – Չինաստան

Ղազախստանը ձգտում է ռուսական խողովակաշարերից կախված չլինել: Նա պատրաստ է համագործակցել եւ ԱՄՆ-ի, եւ Իրանի, եւ Չինաստանի հետ: Իսկ վերջինս էլ ձգտում է Ղազախստանի տարածքում նավթագազային ծրագրերում իր մասնակցությունն օգտագործել այս երկրում քաղաքական ազդեցությունը տարածելու նպատակով:

Բանն այն է, որ Ռուսաստանն ու Ղազախստանը էներգակիրների չինական շուկայում պոտենցիալ մրցակիցներ են: Սակայն Ռուսաստանի հնարավորություններն առայժմ ավելի մեծ են, քանի որ սիբիրյան հանքավայրերը Չինաստանին ավելի մոտ են, իսկ ՉժՀ-ից Ղազախստան նավթատարը 1990-ականների կեսից ի վեր դեռեւս նախագիծ է միայն:

Միջինասիական այս հանրապետությունն ամեն կերպ փորձում է շրջանցել Ռուսաստանին: Այսպես՝ 1997թ.-ից նա իր նավթը Կասպից ծովով հասցնում էր իրանական նավահանգիստներ, որտեղ Իրանն իր նավթը բեռնում է երրորդ երկրների ներմուծողների նավերին, եւ եկամուտի մի մասը հասնում էր Ղազախստանին:

Այս ժամանակ էր, որ Թեհրանն ու Աստանան բանակցություններ սկսեցին Ղազախստան-Թուրքմենստան-Իրան խողովակաշարի կառուցման ծրագրի մասին: Այս երթուղին Ղազախստանին թույլ կտար դուրս գալ Պարսից ծոց եւ մտնել ասիական շուկա: Սակայն խանգարեց ԱՄՆ-ն, երբ 2001թ.-ին Իրանին հայտարարեց «չարիքի առանցքի» մաս: Դրանից հետո Ղազախստանն իր նավթային հոսքերը վերակողմնորոշեց դեպի Չինաստան:

Պեկինը Ղազախստանը դիտարկում է որպես իր տնտեսության համար հումքային պաշարների մատակարար: Թվում է, թե Ղազախստան-Չինաստան երթուղին շահավետ է երկու երկրները սահմանակից են, նրանց միջեւ միջնորդ չկա: Չինա-

կան ղեկավարությունը հատուկ նշանակություն է տալիս արտասահմանյան նավթագազային նախագծերում ազգային կապիտալի մասնակցության քաղաքականությանը: Եվ իր հարեան երկրի առնչությամբ նա ձեռքերը ծալած չի նստում: Ծատ կարծ ժամանակում Երկնատակի տիրապետության տակ է անցել Ղազախստանի նավթագազային պաշարների զգալի մասը: Պեկինը, ի դեմս CNPC նավթային ընկերության, դարձել է կամ դրանք մշակելու միակ իրավունք ունեցողը, կամ էլ բաժնետերերից մեկը:

Ներկայում Ղազախստանում նավթի արդյունահանման ընդհանուր ծավալում չինական ընկերությունների մասնաբաժինը համարյա հավասարվել է «ԿազՄունայԳազ» ազգային ընկերության մասնաբաժնին (շուրջ 15%): Իր ներկայությունն այստեղ ընդլայնելու չինացիների հերթական քայլը «ՄանգիստաուՄունայԳազ» (ՄՄԳ) բաժնետիրական ընկերության բաժնետեր դառնալու մտադրությունն էր: Ավելի վաղ այս բանին էր ձգտում նաեւ ռուսական «Գազպրոմ-նեֆտ» ընկերությունը, սակայն ղազախական իշխանությունները մերժեցին:

Ժամանակի ընթացքում չինացիները մտադիր են տիրել ՄՄԳ-ի բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթին: Եվ դա հասկանալի է: CNPC-ն արդեն տիրում է Պավլոդարի նավթաքիմիական գործարանի բաժնետոմսերի 58 տոկոսին, նավթի ու գազի 36 հանքավայրերին, հանդիսանում է Ղազախստանում ամենախոշոր նավթարդյունահանող ընկերություններից մեկը: Եթե չինացիները ձեռք բերեն ՄՄԳ ակտիվները, ապա նրանց դիրքերը Ղազախստանում կուժեղանան, իսկ ռուսներինը՝ կթուլանան:

Չինաստանը, ինչպես իր մյուս հարեանների հետ, Ղազախստանի հետ էլ սահմանային նկրտումներ ունի: 1990-ական թվականներին դիվանագիտական միջոցներով Չինաստանն ապահովեց Սեւ Իրտիշ գետի մեծ մասի գավթումը: Իսկ վերջին տարիներին Աստանան գիջեց Պեկինի ձնշմանը եւ մեծ թվով չինացիների գյուղատնտեսական շահագործման համար Ղազախստանի տարածքում հող տրամադրեց երկարաժամկետ վարձակալությամբ: Հետագայում այդ հողերում աճեցված ապրանքը կգնա Չինաստան:

Երկնատակի հետ համագործակցությունը Աստանային թույլ կտա իջեցնել ոչ միայն արեւմտյան ընկերություններից կախվածությունը, այլեւ Ռուսաստանի մոնոպոլ ազդեցությունը համաշխարհային շուկաներ հումքի տարանցման հարցում:

Ղազախստան – Ռուսաստան

Ղազախստանը միշտ Ռուսաստանին բարեկամ պետություն կլինի՝ ստեղծված աշխարհաքաղաքական, պատմական եւ տնտեսական իրավիճակից ելնելով: Սակայն Ռուսաստանի հետ հարաբերությունները նա մտադիր է պահպանել իրավահավասարության եւ միմյանց շահերի նկատմամբ փոխադարձ հարգանքի հիման վրա:

Ղազախստանի եւ Ռուսաստանի շահերն ու գործողությունները բազմակողմ կառույցներում (մանավանդ՝ տարածաշրջանային) հիմնականում համահունչ են: Այդ մասին է վկայում Ղազախստանի աներկբա մասնակցությունը Արագ արձագանքման հավաքական ուժերի զորավարժություններին, Ռուսաստանի եւ Բելառուսի հետ Մաքսային միության ստեղծումը:

Սակայն այլ երկրների հետ փոխգործակցության լրացուցիչ ուղղություններ ձեւավորելու Ղազախստանի ձգտմանը Ռուսաստանը կասկածանքով է վերաբերվում: Իր հերթին, տնտեսական, տրանսպորտային ոլորտներում այլընտրանքային ուղղությունների բացակայությունը խանգարում է ՌԴ եւ ՂՀ միջեւ գործընկերային հարաբերությունների առավել զարգացմանը:

Այսօր Ռուսաստանը Միջին Ասիայում պահպանում է ճնշման քաղաքական եւ տնտեսական լծակները եւ փորձում օգտվել ազդեցության «փափուկ մեխանիզմներից»: Տարածաշրջանի երկրները շահագրգռված են նրա հետ փոխգործակցության լրացուցիչ ուղղություններ զարգացնելու հարցում, հատկապես ջերմանեներգետիկ, ներդրումային եւ տնտեսական հատվածում: Սակայն Ռուսաստանին հիմնականում հատկացվում է տարածաշրջանում անվտանգության երաշխավորի դերը:

Եվրասիական պետություն հանդիսացող Ղազախստանը գիտակցաբար եվրոպական ընտրություն է կատարել: Այս առումով երկրի արտաքին քաղաքականությունը փորձում է համադրել կողմնորոշումը դեպի եվրոպական արժեքներ եւ դեպի Ռուսաստան:

Ղազախստան – Հնդկաստան

Հնդկաստանին, որն աշխարհում բնակչության թվով երկրորդ պետությունն է, հարկավոր են Էներգակիրներ սեփական տնտեսության կայուն աճի համար: Այս երկիրը Էներգակիրների ներկրմամբ աշխարհում գրավում է 6-րդ տեղը: Ուստի տարածաշրջանի հետ համագործակցության համար հնդկական կողմն առաջին հերթին ուշադրություն է հատկացնում նավթագազային ոլորտին:

Հնդկաստանը Ղազախստանում բազմաթիվ համատեղ նախագծեր է իրականացնում, այդ թվում՝ ճանապարհների վերանորոգում, բնակչինարարություն, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում: Շատ ակտիվ են մշակութային եւ կրթական հարաբերությունները: Երկրի շատ շրջաններում գործում են հնդկական մշակութային կենտրոններ: Ամեն տարի Հնդկաստանի կառավարությունը հարյուրավոր ղազախ ուսանողների կրթաթոշակ է հատկացնում՝ Հնդկաստանի տարբեր համալսարաններում սովորելու նպատակով:

Վերջին տարիներին կտրուկ ավելացել է երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը: Եթե 2007թ. այն կազմում էր \$195,7 մլն, ապա 2008-ին արդեն \$400 մլն:

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի՝ 2009թ.-ին Հնդկաստան կատարած այցից հետո առավել ակտիվացել են երկու երկրների միջեւ հարաբերությունները: Պայմանագրեր են ստորագրվել նավթագազային հանքավայրերի համատեղ մշակման, ուրանի արդյունահանման, ատոմակայանների սպասարկման եւ դրանց աշխատակազմի ուսուցման, ինչպես նաեւ բանկային, նավթաքիմիական, գյուղատնտեսական ոլորտներում համագործակցության վերաբերյալ եւ այլն:

Ղազախա-հնդկական հարաբերությունների զարգացման համար բարդություն ստեղծող գործոններից մեկը տեղեկատվության պակասն է երկու պետությունների զարգացման վիճակի մասին: Հաջորդ լուրջ խնդիրը համապատասխան տրանսպորտային ենթակառուցվածքի բացակայությունն է:

Ղազախաստանը՝ որպես միջուկային զենքից հրաժարված երկիր

Ղազախաստանը (Ուկրաինայի եւ Բելառուսի հետ միասին) առաջին երկրներից մեկն է, որն ինքնակամ հրաժարվել է միջուկային զենքից: Այս քայլը երկրի համար ապահովել է առավել արդյունավետ անվտանգություն եւ հնարավորություն տվել զանգվածային ներդրումներ ներգրավել երկրի տնտեսության մեջ:

Ղազախաստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևն առաջարկել է օգոստոսի 29-ը հայտարարել Միջուկային զենքից հրաժարվելու համաշխարհային օր: Առաջին անգամ այն կնշվի 2010թ. օգոստոսի 29-ին: Ղազախաստանն աշխատում է, որպեսզի ուժի մեջ մտնի Միջուկային փորձարկումների համընդհանուր արգելման մասին պայմանագիրը: «Մենք չպետք է թույլ տանք, որ այս խնդիրը հաջորդ սերունդներին ժառանգություն մնա: Մեզանից յուրաքանչյուրն իր ներդրումը պետք է ունենա առավել անվտանգ եւ առավել պաշտպանված աշխարհի կառուցելու գործում»:

1991թ. այդ օրը Ղազախաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ փակվում է Սեմիպալատինսկի միջուկային փորձադաշտը, որն աշխարհի ամենախոշոր փորձադաշտերից մեկն է՝ թվով 4-րդը: Ղազախաստանը հայտարարում է ողջ աշխարհին, որ երիտասարդ պետության անվտանգության հիմքը կլինի ոչ թե միջուկային զինանոցը, այլ Ղազախաստանի ժողովրդի համախմբվածությունը, երկրի կայուն տնտեսական եւ քաղաքական զարգացումը, որոնք հուսալի հիմք են ստեղծում հավասարակշռված եւ կառուցողական արտաքին քաղաքականության համար:

Այս որոշման մեջ իր դերն ունի Նեադա-Սեմիպալատինսկ ժողովրդական հակամիջուկային շարժումը եւ նրա առաջնորդ գրող Օլժաս Սուլեյմենովը: 1994թ. ավարտվում է երկրի տարածքից ողջ միջուկային զենքի դուրսբերումը, իսկ 1995թ. վերացվում է Սեմիպալատինսկի փորձադաշտի վերջին միջուկային լիցքը:

1993թ. դեկտեմբերի 13-ին հանրապետության Գերագույն խորհուրդը վավերացնում է Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագիրը, իսկ 1994թ. աշխարհի միջուկային տե-

րությունների կողմից ստորագրվում է Ղազախստանին անվտանգության երաշխիքներ տալու մասին հուշագիրը: 2009թ. մարտի 21-ին ուժի մեջ է մտնում Կենտրոնական Ասիայում միջուկային զենքից զերծ գոտու մասին պայմանագիրը, որը ստորագրվել է Սեմիպալատինսկ քաղաքում 2006թ. սեպտեմբերի 8-ին: Սա աշխարհում 5-րդ գոտին է: Նախորդները ստեղծվել են Լատինական Ամերիկայում եւ Կարիբյան ավազանում, Խաղաղ օվկիանոսի հարավում, Հարավարեւելյան Ասիայում ու Աֆրիկայում եւ իրենց մեջ ներառում են ավելի քան 100 երկիր:

1949-89թթ. Սեմիպալատինսկի միջուկային փորձադաշտում անցկացվել է շուրջ 468 միջուկային փորձարկում, որտեղ պայթեցվել է 616 միջուկային եւ ջերմամիջուկային համասարք: Անցկացվել են նաեւ տասնյակ հիդրոմիջուկային եւ հիդրոդինամիկ փորձարկումներ: 1949-63թթ. ընթացքում փորձարկված միջուկային լիցքերի գումարային հզորությունը 2500 անգամ գերազանցել է Հիրոսիմայի վրա նետված ատոմային ռումբի հզորությանը: Փորձարկումների ընթացքում խորհրդային գիտնականների կողմից հավաքված տվյալները մինչեւ հիմա գաղտնիացված են:

1992թ. դեկտեմբերի 18-ին ընդունվում է Ղազախստանի Հանրապետության «Սեմիպալատինսկի միջուկային փորձադաշտում միջուկային փորձարկումների արդյունքում տուժած քաղաքացիների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը: Իսկ 1997թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան բանաձեւ է ընդունում միջուկային փորձարկումներից տուժած Ղազախստանի շրջաններին օգնություն ցուցաբերելու մասին:

Նախկին փորձադաշտի վտանգավոր գոտիներում ռադիոակտիվ ֆոնը մինչեւ հիմա հասնում է ժամում 10-20 միլիռենտգեն, սակայն այնտեղ դեռ մարդիկ են ապրում: Այդ տարածքը երբեք չի պահպանվել: 1 323 000 մարդ ծանաչվել է միջուկային փորձարկումներից տուժված: 2008թ.-ից սկսվել են փորձադաշտի առավել աղտոտված հատվածների ինժեներական պաշտպանության ստեղծման աշխատանքները:

«Արմեդիա» ՏԿԳ նկարահանող խումբն Աստանայում մասնակցել է ՆԱՏՕ-ի Եվրատլանտյան գործընկերության խորհրդի անվտանգության երրորդ համաժողովին եւ մի շարք էքսկյուզիվ հարցազրույցներ իրականացրել, որոնցից երեքը ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:

«ԱՆՎԵՐՋ ԸՆԴԼԱՅՆՎԵԼ ՉԻ ԿԱՐԵԼԻ, ԿԱՐԵԼԻ Է ՈՒՂՂԱԿԻ ՊԱՅԹԵԼ»

ԴՄԻՏՐԻ ՌՈԳՈԶԻՆ
ՆԱՏՕ-ում ՌԴ մշտական ներկայացուցիչ
(25.06.2009)

- Պարո՛ն Ռոգոզին, ի՞նչ ակնկալիքներ ունեիք ՆԱՏՕ-ի՝ Եվրատլանտյան գործընկերության խորհրդի անվտանգության երրորդ համաժողովից: Ձեր կարծիքով՝ տարածաշրջանային անվտանգության իմաստով ապագայում այն որեւէ բան կտամ՞:

- ՆԱՏՕ-ն այս տարածաշրջանի համար օտար կազմակերպություն է: Կարող եմ ենթադրել, որ միգուցե դաշինքում որեւէ մեկի մոտ կարող է այս տարածաշրջանի պետություններին օգնելու իսկական ծգտում առաջանալ, սակայն, ընդհանուր առմամբ, «հորեղբայրը մեր փոխարեն խնդիրը լուծել չի կարող»: Ուստի այստեղ անվտանգության խնդիրը տարածաշրջանում, Ղազախստանի շուրջ, Միջին Ասիայում, Ռուսաստանի այսպես ասած հարավային «փորատակին» մի խնդիր է, որը մենք ստիպված ենք ինքնուրույն լուծել: Այլ բան է, որ պետք չէ հեռու մնալ այս կարգի միջազգային շփումներից, քանի որ հասկանալի է, որ ՆԱՏՕ-ի՝ Միջին Ասիա, Ղազախստան խցկվելու ցանկության տակ թաքնված է նրանց ծգտումը դեպի գլոբալացում: Հասկանալի է, որ կան նաեւ «գիշատչի» որոշակի շահեր, կա նաեւ Աֆղանստանի հետ կապված ինչ-որ հոգեվարք: Իսկ հետո այնտեղ ի՞նչ անել: ՆԱՏՕ-ականները մտել են այդ աֆղանական ծափիձը, չնայած մենք բազմիցս նախազգուշացրել ենք, իսկ այժմ չեն կարողանում այնտեղից դուրս գալ: Այնուամենայնիվ, չնա-

յաճ այս բոլոր «բայց»-երին՝ հարկավոր է աշխատել գործընկերների հետ, նույնիսկ ամենաբարդերի հետ:

- **Շատ է խոսվել ՆԱՏՕ-ի ընդլայնման մասին, եւ նույնիսկ խոսում էին կամ ցանկանում էին խոսել Ուկրաինայի եւ Վրաստանի հնարավոր անդամակցության կոնկրետ ժամկետների մասին: Ձեր կարծիքով՝ հնարավոր է այդ երկու երկրների մուտքը ՆԱՏՕ, այդ հարցը դեռ օրակարգում է:**

- Կարծում եմ, որ նման բան չի լինի: Ծայրահեղ դեպքում՝ շատ հետո: Եթե դա նույնիսկ տեղի ունենա, ապա ոչ մեր կյանքի օրոք: Ինչո՞ւ: Դե, շատ պատճառներ կան: Նախ՝ ներքին պատճառներ հենց ՆԱՏՕ-ում: Բանն այն է, որ ՆԱՏՕ-ն ձեւավորվում էր որպես մի կազմակերպություն, որը պետք է մի գլխավոր խնդիր կատարեր՝ արեւմտյան բուրժուական աշխարհը պաշտպաներ խորհրդային կոմունիզմից, Արեւելյան դաշինքից: Սակայն այն բանից հետո, երբ վերացան եւ Արեւելյան դաշինքը, եւ խորհրդային կոմունիզմը, որից բոլորն այնքան վախենում էին, անհասկանալի դարձավ, թե ՆԱՏՕ-ն ինչով զբաղվի: Այսինքն՝ այն պետք է ապացուցեր իր պետքական լինելը, չէ՞ որ նրա վրա այդքան գումարներ էին ծախսվում: Բյուրոկրատիան՝ Բրյուսելում աշխատող այդ մի քանի հազար մարդը, պետք է արդարացնեին այդ ծախսերը: Նրանք սկսեցին փնտրել ինչ-որ նոր թշնամու եւ գտան այն՝ ի դեմս միջազգային ահաբեկչության, որը ճիշտ պահին ձեռքի տակ ընկավ:

Մյուս կողմից սկսեցին իրենք իրենց ինչ-որ գործով զբաղեցնել: Ինչո՞ւ: Դե եկե՛ք ընդլայնվենք այն գոտում, որը այսպես ասած ոչ ոքինն է, նրանց կարծիքով: Սակայն ո՞րն է խնդիրը: Վերջին ժամանակները ՆԱՏՕ-ն ընդլայնվել է այն պետությունների հաշվին, որոնք ռազմական առումով զրո են, լրիվ զրո: Օրինակ՝ ի՞նչ կարող է տալ ռազմական պոտենցիալի տեսանկյունից այնպիսի պետությունը, ինչպիսին Ալբանիան է: Ուղղակի ծիծաղելի է: Կամ, ասենք, ընդլայնումը Խորվաթիայի կամ Ռումինիայի հաշվին: Ռազմական առումով այս պետություններն անգամ նվազագույն հետաքրքրություն չեն ներկայացնում Արեւմուտքի համար, սակայն, եթե ՆԱՏՕ-ն ընդլայնվում է այդ տարածքներում՝ արեւելք, հարավ, Բալկաններ, այն իր մեջ է ներառում անհանգիստ շրջանները: Այսինքն՝ նրանք միմյանց հետ հակամարտում են: Նրանց տարածքում մինչեւ հիմա քաղաքա-

ցիական հակամարտություններ կան, այսինքն՝ նրանք ունեն սեփական գլխացավանք, իսկ հիմա էլ Արեւմուտքի համար են գլխացավանք դառնում:

Այսպիսով՝ ռազմական պոտենցիալ չավելացնելով՝ ՆԱՏՕ-ն ընդլայնում է պատասխանատվության իր գոտին: Սա նման է նրան, ասես շիլան տարածում են ավստրալ մեկ: Ձեզ թվում է, թե ավստեն շիլայով լի է, սակայն իրականում այնտեղ շիլա չկա: Ուստի հենց ՆԱՏՕ-ի տեսանկյունից դա ձեռնտու չէ: Անվերջ ընդլայնվել չի կարելի, կարելի է ուղղակի պայթել:

Մյուս կողմից, նրանք պինդ միջուկի են դեմ առել, այսինքն՝ նրանք ծանկել են այն, ինչ կարելի էր ուտել եւ այժմ չեն մարսում: Ուկրաինան ՆԱՏՕ մտնել չի ցանկանում: Ուկրաինայի՝ ՆԱՏՕ մտնելու հեռանկարին աջակցելու մակարդակը հենց Ուկրաինայի տարածքում ավելի քիչ է, քան Ռուսաստանում: Այսինքն՝ այնտեղ ՆԱՏՕ-ին հավանողներն ավելի քիչ են, քան Ռուսաստանում: Էլ ինչի մասին է խոսքը:

Կամ էլ, ասենք, Վրաստանը: Եկեք հարց տանք: Ի՞նչ Վրաստան ենք ընդունում ՆԱՏՕ-ի կազմի մեջ, ի՞նչ սահմաններով: Խորհրդային սահմաններով, այսինքն՝ Աբխազիայով ու Հարավային Օսիայով: Մեր ռազմակայաններով, այն պատերազմում զոհվածների գերեզմանների հետ միասին: Իհարկե՝ ո՛չ: ՆԱՏՕ-ն դրան չի գնա: Իսկ եթե նա ցանկանում է ընդունել այն Վրաստանը, որը մնացել է Սահակաշվիլու արկածախնդրությունից հետո, ապա հարց է ծագում. դրա համար նախ հարկավոր է ծանաչել Աբխազիան եւ Հարավային Օսիան, ինչպես արեց Ռուսաստանը: Իսկ նրանք դրան պատրաստ չեն, այսինքն՝ ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը չի ստացվում, իսկ երրորդ տարբերակ չկա:

Այնտեղ ի՞նչ տեղի կունենա: Կարծում են, որ ավելի շուտ ՆԱՏՕ-ականները կօգտագործեն այդ երկրները, նրանց պոտենցիալը, թեկուզեւ ոչ մեծ, այն, ինչ ունեն, օրինակ՝ վրացի զինվորներին կուղարկեն Աֆղանստան, ուկրաինացի տղաներին կօգտագործեն Կոսովոյում, ինչ-որ տեղ, Բալկաններում՝ որպես կենդանի վահան: Իրենց տղաներին հո չեն ուղարկելու: Եվ միեւնոյն ժամանակ «գազարը» պահում են քթի առաջ եւ անընդհատ գրգռում, թե՛ վաղը, վաղը կընդունվեք: Գիտե՞ք, թե հաճախ ինչպես է լինում: Երբ իշուկը ոչ մի տեղ չի ցանկանում գնալ, նրա քթի առաջ գազար են կախում, եւ նա ձգվում է դեպի այդ գազարն ու առաջ գնում: Ահա այսպիսի «գազար» էլ կկախեն Ուկրաինայի եւ Վրաստանի համար:

- Միշտ էլ եղել է ՆԱՏՕ-Ռուսաստան հակազդեցությունը: ԵՄ հավանական ընդլայնման մասին էլ է շատ խոսվում: Ռուսաստանի եւ Եվրամիության միջեւ կավելանա ն արդյոք վստահելի հարաբերությունները, եթե ՀԱՊԿ-ի որեւէ անդամ-երկիր մտնի ԵՄ:

- Հասկանում եք բանն ինչու՞մ է: Նրանց մոտ գոյություն ունի մի կոշտ օրենք: Նրանք դա երբեք չեն խոստովանի, բայց այդ կանոնը գոյություն ունի: Ես երաշխավորում եմ, որ դա այդպես է: Այն հետեյալն է՝ ԵՄ մտնելու համար նախ հարկավոր է մտնել ՆԱՏՕ:

- **Չգրված օրենք է:**

- Այն ոչ մի տեղ ֆիքսված չէ, սակայն բոլորն այդ կանոնի մասին գիտեն: Այսինքն՝ նախ դու պետք է դառնաս ՄՄԿԿ անդամության թեկնածու, իսկ դրա համար պետք է մեկ տարի ՆԱՏՕ-ի համար աշխատես, այսինքն՝ զինվորներիդ պատերազմի ուղարկես, խրվես տարբեր տեսակի արկածախնդրությունների, խարդախությունների, ագրեսիաների եւ այլնի մեջ, աշխատանքով հատուցես, արժանի դառնաս, դրանից հետո քեզ «կոնֆետ» կտան եւ լրիվ հիմունքներով կընդունեն կուսակցության անդամ, այսինքն՝ Եվրամիություն: Այս կանոններից բացառություն չկա: Համենայն դեպս, Արեւելյան Եվրոպայի համար հաստատ այդպիսի բացառություններ լինել չեն կարող:

Տնտեսական վերափոխումների դարաշրջանում ավելի լավ է բոլորի հետ ունենալ լավ, նորմալ հարաբերություններ, ինչ-որ առեւտրատնտեսական հարաբերություններ, առիթներ չստեղծել հակամարտությունների համար: Սակայն, իհարկե, ավելի լավ է ոչ մի տեղ էլ չմտնել: Ես ուղղակի ապշած եմ մեր մերձբալթյան բարեկամներից, որոնք սկզբում նստած էին Խորհրդային Միությունում, սարսափելի կերպով տառապում էին, ինչպես իրենք են ասում, օկուպացիոն ռեժիմից, բայց, իհարկե, միեւնույն ժամանակ գումարներ էին ստանում: Նրանց համար կառուցում էին նավահանգիստներ, գործարաններ, գումարներ էին ներդնում Տալլինը, Վիլնյուսը, Կաունասը, Ռիգան եւ այլ բնակավայրեր վերականգնելու համար: Ամեն ինչ ստացան, բաժանվեցին, մի երկու ամիս անկախ մնացին եւ իսկույն մեկ այլ միություն գրվեցին՝ արդեն Եվրոպական եւ ՆԱՏՕ: Եվ այժմ այնտեղ նստած են: Այսինքն՝ կան մարդիկ կամ ժողովուրդներ, որոնք բոլորովին ընդունակ չեն ինքնուրույն կյանքի: Եթե, ենթադրենք, խոսենք մեր

ժողովուրդների մասին, քանի որ այժմ Հայաստանի ՉԼՍ ներկայացուցչի հետ եմ նստած, կարող եմ ասել հետեւյալը. հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում ե՛լ ցեղասպանություն է վերապրել, ե՛լ հալածանքներ: Նա «վարժվել է» ողջ մնալուն, ինչպես խոտն է պատռում ասֆալտը, եւ հզոր համայնքներ ստեղծել ողջ աշխարհով մեկ: Ես շատ ընկերներ ունեմ, ովքեր ապրում են տարբեր հայկական համայնքներում՝ Ամերիկայում, Ֆրանսիայում, Լիբանանում եւ այլն: Սա ուժեղ ժողովուրդ է, որին անհնարին է ոտքի տակ տրորել:

Նույնը ռուսներն են: Երբեք առանց մարտի ոչ մի գյուղ չեն հանձնել: Եվրոպայում, բացի ռուսներից, ոչ մի ժողովուրդ չկա, որ վերջին 400 տարում գերության մեջ չգտնվի կամ գերի հանձնված չլինի: Այ, ռուս ժողովուրդը երբեք գերի չի հանձնվել եւ անընդհատ կռվել է իր ազատության ու անկախության համար: Այդ պատճառով մեր նոր գործընկերների հետ մենք կարող ենք խոսել մեր մասին սեփական կարծիքի բարձրությունից, սեփական արժանապատվության բարձրությունից: Մենք արժանի ենք, որ մեզ հարգեն: Իսկ երբ մեզ ասում են, թե՛ դե եկե՛ք այստեղ գրանցվեք, թող նրանք մեզ մոտ գրանցվեն:

Վերջիվերջո, կարող եմ ասել, թե ինչ տեղի կունենա 20-30 տարի անց. ոչ մի Եվրամիություն էլ չի լինի: Տեսե՛ք, թե ինչ է կատարվում Եվրոպայի հետ: Այն լիովին վերափոխվել է անլեզաւների երկրի: Ես աշխատում եմ Բրյուսելում: Այնտեղ, իմ կարծիքով, Մարոկկոյից եկածներն ավելի շատ են, քան բելգիացիները: Նույնիսկ այսպիսի կատակ է հայտնվել: Փողոցում մեծ ծեծկռտուք է: Գալիս է ոստիկանությունը, ասում է՝ ֆլամանդացիները՝ ձախ, վալոնցիները՝ աջ: Ֆլամանդացիները երեքն են, վալոնցիները՝ չորսը, իսկ մեջտեղում կանգնած է մարոկկացիների հսկայական ամբոխը եւ ասում. «Իսկ մենք՝ իսկական բելգիացիներս, ո՞ր»:

Հասկանո՞ւմ եք, այսպիսին կլինի Եվրոպան 20-30 տարի անց: Եվ մեզ համար արդեն վատ երազի նման մի բան կլինի այնտեղ մտնելը ինչ-որ պայմաններով:

Իսկ մեր տարածքը էներգիայով, թարմ օդով, մաքուր ջրով լի կլինի, հսկայական տարածքներ, ուր կարելի կլինի բնակություն հաստատել: Տեսե՛ք Ղազախստանը՝ հսկայական հողեր, անծայրածիր տափաստաններ, որոնք դեռ ոչ մի ձեռով, ոչ մեկի կողմից չեն մշակվել: Սա շատ հարուստ հող է, ապագայի երկիր: Սիրիը նույնպես ապագայի հող է: Բոլոր Եվրոպական ժո-

դովորողները խնդրելու են այստեղ գալ ապագայում: Ես երեակայական բաներ չեմ ասում: Այդպես էլ լինելու է: Եվ ինչո՞ւ պետք է սխալներ կատարենք, եթե ցանկանում ենք մի փոքր մտածել մեր երեխաների ապագայի մասին: Ընդհանրապես, մենք հիմա այսպիսի հարաբերություններ պետք է կառուցենք Եվրոպայի հետ՝ առեւտուր անենք, ունենանք բարի, խաղաղ հարաբերություններ, մշակութային արժեքներ փոխանակենք, հյուր գնանք միմյանց, բայց միեւնոյն ժամանակ հասկանանք, որ Եվրոպան անընդհատ պետք է տեղափոխվի, տեղափոխվի արեւմուտքից արեւելք: Իսկ այն, ինչ մնալու է Արեւմուտքում, կգրավվի օտար մշակույթների կողմից, «կմարսվի» ու դուրս «կթքվի»:

- Բելառուսը եւ Ուզբեկստանը դեռ չեն ստորագրել ՀԱՊԿ-ի Արագ արձագանքման ուժերի ստեղծման պայմանագիրը: Ձեր կարծիքով՝ դա ժամանակավոր երեւոյթ է, թե՞ ավելի խորը բան կա:

- Կարծում եմ, որ այսօր չեն ստորագրել, վաղը կստորագրեն, դրան ընդհանրապես ոչ մի նշանակություն չեմ տալիս: Բատկա Լուկաշենկոն կամակորություն է անում: Դե, նա այդպիսի տղամարդ է՝ զգացմունքային: Նա այսօր այդպիսի տրամադրություն ունի, իսկ վաղը կասի՝ դե լավ, որտե՞ղ ստորագրեմ, տվե՛ք՝ ստորագրեմ: Կարծում եք՝ չի՞ ստորագրի: Իհարկե կստորագրի: Հարց չկա:

**«ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՐՅԸ ՊԵՏՔ Է ԼՈՒԾ-
ՎԻ, ՀԱՅ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ
ՊԵՏՔ Է ԲԱՅՎԻ»**

ԶԵՅՆՈ ԲԱՐԱՆ

**Հուղզունի ինստիտուտի եվրասիական
քաղաքականության կենտրոնի տնօրեն
(25.06.2009)**

- Տարբեր մակարդակներով ԱՄՆ պաշտոնյաները հայտարարել են, թե առանց նախապայմանների հայ-թուրքական հարաբերությունների լավացման կողմնակից են: Սակայն Թուրքիայի վարչապետի և Բաքվում՝ արտգործնախարարի վերջին ելույթները հակառակն են ասում: Կարո՞ղ ենք ասել, որ ԱՄՆ-ի ջանքերն իզուր էին, և երկխոսության հնարավորությունը կորսված է:

- Ես այդքան կատեգորիկ չեմ լինի՝ թե ջանքերն ապարդյուն էին: Գործընթացն առաջ է գնում: ԱՄՆ-ն ներգրավված է Հայաստանի ու Թուրքիայի հետ երկկողմ հարաբերություններում և նաև Ֆրանսիայի ու Ռուսաստանի հետ Մինսկի խմբի կազմում է: ԱՄՆ-ի դիրքորոշումն այն է, որ շատ կարեւոր է, որ Հայաստանի ու Թուրքիայի միջեւ հարաբերությունները նորմալանան, ինչը ներառում է նաև սահմանի բացումը: Միեւնույն ժամանակ իրականությունն այն է, որ Թուրքիան, Ադրբեջանն ու Հայաստանն ունեն շատ բարդ եռակողմ հարաբերություններ: Մի պահ թվում է, թե մեկուսացման մեջ հնարավոր կլինի որեւէ բան անել, սակայն իրականությունը փոքր-ինչ այլ է: Կարծում եմ, որ թուրքական կողմը միգուցե ցանկանում էր որոշ քայլեր անել դեպի Հայաստանը, բայց հետո լավ չկողմնորոշվեց, թե դա ինչպես կընկալվի Ադրբեջանում, ինչպես նաև իր ներսում՝ Թուրքիայում: Քանի որ, երբ մի քանի ամիս առաջ բավականին քննարկումներ կային, և սահմանի բացման գործն արդեն համարյա առաջ էր գնում, այդ կապակցությամբ շատ ուժեղ ռեակցիա եղավ, ուստի կարծում եմ, որ այժմ թուրքական պաշտոնական դիրքորոշումն այլ է, քան առաջ էր, այսինքն՝ դարաբաղյան հարցը պետք է լուծվի, սահմանը պետք է բացվի, իսկ իդեալական կլինի, որ ամեն ինչ միաժամանակ արվի:

Եվ փորձելով ասել, որ դա նախապայման չէ եւ մերժելով, որ կա նախապայման՝ դա երկակի մեկնաբանության է բերում, մինչդեռ սա այնքան նուրբ հարց է, որ նույնիսկ մեկ բառը կարող է հսկայական դիվանագիտական քառս առաջացնել: Կարծում եմ, որ ԱՄՆ-ն շարունակում է ներգրավված մնալ եւ իրոք շահագրգռված է տարածաշրջանային անվտանգության հարցում, որը պետք է ներառի Հայաստանի հարաբերությունների կարգավորումը Ադրբեջանի ու Թուրքիայի հետ:

- Ինչպե՞ս եք տեսնում ապագան. սահմանը կբացվի՞:

- Ապագայում՝ այո, իհարկե: Կասեմ նաեւ, որ Հարավային Կովկասի եւ Թուրքիայի համար ես տեսնում եմ, որ Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը համագործակցում են շատ մակարդակներով՝ էներգետիկ, տրանսպորտի եւ տնտեսության, կրթական, մշակութային: Տեսնում եմ միացյալ Կովկաս, որտեղ արդեն չկան սառեցված հակամարտություններ, երկրների վրա ձնշման կետեր, քանի որ տարածաշրջանը շատ բարդ է:

Մենք ունենք Ռուսաստան եւ Իրան: Դե գիտեք ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, ԵՄ-ի հարաբերություններն Իրանի հետ: Քանի որ ցանկանում եմ Կովկասը տեսնել որպես կայունության եւ բարեկեցության գոտի, ես չէի ցանկանա տեսնել, որ Հայաստանը շարունակում է կախված մնալ միայն Ռուսաստանից ու Իրանից: Ապագայում դա իմ հույսն ու հավատն է, հուսով եմ՝ ավելի շուտ, քան թե ուշ, բայց ապագայում՝ ինչ-որ մի ժամանակ, կլինի 3 գումարած Թուրքիա միավորման նման մի բան, եւ իհարկե կշարունակվեն լավ հարաբերությունները Իրանի եւ Ռուսաստանի հետ: Բայց ոչ թե միայն Իրանի եւ Ռուսաստանի հետ: Իհարկե, Վրաստանն էլ կա, բայց դուք բավականին տուժեցիք, երբ պատերազմ էր ընթանում Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ: Եթե այդ ձանապարհն ինչ-որ ձեռով, ինչ-որ պատճառով՝ տեխնիկական, քաղաքական կամ այլ, ընդհատվի, ապա դուք միայն Իրանից եք կախված մնում, եւ դա լավ չէ, քանի որ երբ միջազգային հանրությունը որոշի, թե ինչպես ձեւավորի իր հարաբերություններն Իրանի հետ, եւ եթե ձեր տնտեսությունը, ամեն ինչ կախում ունեն Իրանից, ապա Հայաստանը ավտոմատ կերպով կդրվի իրանամետ ծամբարում: Եվ դա լավ դիրք չէ:

Կարծում եմ, որ Վրաստանի շարունակական կայունությունն ու անվտանգությունն անհրաժեշտ են ոչ միայն Հայաստանին, այլեւ ողջ տարածաշրջանին: Իսկ այնուհետեւ՝ Ղարաբաղի

եւ սահմանի բացման հարցը: Ես տեսնում եմ որոշ ամերիկյան ներգրավվածություն:

Եկեք տեսնենք, թե ինչպիսին կլինի նախագահներ Օբամայի եւ Մեդվեդեի հանդիպումը, իհարկե, շատ սպասելիքներ կան: Ռուսական կողմը՝ նախագահ Մեդվեդեյը, անձամբ ներգրավված է ղարաբաղյան հարցի լուծման գործում, սակայն համոզված չեմ, թե նա ներգրավված է Հայաստան-Թուրքիա սահմանի բացման հարցում. այնուամենայնիվ կա Ղարաբաղի հարցը, որի լուծումը շատ այլ դռներ կբացի:

- Եթե ՀԱՊԿ-ի անդամներից մեկը դառնա ԵՄ անդամ, դա կավելացնի՞ վստահությունը այս երկու կազմակերպությունների միջև:

- Դա շատ տեսական հարց է. չեմ կարող պատկերացնել դա, քանի որ այս պահին ԵՄ-ն ոչ մի նոր անդամ չի ընդունում: Ինչ-որ ժամանակ միգուցե այնքան փոփոխություն կլինի, անվտանգության հարցը բոլորովին այլ կլինի, ԵՄ-ն բոլորովին այլ կլինի: Ուստի ինձ համար անհնարին է նույնիսկ պատկերացնել դա: Ես կարող եմ պատկերացնել սահմանի բացումը Հայաստանի ու Թուրքիայի միջև, բայց չեմ կարող պատկերացնել ԵՄ մտնող մի նոր երկիր. դա շատ հեռու է:

- Ի՞նչ ակնկալիքներ ունեիք ՆԱՏՕ-ի՝ Եվրատլանտյան գործընկերության խորհրդի անվտանգության երրորդ համաժողովից:

- Շատ ակնկալիքներով չեմ եկել: Ուղղակի հետաքրքիր էր, որ այն տեղի է ունենալու Աստանայում, քանի որ գիտեի, որ ղազախական կողմն իրոք դա ցանկանում է: Իմ կարծիքով՝ շատ լավ է, որ ՆԱՏՕ-ն հասկանա Կենտրոնական Ասիայի դինամիկան եւ հասկանա առանձին միջինասիական երկրներին ու բոլորին՝ որպես մեկի չնայի: Իմ հույսն այն է, որ ՆԱՏՕ-ի անդամները, որոնք այս տարածաշրջանին ծանոթ չէին, ավելի լավ կհասկանան այն, այլ ոչ թե միայն կզան ու դասախոսություն կկարդան Ղազախստանին, այլ երկրներին, կամ ՆԱՏՕ-ից դուրս գտնվող երկրներին՝ Աֆղանստանին եւ այլն, բայց միգուցե նրանք կհասկանան, թե ինչքան մեծ նշանակություն ունի այն, թե որտեղ է երկիրը տեղակայված:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՇԱՏ ԲԱՆ Է ՏՎԵԼ»

ԴՎՎՈՒԴ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**Աֆղանստանի Իսլամական Հանրապետության
արտոգործնախարարի գլխավոր խորհրդական,
Ռազմավարական հետազոտությունների
կենտրոնի տնօրեն
(25.06.2009)**

- Նախ ես կտամ այն հարցը, որը կհետաքրքրեր երեւի թե մեր բոլոր հայ ընթերցողներին: Դուք իրո՞ք հայ եք:

- Երկար տարիներ Աֆղանստանի արեւմտյան մասում հայեր են ապրել, սակայն պատերազմների պատճառով հեռացել են երկրից: Ես գիտեմ, որ շատ հայեր են ապրել հենց իմ քաղաքում:

- Այսինքն՝ Դուք հայկական արյո՞ւն ունեք:

- Շատ հնարավոր է:

- Ներկայում Աֆղանստանում խաղաղության եւ կայունության հաստատման գործում ի՞նչ դեր կարող է խաղալ Իրանը:

- Կարծում եմ՝ Աֆղանստանում խաղաղությունն ու կայունությունը խաղաղություն ու կայունություն է նաեւ Իրանում, քանի որ այն սպառնալիքը, որի առջեւ մենք կանգնած ենք Աֆղանստանում, կա նաեւ Իրանում: Օրինակ՝ վերջերս իրանական քաղաքներից մեկում տեղի ունեցած մահապարտի ահաբեկչական գործողությունը: Եթե մենք Աֆղանստանում ձախողվենք, ապա դա զգալի հետեանքներ կունենա Իրանի անվտանգության համար: Թեհրանն ու Քաբուլը կանգնած են նույն սպառնալիքի առջեւ, ինչ որ շատ երկրներ: Ցավոք, Թեհրանում շատերն ԱՄՆ-ից ավելի շատ սպառնալիք են տեսնում, քան Թալիբանից: Մենք մեր իրանցի ընկերներին ասել ենք, որ Թալիբանը, թմրանյութերը, ծայրահեղականությունը շատ ավելի լուրջ սպառնալիքներ են, քան Աֆղանստանում ամերիկյան զորքերի ներկայությունը:

- Կարո՞ղ ենք ասել, որ Իրանի կառուցողական գործողությունները գնահատվում են ՆԱՏՕ-ի կողմից:

- Այս համաժողովում դա իմ ելույթի մի մասն էր, որ մենք խնդրում ենք միջազգային հանրությանը առաջին հերթին համագործակցության մասին: Մենք քաջալերում ենք Թեհրանին եւ Բրյուսելին, որպեսզի նրանք համագործակցության ուղիներ գտնեն ՆԱՏՕ-ի եւ մեր հարեանների միջեւ: Փոխադարձ շահ կա Իրանի, Աֆղանստանի եւ ՆԱՏՕ-ի համար, եւ հարկավոր է մի մեխանիզմ մշակել այս շահերն իրականացնելու համար:

- Անընդհատ լուրերից լսում ենք, որ Աֆղանստանում վիճակն անկայուն է. ռմբակոծում են, մարդիկ են զոհվում եւ այլն: Դրսից մենք տեսնում ենք այդ անկայուն վիճակը, իսկ ի՞նչ է կատարվում ներսում, արդյո՞ք նույնն է:

- Ո՛չ, նույնը չէ: Կա երկու Աֆղանստան: Մի Աֆղանստանն այն է, որի մասին հաղորդում են լրատվամիջոցների ձեր գործընկերները՝ թե Աֆղանստանը լի է մարտահրավերներով ու դժվարություններով, իսկ մյուս Աֆղանստանը, որի մասին համարյա չի հաղորդվում, դա նոր Աֆղանստանն է, որը նոր է ի հայտ գալիս: Այժմ մենք Աֆղանստանում ունենք հազար դպրոց, ազգային անվտանգության ուժեր, որոնք օրեցօր ավելանում են, տնտեսությունը զարգանում է: Օրերս բացվել է Քաբուլի միջազգային օդանավակայանը, որը, տարածաշրջանի օդանավակայանների հետ համեմատած, շատ լավ օդանավակայան է: Ցավոք, այդ մասին ոչ ոք չի հաղորդում:

- Այո՛, մենք այդ մասին չենք լսել:

- Քաբուլում կա առաջին կարգի օդանավակայան: Այսինքն՝ամեն օր մի նոր լավ բան է կատարվում Աֆղանստանում այդ դժվարությունների կողքին: Սա՛ ընդհանուր իրավիճակի մասին: ՆԱՏՕ-ի հաղորդումների համաձայն՝ Աֆղանստանի շրջանների տասը տոկոսում է անվտանգությանը սպառնացող դեպքերի 70%-ը: Իսկ շրջանների 90%-ում համեմատաբար անվտանգ իրավիճակ է: Խնդիրներ կան միայն շրջանների այդ տասը տոկոսում: Իսկ մնացած շրջաններում իրավիճակը համեմատաբար նորմալ է եւ անվտանգ:


- Կարծում եք, որ ՆԱՏՕ-ի ուժերի ավելացումը՝ մասնավորապես վերջերս ամերիկյան լրացուցիչ զորակազմի ժամանումը, կնպաստի Աֆղանստանում անվտանգության ապահովմանը:

- Մի մեծ խնդիր, որ ունենք Աֆղանստանում, կառավարման վակուումն է: Օրինակ՝ Հելման անունով մի շրջան ունենք,

որը Ֆրանսիայի չափ տարածք է: Մինչեւ անցյալ տարի այնտեղ ընդամենը 900 ոստիկան կար: Փաստորեն, այդպիսի վայրերում անվտանգության ուժերի անբավարար թվի պատճառով առաջանում է կառավարման վակուում, որն էլ լցվում է Թալիբանով կամ այլ ահաբեկչական խմբավորումներով: Եթե մենք կարողանանք այդ վակուումը լցնել, համոզված եմ, որ իրավիճակը բավականին կլավանա: Ավելին՝ մենք միջազգային հանրությանը հորդորում ենք բազմակողմանի ռազմավարություն կիրառել: Այսինքն՝ բավարար չէ զինվորների թիվն ավելացնել, կարելի է մեծացնել քաղաքացիական, տնտեսական եւ տարածաշրջանային համագործակցությունը:


- Ի՞նչ կցանկանայիք ասել հայ ընթերցողին:

- Հայաստանը մեր մշակույթի, մեր ժառանգության մի մասն է: Հայաստանը մեր մշակույթին շատ բան է տվել, դուք մեր մի մասն եք կազմում, եւ մենք ձեզ դրսի մարդ չենք համարում: Հայտնի է, որ մեծ հայկական համայնքներ կան Ամերիկայում, Եվրոպայում, որոնք բիզնեսում, կրթական եւ այլ ոլորտներում բավականին հաջողակ են: Եվ մենք շատ ուրախ կլինենք, որ նրանք գան ու ներդրում անեն Աֆղանստանում: Աֆղանստանը բավականին հարուստ շուկա է այն մարդանց համար, ովքեր արդեն ռիսկի են դիմել, եւ նրանց ներդրումները մեծ շահույթ կբերեն: Ուղղակի նրանք պետք է մի փոքր համբերատար լինեն:



ԳԼՈՒԽ 5

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ



Կրթություն և գիտություն

Ղազախստանում միջնակարգ կրթությունը պարտադիր է, որն ունի երեք աստիճան՝ տարրական (1-4 դասարան), հիմնական (5-9 դասարան) և բարձր (10-11 դասարան): Նախնական մասնագիտական կրթություն ստանում են մասնագիտական դպրոցներում և մասնագիտական լիցեյներում 2-3 տարվա ընթացքում հիմնական միջնակարգ կրթության բազայի վրա: Միջնակարգ մասնագիտական կրթություն ստանում են քոլեջներում և ուսումնարաններում 3-4 տարվա ընթացքում հիմնական միջնակարգ կրթության բազայի վրա մրցութային հիմունքներով:

Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար դպրոցների շրջանավարտները հանձնում են ավարտական և ընդունելության քննություններ միասնական ազգային թեստավորման կամ համալիր թեստավորման (նախորդ տարիների շրջանավարտների համար) տեսքով: Ղազախստանի քաղաքացիներն իրավունք ունեն մրցութային հիմունքներով արժանանալու «Բոլաշակ» միջազգային կրթաթոշակի՝ արտասահմանում սովորելու համար: ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո շրջանավարտը ստանում է բակալավրի (4 տարի), մասնագետի (5 տարի) կամ մագիստրոսի (6 տարի) աստիճան: Երկրորդ բարձրագույն կրթություն Ղազախստանում ստանում են միայն վճարովի հիմունքներով ուսուցման արագացված ժամկետով (2-3) տարի:

Օտարերկրացիները և Ղազախստանում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք օգտվում են կրթության իրավունքից Ղազախստանի Հանրապետության քաղաքացիների հետ հավասար՝ երկրի օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով սահմանված կարգով, ինչպես նաև Ղազախստանի ուսումնական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով:

1990-ական թվականներին Ղազախստանում կար 279 գիտական հաստատություն, այդ թվում՝ միութենական ենթակայության գիտահետազոտական ինստիտուտների ու ԲՈՒՀ-երի մասնաձյուղեր և ինքնուրույն լաբորատորիաներ: Գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվողների թիվը կազմում էր 50,6 հազար մարդ:

Անկախության ձեռքբերումից հետո սկսվում է գիտության զարգացմանն ուղղված նոր մոտեցումների ձեռավորումը: 1992թ.

հունվարին ընդունվում է «Գիտության եւ Ղազախստանի Հանրապետության պետական գիտատեխնիկական քաղաքականության մասին» օրենքը, իսկ փետրվարին կազմավորվում է Գիտության եւ նոր տեխնոլոգիաների նախարարությունը: Որոշ ժամանակ անց այն վերափոխվում է Կրթության եւ գիտության նախարարության: Ներկայում նրա ենթակայության տակ է գտնվում 55 գիտական կազմակերպություն, որտեղ աշխատում է ավելի քան 5000 մարդ, նրանցից 2300-ը՝ գիտաշխատողներ, այդ թվում՝ 450 գիտությունների դոկտոր եւ շուրջ 1000 գիտությունների թեկնածու:

Վերջին տարիներին Ղազախստանը ստանձնել է նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման եւ յուրացման ուղենիշ, որոնք միտված են մրցունակ ապրանքի ստացմանը, ազգային տնտեսական անվտանգության շահերի ապահովմանը եւ արդյունաբերական ու գիտատեխնիկական ներուժի զարգացմանը:

Ղազախստանի Հանրապետությունում կա 180 ԲՈՒՀ եւ ԲՈՒՀ-երի 86 մասնաճյուղ: 9 առաջատար համալսարաններ ունեն հատուկ կարգավիճակ: Պրոֆեսորադասախոսական կազմը 41 հազար է, որոնցից 2520-ը ունեն դոկտորի աստիճան, 11610-ը՝ գիտությունների թեկնածուի:

**«ՄԵՆՔ ԿՅԱՆԿԱՆԱՅԻՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ
ԳԻՏԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼ»**

ՍԱԼԹԱՆԱԹ ԱԽՄԵՏՓԱՆՈՎԱ
Աստանայի եվրասիական ազգային համալսարանի
Տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան,
տնտ. գիտ. դոկտոր
(24.06.2009)

- Պատմե՞ք, խնդրեմ, Ձեր համալսարան ընդունվելու պայմանների մասին:

- Մեզ մոտ կա եւ վճարովի, եւ անվճար ուսուցում: Մեր համալսարանի առավելությունն այն է, որ մենք ընդունում ենք ազգային թեստավորման արդյունքում բարձր բալեր հավաքած դիմորդներին: Եթե այլ համալսարաններում անցնող միավորը 50 է, ապա մեզ մոտ այն շատ ավելի բարձր է: Եվ այս ձեով մենք ապահովում ենք որակական հավաք ինչպես պետական պատվերով, այնպես էլ ուսուցման պայմանագրային ձեով:

- Ձեր համալսարանում ունե՞ք արդյոք այլ երկրներից հրավիրված դասախոսներ:

- Այո, իհարկե: Մեր համալսարանում դասավանդում են տարբեր երկրների համալսարաններից հրավիրված պրոֆեսորներ: Հիմնականում մենք այդպիսի հնարավորություն ունենք դոկտորանտուրայի ծրագրի շրջանակներում: Այս տարի արդեն դոկտորանտուրայի երկրորդ խումբն է ավարտել: Մեզ մոտ դասավանդում են պրոֆեսորներ Միացյալ Նահանգներից, Մեծ Բրիտանիայից, Կանադայից: Այս ծրագիրը ֆինանսավորվում է պետության կողմից, այն մեզ այսպիսի հնարավորություններ է ընձեռում:

Բացի այդ, մեր ղեկավարությունը ցանկություն ունի համատեղ ծրագրեր նախապատրաստել ու իրականացնել եւ բակալավրիատի, եւ մագիստրատուրայի համար: Այս ուղղությամբ, կարծում եմ, Հայաստանի հետ էլ կարելի կլիներ մագիստրոսների նախապատրաստման համատեղ ծրագիր իրականացնել:

Դա մեզ համար էլ է շատ հետաքրքիր: Հուսով եմ, որ հետաքրքիր կլինի նաեւ Հայաստանի համար:

- **ԱՊՀ երկրներում այժմ այն խնդիրը կա, որ բարձր որակավորում ունեցող շրջանավարտները հեռանում են երկրից՝ արտասահմանում աշխատանք գտնելու նպատակով: Այսօր Ղազախստանին շատ են հարկավոր հենց սեփական տնտեսագետները: Արդյո՞ք Ղազախստանն էլ է կանգնած այս խնդրի առջեւ: Ձեր շրջանավարտները հեռանո՞ւմ են երկրից, օրինակ՝ Չինաստան, ԱՄՆ՝ աշխատանք փնտրելու նպատակով:**

- Գիտե՞ք, կարծում եմ, այս հարցին միանշանակ չենք կարող պատասխանել, քանի որ, եթե շրջանավարտը բարձր որակավորում ունի, լավ նախապատրաստված է, մրցունակ եւ ավելի լավ աշխատանքի հնարավորություն ունի արտասահմանում, նա կարող է իր տեղը գտնել արտասահմանում: Գնում է, պայմանագրով աշխատում, եթե, իհարկե, այդպիսի հնարավորություն կա: Ընդհանուր առմամբ, այդպիսի կադրերը հենց մեզ մոտ, մեր տնտեսագիտության մեջ մեծ պահանջարկ ունեն: Հիմնական մասը աշխատանք է գտնում, մնում է մեզ մոտ՝ Ղազախստանում:

- **Միշտ ցանկացած համալսարանի համար կարելի է ավանդույթների հարցը: Ինչքանո՞վ են Ձեր շրջանավարտները կապ պահպանում համալսարանի, ձեր ֆակուլտետի հետ:**

- Իհարկե, կապ պահպանում են: Մեր համալսարանը գործում է 1996թ.-ից, համեմատական առումով երիտասարդ է: Մենք ունենք Շրջանավարտների ընկերակցություն, որի շրջանակներում բավականին մեծ աշխատանք է տարվում: Եվ, իհարկե, մեր շրջանավարտները կապ են պահպանում իրենց ամբիոնների, դասախոսների հետ, անցկացվում են շրջանավարտների ավանդական հանդիպումներ, եւ այդ կապն ապահովվում է: Երեւի հարկավոր է այս ավանդույթները պահպանել: Ես ինձ թույլ կտամ համեմատություն անցկացնել Հարվարդի համալսարանի հետ: Ինչո՞ւ: Երեւի այն ուժեղ է նրանով, որ այնտեղ ուժեղ են ավանդույթները: Հարվարդի շրջանավարտը միշտ ողջունում, աջակցում է Հարվարդի մեկ այլ շրջանավարտի: Եվ եթե մեզ մոտ էլ այդ ավանդույթը զարգանա, ապա կծեւավորվի այդ կլաստերը (մոդայիկ բառ է, հա՞)՝ համախումբը:

Դա էլ հենց Հարվարդի կլաստերն է: Եվ կծեավորվի Եվրասիական ազգային համալսարանի կլաստերը, նաեւ ձեր՝ հայկական համալսարանի կլաստերը:

- **Ձեր ֆակուլտետում կա նաեւ տուրիզմի մասնագիտություն: Ի՞նչ է արվում Ղազախստանում զբոսաշրջության զարգացման համար: Այս հարցում ի՞նչ դեր է խաղում ԲՈՒՀ-ը՝ մասնավորապես ձեր ֆակուլտետը:**

- Շնորհակալություն հետաքրքիր հարցի համար: Զբոսաշրջությունը՝ որպես տնտեսության ծյուղ, նախկինում երկրորդական նշանակություն է ունեցել: Փաստորեն գտնվում էր այսպես ասած սաղմնային վիճակում: Սակայն այսօր շուկայական տնտեսության պայմաններում զբոսաշրջությունը մտնում է իր իրավունքների մեջ, դառնում հեռանկարային ուղղություններից մեկը: Զբոսաշրջությունը տնտեսության՝ բարձր շահույթ բերող ոլորտ է: Կառավարությունը դա հասկանում է, եւ ընդունվել են բազմաթիվ կառավարական ծրագրեր, որոնցից կարող եմ նշել զբոսաշրջային ոլորտի ձեւավորման հատուկ ծրագիրը: Սա մի ուղղություն է: Փաստորեն, այս ծրագրին համապատասխան, կառավարությունը մեծ ջանքեր է ներդնում այս ոլորտի նպատակաուղղված զարգացման համար: Բացի այդ, այն, որ այս ծրագրին աջակցություն կա, երեւում է նրանից, որ մասնագետների նախապատրաստման համար պետությունն ավելի շատ միջոցներ է տրամադրում:

Եթե համեմատենք տնտեսագիտական մասնագիտությունները, ապա նրանց մեջ առաջնայինը զբոսաշրջությունն է համարվում: Ամենաշատ դրամաշնորհները զբոսաշրջությանն են տրվում, եւ մեզ մոտ՝ ֆակուլտետում, կարելի է ասել, որ ուսանում են միայն պետպատվերով:

Մշակույթ

Ղազախստանի մշակույթի մաս են կազմում յուրդը, թաղիքե գորգերը՝ թեքեմետները, երաժշտական գործիքները՝ երկկար դոմբրան եւ աղեղային գործիք կոբիզը:

Յուրդը ղազախների վրանատիպ տունն է, որը հեշտությամբ քանդվում ու հավաքվում է եւ փոխադրվում ձիերի կամ ուղտերի օգնությամբ: Այն հարմարավետ եւ պրակտիկ տուն է, իդեալականորեն հարմարեցված է բնության եւ կյանքի պայման-

ներին: Յուրդը ներսից եւ դրսից պատված է թաղիքով, ներսում փռվում են գորգեր, յուրդը զարդարվում է զարդանախշերով:

Կենցաղային առարկաները՝ լծասարքը, թեքեմեւները, փայտից, ոսկորից, մետաղից պատրաստված իրերը զարդարվում են նախշերով: Վարպետները փայտից պատրաստում են թասիկներ եւ շերեփներ կումիսի՝ ձիու կաթի համար: Մահձակալները եւ սնդուկները զարդարվում են քարայծի եղջյուրներով: Տափաստանային զերգերները՝ ոսկերիչները, գերադասում են աշխատել սպիտակ արծաթով եւ պատրաստում են յուրահատուկ զարդեր: Դրանցից է, օրինակ, երեք մատանիներից բաղկացած զարդը, որոնցից յուրաքանչյուրից բարակ շղթա է գնում եւ միանում ապարանջանին:

Ղազախների ազգային հագուստը տարբերվում է՝ կախված բնակության շրջանից: Տղամարդու հագուստը չապանն է, որն իրենից ներկայացնում է ասեղնագործված թավշյա խալաթ գոտիով: Տղամարդիկ կրում են նաեւ փափուկ թասակներ, բարձր ֆետրե գդակներ կամ աղվեսի մորթուց կարված ականջակալներով որսորդական գլխարկներ՝ մալակայներ:

Կանացի ազգային հագուստը բաղկացած է սպիտակ բամբակյա կամ ծաղկավոր մետաքսյա զգեստից եւ ասեղնագործված թավշյա բաճկոնից, փոքրիկ գդակից կամ մետաքսյա գլխաշորից: Ամուսնացած տարիքով կանայք գլուխը ծածկում են կիմեշեկով՝ սպիտակ ծածկոցով: Երիտասարդ աղջիկը կրում է բարձր, սրածայր, հարուստ զարդարանք ունեցող գլխարկ՝ սաուկելե, որի ծայրին փետուրների փունջ է:

Ղազախական ասացվածքներ

- ❖ Հայրենիքը ժողովրդի մայրն է, ժողովուրդը՝ ջիզիթի մայրը:
- ❖ Սերը հայրենիքի նկատմամբ ծնվում է ընտանեկան օջախում:
- ❖ Ինչ-որ տեղ ոսկին շատ է, սակայն առանց ոսկու հայրենիքն ավելի թանկ է:
- ❖ Նույնիսկ սոխն է մեղրի նման քաղցր, եթե հայրենիքում է աճում:
- ❖ Ամեն երկիր իր օրենքներն ունի, նույնիսկ շներն են ուրիշ:

- ❖ Երջանիկ է այն ջիզիթը, որն իր գինը գիտի: Երջանիկ է այն ժողովուրդը, որն ինքն իրեն է ղեկավարում:
- ❖ Նույնիսկ եթե հայրենիքում խան չլինեմ, ծորում քար կլինեմ:
- ❖ Ժողովրդական ցասումն ամրոցներ էլ կքանդի:
- ❖ Առանց մեծերի ժողովուրդ չկա, գետն առանց հունի չի հոսում:
- ❖ Մարդկային երախտագիտությունը մեծ երջանկություն է:
- ❖ Առանց գողերի ժողովուրդ չկա, առանց գայլերի հող չկա:
- ❖ Կարելի է ընկերներից իմաստուն լինել, բայց ողջ ժողովրդից իմաստուն չես լինի:
- ❖ Եթե ժողովուրդը համախմբված է, նրա մեջ թշնամություն չի ապրում:
- ❖ Լավ է 100-ի համար ապուր եփել, քանի 10-ի գլխին պետ լինել:
- ❖ Ժողովուրդն առանց խանի նույնն է, ինչ հողն առանց լեռների:
- ❖ Ով իր ժողովրդին չգիտի, թող օտար ազգին չմեղադրի:
- ❖ Մարդն այս կյանքում հյուր է:
- ❖ Գայլը ոչխարներից չի կշտանում, մարդը՝ մտքերից:

ԶԻՅԱԲԵԿ ԿԱՖՈՒԼ ԴԻՆՈՎ
Ղազախստանի եվրասիական համալսարանի
սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան
(23.06.2009)

- Այսօր Ղազախստանն ասոցացվում է միջերթնական եւ միջկրոնական խաղաղության ու համաձայնության կղզու հետ: Մեր պատմաբանների, քաղաքական վերլուծաբանների կարծիքով՝ միջերթնական եւ միջկրոնական խաղաղության ու համաձայնության հիմքում ընկած է երեք գործոն: Առաջինը մեր նախագահ Նուրսուլթան Աբիշեյիչ Նազարբաևի իմաստուն, կշռադատված քաղաքականությունն է: Որ երկրում էլ որ նա լինի, ինչ առիթով էլ ելույթ ունենա, նրա երկու թեզիսներից մեկն այն է, որ Ղազախստանում տարբեր ազգերի ու կրոնների միջեւ խաղաղություն եւ համաձայնություն է: Եթե նա լրիվ հակառակ բան ա-

սեր, կամ ընդհանրապես ոչինչ չասեր, ապա իրավիճակը բոլորովին այլ հունով կընթանար:

Իսկ երկրորդ գործոնն այն է, որ հարյուրամյակների, նույնիսկ հազարամյակների ընթացքում՝ մանավանդ Մեծ մետաքսի ճանապարհի ժամանակաշրջանում, այդ երթուղու բարեբեր հողի վրա, որը զբաղեցնում է մեր երկրագնդի 1/9 մասը, ժողովուրդներ էին ապրում: Նրանք հատուկ ավանդույթներ, միմյանց հետ հարաբերվելու հատուկ ձեւ էին մշակել, եւ այդ հարյուրավոր, հազարավոր տարիների ընթացքում, ժողովրդական լեզվով ասած, շատ լավ միմյանց հետ «յուլա էին գնում», առանց կռիվների, վիճաբանությունների: Այսինքն՝ այդ ավանդույթը մշակվել է երկար ժամանակահատվածում:

Եվ երրորդ կարեւոր գործոնը, պատմաբանների կարծիքով, դա հենց ղազախների մենթալիտետն է, նրանց բնավորությունը: Ինչպես միաձայն պնդում են ե՛ւ հին, ե՛ւ միջնադարյան, ինչպես նաեւ արդի հեղինակները՝ ռուսական, գերմանական, ֆրանսիական, անգլիական հետազոտողները, ղազախները խաղաղասեր, հանդուրժող, հյուրընկալ ժողովուրդ են:

Ղազախստանը դարձել է համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների հանդիպման կենտրոն: Միջնադարյան գիտնականները փաստում են տաճարների գոյությունը դեռ Մեծ մետաքսի ճանապարհի գոյության ժամանակ նրա ողջ ուղու երկայնքով: Կար ե՛ւ հայկական եկեղեցի, ե՛ւ մահմեդական մզկիթ, եւ իրեական սինագոգ եւ այլն: Այսինքն՝ այդ միջմշակութային շփումները, միջմշակութային երկխոսությունը, կրոնների փոխազդեցությունը գոյություն ունեն դեռ հին ժամանակներում:

Ղազախստանի անկախանալուց հետո, մեր նախագահի շնորհիվ այդ ավանդույթն ուղղակի վերածնվեց: Եվ այսօր Ղազախստանը՝ Աստանան՝ երրորդ հազարամյակի մայրաքաղաքը, դարձել է Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարի անցկացման վայր: Այստեղ երկխոսության, իրավահավասար գործընկերության հիման վրա մշակվում են ընդհանուր որոշումներ, որոնց հիմքում ընկած է դավանանքների միջեւ խաղաղությունն ու համաձայնությունը: Դեռ ոչ ոք խաղաղությունից պարտություն չի կրել: Այս առումով նույնպես Ղազախստանը շատ յուրահատուկ է:

Զանգվածային լրատվամիջոցներ

Զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը կորորհինացնող պետական կառույցն է Ղազախստանի Հանրապետության Տեղեկատվության եւ հասարակական համաձայնության նախարարությունը:

Ղազախստանի Հանրապետությունում զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը կանոնակարգվում է «Մամուլի եւ զանգվածային այլ լրատվամիջոցների մասին» օրենքով, որն ընդունվել է 1991թ. հունիսի 28-ին եւ տարիների ընթացքում բազմաթիվ փոփոխություններ կրել: 1997թ.-ին հրապարակվել է նախագահ Նազարբաեւի հրամանագիրը «Ղազախստանի Հանրապետությունում միասնական տեղեկատվական տարածության ձեւավորման մասին»:

Ղազախստանում հաշվվում է շուրջ 1170 թերթ, 450 ամսագիր, 215 կենտրոնական ու տեղական հեռուստա- եւ ռադիոընկերություն եւ 15 տեղեկատվական գործակալություն: Ղազախստանի լրատվամիջոցների 80 տոկոսը պատկանում է մասնավոր անձանց եւ կազմակերպություններին, 159 հրատարակությունները՝ հասարակական միավորումներին, 11-ը՝ քաղաքական կուսակցություններին ու շարժումներին, 10-ը՝ կրոնական միավորումներին:

«Զանգվածային լրատվամիջոցների մասին» օրենքի համաձայն՝ պետական լեզվով՝ ղազախերենով պետք է լինի եթերաժամի ոչ պակաս, քան 50 տոկոսը: Այս օրենքը չի տարածվում կաբելային ցանցային հեռուստատեսության վրա, այդ պատճառով այս ցանցում լայնորեն ներկայացված են ռուսաստանյան հեռուստաալիքները:

Ղազախստանի տպագիր հրատարակությունները եւ էլեկտրոնային ՁԼՄ-ները թողարկվում են աշխարհի 11 լեզուներով: Ղազախերեն թողարկվող մամուլի մասը կազմում է 18 տոկոս, ռուսերեն՝ 35 տոկոս, երկու լեզուներով՝ 35 տոկոս:

2008թ. տվյալներով՝ հանրապետությունում թողարկվում է շուրջ 2300 թերթ ու ամսագիր, որոնցից հանրապետականի կարգավիճակ ունի 220 թերթ եւ 312 ամսագիր:

Կան զանգվածային լրատվամիջոցներ, որոնք հիմնականում հաղորդում են միջազգային լուրեր, վերլուծական նյութեր համաշխարհային անցուդարձից: Դրանցից են «Աշխարհի շա-

բաթ», «Կոնտինենտ», «Ղազախստան» միջազգային ամսագրերը, «Խաբար» ազգային գործակալությունը, «Կազինֆորմ» տեղեկատվական գործակալությունը, «Ղազախստան» հեռուստառադիոընկերությունը, «Ռահատ-TV» անկախ հեռուստաընկերությունը, «Ռադիո Ղազախստան» ռադիոկայանը:

Ի դեպ, «Խաբար» գործակալությունը Ղազախստանի խոշորագույն մեդիա-հոլդինգն է: Այն ունի երկու ազգային հեռուստաալիք, մեկ միջազգային, որը կոչվում է «Կասպիոնեթ», եւ մեկ ռադիոկայան: «Խաբար»-ի սեփականատերերը մինչեւ 2004թ.-ը եղել են երկրի նախագահ Նազարբայեւի դուստր Դինարան եւ նրա ամուսինը: Այս բաժնետիրական ընկերությունը ֆինանսավորում է պետությունը, եւ դրա նկատմամբ իրականացվում է լրիվ պետական վերահսկողություն:

Հանրապետությունում գործում են հետեւյալ լրագրողական կազմակերպությունները՝ Ղազախստանի լրագրողների միություն, Կին-լրագրողների հանրապետական ընկերակցություն, Անկախ էլեկտրոնային ՁԼՄ-ների ընկերակցություն: Վերջինը ներկայացնում է ոչ պետական էլեկտրոնային ՁԼՄ-ների շահերը ոչ միայն Ղազախստանում, այլեւ Միջին Ասիայում:

Ղազախստանի Հանրապետության սահմանադրության 20-րդ հոդվածը դրույթներ է պարունակում խոսքի եւ մամուլի ազատության մասին, ըստ որի՝ գրաքննությունն արգելվում է, խոսքի եւ ստեղծագործության ազատությունը երաշխավորվում է, յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն ստանալ ու տարածել տեղեկատվություն օրենքով չարգելված ցանկացած ձեւով:

ԿԵՆՏԵՖՈՒԿՏ ԺՈՒԴԻԲԱՅ
«ԿԱԶԻՆՖՈՐՄ» Ազգային ընկերության
տեղեկատվության եւ ստեղծագործական
հարցերով փոխնախագահ
(24.08.2009)

- Պատմեցե՛ք, խնդրեմ, ձեր գործակալության մասին: Այն ի՞նչ ուղի է անցել, ե՞րբ է ստեղծվել, ո՞րն է նրա տարբերությունը մյուս լրատվամիջոցներից:

- Ղազախստանի «Կազինֆորմ» տեղեկատվական գործակալությունը մյուս գործակալություններից չի տարբերվում: Գոր-

ծակալության գործունեության նպատակները, խնդիրները, ձեռնարկը նույնական են Ղազախստանի, ԱՊՀ-ի եւ ընդհանրապես աշխարհի գործակալությունների հետ: Այս առումով, ինձ թվում է, մենք ընթանում ենք ընդհանուր հունով:

Ինչ վերաբերում է այս գործակալությանը, ապա ասեմ, որ այն երկար պատմություն ունի: Ծուտով նշելու ենք դրա 90-ամյակը: Մեր գործակալության 85-ամյակին մեզ այցելեց պետության ղեկավարը՝ Նուրսուլլան Աբիշեյիզ Նազարբաևը: Նա մեր գործակալության աշխատանքին լավ գնահատական տվեց եւ խնդիր դրեց, որ այն աշխատի այնպես, որ Ղազախստանի մասին իմանա ողջ աշխարհը: Մենք այդ ուղղությամբ աշխատում ենք, փորձում իրականացնել այդ խնդիրը, կյանքի կոչել այն: Զգիտեմ՝ ինչքանով է դա մեզ հաջողվում, դա պետք է դատեն մեր լսարանը, մեր ընթերցողները: Ընդհանուր առմամբ, դատելով արձագանքներից, մեզ շատ բան է հաջողվում: Մեր գործակալությունը, ինչպես նույն ձեռնարկով աշխատող մյուս գործակալությունները, ունի մի քանի բաժին, որպեսզի այսօր կատարվածի մասին ում ինչ հետաքրքրում է, կարողանա իմանալ սկզբնաղբյուրից:

Պետք է ասեմ նաեւ, որ այսօր ամենակարեւորը «Ղազախստանի բիզնես» կոչվող բաժինն է: Դա այն բաժինն է, որտեղ կենտրոնացված են ֆինանսական, տնտեսական ոլորտին վերաբերող լուրերը: Այսինքն՝ կարելի է ասել, որ այն հիմնական է: Մենք բավականին շատ տեղեկատվություն ենք տրամադրում, եւ պետք է նշեմ, որ բոլոր այդ բաժինների աշխատանքը, գործառույթներն ապահովվում են ոչ միայն մեր անմիջական ուժերով, մեր գործակալության թղթակիցների, այլեւ փորձառու քաղաքական վերլուծաբանների, մեկնաբանների, փորձագետների միջոցով, հասարակական առաջնորդների միջոցով, որոնց խոսքերին ու մտքերին վստահում են միլիոնավոր ղազախստանցիներ: Կարող եմ ասել, որ այսօր մենք կառուցել ենք հստակ, ներդաշնակ համակարգ:

Բացի այդ, ունենք նաեւ էքսկյուզիվ բաժին, որը կոչվում է «Կազինֆորմ անոնս», այսինքն՝ տեղեկատվություն ենք տրամադրում, թե ինչ է տեղի ունենալու շաբաթվա ընթացքում իշխանության կենտրոնական մարմիններում՝ նախագահի վարչակազմում, կառավարությունում, այլ կենտրոնական կառույցներում: Դա շատ հետաքրքիր է, եւ բոլորը ցանկանում են, որ մենք ժամանակին տեղեկացնենք, ինչն էլ անում ենք:

Ունենք նաեւ ամենօրյա տեղեկատվական արտադրանք՝ «Առավոտյան լրատու»: Դա պաշտոնյաների համար է, որոնք աշխատում են նախարարություններում, խորհրդարանում, կառավարությունում: Այս բաժինն իշխանության համար է եւ իշխանության մասին: Լինում են դեպքեր, որ երբ տեխնիկական առումով ուշանում ենք, իսկույն զանգեր են գալիս: Սա նույնպես վկայում է այն մասին, որ հսկայական հետաքրքրություն կա: Իհարկէ, մենք ամեն ինչ անում ենք, որ այդպիսի դեպքեր չլինեն, սակայն եթէ լինում են, դա մեր մեղքով չէ:

Ունենք նաեւ ամենամյա օրացույց. կոչվում է «Ամսաթվեր, անուններ, իրադարձություններ»: Սա էլ է շատ հետաքրքիր, բավականին շատ տեղեկություն կա: Տարին մեկ անգամ այսպիսի նյութ ենք պատրաստում:

Ի դեպ, մեր երկրում ընդունվել է ծրագիր՝ «Ղազախստան-2030. ռազմավարական առաջնայնություններ», որի 7-րդ կետը պրոֆեսիոնալ պետությունն է, կառավարությունը: Այս ուղղությամբ նույնպես աշխատում ենք: Մենք հիմա մի նոր, հետաքրքիր նախագիծ ենք սկսել, այն կոչվում է «Նշանակում»: Այնտեղ կենտրոնական գործադիր մարմիններից, վերջացրած շրջանային, մարզային մակարդակի ղեկավար օղակներով: Չէ որ հետաքրքիր է, թե ով է նախարար, փոխնախարար, վարչության պետ: Սա մեծ նախագիծ է: Եթէ այն իրականացնենք, դրանով կտեսնենք, թե ինչքանով ենք աշխատում 7-րդ առաջնայնության իրականացման ուղղությամբ, ինչքանով ենք պրոֆեսիոնալ: Այդ հակիրճ տեղեկատուում ղեկավարի մասին տեղեկատվություն է տրվում, թե ով է նա, ինչ է եւ այլն՝ խուսափելու համար այն խոսակցություններից, թե նա ծանոթությամբ է դրան հասել: Եթէ մարդն իրոք արհեստավարժ է, ապա նա իրոք բարձր է, նա ինքն է իրեն «սարքել»: Այս նախագիծը շուտով կիրականացնենք: Կարծում եմ՝ այն շատ հետաքրքիր կլինի:

Մեր ընկերության նախագահն էլ է շահագրգռված եւ ամեն ինչում մեզ աջակցում է: Ի դեպ, ասեմ, որ նա շատ բանիմաց մարդ է: Սա չեմ ասում նրա համար, որ մեր նախագահն է: Չնայած նա երիտասարդ է, բայց նրա տեսլականը բավականին ստեղծագործական է, հեռանկարային ու հետաքրքիր: Եվ իմ խնդիրն է նրան աջակցել որպես ավելի երկար ապրած մարդ:

- Կան գործակալություններ, որոնք աշխատում են միայն ընթերցողի համար, եւ կան գործակալություններ, ո-

րոնց համար նպատակային խումբ են հենց զանգվածային լրատվամիջոցները: Իսկ ձեզ մոտ ինչպե՞ս է:

- Ես Ձեզ բաժինների մասին արդեն պատմեցի: Դա էլ հենց նպատակային լսարանն է: Մենք ունենք մեր ընթերցող լսարանը: Իհարկե «անհնարին է գրկել անհունը»: Կոզմա Պրոտկովը հիմար մարդ չէր, եւ նրա այս արտահայտությունը մինչեւ հիմա արդիական է: Ի տարբերություն այլ ՁԼՄ-ների՝ մենք հսկայական ռեսուրսներ ունենք, եւ ցանկացած մարդու համար դա հասանելի է: Բայց դրա հետ մեկտեղ մենք նկատում ենք, որ ունենք մեր մշտական ընթերցողները: Ամեն օր մեր կայք է այցելում մինչեւ 10 հազար մարդ:

Մեր կայքը երեք լեզվով է՝ ղազախերեն, որը պետական լեզու է, ռուսերեն, որը ազգերի միջեւ շփման լեզու է, եւ անգլերեն, որը միջազգային լեզու է: Ի դեպ, մեր նախագահը մեր առջեւ խնդիր է դրել ստեղծել եռալեզու հավասար համակարգ: Մենք երեւի միակ գործակալությունն ենք, որ աշխատում ենք այդ ուղղությամբ, ի նկատի ունեւ՝ առավել նպատակասլաց: Այս առումով մենք ասելիք եւ հպարտանալու բան ունենք: Մենք աշխատում ենք նպատակային լսարանի վրա, տալիս ենք տեղեկատվական արտադրանք, որը պահանջարկ ունի:

Ղազախական համայնքը, ինչպես եւ հայկական համայնքը, տարածված է ողջ աշխարհում: Ղազախները հիմնականում Չինաստանում են ապրում՝ շուրջ 1,5 մլն: Մենք ղազախերեն կայք ունենք, բայց այն լատինատառ է, այն կարդում են աշխարհի 20 երկրներում, որտեղ ղազախներ են ապրում: Ցավոք, Չինաստանի ղազախներից ոչ բոլորը լատիններեն տառերը գիտեն: Այս կապակցությամբ նոր նախագիծ ենք մշակել, որը հավանության է արժանացել ընկերության նախագահի կողմից. արաբական գրաֆիկայի միջոցով փոխանցել մեր տեղեկատվությունը: Նրանք ուղղակի դրան են սպասում: Այ, օրերս թերթում հատուկ մի մեծ հոդված էր տպագրված այդ մասին, որ Չինաստանում ապրող մեծ թվով ղազախներ են դիմել մեր երկրի ղեկավարին այս հարցով: Կարեւորը սա է:

- Ինչքանո՞վ է արտաքին աշխարհն արտացոլված ձեր աշխատանքում: Ինչքա՞ն տեղ է հատկացվում ողջ աշխարհին, առանձին՝ ԱՊՀ երկրներին: Ինչքանո՞վ է լուսաբանվում Հայաստանը «Կազինֆորմ»-ի եւ ընդհանրապես ղազախական ՁԼՄ-ների կողմից:

- Ձեր հարցը հասկացա: Մենք չենք կարող ուրիշներից ավելի ազատ լինել, մանավանդ, եթե աշխատում ենք համաշխարհային տեղեկատվական տարածության մեջ, բնական է, որ այնտեղ որոշակի տեղ ենք զբաղեցնում եւ իհարկե ցանկանում ենք հաստատվել այդ տեղում: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե շատ խիտ տեղեկատվական փոխանակում լինի մյուսների հետ:

Հունիսի վերջին կայացավ Ազգային տեղեկատվական գործակալությունների ընկերակցության 9-րդ նիստը: Ի դեպ, Հայաստանն էլ է դրա մեջ մտնում: Այստեղ մենք բավականին սերտ ենք աշխատում: Կատարվում է տեղեկատվության ամենօրյա փոխանակում: Այս հարցը լուծվում է «ԻՏԱՌ-ՏԱՍՍ»-ի միջոցով: Ամեն օր մենք տեղեկատվական փաթեթ ենք պատրաստում, որի մեջ ներառում ենք 50-100 տեղեկություն, որոնք արտացոլում են մեր կյանքի բոլոր կողմերը: Մենք, բնական է, ենթադրում ենք, որ մարդկանց ավելի շատ հետաքրքրում է եւ քաղաքական, եւ տնտեսական, եւ մշակութային կյանքը, ու մենք շեշտը դնում ենք հենց այդ ուղղությունների վրա, այդ թեմաների վրա ենք ուշադրություն դարձնում: Ամեն օր ուղարկում ենք փաթեթը «ԻՏԱՌ-ՏԱՍՍ», որն էլ այն ուղարկում է Մինսկ: Այդ ընկերակցության մեջ մտնող բոլոր գործակալությունները ստանում են այդ տեղեկատվությունը: Չեմ կարող ասել, որ բոլորը 100 տոկոսով աշխատում են այդ ուղղությամբ: Ասեմ, որ մենք արդեն այդ աշխատանքը կարգի ենք զցել, եւ ԱԳՀ երկրների հետ գործերը վատ չեն:

Բացի սրանից, մենք մի շարք այլ միջազգային կազմակերպությունների անդամ ենք: Դա «Թյուրքսոյն» է՝ թյուրքալեզուների ընկերակցությունը: Մենք նաեւ Ասիական-խաղաղօվկիանոսյան տեղեկատվական գործակալության ասոցիատիվ անդամ ենք: Այսինքն՝ այդ գործում մենք մեզ չենք սահմանափակում: Մեզ մոտ հստակ եւ ամուր կերպով զարգանում են երկկողմ հարաբերությունները:

Վերջին տարիներին «ԻՏԱՌ-ՏԱՍՍ»-ի հետ ենք ավելի սերտ աշխատում, «ՌԻԱ-Նովոստիի» հետ լավ հարաբերություններ են: «ԻՏԱՌ-ՏԱՍՍ»-ը մեզ ամեն տարի հրավիրում է Ռուսաստանն այսօրե միջոցառմանը: Ի դեպ, Հայաստանի մեր գործընկերներն էլ են գալիս, եւ այնտեղ շփվում ենք, կարծիքներ փոխանակում: Իհարկե, Հայաստանի ու Ղազախստանի միջեւ հարաբերությունների մակարդակը չի համապատասխանում նրան,

ինչ պետք է լիներ: Կարծում եմ՝ ձեր այցը մեկնակետ կծառայի, որպեսզի մենք, ինչպես ֆիզիկոսներն են ասում, եռապատիկ արագությամբ շարժվենք:

- *Մեր ավագ սերունդը՝ հայերը, դազախները, միմյանց նկատմամբ ջերմ զգացում ունեն: Սակայն երիտասարդ սերնդի մոտ դա սկսում է կորչել: Մեր կապերն արդեն այդ աստիճանի ինտենսիվ չեն, չեն համապատասխանում մեր հնարավորություններին: Ի՞նչ կասեք այս կապակցությամբ, ի՞նչ է հարկավոր անել:*

- Ես համաձայն եմ Ձեր դատողությունների հետ: Իրոք, դա այդպես է: Ես այդպիսի միտում նկատել եմ: Օրինակ՝ Մոսկվա կատարած վերջին այցի ժամանակ Ադրբեջանից տղաներ կային, Անդրկովկասյան մյուս հանրապետություններից, Միջին Ասիայից: Չէ՞ որ առաջ ռուսերենի միջոցով էինք շփվում: Նրանք սկսում են այդ լեզուն մոռանալ, եւ մեր շփումն ավելի բարդանում է: Բանն այն չէ, որ դա մի որոշակի էթնոսի լեզու է, ո՛չ: Դա ազգերի միջեւ շփման լեզու է, ուստի այն պետք է պահպանել: Եվ շատ ճիշտ է մեր պետության ղեկավարը՝ Նազարբաևը, երբ ասում է, որ առաջին հերթին հարկավոր է տիրապետել մայրենի լեզվին: Եթե մարդ ինքն իրեն չի հարգում, էլ ի՞նչ կարող է անել, ուրիշին ի՞նչ կարող է առաջարկել: Ժամանակակից մարդը պետք է ռուսաց լեզու էլ իմանա, քանի որ մենք այդտեղից ենք դուրս եկել, մանավանդ որ այսօր կա մշակութային տեսակետ, տնտեսական, քաղաքական: Այդ լեզուն իմանալը շահավետ է: Բացի այդ, հարկավոր է անգլերեն իմանալ:

Այսօր աշխարհը բացվել է մեզ համար: Ես հնարավորություն ունեմ (ճիշտ է՝ հազվադեպ) մեկնելու արտասահման: Իմ անգլերեն չիմանալը կամ շատ վատ իմանալն ինձ շատ է խանգարում: Մեր երիտասարդ սերունդը պետք է այս լեզուներն իմանա, քանի որ շփվել է հարկավոր:

Ես համարում եմ, որ պարտք եմ նրանց, ում հանդիպել եմ կյանքի ընթացքում: Օրինակ՝ Ձեզ էլ եմ պարտք, քանի որ Ձեզանից ինձ համար մի նոր բան իմացա: Երբեք չի կարելի ներփակվել սեփական շրջանակում: Աշխարհում միշտ պետք է ապրել տարածության մեջ՝ միեւնույն ժամանակ հարգելով մյուսի իրավունքը, քանի որ բացարձակ ազատություն չկա: Իմ ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է Ձեր ազատությունը: Այս առումով հարկավոր է խելամիտ փոխզիջում:

**«ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Է ԶԱՐԳԱՅՆԵԼ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԱՐԺԵՔՆԵՐԸ»**

**ԿԱՆԱՏ ՍԱԽԱՐԻՅԱՆՈՎ
«Խաբար» տեղեկատվական գործակալության
գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ
(24.06.2009)**

- Միշտ հաճելի է գործընկերների հետ հարցազրույց վարել: Նախ պատմեք, խնդրեմ, «Խաբար» գործակալության մասին. երբվանի՞ց է այն գործում, ի՞նչ առանձնահատկություններ ունի:

- «Խաբար»-ը ստեղծվել է դեռեա 1995թ.-ին ազգային-տեղեկատվական գործակալության բազայի վրա: Այս պահին ունենք երկու հանրապետական հեռուստաալիք եւ մեկ ազգային արբանյակային հեռուստաալիք: «Խաբար» հեռուստաալիքը տեղեկատվական-լրատվական ալիք է: Երկրորդն այսպես կոչված ազգային ալիքն է, որն այժմ հիմնական շեշտը դնում է երիտասարդ լսարանի վրա, սպորտի ու մշակույթի, երիտասարդության բարոյական արժեքների զարգացման վրա: Երրորդը՝ ազգային արբանյակային հեռուստաալիքը, «Կասպիոնեթ»-ն է, որը ընդգրկում է Եվրոպայի տարածքը, Մերձավոր Արեւելքը, Աֆրիկայի հյուսիսը: Ունենք նաեւ մեկ ռադիոալիք, որը ծածկում է Ղազախստանի ամենամեծ քաղաքը՝ Ալմաթին: Ահա այն չորս լրատվամիջոցները, որոնք մեզ են պատկանում:

- Հայաստանում կա հանրային հեռուստատեսություն, հանրային ռադիո, մնացածը մասնավոր են: Կուզենայինք հասկանալ Ղազախստանի լրատվամիջոցների կառուցվածքը: Ի՞նչ է «Խաբար»-ը իրավական իմաստով. այն բաժնետիրական ընկերություն է:

- Իրավական առումով այն բաժնետիրական ընկերություն է: Բաժնետոմսերի 100 տոկոսը պատկանում է պետական հոլդինգին, որը կառավարվում է պետության կողմից: Իհարկե, ողջ աշխարհի ԶԼՄ-ների փորձը ենթադրում է հանրային հեռուստատեսության, մասնավոր հեռուստատեսության, պետականի առկայությունը: Անշուշտ, մեզ մոտ մասնավոր հեռուստաընկերություններ էլ

կան, սակայն մեր աշխատանքում մենք, իհարկե, շեշտը դնում ենք հանրային հեռուստատեսության սկզբունքների վրա:

Մեր ծածկույթը բնակչության 98 տոկոսն է: Մեր հաղորդումներում մենք շեշտը դնում ենք բազմազանության վրա, որպեսզի բավարարվեն բոլորի հետաքրքրությունները ազգության առումով, եւ որպեսզի հետաքրքիր լինի եւ մեծահասակներին, եւ երեխաներին: Դե գիտեք, որ գոյություն ունի հանրային հեռուստատեսության վեց հիմնական սկզբունք, եւ մենք ձգտում ենք հավատարիմ մնալ դրանց: Միակ բանը, որով տարբերվում ենք հանրային հեռուստատեսությունից, դա այն է, որ հանրայինի համար վճարում է հասարակությունը արտոնագրային վճարների միջոցով: Իսկ մեր դեպքում մենք տարածում ենք այսպես կոչված ազգային-տեղեկատվական քաղաքականությունը, եւ պետությունը ներդրում է կատարում մեր բյուջեի մեծ մասում:

- Արեւմտյան չափանիշներով ընդունված է համարել, որ եթե հեռուստարձեկությունը պետական է, ուրեմն խոսքի ազատության հետ ոչ ամեն ինչ կլինի նորմալ: Դուք համաձայն եք այսպիսի թեզիսի հետ՝ աշխատելով այնպիսի գործակալությունում, ինչպիսին «Խաբար»-ն է:

- Իհարկե, խոսքի ազատության հարցը մեր հետխորհրդային տարածքի համար բավականին նոր երեւոյթ է, ժողովրդավարական հասարակության հիմնական ինստիտուտներից մեկը, եւ ամեն ոք կարող է այն ուրույն կերպով մեկնաբանել: Խոսքի ազատություն չի նշանակում պատասխանատվությունից ազատություն, ինչպես որոշ մարդիկ ենթադրում են, թե՛ ինչ ուզում, այն էլ անում են: Ասածդ ցանկացած խոսքի համար պետք է պատասխանատվություն կրես:

Իսկ ինչպե՞ս է մեզ մոտ՝ հեռուստատեսությունում իրականացվում խոսքի ազատությունը:

Մենք փորձում ենք խոսել ամեն ինչի մասին, փորձում ենք առավելագույնս հնարավորություն ընձեռել, որպեսզի տարբեր տեսակետներ արտահայտվեն: Իհարկե, քննադատություն լսում ենք արեւմտյան զարգացած ժողովրդավարությունների կողմից, թե մեզ մոտ խոսքի ազատություն չկա, սակայն սա նման է սիզամարգեր աճեցնելուն: Մի բան է սիզամարգը ջրել 15 տարի, մեկ այլ բան՝ շուրջ 200 տարի, ինչը կատարվում է արտասահմանում: Այնպես որ, կարծում են, որ մենք խոսքի ազատության

ժողովրդավարության զարգացման ուղու վրա ենք եւ ընթանում ենք ձիշտ ուղղությամբ:

- Այժմ ցանկանում եմ համեմատություն անցկացնել: Հայաստանում հետեյալ իրավիճակն է. հեռուստատեսության իր վրա է վերցնում ՉԼՄ-ների պատասխանատվության ամենամեծ մասը, քանի որ այն ավելի շատ են դիտում, քանի որ հեռուստատեսությունը, ինտերնետի, տպագիր նյութերի, ռադիոյի հետ համեմատած, ունի օգտվողների շատ մեծ շրջանակ: Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը Ղազախստանում: Կարելի՞ է ասել, որ այստեղ էլ է հեռուստատեսության եւ մյուս լրատվամիջոցների միջեւ ճեղքվածքն այդքան մեծ:

- Այո՛, եւ Ձեզ հետ համաձայն եմ: Մեզ մոտ էլ է նույն իրավիճակը: Ես միշտ հիշում եմ «Մոսկվան արցունքների չի հավատում» ֆիլմից մի արտահայտություն, որ «շուտով ոչինչ չի լինի, միայն համատարած հեռուստատեսություն»: Սկզբունքորեն, նման կանխատեսումները կարող են իրականանալ:

Եթե դիտարկենք միտումները, ապա առաջին տեղն է գալիս ինտերնետային միջոցը, սակայն այս պահին, իհարկե, հեռուստատեսությունն է զանգվածային լրատվության հիմնական միջոցը: ՉԼՄ-ները հասարակության վրա ներգործելու միջոց են, քանի որ ներառում են մարդկանց վրա ազդելու բոլոր միջոցները՝ տեսային, ձայնային, տպագիր: Թերթերը եւ ռադիոն նույնպես տեղեկատվություն տալու միջոցներից են: Սակայն ես կարծում եմ, որ հեռուստատեսությունն է տեղեկատվության ամենահիմնական աղբյուրը եւ հասարակական գիտակցության վրա ազդելու, այն կառավարելու ամենահիմնական միջոցը:

- Երբ առիթ է լինում շփվելու գործընկերների հետ, ես միշտ հետեյալ հարցն եմ տալիս: Հենց մեր աշխատանքի բերումով մեզ չի կարելի դիտել սեփական հեռուստաալիքը: Ա՛յ, երեկոյան տանը հանգստանում եք, ո՞ր ալիքը կմիացնեք:

- Դժվար հարց է: Ծուռով 10 տարի կլինի, ինչ աշխատում եմ հեռուստատեսությունում: Սկսել եմ նկատել, որ առաջինը, ինչ անում եմ հեռուստացույց միացնելուց հետո, անցնում եմ հերթով բոլոր ալիքներով՝ տեսնելու համար, թե որն ինչ է ցուցադրում «փրայմ թայմի» ժամանակ: Ինձ համար անհրաժեշտություն չկա նստել ու միայն իմ ալիքը դիտել, քանի որ առանց այդ էլ գիտեմ իմ եթերա-

ցանցը, գիտեմ բոլոր լրագրողներին, նրանց դիրքորոշումը: Երբեմն ուշադրությունս կենտրոնացնում եմ որոշ ծրագրերի վրա, որոնք առավել հետաքրքիր են: Իմ սիրելի ավիզները տեղեկատվական-վերլուծական ավիզներն են՝ «Եվրոնյուզ», «ԲիԲիՍի»: Դա այն է, ինչ ես իրոք միացնում ու նայում եմ:

- Ղազախստանում կա՞ն արդյոք վարկանշային հետազոտություններ, եւ դրանց հիման վրա եթերում ո՞ր տեղն է զբաղեցնում «Խաբար»-ը հեռուստադիտողների թվով:

- Ամեն ամիս մենք մեզ համար ներքին հաշվետվություն ենք կազմում, օգտվում ենք նաեւ անկախ մոնիթորինգի արդյունքներից, եւ մեզ մոտ բավականին օբյեկտիվ պատկեր է ձեւավորվում: Պետք է խոստովանեմ, որ «Խաբար» հեռուստաընկերության վարկանիշը չափազանց բարձր չէ, քանի որ, ինչպես արդեն ասացի, մեր եթերի հիմնական խնդիրը պետական տեղեկատվական քաղաքականության տարածումն է, այսինքն՝ մենք տարածում ենք պաշտոնական տեղեկատվություն այն տեսքով, ինչպես պետությունը ցանկանում է, որ ներկայացված լինի լրատվության տարածությունում:

Դուք՝ որպես արհեստավարժ, երեւի գիտեք, որ հեռուստադիտողի ուշադրությունը գրավելու համար կա չորս հիմնական թեմա՝ արյուն, փող, հարուստների ինտիմ կյանք եւ այլն: Եթե մենք այսպիսի բաներ ցուցադրենք, ապա մեր վարկանիշն ամենաբարձրը կլինի: Սակայն մենք նպատակ ենք հետապնդում զարգացնել մեր հասարակության բարոյական արժեքները, հայրենասիրությունը: Իհարկե պետք է խոստովանել, որ ոչ միշտ է դա հետաքրքիր, քանի որ չափազանց ծանր է այն մատուցելը: Իրականում պետք է հանձարեղ ստեղծագործող լինել հետաքրքրություն կլանող հաղորդում պատրաստելու համար: Բայց մենք ձգտում ենք, որ այդ ամենը լինի:

Ասեմ, որ մեր վարկանիշն այնքան էլ բարձր չէ. մեջտեղում ինչ-որ տեղ ենք: Առաջին տեղում, իհարկե, այն հեռուստաալիքներն են, որոնք ժամանցային հաղորդումներ, գեղարվեստական ֆիլմեր են ցուցադրում, ինչը մեզ մոտ առաջնային, այսպես ասած «փրայմ» չէ: Մեր հեռուստաալիքներն իրենց լսարանն ունեն, ինչն իրոք ուրախացնում է: Օրինակ՝ «Խաբար» հեռուստաալիքը տղամարդկանց ալիք է համարվում: Այստեղ հիմնականում լուրեր են, վերլուծական հաղորդումներ, ուստի մեր լսարանի մեծամասնությունն են կազմում միջինից բարձր տարիքի տղամարդիկ:

Եթե վերցնենք մեր երկրորդ ալիքը, ապա վերջերս ենք թարմացրել դրա եթերացանցը, որն արդեն միտված է դեպի երիտասարդ լսարանը: Մինչ այդ այն ավելի շատ մշակութային ալիք էր, եւ դրա լսարանի մեծամասնությունը միջինից բարձր տարիքի կանայք էին կազմում: Այժմ մենք հուսով ենք, որ այս ալիքն ավելի շատ երիտասարդների կգրավի:

«Կասպիոնեթ»-ի մոնիթորինգը բավականին բարդ է, քանի որ այն այժմ ծածկում է Եվրոպան, իսկ այնտեղ այդպիսի հետազոտություն պատվիրելը շատ թանկ է: Հաշվի առնելով ներկա ֆինանսական ճգնաժամը, առայժմ չենք կարող դա մեզ թոյլ տալ:

- Ասացիք, որ ձեր ալիքը պաշտոնական տեղեկատվություն է տարածում: Իսկ «Խաբար»-ի աշխատակազմի համար կա՞ արդյոք երեակայության համար ազատություն, կարո՞ղ են նրանք ինչ-որ նորոյթ մտցնել, թե՞ այստեղ էլ հստակ սահմանազծեր կան:

- Հասկանում եմ հարցի էությունը: Կարելի է այնպես մտածել, որ եթե պետական ալիք է, ուրեմն տրվում է միայն պետության տեսակետն այն տեսքով, ինչպես նա է ցանկանում: Իհարկե, մենք ունենք տեղեկատվական առիթներ, որոնք անպայման պետք է լուսաբանենք, օրինակ՝ դա նախագահի գործունեությունն է, կառավարության, խորհրդարանի, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը: Մենք դա պետք է լուսաբանենք, որպեսզի բնակչությունն իմանա, թե ինչպես եւ ինչով է ապրում Ղազախստանը: Բայց, իհարկե, մենք լրագրողին չենք ասում, թե պետք է ասես սա, սա, սա, չենք ստիպում: Դա արդեն լրագրողի արհեստավարժությունից է գալիս:

Այստեղ հարկ է նշել, որ շատ դժվար է նորություններ պատրաստել կառավարության, խորհրդարանի մասին, եւ այնպես պատրաստել, որ հետաքրքիր լինի հեռուստադիտողի համար: Ավելի հետաքրքիր է իմանալը, թե այսօր ինչ էր անում ինչ-որ մի կինոաստղ: Գյուլատնտեսության զարգացման, ողջ Ղազախստանի վերաբերյալ հետաքրքիր լուր պատրաստելը բավականին բարձր արհեստավարժություն է պահանջում: Եվ ես պետք է նշեմ, որ մենք այդ լուրերը բավականին հետաքրքիր ենք մատուցում: Դրա վկայությունն այն է, որ մեր վարկանիշը հենց լուրերի ժամանակ է շատ բարձր:

Ինչ վերաբերում է աշխատակազմի ձեւավորմանը, ապա մեզ մոտ լրատվային շուկան, փառք Աստծո, բավականին զար-

զացած է: Ի դեպ, լրագրողները մեզ մոտ մնում են գաղափարական նկատառումներով, այսինքն՝ նրանք համաձայն են պետության կողմից անցկացվող քաղաքականության հետ, նրանք հասկանում են իրենց կողմից լուսաբանվող թեմաների կարեւորությունը եւ փորձում դրանք այդ ձեւով մատուցել: Իհարկե կան մարդիկ, ովքեր այլ տեսակետ ունեն, եւ նրանք իրավունք ունեն այլ դիրքորոշում ունեցող լրատվամիջոց գնալ, որն ավելի մոտ է իր ներքին համոզմունքներին:

- **Նշեցիք տեղեկատվական առիթների մասին: 2010թ.-ին Ղազախստանը դառնում է ԵԱՀԿ նախագահող երկիր: «Խաբար»-ը դրան ինչ-որ ձեւով նախապատրաստվո՞ւմ է:**

- Այո՛, իհարկե նախապատրաստվում է: Դա մեծ պատիվ է Ղազախստանի համար, նախագահ լինել այնպիսի խոշոր, հեղինակավոր կազմակերպության, ինչպիսին ԵԱՀԿ-ն է:

Նշեմ, որ Ղազախստանում նոր ծրագիր է ընդունվել՝ «Ճանապարհի դեպի Եվրոպա», որը տարբեր ոլորտներ է ներառում: Մենք մեզ ներգրավված ենք համարում այդ գործընթացում եւ պետք է բնակչությանը տեղեկացնենք այդ մասին: Սա՛ մեկ:

Երկրորդը՝ տեղեկացնել Եվրոպայի բնակչությանը, որոնք այդ կազմակերպության անդամ են: Օրինակ՝ օրերս եմ վերադարձել Եվրոպա գործուղումից, որտեղ բանակցություններ էի վարում կաբելային ու արբանյակային օպերատորների հետ՝ մեր «Կասպիոնեթ» հեռուստաալիքը Եվրոպական կաբելային ցանցերում հեռարձակելու համար: Կարծում եմ՝ կգանք այն արդյունքին, որ հիմնական կաբելային եւ արբանյակային ցանցերը կհեռարձակեն մեր ալիքը: Տեսնենք՝ գոնե մեկ տարով, քանի որ Եվրոպացիների նախընտրությունները կարող են տարբեր լինել: Համենայն դեպս, կաշխատենք, որ Եվրոպացիները՝ ԵԱՀԿ անդամները, կարողանան Ղազախստանի մասին իմանալ սկզբնաղբյուրից՝ ղազախական հեռուստատեսությունից:

Ասեմ, որ այդ բանակցային գործընթացը բավականին բարդ էր: Դե, գիտեք, այդ զարգացած ժողովրդավարությունների մոտեցումը լրատվական գործերին մի փոքր այլ է, առաջին հերթին, դա պետք է հետաքրքիր լինի լսարանի համար: Եթե հետաքրքիր չեղավ, մեր ալիքը չեն ընդունի:

Բացի այդ, տուժում ենք նաեւ այն պատճառով, որ, օրինակ, ըստ մեր օրենսդրության, պետական լեզվով պետք է հեռարձա-

կենք եթերաժամի կեսից ոչ քիչ: Ստացվում է 50 տոկոս ղազախերեն, 50 տոկոս՝ անգլերեն: Հասկանալի է, որ եվրոպացին ղազախերեն չգիտի, հետեաբար եթերաժամի 50 տոկոսն ուղղակի դուրս է մնում, կորչում է: Եթե հնարավոր լիներ մեր եթերաժամի 100 տոկոսը անգլերեն դարձնել, ապա արտասահմանյան բնակչությանը տեղեկացնելու մեր հնարավորություններն ավելի բարձր կլինեին:

- «Խաբար»-ի տեղեկատվական քաղաքականության մեջ ի՞նչ տեղ է զբաղեցնում արտաքին աշխարհը: Ինչքանով է դա հետաքրքրում հեռուստադիտողին, եւ դրան ինչքան ժամանակ ու միջոց է հատկացվում տոկոսային հարաբերակցությամբ:

- Եթե խոսենք տեղեկատվական բլոկների մասին, այն մասին, թե ինչպես ենք մենք մեր բնակչությանը տեղեկացնում միջազգային իրադարձությունների մասին, ապա արտասահմանից մենք բավականաչափ տեղեկատվություն ունենք: Մենք պայմանավորվածություններ ունենք հինգ խոշորագույն տեղեկատվական գործակալությունների, օրինակ՝ «Ռոյթերս»-ի հետ: Բացի այդ, մեր սեփական թղթակիցներն ունենք արտասահմանում, որոնցից տեղեկատվություն ենք ստանում: «ԻՏԱՌ-ՏԱՍՍ»-ից ենք մեծ քանակությամբ տեղեկատվություն ստանում, ինչպես տեսանյութեր, այնպես էլ՝ տեքստային: Եթե խոսենք ընդհանուր բլոկում արտասահմանյան լուրերի բաժնեմասի մասին, ապա դա 35 տոկոսի կարգի է:

Այժմ մի նախագիծ է մշակման փուլում: Հիշո՞ւմ եք, խորհրդային ժամանակ մի հաղորդում կար՝ «Միջազգային համայնապատկեր»: Դրա նման մի ծրագիր ենք մտադիր ստեղծել: Ի դեպ, մեր բնակչությունը հետաքրքրվում է միջազգային լուրերով: Մեր նպատակն է նրանց ավելի շատ տեղեկություն հաղորդելը, ինչը կուժեղացնի նրանց կապն արտաքին աշխարհի հետ: Չպետք է փակվել արտաքին աշխարհից:

- Մեր հեռուստահաղորդումը կոչվում է «Հայացք աշխարհին», որի կարգախոսն է՝ «Նայե՛ք աշխարհին մեր աչքերով»: Ինչպիսի՞ն է աշխարհը «Խաբար»-ի մեր գործընկերոջ աչքերով:

- Մեկ-մեկ այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե մենք մի մեծ գյուղում ենք ապրում: Այսօր աշխարհի մի ծայրում ապրող գործընկերոջդ ես նամակ գրում ինտերնետի միջոցով,

վաղը՝ մյուսին, օղանավակայանում՝ երրորդին: Այսինքն՝ տեղեկատվական տեխնոլոգիաներն այն աստիճանին են հասել, որ աշխարհը շատ է նեղացել, դարձել լուցկու տուփի չափ, որի մեջ ամեն բան տեղավորվում է: Մի կողմից դա լավ է, քանի որ մեր ժողովուրդներին իրար է մոտեցնում, մյուս կողմից մենք միշտ պետք է հիշենք ինքնատիպ մշակույթի մասին: Հարկավոր է զարգանալ՝ հաշվի առնելով ազգային շահերը:

Հայացք աշխարհին... Կարծում եմ՝ մեզ դեռ շատ հետաքրքիր բաներ են սպասում ապագայում: Իսկ ամենահետաքրքիրն իհարկե այն է, թե ինչպես դուրս կգանք այս ֆինանսական ճգնաժամից:

«ՂԱԶԱԽՍՏԱՆԸ ՄԻՇՏ ՓՈԽԱՌՆՈՒՄ Է ԱՄԵՆԱԿԱՎԸ»

ԼԱՐԻՍԱ ԲՐՈՎԱՏՍԱՅԱ Ղազախստանի Մշակույթի նախարարության Տեղեկատվության և արխիվների կոմիտեի նախագահ (25.06.2009)

- *Պատմեցեք, խնդրեմ, որո՞նք են Տեղեկատվության և արխիվների կոմիտեի գործառույթները: Այս կոմիտեում ինչպե՞ս են միմյանց հետ կապվում տեղեկատվությունը և արխիվը:*

- Կոմիտեի կառուցվածքում կա չորս վարչություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր գործառույթները: Լիցենզավորման վարչությունը զբաղվում է ՁԼՄ-ների լիցենզավորման և նրանց հաշվառման մեջ դնելու ընթացակարգով: Հրատարակչության վարչությունը վերահսկում է գրքերի հրատարակման հարցերը: Մեզ մոտ ձեռավորվում է գրականության սոցիալապես կարեւոր տեսակների պետական պատվեր և կատարվում է հրատարակչությունների գործունեության մոնիթորինգ:

Հաջորդը ՁԼՄ-ների վարչությունն է: Դա այն է, ինչ գտնվում է ամենաառաջավոր կետում: Երեւի թե նրա աշխատանքն է ամենաթեժը՝ հարաբերություններ ՁԼՄ-ների հետ, տեղեկատվական

պատվերի ձեռավորում, ինչպես նաև վերահսկողություն կատարման նկատմամբ:

Մյուսը Ֆինանսական վերահսկողության եւ պետական գնումների վարչությունն է: Այն պետական գնումներ է կատարում տեղեկատվական պատվերի իրականացման ժամանակ:

Հարցնում եք՝ իսկ ինչո՞ւ են տեղեկատվությունն ու արխիվը համատեղ: Մեզ մոտ շատ հստակ զատված են այդ գործառնություններն այն պատճառով, որ հրատարակչություններում գրքերի մեծ զանգված կա, եւ մեր ենթակայության տակ շատ գրադարաններ կան, ուստի արխիվներն էլ են մեր Կոմիտեի կազմում գտնվում:

Կոմիտեի գործառնությունները հետեւյալն են՝ մեթոդական օգնության ապահովում, զանազան արխիվային տեղեկանքների տրամադրում, այսինքն՝ այն ամենը, ինչ վերաբերում է արխիվային գործին: Մեր փորձն իրոք շատերին է հետաքրքրում: Մեր յուրաքանչյուր վարչություն ինքնուրույն է: Մենք վերահսկում ենք միջգերատեսչական կազմակերպությունները: Այն շատ կանոնակարգված համակարգ է եւ առավելագույնս թափանցիկ է: Բոլոր պետական ծառայությունների մասին տեղեկություն կա մեր կայքում, այսինքն՝ կոռուպցիայի նորմերը նվազագույնի են հասցված:

Եթե որեւէ մեկը ցանկանում է ինչ-որ արխիվային տեղեկություն ստանալ, նա գիտի, թե դրա համար ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ, եւ ոչ ոք իրավունք չունի ավել բան պահանջելու, այսինքն՝ առավելագույն թափանցիկություն, քաղաքացիների առավելագույն տեղեկացվածություն:

- Մեզ հետաքրքրում է երկու վարչություն՝ ՁԼՄ-ների եւ Լիցենզավորման: Ի՞նչ է հարկավոր լիցենզավորման համար:

- Մենք միայն հեռուստաալիքների լիցենզավորում ենք կատարում, իսկ տպագիր մամուլը ստանում է գրանցման վկայական: Այս ամենը գրված է «ՁԼՄ-ների մասին» օրենքում, ինչպես նաև այն, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ դրա համար, ով իրավունք ունի իրականացնելու այդ գործունեությունը եւ այլն, այսինքն՝ նորից ամեն բան լրիվ բաց է: «ՁԼՄ-ների մասին» օրենքում վերջին փոփոխության շնորհիվ այն ավելի է «իբերալացել»:

Ինչ վերաբերում է լիցենզավորմանը, այժմ հարկավոր չէ հեռարձակման համար թույլատվություն ստանալ, ինչպես առաջ էր: Բավական է միայն հանձնել փաստաթղթերը: Եթե ամեն բան կարգին է, եթե ձեր ընկերության գործունեությունը չի հակասում օրենսդրությանը, դուք արտոնագիր ստանալու իրավունք ունեք:

Փաստորեն, գործընթացն առավելագույնս «լիբերալացված» է, որպեսզի ցանկացած քաղաքացի, եթե ցանկանում է այդ ոլոր-

տում աշխատել, կարողանա դա անել առանց որեւէ վարչական արգելքի: Ամեն ինչ հանգում է նրան, որ նվազագույնի հասցվի պետության միջամտությունը ՁԼՄ-ների աշխատանքում, քանի որ մեր սահմանադրությամբ գրաքննությունն արգելված է: Եվ ներկայումս միջամտությունն իրոք նվազագույն է, եթե լրատվամիջոցները չեն խախտում օրենսդրությունը:

Կան հոդվածներ պետական լեզվով, ռուսերեն լեզվով հեռարձակման տոկոսային հարաբերակցության, ավտոհոլային արտադրանքի գովազդի արգելման մասին: Մոնիթորինգ է անցկացվում էլեկտրոնային ՁԼՄ-ների, ռադիոյի, հեռուստատեսության բովանդակության վերաբերյալ, եւ եթե խախտումներ կան, ապա համապատասխան որոշում է կայացվում: Դա Մշակույթի նախարարությունը չի որոշում: Մենք միայն մոնիթորինգ ենք իրականացնում, իսկ որոշում կայացնում են տեղական գործադիր իշխանությունները, իսկ այնուհետեւ գործը հանձնվում է դատարան: Նորից ամեն բան առավելագույնս թափանցիկ է, այսինքն՝ մենք բոլորին տրամադրում ենք մոնիթորինգի տվյալները: Այդ ամենը ֆիքսվում է, այսինքն՝ դա հսկայական բազա է, որպեսզի յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է ստուգել, թե ինչքանով է այդ մոնիթորինգը համապատասխանում իրականությանը, կարող է տեսնել եւ անձամբ համոզվել՝ ինքը օրենքը խախտել է, թե ոչ:

- Կարծիք կա, թե մոնիթորինգը բավականին մեծ միջոցներ ու ռեսուրսներ է պահանջում, քանի որ բոլոր ալիքների մոնիթորինգը բավականին ծանր գործ է: Դուք հասցնո՞ւմ եք կատարել այդ ամբողջ աշխատանքը:

- Դա մեր նախարարության հիմնական գործառնություններից մեկն է՝ հսկողություն իրականացնել ՁԼՄ-ների գործունեության, օրենսդրության պահպանման նկատմամբ: Անհրաժեշտ է օրենքը պահպանել: Մենք մի այնպիսի երկրում ենք ապրում, որի քաղաքացիները պետք է ենթարկվեն նրա օրենքներին, մասնավորապես դա վերաբերում է պետական լեզվով հեռարձակմանը: Գիտեք, որ այսօր բարձրացվում է պետական լեզվի դերը, ուստի շատ կարեւոր է այդպիսի մոնիթորինգ անցկացնելը: Յուրաքանչյուր հեռուստաալիքի մոտ պետք է հպարտության, ինքնագիտակցության զգացում լինի իր երկրի, իր լեզվի նկատմամբ: Ուստի կարծում եմ, որ դա ֆինանսական ծախսերից ավելի կարեւոր է:

- Այդ մոնիթորինգի արդյունքների հիման վրա պատրաստվո՞ւմ է արդյոք ամսական կամ տարեկան հաշվետվություն՝ հասկանալու համար, թե ինչքանով հասարակության մոտ պահանջարկ ունի այս կամ այն հեռուստաալիքը:

- Մենք պատրաստում ենք ամսական հաշվետվություն: Եթե ինչ-որ խախտումներ են հայտնաբերվում, ապա նախ, ըստ օրենքի, գրավոր ծանուցվում է ընկերությունը, այնուհետև փոխանցվում է տեղական գործադիր մարմիններին, արդեն նրանք են քննության առնում:

Իսկ մեծ, տարեկան հաշվետվության նման բան չկա: Մեր նպատակը մի փոքր այլ է: Մեր նպատակն է տեսնել, թե ինչքանով է պահպանվում օրենքը: Մենք ամսական հաշվետվություն ենք կազմում, իսկ հետո դրանք հավաքում ենք տարեկանի մեջ ու նայում ենք: Եթե ՀԼՄ-ն շարունակում է խախտել օրենքը, ապա արդեն այլ միջոցներ են ձեռնարկվում:

- Իսկ հետազոտական կենտրոնները, համալսարանները կարո՞ղ են ձեզանից արխիվային նյութեր պահանջել տարբեր հետազոտությունների համար:

- Իհարկե, անկասկած: Մանավանդ, ինչ վերաբերում է այն ուսումնական հաստատություններին, որոնք պատրաստում են պրոֆիլային մասնագետներ՝ լրագրողներ, լեզվաբաններ, նրանց, բացի խորհրդատվությունից, հատկացվում է նաև մեթոդական օգնություն: Բոլոր արխիվային նյութերը տրամադրում ենք, քանի որ դա զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է, որպեսզի բարձրացվի լրագրության, լրատվամիջոցների մակարդակը մեր երկրում:

- Ինչպե՞ս են կանոնակարգվում հարաբերությունները Կոմիտեի եւ ՀԼՄ-ների միջև:

- Մինչեւ 1991թ.-ը մեզ մոտ կար 10 պետական տպագիր հրատարակություն, եթեր էր դուրս գալիս 21 հեռուստառադիոալիք: Եվ ահա 19 տարի անց երկրում գործում է 2940 միավոր ՀԼՄ, այսինքն՝ գործնականում 100 անգամ ավելացել է ՀԼՄ-ների թիվը: 218 հրատարակչությունների սեփականատեր են հանդիսանում հասարակական միավորումները եւ ոչ կառավարական կազմակերպությունները, 43 հրատարակչություններինը՝ կրոնական միավորումները, 34-ինը՝ ազգային մշակութային կենտրոնները: ՀԼՄ-ների ընդհանուր զանգվածի 79%-ը ոչ պետական է, այսինքն՝ պետական ՀԼՄ-ների բաժնեմասը Ղազախստանի մեդիա-շուկայում 21% է: Գերակշիռ մեծամասնությունը, այսինքն՝ 91%-ը, թերթեր ու ամսագրեր են, 8,5%-ը՝ էլեկտրոնային ՀԼՄ-ներ, իսկ 0,5%-ը՝ տեղեկատվական գործակալություններ:

Ինչպես գիտեք, մեր պետությունը մեծ ուշադրություն է հատկացնում հանդուրժողականության, ազգերի միջեւ համաձայնության ամրապնդմանը, ուստի մեծ աջակցություն է ցուցաբերվում ազգային-մշակութային կենտրոնների թերթերին, որոնք հրատա-

րակվում են մեր երկրում ապրող էթնոսների լեզուներով: Սա էլ է շատ կարեւոր պահ:

Եթե մինչեւ 1992թ.-ը պետությունը գործնականում ֆինանսավորում էր ՁԼՄ-ները, ապա 1996թ.-ից հետո ավարտվեց ապապետականացման, հրատարակչությունները, ՁԼՄ-ները մրցակցային միջավայր փոխանցելու փուլը:

Այսօր Ղազախստանում գործում է տեղեկատվական պետական պատվերի ձեւավորման սկզբունքը, որին մասնակցում են բացարձակապես բոլոր ՁԼՄ-ները՝ եւ մասնավոր, եւ պետական:

Այսպիսով՝ նախ ներկա է սպորտային մրցակցությունը, պետությունը խթանում է մրցակցության բարձրացումը: Ստացվում է այնպես, որ ով ավելի որակով է լուսաբանում այդ քաղաքականությունը, նա էլ համապատասխանաբար պետական պատվեր է ստանում:

Այսօր պետպատվեր են իրականացնում 153 ՁԼՄ-ներ: Ընթացիկ տարում ֆինանսավորման ծավալը կազմել է 16 մլրդ թենգե: Դա շատ մեծ գումար է: Մեզ մոտ նշանակություն չունի՝ լրատվամիջոցը պետական է, թե մասնավոր՝ «Պետական գնումներ մասին» օրենքին համապատասխան:

Այժմ սկսվել է նաեւ էլեկտրոնային պետական գնում, այսինքն՝ նորից գործընթացի թափանցիկությունն ապահովվում է: Մասնակիցները գրանցվում են կայքում: Մենք մրցույթի ենք հրավիրում բոլոր մասնակիցներին: Նրանց ներկայությամբ բացվում են ծրարները, կատարվում է գրանցում: Մենք ձգտում ենք, որպեսզի մեր գործունեությունը հասկանալի, մատչելի լինի յուրաքանչյուր քաղաքացու համար, որը կարողանա ստուգել կամ ցանկացած տեղեկություն ստանալ:

- **Իսկ ի՞նչ է նշանակում այդ պետական պատվերը:**

- Տեղեկատվական պետպատվերի ձեւավորման ժամանակ հիմք են ընդունվում մեր երկրի հիմնարար փաստաթղթերը՝ Սահմանադրությունը, 23 ռազմավարությունը, կառավարության ծրագիրը, նախարարությունների եւ գերատեսչությունների բնագավառային ծրագրերը:

Այժմ կա 87 թեմատիկ ուղղություն՝ հասարակությանը տեղ հասցնելու, տեղեկացնելու համար: Առավել կարեւոր են սոցիալական, հոգեւոր ուղղությունները, այնուհետեւ բժշկության, կրթության զարգացումը, այսինքն՝ այն, ինչ սկզբունքորեն անում է մեր կառավարությունը, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իմանա այդ մասին:

Ահա սա է կառավարության ամենաշատ պահանջարկ վայելող գործունեությունը, որն ուղղված է քաղաքացիների բարեկե-

ցությունը բարձրացնելուն, որպեսզի ղազախստանցիները հնարավորություն ունենան իմանալ իրենց իրավունքների մասին, թե ինչ օգնություն կարող են ստանալ պետությունից, թե պետությունն ինչ է անում այս կամ այն ուղղությամբ: Դրանից էլ ձեռավորվում է պետական տեղեկատվական պատվերը:

- Այդ պատվերում ներկայացված է արտաքին աշխարհը եւ ինչքանով է ներկայացված:

- Դուք նկատի ունեք արտասահմանյա՞ն ՁԼՄ-ները: Ես արդեն ասացի, որ բաց մրցույթ է, որին բոլորն իրավունք ունեն մասնակցելու: Մենք չենք կարող որեւէ մեկին ստիպել:

- Նկատի ունեմ պատվերի բովանդակային մասը: Կա՞ն արդյոք սոցիալական հարցեր, սահմանադրության հարցեր, քաղաքացիներին իրենց իրավունքները բացատրելու հարցեր: Իսկ կա՞ արդյոք արտասահմանում տեղի ունեցող գործընթացների լուսաբանում:

- Ես իզուր չե, որ նշեցի «2030 ռազմավարություն» փաստաթղթի մասին, որը տեղեկատվական պատվերի հիմնարար փաստաթուղթն է: Այդ տեղեկատվական պատվերի մեծ մասը վերաբերում է մեր պետության արտաքին քաղաքականության մասին տեղեկացնելուն:

Գիտեք, որ Ղազախստանը շատ նախաձեռնություններ է անցկացնում, այն շատ յուրահատուկ է իր բազմաբեւեռ կազմով, ավելի ճիշտ՝ բազմազգությամբ, բազմակրոնությամբ: Ղազախստանը հպարտանալու բան ունի, ուստի, անկասկած, արտաքին քաղաքականությունը ներքին քաղաքական գործընթացների հետ միասին ներառված է տեղեկատվական պետպատվերի մեջ:

- Իսկ որտե՞ղ է մշակվում այդ պետպատվերը: Համագործակցություն կա՞ արդյոք բնագավառային հիմնարկների հետ: Օրինակ, եթե հարցը վերաբերում է գյուղատնտեսությանը, դա համատե՞ղ է արվում, թե՞ Կոմիտեն առանձին գործառույթ է իրականացնում:

- Անկասկած, ամեն բան ձեռավորվում է համապատասխան պետական մարմինների հետ համատեղ: Կոմիտեն՝ որպես լիազոր մարմին, իրականացնում է այդ պետպատվերի ձեռավորումը, դրա տեղադրումը եւ վերահսկողությունը, որպեսզի այն, թե ինչքան գումար է ծախսվել, ենթադրենք, թերթի վրա, իր աշխատանքով հատուցի այդ գումարը: Չէ որ դրանք հարկատուների փողերն են:

Իսկ ինչ վերաբերում է բնագավառային ծրագրերին, ապա ամեն բան համաձայնեցվում է պետական մարմինների հետ:

Օրինակ՝ այդ նույն գյուղնախարարությունը: Այն իր վերլուծական հետազոտություններն է անցկացնում, ավելի լավ գիտի, թե ինչի մասին պետք է տեղեկացնել բնակչությանը: Բոլոր նախարարություններն իրենց առաջարկներն են անում, եւ դեռ այդպիսի բան չի եղել, որ մենք չպաշտպանենք դրանք:


- **Ի՞նչ միջազգային կապեր ունի Կոմիտեն: Կա՞ն արդյոք համագործակցության ծրագրեր այլ երկրների նմանատիպ կառույցների հետ:**

- Դժվար է այս հարցին պատասխանելը, քանի որ համագործակցության մասին բոլոր պայմանագրերը կնքվում են Ղազախստանի Մշակույթի նախարարության եւ այլ պետության համապատասխան նախարարության միջեւ: Եվ մենք այդպիսի շատ փաստաթղթեր ունենք: Մեր Կոմիտեն իրականացնում է հենց տեղեկատվական նյութերի փոխանակություն: Վերջին անգամ դա Արաբական Էմիրությունների, Եգիպտոսի հետ էր, այսինքն՝ մենք նյութեր ենք փոխանակում Ղազախստանի, մեր երկրի մշակութային ժառանգության, գիտական մշակումների մասին:

Այնուհետեւ, երբ մեզ տեղեկություն է փոխանցվում, մենք դա տրամադրում ենք ՁԼՄ-ներին, որպեսզի նրանք լուսաբանեն այս կամ այն երկրի գործունեությունը այդ պայմանագրի շրջանակներում: Մենք առավելագույնս լուսաբանում ենք բոլոր բարեկամ երկրների գործունեությունը:


Մեր թերթերում կարելի է այնպիսի յուրահատուկ նյութերի հանդիպել, որ նույնիսկ դեսպաններն են զարմանում, թե Ղազախստանն ինչ մեծ ուշադրություն է հատկացնում այլ երկրների մշակույթին: Դա մեզ համար շատ կարեւոր է, եւ ոչ միայն այն պատճառով, որ բարեկամ երկիր է, եւ ցանկանում ենք նրա մասին գրել: Մենք հսկայական փորձ ունենք: Ղազախստանը միշտ փոխառնում է ամենալավը:

Ես մեծ հպարտությամբ եմ ասում այն մասին, որ մեծ առաջընթաց է գրանցվել ՁԼՄ-ների ոլորտում: Չնայած տնտեսական ճգնաժամին՝ ոչ մի մշակութային ծրագիր չի փակվել:



ԳԼՈՒԽ 6

ՀԱՅԵՐԸ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ



Հայկական պատմագրությունը շատ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Ղազախստանի տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների ու ցեղերի վերաբերյալ: Հայ պատմիչները բազմաթիվ տեղեկություններ են տալիս Հայաստանից արեւելք ընկած զանազան երկրների ու ժողովուրդների մասին: Անանիա Շիրակացու «Աշխարհագրության» նյութերի հիման վրա վերակազմված քարտեզը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ Կենտրոնական Ասիայի միակ քարտեզն է, որը կազմված է 2-9 դդ. միջեւ ընկած ժամանակահատվածում:

Հայ վաճառականները հասել են մինչեւ Հնդկաստան ու Չինաստան տարբեր ճանապարհներով: Ճանապարհներից մեկն էլ անցնում էր ներկայիս Ղազախստանի տարածքով:

Միջին դարերում սիրիացի նեսթորականները միսիոներական, առեւտրային եւ դիվանագիտական ակտիվ գործունեություն են ծավալում Միջին Ասիա, Մոնղոլիա եւ Չինաստան տանող առեւտրային ճանապարհների երկայնքով: Հետաքրքիր վկայություններ կան հայ հոգեւորականության ներկայացուցիչների մասին, որոնք սիրիացի նեսթորականների հետ իրենց գործունեությունն էին ծավալում: Նրանք են մեծ դեր խաղացել հայկական Կիլիկյան պետության պետական գործիչների այցը մեծ մոնղոլական խաների մայրաքաղաք կազմակերպելու գործում:

Արխիվային նյութերի համաձայն Ղազախստանի հարավային շրջաններում, ինչպես նաեւ Միջին Ասիայի ողջ տարածքում հայկական գաղութների ձեւավորումն ուղեկցվում էր Թուրքեստանը բնակեցնող ժողովուրդների հետ հայերի մերձեցմամբ:

Ղազախստանի հայկական համայնքը ձեւավորվել ու ստվարացել է 19դ. երկրորդ կեսին, երբ Ռուսաստանն իր գերիշխանությունն էր տարածում Կենտրոնական Ասիայում: Ղազախստանի տարածքում առաջին հայկական բնակավայրերը հայտնվել են 1867թ. Թուրքեստանյան գեներալ-նահանգապետության կազմավորումից հետո: Այդ ժամանակաշրջանում այստեղ են հաստատվում հայ արհեստավորներ, բանվորներ եւ առեւտրականներ Թուրքմենստանից, Ղարաբաղից, Նախիջեանից եւ Հայաստանի այլ շրջաններից:

Պատմական տեղեկությունների համաձայն՝ արդեն 1890թ. Թուրքեստանի Անդրկասպյան երկրամասում բնակվում էր 2893 հայ եւ 4815 ռուս, իսկ 1894թ. հայերի թիվն արդեն 3438 էր, ռուսներինը՝ 9082:

Դեռ 19դ. սկզբին հայերը ամուր դիրք էին գրավում Կասպից ծովի արեւելյան ափին գտնվող առետրային ֆակտորիաներում: Երանք նկատելի դեր էին խաղում ազգերի միջեւ հարաբերությունների զարգացման գործում: Քանի որ լավ գիտեին ղվիչադների լեզուն, հայերը շատ հաճախ ծառայում էին որպես թարգմանիչ, միջնորդ, խորհրդատու՝ օգնելով օտարերկրացիներին դազախ բնակչության հետ շփվելու գործում: Հայ վաճառականները, արհեստավորները ռուսների հետ միասին կազմում են Գուրյե (այժմ՝ Ատիրաու) եւ Ֆորտ Շեյշենկո (այժմ՝ Ակտաու) քաղաքների ժողովրդագրական հիմքը:

Չնայած իրենց բաժին ընկած դժբախտություններին ու տառապանքներին՝ Թուրքեստան եկած հայերն ամեն գնով փորձում էին ոչ միայն պահպանել եւ զարգացնել իրենց ազգային մշակույթը, այլեւ օգնել տեղի ժողովուրդներին զարգացնել սեփական մշակույթը: 1900թ. Ազնիվ եւ Անդրանիկ Սողոմոնյանները թատերական խումբ են ստեղծում եւ հյուրախաղերով հանդես գալիս ողջ Միջին Ասիայում: Թամարա Պետրոսյանը՝ հռչակավոր Թամարա Խանումը, երկար տարիներ ղեկավարել է Ուզբեկական ազգային պարային խումբը: Կոմպոզիտոր Ս.Բալասանյանը Տաջիկստանում հիմնում է առաջին երաժշտական թատրոնը: Ռեժիսոր Համո Բեկնազարյանը կարեւոր դեր է խաղացել տարածաշրջանի կինոարդյունաբերության ստեղծման գործում: Եւ Միջին Ասիայում առաջին՝ Տաշքենդի կինոստուդիայի հիմնադիրներից մեկն էր:

20դ. առաջին կեսին հայ միգրանտների հոսքը Միջին Ասիա կտրուկ աճում է 1-ին համաշխարհային պատերազմի, Արեւմտյան Հայաստանում Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության եւ Արեւելյան Հայաստանում անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմանների, ինչպես նաեւ ստալինյան ռեպրեսիաների պատճառով:

Խորհրդային ժամանակաշրջանում հայերը բնակություն են հաստատում արդյունաբերական կենտրոններ Չիքմենդում, Կարագանդայում, Կուստանայում, Պավլոդարում, Ալմա-Աթայում: Ղազախստանում հայերի թիվն ավելացել է 1937-49թթ.՝ ի հաշիվ Հայաստանից, Վրաստանից, Ղրիմից եւ Խորհրդային Միության այլ վայրերից այստեղ աքսորված հազարավոր հայ ընտանիքների:

Միայն 1937թ. վերջին 1121 հայկական եւ քրդական ընտանիքներ են տեղափոխվել Ղազախստան Հայաստանից եւ Անդր-

կովկասյան մյուս հանրապետություններից: Արդեն Հայրենական մեծ պատերազմից հետո հարյուրավոր հայեր են տեղափոխվում Ղազախստան, երբ խորհրդային կառավարությունը հայտարարում է խոպան հողերի յուրացման ռազմավարությունը, եւ խորհրդային տարբեր հանրապետություններից հազարավոր կամավորներ են մեկնում ՂԽՍՀ:

1991թ.-ից հետո Ղազախստանի կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում ազգամիջյան հարաբերությունների կարգավորման խնդիրներին: Նախագահին կից ստեղծվում է Ղազախստանի ժողովրդի ասամբլեա, որի մշտական անդամներն են Ալմաթիի «Լոյս» եւ Կուստանայի «Էրեբունի» հայկական համայնքների ղեկավարները:

1999թ. մարդահամարի տվյալներով՝ Ղազախստանում բնակվում էին 15700 ազգությամբ հայ քաղաքացիներ:

Հայաստանում Ղազախստանի դեսպանության հայտնած տվյալներով՝ այժմ Ղազախստանի քաղաքացի են 40-45 հազար հայ, իսկ եթե հաշվենք նաեւ այնտեղ ապրող ու աշխատող հայերին, ապա թիվը մոտենում է 100 հազարին:

Ղազախստանի 11 խոշոր քաղաքներում գործում են հայկական մշակութային կենտրոններ, որոնք միավորում են հայկական համայնքները եւ զբաղվում աճող սերնդի դաստիարակությամբ: Միայն Ալմաթիում գործում է 5-6 հայկական մշակութային կենտրոն, որոնցից առաջինը՝ «Լոյսը», ստեղծվել է 1991թ.: Դրա բազայի վրա 1992թ.-ից գործում է կիրական օրյա դպրոցը, որտեղ սովորում է 7-15 տարեկան 35 երեխա:

«Լոյս» մշակութային կենտրոնին կից արդեն 11 տարի գործում է «Էկզերսիս» մանկական խորեոգրաֆիկ ստուդիան, որին անդամակցում են ոչ միայն հայ, այլեւ այլ ազգությունների երեխաներ: Այս ստուդիան բազմիցս եղել է մանկական միջազգային փառատոնների դափնեկիր:

2000թ. «Լոյս» մշակութային կենտրոնին կից ստեղծվում է «Ախթամար» պարային համույթը, որի համերգացանկի հիմնական մասը կազմում են հայկական ժողովրդական պարերը:

Ղազախստանում գործող հայկական մշակութային կենտրոնների բազայի վրա 2004թ. հոկտեմբերի 30-ին ստեղծվում է Ղազախստանի հայկական մշակութային կենտրոնների «Նաիրի» ընկերակցությունը, որի նախագահ է ընտրվում Ալմաթիի քաղաքային մասսիսիստի պատգամավոր Ա.Կարապետյանը: «Նաիրի» ընկերակցությունը ակտիվ գործունեություն է ծավա-

լում՝ իր էական ավանդը ներդնելով հասարակական կայունության, ազգամիջյան համաձայնության եւ մատաղ սերնդի դաստիարակության, ինչպես նաեւ հայկական մշակույթի եւ կրթության զարգացման ու դրանք հանրաձանաչ դարձնելու գործում: «Նաիրի» ընկերակցությունն ամեն տարի անցկացնում է բնակչության սոցիալապես անապահով խավերի աջակցությանը նվիրված ակցիաներ, կազմակերպում հատուկ համերգներ սահմանափակ հնարավորություններով երեխաների համար:

2005թ. Ղազախստանի բոլոր հայկական մշակութային կենտրոններում մեծ շուքով նշվում է հայոց այբուբենի բարեփոխման 1600-ամյակը: Այս տոնի հիմնական նպատակն էր ցուցադրել կենտրոնների սաների հաջողությունները, ծանոթացնել այլ ազգությունների երեխաներին հայկական մշակույթին, սովորույթներին, ավանդույթներին:

2006թ.-ից Ղազախստանում հրատարակվում է «Նաիրի» հայկական ազգային թերթը: Մեծ նվեր էր երեխաների համար հայկական այբուբենի դասագրքի հրատարակումը:

2006թ.-ի հոկտեմբերին Ալմաթիում բացվում է Ղազախստանում առաջին հայկական Սբ.Կարապետ եկեղեցին:

2007թ. Կուստանայ քաղաքի հայ երիտասարդների նախաձեռնությամբ ստեղծվում է հանրապետական հայկական երիտասարդական կազմակերպություն՝ «Ղազախստանի հայ երիտասարդություն»: Այս գաղափարը ստանում է երկրի բոլոր հայկական համայնքների հավանությունն ու աջակցությունը: Արդեն ավանդույթ է դարձել միաժամանակ անցկացնել «Նաիրի» կենտրոնի հայկական համայնքների նախագահների եւ Ղազախստանի հայ երիտասարդության համագումարները:

Ղազախստանի հայերը հիմնականում զբաղվում են շինարարությամբ՝ մասնավորապես ծանապարհաշինությամբ: Զգալի թիվ են կազմում նաեւ արդյունաբերության, կրթության, առողջապահության բնագավառի աշխատողները:

Ղազախստանցիները մեծ հարգանքով են նշում այնպիսի հայտնի քաղաքական գործիչների անուններ, ինչպիսիք են Ղազախստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Լ. Միրզոյանը, ՂԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի 1-ին տեղակալ Ա. Վարդանյանը, նախարարների տեղակալներ Մ. Տեր-Վարդանովը, Գ. Առաքելովը եւ Ե. Եժիկով-Բաբախանովը:

Ժամանակակից Ղազախստանի Հանրապետության առավել հայտնի հայերից են պատմաբան եւ Ալմաթիում ժողովրդա-

կան կրթության կազմակերպիչ, պրոֆեսոր Է. Տեր-Պողոսյանը, Ս. Լերմոնտովի անվան Ռուսական դրամատիկական թատրոնի գլխավոր ռեժիսոր, Ղազախստանի ժողովրդական արտիստ եւ 1999թ. համար Խաղաղության եւ հոգեւոր համաձայնության նախագահական պարգեւի դափնեկիր Ռուբեն Անդրեասյանը, Ղազախստանի ժողովրդական արտիստ եւ «Թարլան» պարգեւի դափնեկիր Ս.Բաշոյանը, «Բաքու» արտադրական միավորման նախագահ եւ Ալմաթիի քաղաքային մասլախաթի պատգամավոր Արտյոմ Կարապետյանը, «Դիոնիս» արտադրական միավորման նախագահ Ռուդիկ Մնացականյանը, գիտնական Ա. Ավետիսյանը, գեներալ Վաչագան Վլասովը, ռեժիսոր Սերգեյ Փաշոյանը:

Հայերը միշտ ակտիվորեն ներգրավված են եղել Միջին Ասիայի մշտապես փոփոխվող կյանքում՝ գյուղատնտեսությունից մինչեւ արվեստ, գիտությունից մինչեւ արդյունաբերություն, քաղաքականությունից մինչեւ Էկոնոմիկա, ստեղծելով նախադրյալներ հայերի հաջորդ սերունդների արժանավոր կյանքի համար, որոնք այս տարածաշրջանն անվանում են իրենց տունը:

ԼԵՎՈՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝ ՂԱԶԱՄՍԱԿՆԻ ԱՆՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

«... քանի դեռ կգործեն նրա կողմից հիմնադրված արվեստի օջախները, գեղեցիկ քաղաքները, հանքահորերը, գործարանները, փողոցները, հավերժական լեռները, քանի դեռ կլինի իմ ժողովուրդը, նա չի մոռացվի: Միրզաջան, դու մեր հոգում ես եւ մեր պատմության մեջ: Երբ վերադառնաք Հայաստան, գրո՛ւն խոնարհեք այն հողին, որն իմ ժողովրդի համար ծնել է որդի Լեոնին...»:

Կուրմանբեկ ժանդարբեկով

Цветы Алатау – ковер многоцветный.

Мой брат в Армении сын – Мирзоян

Богатство души своей доброй и светлой

Отдал бескорыстно казахским цветам.

Х. Бекхожин

Լեոն Միրզոյանը ծնվել է 1897թ. նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի Աշան գյուղում: 15 տարեկան հասակում մեկնում է Բաքու եւ շուտով դառնում աշակերտական ոչ լեզալ սոցիալ-դեմոկրատական խմբակի անդամ: 1917թ. մարտին դառնում է սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ: 1917-18թթ. լինում է Բաքվի արհմիության կազմակերպիչներից մեկը, Բաքվի Խորհրդի պատգամավոր:

1920-25թթ. եղել է Ադրբեջանի արհմիությունների ֆեդերացիայի նախագահ, աշխատանքի ժողովրդական կոմիսար եւ Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար, 1929-33թթ.՝ Պերմի օկրուգի կոմիտեի քարտուղար, Ուրալի շրջկոմի 2-րդ քարտուղար:

1933թ. փետրվարի 10-ին Լ. Միրզոյանը նշանակվում է Ղազախստանի երկրամասի կոմիտեի 1-ին քարտուղար:

Երբ Լ. Միրզոյանը գալիս է Ղազախստան, երկիրը ծանր ժամանակներ էր ապրում, ինչը բռնի կոլեկտիվացման արդյունք էր, ամենուրեք սով էր տիրում: Միայն 1931-33թթ. սովի զոհ է դառնում 1 մլն 100 հազար մարդ, իսկ 1 մլն էլ փախուստի է դիմում: Սկսվում են Միրզոյանի լարված, անքուն աշխատանքային օրերը: Բացի կուսակցական ու տնտեսական խնդիրներից՝ նա

ստիպված էր նաեւ լուծել տարբեր ազգությունների պատկանող մարդկանց համախմբելու խնդիրը: Երկրի նոր ղեկավարն իր առջեւ խնդիր է դնում միաժամանակ բարձրացնել տնտեսությունը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը եւ մշակույթը: Այս նպատակին հասնելու համար նա ճանապարհ է բացում տաղանդավոր մասնագետների համար՝ հաշվի չառնելով նրանց վրա դրված պիտակները, ինչը այդ ժամանակներին հատուկ էր: ԽՍՀՄ տարբեր ծայրերից Ալմա-Աթայում սկսում են հավաքվել հոյակապ մասնագետներ:

Միրզոյանը մեծ ներդրում ունի Ղազախստանի ինդուստրացման մեջ: Գյուղատնտեսության զարգացման համար ստեղծվում են անասնաբուծության եւ բուսաբուծության ինստիտուտները: Ղազախստանի ատլանտներում սկսում են գործել հարյուրավոր դպրոցներ, բացվում է Ղազախստանի համալսարանը:

1934թ. կուսակցության 17-րդ համագումարի ժամանակ Միրզոյանը հայտարարում է, որ Կարագանդան կարող է եւ պետք է դառնա Խորհրդային Միության երրորդ քարածխային բազան:

Միրզոյանը մեծ ուշադրություն է դարձնում նաեւ մշակույթին: 1934թ. արդեն բացվում են Ղազախստանի մշակույթի գիտահետազոտական ինստիտուտը, Ղազախստանի երաժշտական թատրոնը, որն այնուհետեւ վերափոխվում է Օպերայի եւ բալետի թատրոնի: Միրզոյանն օգնության խնդրանքով անձամբ դիմում էր ռուսական մշակույթի ականավոր գործիչներին, եւ նրանք հաճույքով արձագանքում էին:

1936թ. դեկտեմբերի 5-ին Ղազախստանը ստանում է Խորհրդային հանրապետության կարգավիճակ: Իր ղեկավարության տակ վերցնելով կիսագրագետ, քաղցած եւ մերկ ժողովրդին, ժառանգելով քայքայված տնտեսություն, արդյունաբերության համարյա լրիվ բացակայություն, բարձիթողի արված գյուղատնտեսություն՝ դաժանագույն ահաբեկչության պայմաններում ընդամենը հինգ տարվա ընթացքում Լ. Միրզոյանը պետականության հիմքեր է դնում, բարձրացնում տնտեսությունը, կերակրում ժողովրդին, զարգացնում մշակույթը եւ մարդկանց հսկայական հավատ ներշնչում սեփական ուժերի նկատմամբ: Նա անընդհատ ծամփորդում էր այդ անձայրածիր երկրում, ծանոթանում տիրող իրական իրավիճակին, լսում մարդկանց, խոսում նրանց լեզվով, ինչի համար էլ վայելում էր նրանց անսահման սերն ու հարգանքը:

Սկսվում է Խորհրդային Միության պատմության մեջ տխրահռչակ 1937 թիվը: Ղազախստանում էլ է սկսվում «վիուկների որսը»: 1937թ. սեպտեմբերի 22-ին «Պրավդա» թերթում հայտնվում է մի հոդված «Բուրժուական ազգայնականներից կախված» վերնագրով, որը հանդիմանում էր Միրզոյանին և Լուրպեխովին նրանում, որ նրանք մինչև հիմա ոչ մի անվանի ազգայնականի չեն բացահայտել:

1938թ. մայիսի 15-ին Միրզոյանը ստանում է Ստալինի հեռագիրը՝ գործերը հանձնել Լիկոլայ Սկվորցովին և ներկայանալ Կրեմլ նոր պաշտոնի նշանակման համար: Երեք օր անց Միրզոյանների ընտանիքը նստում է Ալմա-Աթա - Մոսկվա գնացքը: Մայիսի 22-ին Կոյբիշևի կայարանում ձերբակալում են Լեոն Միրզոյանին և տանում: Որոշ ժամանակ անց տանում են նաև կնոջը՝ Յուլյա Թետոյանին, որը Ղազախստանի Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրենն էր: Նրանց որդուն և դստերը ուղարկում են քեռու՝ Իվան Թետոյանի մոտ, ով այն ժամանակ զբաղեցնում էր ԽՍՀՄ սեւ մետալուրգիայի ժողկոմի պաշտոնը: Սակայն, քանի որ ժողովրդի թշնամու երեխաներին երկար ժամանակ պահել չէր կարող, Իվան Թետոյանը ուղարկում է նրանց Բաքու՝ Լ. Միրզոյանի ծնողների և եղբոր մոտ:

Լ. Միրզոյանի կյանքի վերջին օրերի մասին ոչինչ հայտնի չէ: Նրան թույլատրել են միայն թողնել մի քանի տող: Ահա դրանք. «Երդվում եմ իմ վերջին շնչով և երեխաներիս կյանքով, որ կուսակցության ու ժողովրդի թշնամի չեմ եղել»:

Լ. Միրզոյանին մեղադրում են լրտեսության ու վնասարարության մեջ և գնդակահարում Լեֆորտովոյի բանտում 1939թ. փետրվարի 26-ին: Մեղադրական շատ կետերից մեկը հետեյալն էր՝ ղազախ ազգայնական:

Լեոն Միրզոյանի և Յուլյա Թետոյանի բարի անունը վերականգնվում է 1956թ. հունվարին: Ազգականները տեղեկանք են ստանում՝ «մեղավոր չեն»: Միայն 10 տարի անց՝ 1966թ.-ին, Ալմա-Աթայի գլխավոր փողոցն անվանում են Միրզոյանի անունով:

Միրզոյանի որդին՝ Վլադիմիրը, գրում է. «Ես չեմ կարող ասել, թե հորս անունը մոռացված է: Նրան հիշում են: Նրա հոբելյանները նշվել են ինչպես Երեւանում, այնպես էլ Բաքվում: Նրա հայրենիքում՝ Աշան գյուղում, 1960թ. բացվել է նրա հուշարձանը: Հորս անունով փողոցներ են անվանել Բաքվում, Ալմա-Աթայում»:

1997թ. նոյեմբերին Ղազախստանում մեծ շուքով նշվում է Լեոն Միրզոյանի ծննդյան 100-ամյակը, հանդիսավոր միջոցա-

ռումներ են անցկացվում Ավաթիում, Ակտյութինսկում եւ Կուստանայում: Ակտյութինսկում տեղադրվում է նրա կիսանդրին, նրա անունով անվանվում են հրապարակ եւ փողոց: Հայկական համայնքի եւ Ղազախստանի ժողովրդի մարզային ասամբլեայի կողմից տոնական միջոցառումներ են կազմակերպվում: Քաղաքական ռեպրեսիաների զոհերին հիշատակի շրջանակներում Լ. Միրզոյանին նվիրված համաժողով է գումարվում:

Ղազախական «Էվրիկա» թերթը իր 1997թ. դեկտեմբերի 4-ի համարի «Ղազախական հողում հիշում են Միրզոյանին» հոդվածում գրում է. «1997թ. նոյեմբերին Միրզոյանի զինակիցների նախաձեռնությամբ եւ կառավարության համաձայնությամբ Ավաթիում կազմակերպվել են նրա հիշատակի օրեր: Դեկտեմբերի 2-ին Ակտյութինսկում դիմավորեցին մեզ մոտ ժամանած Վլադիմիր եւ Լեոն Միրզոյաններին՝ անվանի քաղաքական գործչի որդուն եւ թոռանը»:

Միրզոյանն աշխատում է Ղազախստանում ընդամենը 5 տարի, սակայն այդ տարիները նշանակալից են լինում հանրապետության կյանքում: Տեմպով զարգանում է արդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունը, ծաղկում է ապրում ղազախ ժողովրդի մշակույթը: Միրզոյանը ղազախ ժողովրդի կյանքի մեջ է մտնում որպես ամենամոտ, հարազատ մարդ: Իզուր չէ, որ ժողովուրդը նրան անվանում էր «Միրզաջան», այսինքն՝ «հարուստ հոգով եւ լուսավոր մարդ»: Չնայած նա դեռ 40 տարեկան էլ չկար, երբ իր պաշտոնը ստանձնեց Ղազախստանում, սակայն նա արդեն կուսակցական աշխատանքի հարուստ փորձ ուներ:

Սեյդախմետ Կուստիկադամը Միրզոյանի մասին գրել է. «Լեոն Միրզոյանը Ղազախստանի 20-րդ դարի ամենաականավոր քաղաքական գործիչն է: Նրա պատմական սխրագործությունը վկայում է այն մասին, թե ինչքան շատ բան կարող է անել իշխանություն ունեցող մեկ մարդը: Իսկական հայրենասերն ու բարերարը նա չէ, ով իրեն բնիկների շարքն է դասում, այլ նա, ով անձնվիրաբար ու անդադրում աշխատում է ողջ ժողովրդի բարեկեցության համար:

Լուսավոր եւ հավերժական հիշատակ հայ ժողովրդի հզոր որդուն՝ Լեոն Միրզոյանին, որ դարձավ Ղազախստանի ժողովրդի անձնագրի որդին»:

ԱԶԱՏ ԴԵՐՈՒԱՇԵՎ
Ղազախստանի ազգային տնտեսական պալատի
«Ատամեկեն» միության նախագահ

- Ֆրանսիայում էինք իմ ընկեր Արտուշ Մեսրոպի Կարապետյանի հետ: Այնտեղ հանդիպումներ ունեցանք ֆրանսիացի գինեգործների, կոնյակագործների հետ: Նա «Բաքոս» արտադրական միավորման ղեկավարն է, որը ղազախական կոնյակի առաջատար արտադրողն է: Եվ ֆրանսիացիներն ընդունեցին, որ ղազախական «ժենիս» կոնյակը, որն ի դեպ պատրաստվում է պարոն Կարապետյանի բաղադրատոմսով, իրոք կոնյակ է, ոչ թե բրենդի: Այնպես որ, դա մեր ընդհանուր հպարտությունն է:

Հենց իմ սեփական բիզնեսում աշխատում են եւ մեր՝ սեփական ղազախահայերը, որոնք ավելի շատ են ղազախ, քան հենց ղազախները, եւ Հայաստանի քաղաքացի հայերը: Ղազախստանը նրանց համար նույնպիսի հայրենիք է, ինչպես ինձ համար: Ղազախստանը միշտ տարբերվել է իր՝ չեմ ասի հանդուրժողականությամբ, բայց այսպես ասած մշակույթների փոխներթափանցման, ազգային ինքնագիտակցության բարձր աստիճանով: Մենք բոլորս ղազախստանցի ենք, նույնիսկ կարող եմ ասել՝ ղազախ ենք: Նույնիսկ իմ անունը որոշ մարդիկ հայկական են համարում: «Ազատ» ղազախական անուն է, որը նշանակում է կամք:

- **Հայերենում նշանակում է ազատություն:**


- Այո՛, սակայն այն ավելին է, քան ազատությունը: Ի վերջո, ազատությունն ավելի շատ ֆիզիկական է: Իսկ սա այն է, երբ դու ոգով ես ազատ, ազատ ես քո ինքնաիրականացման մեջ: Սա մի փոքր այլ է:

Հայկական բիզնես համայնքը շատ ակտիվ է: Միգուցե դա ազգային հատկանիշ է: Հայկական համայնքի մեր գործընկերները շատ նախաձեռնող են, երբեք մի տեղում չեն նստում, չեն սպասում, թե երբ հոսանքն իրենց կողմը կհոսի, անընդհատ ինչ-որ բան են անում: Ես մի այդպիսի ընկեր ունեմ Վահրամ անունով: Հաճախ եմ նրան ասում. «Լսի՛ր, դու կարո՞ղ ես մի փոքր հանգիստ տեղումդ նստել»: Նրանք այդպիսին են, միշտ նոր գաղափարներ ունեն: Եթե իր ուղղությունը բռնեց, ապա «բուլտերիերի նման» ամուր կբռնի ու գործը կանի: Ես արդեն ձեզ պատմել եմ պարոն Կարապետյանի, պարոն Մնացականյանի

մասին: Մենք մեծ հարգանքով ենք վերաբերվում մեր ընկերներին, նույնիսկ կասեի՝ մեր եղբայրներին: Իհարկե, մենք էլ ենք նրանց որոշ բաներ տալիս, բայց իրենցից շատ ենք քաղում:


Երբ «Բարոս»-ի նախագահ պարոն Կարապետյանի հետ Ֆրանսիայում էինք, մի ռեստորանում նա մատուցողին շատ տարավ-բերեց, թե՛ սա այն գինին չէ, սա այն չէ: Մատուցողը զարմացավ, թե՛ ով է այս մարդը, մեզանից ինչ է ուզում: Ասում եմ՝ նա մեր երկրի ամենախոշոր կոնյակի գործարանի տնօրենն է: Այդժամ նա ինչ-որ տեղից արտաքինից անբարետես մի շիշ բերեց: Մյուս շշերը գեղեցիկ էին, իսկ սա մի տեսակ երկարավուն կուժ էր: Կարապետյանը փորձեց եւ ասաց՝ այ, սա ուրիշ բան է:

Կարծում եմ՝ մենք մեծ հնարավորություններ ունենք: Ամենագլխավորը՝ կա փոխադարձ համակրանք, ջերմություն, ըմբռնում: Երբեք չի լինում, որ ընտանիքում ամեն բան հարթ լինի: Միշտ էլ կան փորձություններ, եւ ուրախության, եւ բարդությունների ժամանակաշրջաններ: Մենք երկու դեպքերում էլ միմյանց կողքին ենք եղել, երբեւէ միմյանց մեջքով չենք շրջվել, միշտ բաց երեսով, բաց ձեռքով ենք եղել, այդ պատճառով էլ բոլոր խնդիրները կհաղթահարենք:



ԳԼՈՒԽ 7

ՀԱՅ-ՂԱԶԱԲՈՒԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԿԱԲՈՒՄԻՅ ՀԵՏՈ



Հայաստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. օգոստոսի 27-ին: Աստանայում եւ Երեւանում գործում են երկու երկրների դիվանագիտական ներկայացուցչությունները:

Անկախություն ստանալուց ի վեր Հայաստանն ու Ղազախստանը երկկողմ հարաբերություններ են զարգացնում գործընկերության եւ փոխշահավետ համագործակցության ոգով: Կանոնավոր շփումներ են իրականացվում ԱՊՀ, ՀԱՊԿ շրջանակներում: 2009թ. երկու երկրները մասնակցեցին ՀԱՊԿ շրջանակներում Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծմանը:

Եվ Ղազախստանը, եւ Հայաստանը առաջնային նշանակություն են տալիս ԱՊՀ շրջանակներում համագործակցության զարգացմանը, առաջին հերթին տնտեսական եւ գիտական-հումանիտար բնագավառներում, ինչն ամրապնդում է ԱՊՀ անդամ երկրների դիրքերը համաշխարհային հանրության մեջ՝ նպաստելով ընդհանուր շահերի առաջխաղացմանը:

Միջազգային ասպարեզում գնալով ավելի ու ավելի է աճում Ղազախստանի դերն ու նշանակությունը: Ղազախստանը մշակել է զարգացման երկարաժամկետ ռազմավարություն՝ «Ղազախստան-2030», ըստ որի ազգային անվտանգության ապահովման համար երկիրը վարում է բազմավեկտոր խաղաղասիրական քաղաքականություն՝ ուղղված անվտանգության գոտու պահպանմանը ողջ երկայնքով:

Հայաստանում դրականորեն են վերաբերվում եւ աջակցում են Ղազախստանի արտաքին քաղաքական նախաձեռնություններին: 2010թ.-ին Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության նախագահող երկիրն է Ղազախստանը: Նա եղել է ԱՊՀ երկրների միասնական թեկնածուն, եւ Հայաստանը քվեարկել է նրա օգտին:

Հայաստանը եւ Ղազախստանը պահպանում են ակտիվ երկկողմ քաղաքական երկխոսություն: Դրան նպաստում է այն, որ Հայաստանի հետ համագործակցության զարգացումը հանդիսանում է Ղազախստանի արտաքին քաղաքականության կարեւոր ուղղությունը: Արժանահիշատակ է այն, որ Ղարաբաղյան հակամարտության ժամանակ նախագահ Նուրսուլլան Նազարբաևն առաջարկել է իր միջնորդությունը խնդրի խաղաղ կարգավորմանը հասնելու համար: Եվ նա էր, որ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հետ այցելեց Ստեփանակերտ:

Ղազախաստանը հետետողականորեն կողմ է հանդես գալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Ղարաբաղյան հակամարտությունը խաղաղ ձանապարհով լուծելուն: Նա նաեւ ողջունում է Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ երկխոսության նախաձեռնությունը, որն ուղղված էր հարաբերությունների կարգավորմանը:

Հաջողությամբ է աշխատում Հայ-ղազախական առևտրատնտեսական համագործակցության հանձնաժողովը: Ղազախաստանից Հայաստան են ներմուծվում մետաղական ապրանք, հացահատիկ եւ դրա վերամշակման արտադրանք, լեռնային սարքավորումներ: Իսկ Հայաստանից Ղազախաստան են արտահանվում ավիոհոլային խմիչք, քարի մշակման հաստոցներ, սինթետիկ կաուչուկ եւ զարդեղեն:

2008թ. Հայաստանի տնտեսության մեջ ղազախական ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 50 մլն դոլար, մինչդեռ հայկական կողմից Ղազախաստանի տնտեսության մեջ ներդրվել է 2,5 մլն դոլար:

Ղազախաստանում գրանցված է հայկական կապիտալի մասնակցությամբ 60 ձեռնարկություն, որոնցից 21-ը համատեղ ձեռնարկություններ են: Նրանց գործունեության հիմնական ուղղություններն են մեծածախ առևտուրը, ծառայությունների ոլորտը եւ շինանյութերի արտադրությունը:

Հայ-ղազախական հարաբերություններում իր մեծ դերն ունի Ղազախաստանի հայկական համայնքը: Պաշտոնական տվյալներով 45 հազար հայ Ղազախաստանի քաղաքացի է, իսկ եթե հաշվենք նաեւ աշխատանքային միգրանտներին, ապա հայերի թիվն այս երկրում կկազմի շուրջ 100 հազար:

ՀՀ եւ ՂՀ հարաբերությունները զարգացման լուրջ հեռանկարներ ունեն: Քաղաքական առումով Ղազախաստանը կարող է օգնել իսլամական երկրների շրջանում Հայաստանի հեղինակության բարձրացմանը՝ ներկայացնելով այն, որ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հակամարտությունը դավանանքի հետ ընդհանրապես առնչություն չունի: Երկու երկրների տնտեսությունների փոխլրացումը կարող է առավել մանրամասն վերլուծության առարկա դառնալ: Հայաստան-Իրան երկաթուղու կառուցումը կապ կստեղծի նաեւ Ղազախաստանի հետ:

Լավ հեռանկարներ կան կրթական եւ մշակութային-հումանիտար համագործակցության զարգացման համար: Դա վերաբերում է Հայաստանի տարածքում ժամանակին բնակվող ղփչաղների պատմական ժառանգության ուսումնասիրությանը: Բավականին օգտակար կլինի նաեւ ուսանողների փոխանակումը:

**«ՀԱՅ-ՂԱՉԱԽԱԿԱՆ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԵՆ,
ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԵՎ
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ»**

**ԵՐԼԱՆ ԱՇԻԿԲԱԵՎ
Ղազախստանի արտոգործնախարարության
Միջազգային տեղեկատվության
կոմիտեի նախագահ
(25.06.2009)**

- Ինչպե՞ս եք գնահատում հայ-ղազախական հարաբերությունները: Ի՞նչ մակարդակի վրա է քաղաքական երկխոսությունը:

- Ղազախական կողմը գնահատում է հայ-ղազախական հարաբերությունները որպես կայուն, կառուցողական եւ երկարաժամկետ: Մեր քաղաքական երկխոսությունը նույնպես գտնվում է բավականին բարձր մակարդակի վրա, որին նպաստել են եւ Ղազախստանի, եւ Հայաստանի անդամությունը մի շարք բազմակողմ միավորումներում: Մենք նաեւ բարձր ենք գնահատում այն փաստը, որ միայն անցյալ տարվա ընթացքում ձեր նախագահը երկու անգամ այցելել է Ղազախստան, այսինքն՝ սա ակնհայտորեն վկայում է ակտիվ, կառուցողական քաղաքական երկխոսության մասին:

- Շատերին է հայտնի, որ 2010թ.-ին Ղազախստանը ստանձնելու է ԵԱՀԿ նախագահությունը: Կա՞ն արդեն այնպիսի ծրագրեր, որ Ղազախստանը մտադիր է իրականացնել ԵԱՀԿ շրջանակներում:

- Եթե խոսում ենք ԵԱՀԿ նախագահող երկրի առաջնայնությունների մասին, ապա նրանք, ըստ ավանդության, պետք է ներկայացվեն Ղազախստանի կողմից ԵԱՀԿ Մշտական խորհրդի առաջին նիստին 2010թ. հունվարին: Իհարկե, ղազախական կողմից ԵԱՀԿ գործունեության երեք ուղղություններով ակտիվ մշակում է ընթանում: Մասնավորապես, նախնական կարող ենք ասել, որ Ղազախստանի նախագահության առաջնայնություններից մեկը միջեթնիկական եւ միջկրոնական համաձայնությունն

Է, հանդուրժողականությունը, քանի որ Ղազախստանը կարծում է, որ անկախության տարիների ընթացքում մշակվել է միջկրոնական համաձայնության լավագույն մոդել: Ինչպես գիտեք, մեր երկրում ապրում են 130 ազգությունների ներկայացուցիչներ: Մեր երկիրը շատ բազմազգ է: Այստեղ ավելի քան 40 կրոն է գործում: Սա ենթադրում է միջկրոնական, միջէթնիկական բազմերանգ խճանկար: Եվ այս ամենը գտնվում է համաձայնության, կառուցողական փոխազդեցության մեջ: Ղազախստանի ժողովուրդը միասնական է: Չկան որեւիցե սկզբունքային տարածայնություններ, չկա ոչ մի հակամարտություն, ոչ մի հիմք կոնֆլիկտային իրավիճակի ծագման համար: Եվ այս ամենը՝ ողջ աշխարհում միջէթնիկական եւ միջկրոնական փոխհարաբերությունների խնդրի արդիականության համապատկերի վրա: Մենք կարծում ենք, որ սա որոշակի հետաքրքրություն կառաջացնի նաեւ ԵԱՀԿ շրջանակներում:

- Մի քանի օր է, ինչ Աստանայում ենք, եւ իրոք զգացվում է, որ այստեղ շատ հանգիստ եւ կայուն մթնոլորտ է: Իսկ ի՞նչ դեր կարող է խաղալ Ղազախստանը եվրոպական քաղաքականության համատեքստում: Ենթադրենք, եթե ՀԱՊԿ անդամներից մեկը դառնա ԵՄ անդամ, արդյո՞ք դա կնպաստի ՀԱՊԿ-ի եւ ԵՄ միջեւ ավելի սերտ հարաբերություններին:

- Անկասկած: Օրերս այստեղ կայացավ Եվրատլանտյան գործընկերության խորհրդի Անվտանգության համաժողովը, որն առաջին անգամ հավաքվում էր հետխորհրդային տարածքում եւ այն էլ Ասիայում: Այսինքն՝ Ղազախստանը հանդես է գալիս որպես մերձեցման հարթակ Եվրոպայի եւ Ասիայի միջեւ, ու դա լրիվ բնական է: Ձեր ուշադրությունն եմ հրավիրում նաեւ այն հանգամանքի վրա, որ համաժողովին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Համագործակցության շանհայյան կազմակերպության գլխավոր քարտուղարը: Կարծում եմ, որ եթե հետագայում այն ծրագրերը, որոնց մասին խոսվում է, իրականանան, ապա մենք ոչ մի պատճառ, ոչ մի հիմք չենք տեսնում, որ այն երկխոսությունը, որը կարգավորվում է կամ արդեն կարգավորվել է, շարունակություն, եւս մեկ խթան չստանա հետագա զարգացման համար:

- Հատկապես որ Ղազախստանը Եւ Ասիա Է, Եւ Եվրոպա: ՉԷ որ Ղազախստանի տարածքով Է անցնում Եվրոպան Ասիայից բաժանող սահմանագիծը:

- Այո, Ղազախստանի տարածքի մի մասը գտնվում Է Եվրոպայում: Մեր չափանիշներով դա մեր տարածքի ոչ մեծ մասն Է կազմում, սակայն այն գերազանցում Է եվրոպական որոշ երկրների տարածքը:

- Վերջին ժամանակները որոշ առաջընթաց Է նկատվում հայ-թուրքական հարաբերություններում: Կարելի՞ Է ասել, որ Ղազախստանը շահագրգռված Է Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորմամբ:

- Ընդհանուր առմամբ Ղազախստանը շահագրգռված Է, որ իր սահմանների երկայնքով կայունության եւ համագործակցության գոտի լինի: Կովկասյան տարածաշրջանը սահմանամերձ Է մեզ: Նրա հետ ջրային սահման Է ստացվում, ուստի, եթե Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունները կարգավորվեն, կարծում ենք, որ դա կնպաստի կայունությանը, տնտեսական զարգացմանը եւ այդ երկրների ժողովուրդների բարեկեցությանը՝ դրանով կայունություն հաստատելով նաեւ Ղազախստանի սահմաններին մոտ, որն Էլ մեր նպատակներից մեկն Է:

- Ինչպե՞ս եք տեսնում հայ-ղազախական հարաբերությունների ապագան:

- Մեր երկրների միջեւ առավել կարեւորություն ունեցող հարցերի շուրջ սկզբունքային տարաձայնություններ չկան, ուստի կարծում ենք, որ Հայաստանի եւ Ղազախստանի միջեւ հարաբերությունների զարգացման հեռանկարներն ավելի քան հուսալի են:

- Մենք ի՞նչ քայլեր պետք Է ձեռնարկենք, որ պահպանենք մեր ջերմ հարաբերությունները:

- Դրանք արդեն ձեռնարկվում են, այդ թվում մեր երկու պետությունների ակտիվ արտաքին քաղաքական դիրքորոշման շնորհիվ: Ինչպես գիտեք, Հայաստանը միացել Է Եվրասիական զարգացման բանկին: Մտադիր Է միանալ նաեւ ռուս-ղազախական համատեղ Ուրանի հարստացման միջազգային կենտրոնին: Դա Էլ հենց հետագա ակտիվացման ուղղությամբ քայլեր

են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ կառույցների շրջանակներում:

- **Ի՞նչ եք կարծում, ո՞րն է Ղազախստանում ապրող հայերի դերը մեր հարաբերությունների ամրապնդման գործում:**

- Հայկական ծագումով Ղազախստանի քաղաքացիների դերը, կարծում եմ, շատ նշանակալից է ինչպես Ղազախստանի ներքին քաղաքականության մեջ, այնպես էլ մեր երկու երկրների միջև բարեկամական, կառուցողական հարաբերությունների հետագա զարգացման գործում: Ղազախստանում հայերն առավել ակտիվ էթնիկական խմբերից են, որոնք իրենց ներդրումն են կատարում միջէթնիկական, միջկրոնական հարաբերությունների ներդաշնակ զարգացման գործում:

- **Ի՞նչ կցանկանայիք ասել հայ ընթերցողին:**

- Ցանկանում եմ մաղթել, իհարկե, երջանկություն, բարեկեցություն եւ բարգավաճում ինչպես Հայաստանի ժողովրդին, այնպես էլ հայկական պետությանը:

ԱԶԱՏ ԴԵՐՈՒԱՇԵՎ

Ղազախստանի ազգային տնտեսական պալատի «Ատամեկեն» միության նախագահ

- **Ինչպե՞ս կրնոթագրեք հայ-ղազախական տնտեսական հարաբերությունները:**

- Հայաստանի եւ Ղազախստանի միջև եղած արտաքին տնտեսական հարաբերությունները չեն համապատասխանում այն մակարդակին, ինչ որ պետք է լինի: Դրանք մեր հնարավորություններին չեն համապատասխանում: Իհարկե, Ղազախստանը հսկայական երկիր է շատ հարուստ բնական պաշարներով: Այս առումով Հայաստանը մի փոքր այլ վիճակում է գտնվում: Սակայն կան շատ հատվածներ, որտեղ կարող ենք հաջողությամբ համագործակցել: Ապրանքաշրջանառությունն ավելացնելու միտումներ նկատվում էին: Ղազախստանից Հայաստան են արտահանվում մեքենաներ, սարքավորումներ, հացահատիկ: Հայաստանից մեզ մոտ են գալիս, իհարկե, հիանալի հայկական գինիները, հոյակապ շինանյութեր, կարմիր գույնի տուֆ հարդարման համար: Ինչքան գիտեմ, Հայաստանում հենց

քարի մշակման շատ լավ սարքավորումներ կան: Ինձ մոտ էլ այդպիսի ծրագիր կար: Ես Հայաստանից մասնագետների հրավիրեցի, հանդիպեցի, խոսեցի, նրանք էլ մեր ունեցածը տեսան, գոհ մնացին, եւ մի նախագիծ մշակեցինք, որով կզբաղվենք:

Գիտենք, որ Հայաստանը մեծ հետաքրքրություն ունի Ղազախստանի, ինչպես նաեւ Ռուսաստանի միջուկային տեխնոլոգիաների փորձի նկատմամբ՝ միջուկային էներգիայի օգտագործման առումով: Սակայն այս ձգնաժամի պատճառով այս տարվա առաջին կիսամյակում շրջանառության կրճատում է արձանագրվել 4-4,5 անգամ, ընդ որում Հայաստանից ներկրումը նվազել է 10 անգամ: Հայաստանը Ղազախստան է արտահանում գինի, օղի եւ, իհարկե, անվանի հայկական կոնյակը, որը ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ հետխորհրդային տարածքի հպարտությունն է:

- Իսկ հայկական Սփյուռքն արդյո՞ք ներդրումներ կատարում է Ղազախստանում: Ի նկատի չունեն՞ դազախահայ համայնքին:

- Հասկանալի է: Ինչքան գիտեմ, Ղազախստանում գործում է մոտ 60 ընկերություն, որտեղ ներկա է հայկական կապիտալը: Դրանց մոտ երրորդ մասը համատեղ ձեռնարկություններ են: Իսկ Հայաստանում զուտ դազախական կամ դազախական մասնակցությամբ ընկերություններն ավելի շատ են: Եթե մեր երկրում հայերի ներդրումները 2-3 միլիոնի կարգի են եղել անցյալ տարվա համար, ապա Ղազախստանինը մոտ 20 անգամ ավելի է: Սակայն հարցը հարաբերակցության մեջ չէ: Ի վերջո, տեսակարար կշիռը որոշվում է որոշակի պատճառներով:

ԿԱՄԱԿ ԲՈՒՐԻՄԱՆՈՎ
ՂՏ Խորհրդարանի Մեջլիսի Արտաքին գործերի,
պաշտպանության եւ անվտանգության
հանձնաժողովի անդամ

- *ԽՍՀՄ փլուզումից հետո մեր երկրների միջեւ կապերը սկսեցին թուլանալ: Բայց այն լավը, ջերմը, որ ունեցել ենք, չպետք է կորցնենք, այլ պետք է վերականգնենք ու բազմապատկենք: Ի՞նչ կաատմեք Ղազախստանի հայկական համայնքի մասին:*

- Մեզ մոտ շատ մեծ հայկական համայնք կա: Հավանաբար գիտեք, որ մեզ մոտ մի ինստիտուտ գոյություն ունի՝ Ղազախստանի ժողովրդի ասամբլեա, որտեղ ներկայացված են բոլոր համայնքները: Ղազախստանի ժողովրդի ասամբլեան ղեկավարում է ինքը՝ նախագահը պետության ղեկավարը, Ասամբլեան նրա մտահղացումն է: Ասամբլեայի Խորհրդի մեջ են մտնում համայնքների առաջատար գործիչները: Ասամբլեայի Խորհրդի անդամը կարելի է անձնավորություն է, շատ լուրջ, շատ հեղինակավոր, որը մուտք ունի բոլոր իշխանական կառույցներում, քանի որ նա Խորհրդում է նախագահի հետ միասին:

Համայնքները կարող են ստեղծվել շրջանի, մարզի, քաղաքի, հանրապետական միավորման շրջանակներում ազգային մշակութային կենտրոններում: Պետությունը հատուկ տարածք է տրամադրում, միջոցներ են տրամադրվում կիրակնօրյա դպրոցների համար, օրինակ՝ ասենք, հայերի համար, որպեսզի նրանք կարողանան կիրակի օրը հավաքվել եւ սովորել իրենց լեզուն, մշակույթը եւ այլն:

Մեզ մոտ հայկական համայնքը գլխավորում է Արտուշ Կարապետյանը: Նա իմ լավ ընկերն է, մենք վաղուց ենք նրա հետ շփվում: Նա մեր «Բաքու» ընկերության նախագահն է, որը ղազախական ամենալավ գինու եւ օղու արտադրողն է: Ղազախական «Ժենիս» կոնյակը մեր բրենդն է: Այն հյուրասիրում են արտասահմանում մեր բոլոր դեսպանություններում, նախագահի մոտ ընդունելության եւ շատ այլ այդպիսի կարելի է միջոցառումների ժամանակ: Այդ ամենը թողարկվում է Արտուշ Կարապետյանի ղեկավարությամբ: Նա ունի մի շարք պարգեւներ, շքանշաններ:

Մեզ մոտ հայկական համայնքը ծաղկում է ապրում բոլոր առումներով: Այն պետք է նպաստի, եւ ես կարծում եմ, որ նպաստում է, փոխհարաբերություններին, սակայն, միգրացե տարբեր պատճառներով, մեզ չի հաջողվում ավելի լայն շփման հասնել. մեր փոխհարաբերությունները, ապրանքաշրջանառությունը շատ փոքր են: Անհամեմատելի է Չինաստանի հետ: Չինաստանի հետ 15 մլրդ է, Ռուսաստանի հետ՝ 20 մլրդ դոլար: Ձեզ հետ բառացիորեն շատ քիչ: Չնայած կա փոխադարձ պահանջարկ: Մենք ձեզանից գնում ենք սարքավորում, հաստոցներ Արեւմտյան Ղազախստանի համար: Դուք քարերը մանրացնող շատ լավ հաստոցներ ունեք:

- Ի՞նչ հիշողություններ ունեք հայերի մասին:

- Իհարկե, ունեցել եմ նաեւ հայ ուսանողական ընկերներ: Ինձ հետ սովորում էր Սարգսյանը, սակայն այժմ չգիտեմ, թե նա որտեղ է: Արտաշես անունով հայ ընկեր ունեի: Երբ ես զբաղվում էի հնագիտությամբ, նա էլ էր դրանով զբաղվում: Ես ավարտել եմ Տաշքենդի համալսարանը: Այն ժամանակ այն կոչվում էր Միջինասիական պետական համալսարան: Մենք ապրում էինք որպես մի ընտանիք, մենք մի խումբ էինք. միասին գնում էինք եւ բամբակ հավաքելու, եւ արշավախմբերի, սերտորեն շփվում էինք: Իհարկե, հիշողությունները շատ են: Հայկական կոնյակը, իհարկե, ոսկու քաշ ուներ Խորհրդային Միությունում: Յուրաքանչյուր իրեն հարգող դազախ պրոֆեսոր երջանկություն էր համարում հայկական կոնյակ խմելը: Խորհրդային ժամանակներում համարվում էր, որ դրանից բարձրը չկա:

Իհարկե, Հայաստանը սքանչելի հանրապետություն է: Մենք հիշում ենք Սպիտակի ավերածությունները, դա ողբերգություն էր, մենք այստեղ այն ցավով ընկալեցինք: Ես այն ժամանակ համալսարանում էի դասավանդում: Փող էինք հավաքում, նամակներ ուղարկում, փորձում էինք ձեզ հետ կիսել այդ վիշտը: Իհարկե, շատ տխուր է, որ այժմ մենք այն կապերը չունենք, աստիճանաբար հեռանում ենք: Ձեզ մոտ գալը դժվար է, ցամաքային ուղի չկա: Մենք հիմա ծանապարհ ենք կառուցում դեպի Չինաստան ու Եվրոպա, իսկ դեպի հարազատ Հայաստան, որի հետ միասին «մեծացել» ենք. «ընկերություն արել», չենք կարողանում մի փոքր ասֆալտապատ ծանապարհ կամ մի նեղ երկաթուղի զգել: Կարծում եմ, որ եթե դուրս գանք իրանական զծերին, ապա հավանաբար ձեզ մոտ գալն ավելի հեշտ կլինի:

Կարծում եմ, որ մենք պետք է միասին աշխատենք, այսինքն ձեզ մոտ, հայկական համայնքում, մեզ հետ միասին, կարող եմ ասել, ահագին գործ կա անելու: Պոտենցիալը կա, մենք միմյանց հարկավոր ենք, խոսում ենք նույն լեզվով, ունենք նույն մենթալիտետը, այստեղ ապրող համայնքը կա: Մենք պետք է աշխատենք միայն նրա համար, որպեսզի այդ փոխհարաբերությունները լինեն ավելի խորը, ավելի լավ, ավելի ջերմ:

ԼԱՐԻՍԱ ԲՐՈՎԱՏԱՅԱ

Ղազախստանի Մշակույթի նախարարության Տեղեկատվության և արխիվների կոմիտեի նախագահ

- Ի՞նչ գիտեք Հայաստանի մասին: Ինչքանով է Հայաստանը լուսաբանվում Ղազախստանում:

- Իմ ամենասիրած հեռուստաալիքներից է «Միր»-ը: Այն հսկայածավալ տեղեկություն է տալիս բոլոր ԱՊՀ երկրների մասին: Այն հաճելի է նայել: Ես շատ տեղեկություն եմ ստանում տարբեր երկրների, այդ թվում՝ Հայաստանի մասին: Ինքս մի քանի անգամ եղել եմ Երեւանում: Իմ հայրը դեռ խորհրդային ժամանակաշրջանում մոտ 2-3 տարի աշխատում էր Երեւանում:

Ինչ գիտեմ Հայաստանի մասին: Գիտեմ, որ այնտեղ անչափ բարի, հյուրընկալ մարդիկ են: Գիտեմ հայկական խոհանոցը: Դե, խորովածի մասին բոլորը գիտեն: Ես գիտեմ, թե ինչ աստիճանի բարի են հայ կանայք: Դու կարող ես Երեւանում մեկին մոտենալ, հարցով դիմել, եւ քեզ որպես հարազատ մարդու կընդունեն:

Մեզ հետ մի դեպք պատահեց Երեւանում: Մենք մի կնոջ մոտեցանք ու հարցրինք, թե մոտակայքում որտեղ հացի խանութ կա: Իսկ նա ասաց՝ ձեզ հացի խանութ հարկավոր չէ: Եվ նա մեզ իր տուն հրավիրեց՝ թխվածքով թեյ խմելու: Ինձ մոտ դրանից այնպիսի ջերմ հիշողություն է մնացել: Ինձ թվում է՝ Հայաստանը մի մեծ, բարեկամ ընտանիք է, որտեղ բոլոր մարդկանց՝ որպես ընկերոջ, ազգականի են վերաբերվում, շատ ջերմորեն:

ՍԱԼԹԱՆԱԹ ԱԽՄԵՏԺԱՆՈՎԱ
Աստանայի եվրասիական ազգային համալսարանի
Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան,
տնտ. գիտ. դոկտոր

- *Ի՞նչ է Ձեզ համար Հայաստանը, եւ ո՞վ է Ձեզ համար հայր:*

- Նախեսառաջ որպես մի մարդու համար, ով հիշում է Խորհրդային Միությունը, Հայաստանը հիասքանչ երկիր է, բարեկամական, որտեղ ապրում են շատ խելացի մարդիկ հիանալի հումորի զգացումով, որոնց հետ շատ հետաքրքիր է զրուցելը, կարելի է շատ բան իմանալ: Մենք կցանկանայինք աշխատել, համագործակցել գիտության ոլորտի ներկայացուցիչների, մեր գործընկերների հետ, գրել համատեղ գրքեր, մենագրություններ, իրականացնել համատեղ գիտական եւ կրթական նախագծեր:

ԿԵՆՏԵԲՈՒԱՏ ԺՈՂԴԻԲԱՅ
«ԿԱԶԻՆՖՈՐՄ» Ազգային ընկերության
տեղեկատվության եւ ստեղծագործական հարցերով
փոխնախագահ

- *Դուք՝ ոչ թե որպես ղեկավար, այլ որպես Ղազախստանի քաղաքացի, ի՞նչ եք հիշում, ի՞նչ գիտեք, այսօր ինչի՞ հետ եք ասոցացնում Հայաստանը եւ հայերին:*

- Ես անձամբ շատ ջերմ վերաբերմունք ունեմ հայերի նկատմամբ: Մտերիմ ընկերներ չեմ ունեցել, սակայն ծանոթներ կան, կյանքիս ընթացքում շատ եմ հանդիպել: Հայաստանը շատ հետաքրքիր երկիր է: Կովկասում, եւ ոչ միայն այդտեղ, ունի իր համապատասխան տեղը, եւ շփվել այս երկրի հետ օգտավետ է ե՛ւ մշակութային, ե՛ւ տնտեսական, ե՛ւ քաղաքական առումով: Այլ կարծիք լինել չի կարող:

Այլ հարց է, թե դա ինչպես է կառուցվում: Պետք է լինեն միջ-պետական հարաբերություններ, սակայն չենք կարող մի կողմ թողնել ժողովրդական դիվանագիտությունը: Որ Դուք մեզ մոտ եք եկել, դա արդեն լավ է: Մենք պետք է միմյանց այցելենք, պատմենք միմյանց մասին: Դուք, այս գործը կատարելով, պատասխանում եք ինքներդ Ձեր հարցին: Մենք պատրաստ ենք քննարկելու մեր ազգերի մերձեցման հետ կապված ցանկացած հետաքրքիր նախագիծ: Ինչն է մեզ խանգարում: Բոլորովին ոչինչ: Մենք միայն կողմ ենք:

ԿԱՆԱՏ ՍԱԽԱՐԻՅԱՆՈՎ **«Խաբար» տեղեկատվական գործակալության** **գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ**

- Ինչքանով են Հայաստանն ու հայերն ընդգրկված «Խաբար»-ի տեղեկատվական քաղաքականության մեջ:

- Ցավոք, այժմ չեմ կարող ձիշտ պատասխանել, իսկ ստել էլ իհարկե չէի ցանկանա: Մենք գլխավոր խմբագրություն ունենք, որը բարձրացնում է այդ հարցերը: Նրանք հաստատ կարող են ասել, թե Հայաստանի մասին քանի սյուժե կա: Ցավոք, պետք է նշեմ, որ Հայաստանում չունենք սեփական թղթակից: Հավանաբար այդ հարցը կդնենք մեր բարձրագույն ղեկավարության առջե: Կարող եմ այժմ ասել միայն իմ անձնական վերաբերմունքի մասին հայ ժողովրդի նկատմամբ, որ ես նրան շատ ջերմ եմ վերաբերվում, քանի որ ինստիտուտում իմ ամենամոտ ընկերներից մեկը Սուրենն էր: Նա այժմ Ղազախստանում չէ, աշխատում է այլ երկրում, բայց մենք մինչեւ հիմա կապ ենք պահպանում: Նա իմ ամենամոտ ընկերներից մեկն է:

- Կա՞ն արդյոք գործընկերային շփումներ հայկական ՋԼՄ-ների հետ՝ տեղեկատվության փոխանակում, համատեղ նախագծեր:

- Այս պահին՝ դեռ ոչ: Մենք այժմ կապեր ենք հաստատել թուրքական հեռուստատեսության հետ: Մի քանի ամիս առաջ համաձայնագիր ստորագրեցինք տեղեկատվության փոխանակման վերաբերյալ Ասիական հեռարձակման միության շրջանակներում, որի անդամ ենք հանդիսանում, եւ կապեր ունենք այդ Միության անդամ երկրների հետ: Հնդկական հեռուստատեսությունն էլ է շատ շահագրգռված, կարող է տեղեկատվության շատ հետաքրքիր փոխանակում լինել: Ցավոք, Հայաստանի հետ դեռ այդպիսի կապեր չկան:

Գիտեմ, որ հայկական մշակույթը շատ հարուստ է, շատ հին: Ղազախստանինն էլ է շատ հարուստ ու հին, ուստի պետք է ամրացնենք մեր արմատները, մեր պատմական կապերը: Այն, որ մենք հիմա առանց թարգմանչի օգնության ենք խոսում, դա էլ է մեծ վաստակ, դա մեր հարստությունն է:



ԱՄՓՈՓՈՒՄ

Այս գրքի միջոցով մենք փորձեցինք մի փոքր մոտեցնել աշխարհագրորեն հեռու գտնվող Ղազախստանը: Հուսով ենք, որ ներկայացված տեղեկությունները հնարավորություն տվեցին ընդհանուր տպավորություն ստեղծել այս միջինասիական հսկայական երկրի մասին, որն ակտիվ դեր է խաղում տարածաշրջանում:

Ուսումնասիրելով անկախացումից հետո Ղազախստանի Հանրապետության զարգացման փորձը, տեսնելով նրա ձեռքբերումները եւ առաջընթացը ոչ միայն արտաքին աշխարհում, այլեւ ներքին կյանքում, ցանկալի կլինեք ավելի ակտիվ տեսնել հայ-ղազախական հարաբերությունները, մանավանդ որ սերտ եւ ջերմ հարաբերությունների 70 տարվա պատմություն ունենք՝ ապրելով մի հզոր պետության կազմում:

Իհարկե, մի գրքի շրջանակներում անհնարին է ներկայացնել ողջ թեման ամբողջությամբ ու մանրամասնորեն, եւ ձեռնարկը դրան չի էլ հավակնում: Ուղղակի փորձել ենք լրացնել այն տեղեկատվական բացը, որն առաջացել է Խորհրդային Միության փլուզումից հետո, որի արդյունքում երբեմնի քույր-հանրապետությունները հեռացել են միմյանցից, փակվել են սահմանները, որոշ տեղերում մտցվել է արտոնագրային ռեժիմ:

Անկախացումից մոտ 20 տարի անց Ղազախստանը մեզ է ներկայանում նոր կարգավիճակով, որպես ակտիվ ուժ ոչ միայն տարածաշրջանում, այլեւ եվրոպական ուղղությամբ:

ЗАКЛЮЧЕНИЕ

Книга, которую Вы держите в руках, издана с целью сделать ближе армянскому читателю географически далекий Казахстан. Надеемся, что книга помогла Вам составить общее впечатление об этой огромной среднеазиатской стране, которая играет активную роль в как в нашем регионе, так и во всем мире.

Изучив опыт развития Республики Казахстан после провозглашения независимости, увидев ее достижения и прогресс как во внешнем мире, так и внутри страны, хотелось бы видеть армяно-казахские отношения в более активном ключе - тем более, что у нас есть 70-летний опыт тесных и теплых взаимоотношений в составе такого государства, как СССР.

Конечно, невозможно подробно представить такую интересную и многоликую страну как Казахстан в рамках небольшой книги, данная публикация и не претендует на это. Мы просто постарались восполнить тот информационный вакуум в Армении о сегодняшнем Казахстане, который образовался после распада Советского Союза, и в результате которого некогда братские республики отдалились друг от друга.

Через неполных 20 лет после провозглашения независимости Казахстан предстает перед нами в новом свете, в новом статусе - в качестве активной силы не только в постсоветском регионе, но и на всем евразийском направлении.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական խոսք	6
Նախաբան	14

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրությունը	20
Օգտակար հանածոները	20
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ	
Ղազախստանի Հանրապետության պետական զինանշանը	22
Ղազախստանի Հանրապետության պետական դրոշը	23
Ղազախստանի Հանրապետության պետական հիմնը	24
Ղազախստանի Հանրապետության տոները	25
ԱՍՏԱՆԱ՝ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՆՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ	27
ԲԱՅՏԵՐԵԿ՝ ԱՍՏԱՆԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ	29
Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների համագումարը	30
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	34
Ղազախստանը Ռուսական կայսրության կազմում	37
Խորհրդային շրջան	39

ԳԼՈՒԽ 2

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Նուրսության Նազարբաեի (քաղաքական դիմանկար)	42
Գործադիր իշխանությունը	44
Օրենսդիր իշխանությունը	44
Դատական համակարգը	45
Չինված ուժերը	46
«ԱՊԱԳԱ ՍԵՐՆԴԻ ՓՈՂԵՐԸ ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԾԱԽՍԵԼ», - ԿԱՄԱԼ ԲՈՒՐԻՍԱՆՈՎ	47
ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՍԱՐԼԵԱ	64
ԵՐԱԼԻ ՏՈՒԳԺԱՆՈՎ	66

ԳԼՈՒԽ 3

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	80
«ՀԱՅ-ՂԱԶԱԽԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՄԵՐ ՊՈՏԵՆՑԻԱԼԻՆ», - ԱԶԱՏ ՊԵՐՈՒԱՇԵՎ	83

ԳԼՈՒԽ 4

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

 Ղազախստանը՝ ակտիվ ուժ տարածաշրջանում 88

 Ղազախստանը՝ ԵԱՀԿ նախագահող երկիր 92

«ՂԱԶԱԽՍՏԱՆԻՆ ԵԱՀԿ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏԿԱՆՈՒՄ Ե ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ», - ՄԱՐԱՏ ՕՍՊԱՆՈՎ 92

 Ղազախստան - ՆԱՏՕ 95

 Ղազախստանը և մեծ տերությունները 95

 Ղազախստան - ԱՄՆ 96

 Ղազախստան - Չինաստան 97

 Ղազախստան - Ռուսաստան 99

 Ղազախստան - Հնդկաստան 100

 Ղազախստանը՝ որպես միջուկային
 զենքից հրաժարված երկիր 101

«ԱՆՎԵՐՋ ԸՆԴԼԱՅՆՎԵԼ ՉԻ ԿԱՐԵԼԻ, ԿԱՐԵԼԻ Ե

ՈՒՂԱԿԻ ՊԱՅԹԵԼ», - ԴՄԻՏՐԻ ՌՈԳՈԶԻՆ 103

«ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՐՅԸ ՊԵՏՔ Ե ԼՈՒԾՎԻ, ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆԸ ՊԵՏՔ Ե ԲԱՑՎԻ», - ԶԵՅՆՈ ԲԱՐԱՆ 109

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ԾԱՏ ԲԱՆ Ե ՏՎԵԼ», -

ՂԱՎՈՒԴ ՄՈՒՐԱՂՅԱՆ 112

ԳԼՈՒԽ 5

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

 Կրթություն եւ գիտություն 116

«ՄԵՆՔ ԿՅԱՆԿԱՆԱՅԻՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ

ԳԻՏԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ», -

ՍԱԼԹԱՆԱԹ ԱԽՄԵՏԺԱՆՈՎԱ 118

 Մշակույթ 120

 Ղազախստանի ասացվածքներ 121

ԶԻՅԱԲԵԿ ԿԱՐՈՒԼԴԻՆՈՎ 122

 Զանգվածային լրատվամիջոցներ 124

«ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Ե

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ», - ԿԵՆԺԵԲՈԼԱՏ ԺՈԼԴԻԲԱՅ 125

«ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆ Ե ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ», - ԿԱՆԱՏ ՍԱԽԱՐԻՅԱՆՈՎ 131

«ՂԱԶԱԽՍՏԱՆԸ ՄԻՇՏ ՓՈԽԱՌՆՈՒՄ Ե ԱՄԵՆԱԼԱՎԸ», -

ԼԱՐԻՍԱ ԲՐՈՎԱՏՍՅԱ 138

ԳԼՈՒԽ 6	
ՀԱՅԵՐԸ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ	146
ԼԵՎՈՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԱՆՎԱՆԻ	
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ	151
ԱԶԱՏ ՊԵՐՈՒԱՇԵՎ	155
ԳԼՈՒԽ 7	
ՀԱՅ-ՂԱԶԱԽԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ	
ԱՆԿԱԽԱՅՈՒՄԻՅ ՀԵՏՈ	158
ՂԱԶԱԽ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ	
ԵՐԼԱՆ ԱՇԻԿԲԱԵՎ	160
ԱԶԱՏ ՊԵՐՈՒԱՇԵՎ	163
ԿԱՄԱԼ ԲՈՒՐԻՄԱՆՈՎ	165
ԼԱՐԻՍԱ ԲՐՈՎԱՏԱՅԱ	167
ՍԱԼԹԱՆԱԹ ԱԽՄԵՏԺԱՆՈՎԱ	168
ԿԵՆԺԵՐՈԼԱՏ ԺՈԼԴԻԲԱՅ	168
ԿԱՆԱՏ ՍԱԽԱՐԻՅԱՆՈՎ	169
ԱՄՓՈՓՈՒՄ	171

Հեռու և մոտ Ղազախստան

Հեղինակային խումբ՝	<i>Աննա Մկրտչյան Կարինե Օհանյան Նաիրա Մկրտչյան Տիգրան Պետրոսյան</i>
Խմբագիր՝	<i>Նաիրա Մկրտչյան</i>
Սրբագրիչ՝	<i>Լեոն Խաչատրյան</i>
Թարգմանիչներ՝	<i>Իզաբելլա Բարխուդարյան Նունե Մելքոնյան</i>
Խորհրդատուներ՝	<i>Կարեն Բեքարյան Հայկանուշ Կաթրճյան Մանվել Ղումաշյան</i>
Կազմի ձևավորումը՝	<i>Նարա Մենդելյանի</i>
Համակարգչային ձևավորումը՝	<i>Արփինե Աբաջյանցի</i>
Տեխնիկական օժանդակություն՝	<i>Լիլիա Ամիրխանյան Հասմիկ Հովհաննիսյան</i>

Далекий и близкий Казахстан

Авторская группа	<i>Анна Мкртчян Карине Оганян Наира Мкртчян Тигран Петросян</i>
Редактор	<i>Наира Мкртчян</i>
Корректор	<i>Левон Хачатрян</i>
Переводчики	<i>Изабелла Бархударян Нуне Мелконян</i>
Консультанты	<i>Карен Бекарян Айкануш Катрджян Манвел Гумашян</i>
Дизайн обложки	<i>Нары Менделян</i>
Компьютерный дизайн	<i>Арпине Абаджянц</i>
Техническая поддержка	<i>Асмик Ованнисян Лилия Амирханян</i>